



ԳԻՏԱԿԱՆ ՀՈԳՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

2010 թ.



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԾՅՈՒՂ

ՔԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

ԵՐԵՎԱՆ

ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ- 001
ԳՄԴ 72
Գ 602

Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ
Իջևանի մասնաճյուղի գիտխորհուրդը

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Խմբագրական խորհուրդ՝

ՍԱՍՎԵԼ ԱՐՇԱԿԻՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ – պատմ. գիտ. թեկնածու, խորհրդի նախագահ
ՀԵՆՐԻԿ ՄՈՒՇԵԳԻ ԱՔՐԱՀԱՄՅԱՆ – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՌԱՖԻԿ ԱՍՔԱՆԱԶԻ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ – պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԱԼԵՔՍԱՆԻ ՄԱՐԶՊԱՆՅԱՆ – տնտեսագիտ. թեկնածու, պրոֆեսոր
ՀԵՆՁԵԼ ԳԵՐԱՍԻՄԻ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ – քաղաքագիտ. դոկտոր, պրոֆեսոր
ՄԵԼՍԻԿ ՊԱՐԳԵՎԻ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ – հոգեբ. դոկտոր, պրոֆեսոր
ԽԱՉԱՏՈՒՐ ԳԱՐՈՒՇԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ – բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ
ԱՆՈՒՇԱՎԱՆ ՀԱՅԿԱՐԱՄԻ ՄԿԱՐՅԱՆ – ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐԻ ՂԱԼՈՒՄՅԱՆ – ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ
ՍԱՐԴ ԱՐԱՄՅԻՄԻ ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ – արվեստաբան

Գ 602 Գիտական հոդվածների ժողովածու. – Եր.: ԵՊՀ հրատ.,
2010 թ., 176 էջ:

ISBN 978-5-8084-1203-3

ՀՏԴ- 001
ԳՄԴ 72

© ԵՊՀ հրատարակչություն, 2010 թ.

ԲԱՐԻ ԵՐԹ

Այս հանդեսով Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը հավակնություն է դրսևորում մտնելու գիտական կյանք: Դրանով նա իր առջև դնում է ոչ դյուրին մի խնդիր, որից պատվով դուրս գալը բոլորին չի հաջողվում: Չի հաջողվում այն պարզ պատճառով, որ ոչ բոլոր նման ցանկությամբ համակվածներն ունեն գիտություն հասկացողության ճիշտ ըմբռնումը: Այսօրվա բարդ և հակասական ժամանակներում, երբ կարելի է պնդել, որ տակավին ընթացքի մեջ է մեր պետության արարման գործընթացը, շատ այսպես կոչված գիտական հանդեսներ ներշնչում են միայն գիտական միտք մատուցելու պատրանք, չունենալով այն ըմբռնողունակությունը, որ միայն գիտությունն է պետության ամրապնդման հիմքը: Մեկը մյուսին հաջորդող հանդեսների, ամսագրերի կամ գիտական ժողովածուների տպագրությունները մեծամասամբ հետևանք չեն այս խնդրում նպաստ ունենալու ցանկության, այլ ավելի շատ անձնական տարաբնույթ նկրտումների: Երևույթների, անցյալ պատմական իրադարձությունների, ներկայիս քաղաքական գործընթացների շատ գնահատականներ ու մեկնաբանություններ հաճախ այն համոզումն են արթնացնում, որ ծնվել են ոչ թե գիտական մտքի զարգացմանը նպաստ բերելու, այլ անձնական ամբիցիաների, այլոց հակադրվելու, ավելի խելոք երևալու ցանկությամբ պայմանավորված: Մարսափելի է գիտության քաղաքականացումը: Դրա արդյունքում ստեղծվող գիտական թոթովանքը ոչ թե վերարժեքավորելու է անցյալը, այլ սերունդներին կանգնեցնելու է նոր վերարժեքավորումների անհրաժեշտության առջև: Բայց արդյոք ժամանակը կների մեզ պատմության ընձեռած հնարավորությունը ճիշտ չօգտագործելու համար, չի պատժի մեզ իր խորհուրդն անտեսելու համար: Կարծում ենք, որ կպատժի և այս անգամ առավել խստությամբ: Խուսափելու համար այդ պատժից, չափազանց կարևոր ենք համարում գիտության և գիտական մտքի ազատականացումը, առողջ բանավեճը, համագգային շահերի հենքով գիտական տաճարի կառուցումը: Ցավոք ինքնադրսևորվելու մարմաջի արդյունքում օր օրի ծնվում են պարբերականներ, իրականում մեծամասամբ ոչ թե նպաստելով գիտության զարգացմանը, այլ իրենց ամբողջության մեջ ներկայացնելով հեծելազորային գրոհ ընդդեմ գիտության և գիտական մտքի: Սթափվելու, հանդուրժողականության, համախմբվելու ժամանակն է, որին նույնպես պետք է նպաստի առողջ, չկադապարված գիտական միտքը: Այս առումով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը մեծ բեռ է

վերցնում իր ուսերին, բայց համոզված ենք, որ պատվով դուրս կգա դրա տակից: Համոզված ենք նրա համար, որ որպես գիտատուսումնական հաստատություն այն վաղուց կայացել է, ունի գիտական մթերք թողարկելու լայն պոտենցիալ: Երբ դասախոսը դադարում է զբաղվել գիտությամբ, հեռանում է այն նոր ժամանակներին ծառայելու անհրաժեշտության գիտակցումը, նորի որոնումից, նպաստում է բարձրագույն ուսումնական հաստատության ճշմարիտ էության խեղաթյուրմանը: Այս դեպքում այդ հաստատությունն ընկալվում է ոչ որպես գիտության օջախ ու դարբնոց, այլ՝ վկայական ձեռք բերելու միջոց: Անհրաժեշտ է հասարակական կարծիքը հեռու պահել այս թյուր ըմբռնումից: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ունի գիտության տարբեր բնագավառներում լուրջ ավանդներ ունեցող պրոֆեսորադասախոսական կազմ, որոնցից շատերը մայր բուհի անձնակազմից են: Սույն հանդեսով նրանք ստանում են մի նոր հնարավորություն դրսևորելու իրենց գիտական օժտվածությունները, հանդես գալու նոր գիտական խոսքով ու մտքով՝ գիտական առումով ևս անսասան դարձնելու ԵՊՀ միակ մասնաճյուղ Իջևանի համալսարանը:

Ինձ մնում է շնորհավորել այս հանդեսի ծնունդը և մաղթել նրան բարի երթ, երկարատև գոյություն և ինքնօրինակություն:

ԱՐԱՄ ՄԻՄՈՆՅԱՆ

ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄԻՏՔԸ ԱՐՇԱԿՈՒՆՅԱՅ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 4-ԸՂ ԴԱՐԻ 30-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Ս.Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Հին քաղաքական մտքի պատմության անդրադարձներն ընդհանրապես ավելի հաճախ գնում են այն ճանապարհով, որ ներկայացնում են ոչ թե պետական, այլ՝ անհատական քաղաքական միտքը մեր պատմության այս կամ այն ժամանակահատվածում: Արդյունքում ստացվում է, որ մենք ավելի հաճախ պատկերացում ենք ստանում այս կամ այն ոչ պետական անձի քաղաքական հայացքների մասին՝ կապված պետության, թագավորի անձի, այս կամ պետությունների հետ դիվանագիտական հարաբերության, գործող իրավահարաբերությունների վերաբերյալ, քան թե տվյալ ժամանակահատվածի պետական մտածողության: Մեր ժողովրդի պատմության հին ժամանակահատվածի համար, անշուշտ պետք է պնդել, որ պետություն հասկացողությունը համահունչ էր թագավոր հասկացողությանը: Ուստի և, պետական քաղաքական միտք ասելով պետք է առաջին հերթին հասկանալ թագավորի կամ արքայի քաղաքական մտածողությունը պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող հարցերի վերաբերյալ: Անշուշտ, այս առումով, սկզբնաղբյուրները սակավ են, բայց այն պատմաբան-քաղաքագետները կամ իրավագետները, որոնք ներկայացրել են այս կամ այն ժամանակահատվածի պատմական իրադարձությունները և դրանց վերաբերյալ իրենց մոտեցումները, դրանով հանդերձ պատկերացում են տալիս տվյալ ժամանակահատվածի պետական-քաղաքական մտքի մասին: Չորրորդ դարի Արշակունյաց Հայաստանի պետական քաղաքական մտքի վերաբերյալ պատկերացում կարելի է կազմել Մովսես Խորենացու, Փավստոսի, Խոռենացի պատմիչ Ամիանոս Մարկելիոսի տեղեկությունների հիման վրա: Համաձայն այդ տեղեկությունների՝ արդեն Խոսրով Գ Կոտակի (330-338 թթ.) կառավարման տարիներին հայ պետական-քաղաքական միտքը ընթանում էր կամ փորձում էր ընթանալ այն ճշմարտության ըմբռնմով, որ պետությունը գնում է դեպի թուլացում, ուժեղանում են կենտրոնախույս ձգտումները և որ ամենակարևորներից մեկն է՝ **Հայաստանը պետականորեն դառնալով քրիստոնյա, ձեռք չբերեց պաշտպանության անհրաժեշտ համակարգը և գրեթե ոչինչ չտվեց հայ ժողովրդին՝ իր ազգային-անվտանգությունն ապահովելու առումով:** Ընդհակառակը՝ քրիստոնեական եկեղեցին կարճ ժամանակահատվածում վերածվեց պետության մեջ պետության և ձևավորվող ավատատիրական հարաբերություններում գնալով ավելի ու ավելի էր ամրապնդում իր տեղը, մյուս խոշոր ավատատեր նախարարների նման

նպաստելով պետության թուլացմանը և կենտրոնախույս ձգտումների աճին: Տրդատ Գ և նրա հաջորդների ժամանակ, ինչպես Ճիշտ կերպով նկատել է Հ. Մանանդյանը՝ «քրիստոնեական եկեղեցին և նրա առաջնորդները մեծ դեր էին խաղում ո՛չ միայն երկրի կրոնական, այլև քաղաքական կյանքում»¹:

Սակայն, ժամանակի սկզբնաղբյուրների խորը ուսումնասիրությունն այն համոզմունքն է ծնում, որ այդ դերը միշտ չէ, որ պայմանավորված էր անկախ պետականության ամրապնդման ձգտումներով: Ընդհակառակը, շատ հաճախ եկեղեցին, որոշ ավատատեր նախարարների հետ, ինչպես նշեցինք, նպաստում էր պետականության թուլացմանը: Եվ պատահական չէ, որ Խոսրով Կոտակից սկսած մինչև Վարազդատի կառավարման տարիները (374-378 թթ.) պետական քաղաքականության կարևորագույն մասն էր կազմում պայքարը օրըստօրե աճող կենտրոնախույս ձգտումների դեմ՝ անկախ պետականության ամրապնդման ջանքերով պայմանավորված: Նման քաղաքական մտածողությունն առաջինը գիտակցեց Խոսրով Կոտակը, բայց նա իր պայքարն սկսեց ոչ թե եկեղեցուց, այլ՝ խոշոր ավատատեր նախարարներին հնազանդեցնելով: Դա պատահական չէր, որովհետև, ինչպես գրում է նույն Հ. Մանանդյանը. «Ավելի վտանգավոր էին Խոսրով Գ-ի ժամանակ նախարարական ապստամբությունները, որոնք վտանգավոր ու համառ բնույթ էին ստացել նրա թագավորության երկրորդ կեսում»²:

Ուստի պատահական չէ, որ «Արշակունյաց Հայաստանի քաղաքական պատմության էական կողմերից մեկը կազմում էր կենտրոնական իշխանության արյունահեղ պայքարն ընդդեմ կենտրոնախույս ու ապստամբ նախարարությունների»³:

Արշակունյաց թագավորների և հայ նախարարների երկպառակություններից օգտվում էին նաև թշնամի պետություններ Պարսկաստանը և Հռոմը, որոնք հաճախ հանդես էին գալիս դրանց հրահրողի դերում: Պատահական չէր նաև այն, որ երբ 330-ական թթ. սկզբներին մագքթյոսների Սանեսան թագավորը արշավեց Հայաստան, գրավեց Վաղարշապատը և մեկ տարի ասպատակեց երկիրը, նախարարների մեծ մասը արքունիքին չօգնեց: Իսկ երբ Մծբինի 40-ամյա հաշտության ժամկետը չլրացած, Շապուհ Բ հարձակվում է Ամիդի վրա, նախարարների մեծ մասը չի օգնում թագավորին: Եվ ահա Խոսրովը որոշում է պատժել անհնազանդ նախարարներին և մասնավորապես Ադանիքի «մեծ բղեշխ» Բակուրին ու Բզնունյաց Դատաբեն իշխանին: Վերջինս բացահայտ դավաճանության դիմելով պարսիկներին ներս էր թողել իր պաշտպանությանն հանձնված Ձորա պահակով (Բիթլիսի լեռնանցք): Խոսրովը լճի ափին գտնվող Առեստ ավանի մոտ հաղթում է պարսիկներին: Դատաբենին ձերբակալում են և բերում Խոսրովի մոտ, որպես մի մարդու, «որ դավաճանել էր իր տիրոջ երկրին, գնդին ու զորքերին»⁴:

¹ Տե՛ս Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ հատոր, Ա մաս, Երկեր, Եր., 1978, էջ 142:

² Նույն տեղում, էջ 144:

³ Նույն տեղում:

⁴ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, Գ, ք:

Խոսքովը գորք է ուղարկում նաև Աղձնիքի Բղեշխ Բակուրի դեմ Վաղի-
նակ Սյունու գլխավորությամբ, որը կոտորում է մեծ բղեշխի ամբողջ տոհմը⁵։
Անշուշտ, Դատաբենի և Բակուրի դավաճանությունն ուներ մեկ ուրիշ պատ-
ճառ։ Նրանց խիստ անհանգստացնում էր այն միտքը, որ Խոսքով Գ Արտա-
շատ-Տիգրանակերտ արքունի պողոտան լրիվ իր վերահսկողության տակ
վերցնելու նպատակով կարող էր վերացնել իրենց իշխանական տները։ Խոս-
քովն, անշուշտ, ճիշտ էր, որովհետև այդ պողոտան ծառայելով միայն արքու-
նիքին՝ կարող էր հարստացնել պետությունը։

Բացի վերոհիշյալներից նա վերացնում է Մանավազյանների և Որդունի-
ների նախարարական տները՝ նրանց կալվածքները գրավելով «յարքունիս»։
Այս տները երկար ժամանակ կովում էին իրար դեմ։ Հ. Մանանդյանը գտնում
է, որ նրանք լինելով կենտրոնական իշխանություններից գրեթե անկախ,
մասնավոր պատերազմների վարումը համարել են իրենց օրինական իրա-
վունքը, իսկ թագավորը համարել է այդ «մարտ պատերազմի առանց իրա-
վանց»⁶։ Ինչպես համոզվում ենք, Խոսքովի ձեռնարկները բխում էին պետա-
կանության ամրապնդման շահերից։ Բայց հարկ է ուշադրություն դարձնել,
որ եթե Խոսքովը այս գրավյալ հողերից որոշ հատկացումներ էր անում եկե-
ղեցուն, ապա՝ նրա հաջորդ Տիրանը (330-350 թթ.) իր պայքարն ուղղեց նաև
եկեղեցու դեմ։ Տիրանի թագավորության շրջանում «ներքին խռովություններն
այնքան սաստկացել էին, որ երկիրը հետզհետե մատնվել էր ծանր դրու-
թյան»⁷։ Ուստի և, պատահական չէ, որ նա շարունակում է հոր քաղաքակա-
նությունը՝ ուղղված իշխանության կենտրոնացման։ Ինչպես վկայում է
Փավստոսը, այս քաղաքականությանը նպաստում է Հայր Մարդպետը, որը
չնայած իր նկատմամբ պատմիչների թշնամական դիրքորոշումներին, գրեթե
միշտ հանդես է եկել որպես պետականամետ անձնավորություն։ «Սա քսու-
թյամբ կոտորել տվեց, - գրում է նա, - շատ նախարարներ, որոնք վնաս չէին
տվել և խանգարեց այսպիսով, մեծ թագավորական իշխանությանը։ Առավե-
լապես նա իր չարախոսությամբ սրի անցկացնել տվեց ու բոլորովին ան-
վտանգ դարձրեց երկու ավագ տոհմերը՝ Ռշտունիների տոհմերը և Արծրու-
նիների տոհմը, սրանց բնաջինջ արին առանց որևէ մեղքի ու հանցանքի, կո-
տորեցին նույնիսկ եզերին»⁸։

Սակայն, Փավստոսը սխալվում է, այդ քայլով (իրականում՝ Տիրանի) ոչ
թե խանգարեց «մեծ թագավորության իշխանությանը», այլ՝ ընդհակառակը՝
նրա պառակտումը և թուլացումը։ Տիրանի մյուս քայլն ուղղված էր եկեղեցու
դեմ։ Կամենալով կասեցնել եկեղեցու աճող հզորությունը, Տիրանը շահում է
նրա դեմ տրամադրված որոշ նախարարների համակրանքը։ Դա նպաստում
է նաև հեթանոսության աշխուժացմանը։ Վրթանես կաթողիկոսի մահից հետո
(341 թ.) «նա աշխատեց ազատագրվել հոգևորականության խնամակալությու-
նից և հանդուրժողաբար վերաբերվել հեթանոսությանը։ Դրանով նա շահում

⁵ Փավստոս Բուզանդ, Պատմություն Հայոց, Եր., 1968, Գ, ը։

⁶ Հ. Մանանդյան, Ֆեոդալիզմը հին Հայաստանում, Եր., 1934, էջ 269։

⁷ Հ. Մանանդյան, Երկեր, Բ հատոր, էջ 158։

⁸ Փավստոս Բուզանդ, III գլ. Ժբ, էջ 46-47։

է Հռոմի և եկեղեցու նկատմամբ թշնամաբար տրամադրված ազնվականության համակրանքը»⁹:

Տիրանի քաղաքականությունից դժգոհում են Մամիկոնյանները, որոնք հեռանում են Տայքի իրենց տիրույթները: Անշուշտ, դժգոհում է նաև Հուսիկ կաթողիկոսը, որն ուներ հռոմեական կողմնորոշում: Վերջինս թագավորին ուրացող համարելով, արգելում է եկեղեցի մտնել, որի պատճառով դաժանորեն սպանվում է: Նոր կաթողիկոսը՝ Աղբիանոսի տոհմից Փառենը չի խառնվում պետական գործերին և ենթարկվում է թագավորին¹⁰:

Տիրանի պետականության ամրապնդմանն ուղղված քաղաքականությունը, դժբախտաբար, տալիս է ժամանակավոր արդյունք: Նրանից դժգոհում է հատկապես նախարարների հռոմեասեր թևը, քանզի Տիրանը նուրբ քաղաքականություն էր ձգտում վարել նաև պարսիկների նկատմամբ: 344 թ. սկսվում է պարսկահռոմեական պատերազմը: Տիրանը պատերազմում է Հռոմի կողմում: Նա գերի է ընկնում և Շապուհի կողմից կուրացվում է: Սակայն, պարսիկները պարտություն կրելով նրան բաց են թողնում և նա հեռու է քաշվում պետական գործերից: Նրան փոխարինում է Արշակը (350-368 թթ.), որի օրոք իր գազաթնակետին է հասնում պայքարը կենտրոնախույս ձգտումներ ունեցող նախարարների (այդ թվում և եկեղեցու) ու պետության միջև: Արշակն ի հայտ է բերում հմուտ քաղաքագետի հատկանիշներ: Արշակի խելացի քաղաքականության արդյունքում (քանզի խուսանավում էր Հռոմի և Պարսկաստանի միջև), նրա բարեկամության էին ձգտում թե՛ Հռոմը և թե՛ Պարսկաստանը: Այդ հաստատում է նաև Հ. Մանանդյանը, գրելով, որ «358-360 թվերին թե՛ Պարսկաստանը և թե՛ Հռոմեական կայսրությունն ամեն կերպ աշխատել էին գրավել Հայաստանն իրենց կողմը»¹¹:

Սակայն, նրա ճկուն արտաքին քաղաքականությանն արգելք էին հանդիսանում նախարարները և եկեղեցին, որոնք հիմնականում հռոմեասեր էին: Ուստի և, Արշակն իր առջև հստակ խնդիր է դնում հարվածել նրանց տնտեսական հզորությանը և ուժեղացնել արքունի իշխանությունը: Այդ նպատակով Մասիս լեռան հարավային մասում նա կառուցում է մի քաղաք, որն իր անունով կոչում է Արշակավան: Նա բաց է թողնում մի հրովարտակ, որով բոլոր այնտեղ բնակություն հաստատողներն ազատվում էին հարկերից: Եվ կարճ ժամանակում այնտեղ բնակություն են հաստատում հազարավոր մարդիկ, որոնք փախել էին ֆեոդալական շահագործումից: Այդ քայլն առաջացնում է նախարարների և կաթողիկոսի դժգոհությունը: Արշակը սպանում է նաև իր եղբոր որդի Գնեղին, հիանալի զիտակցելով, որ նրան ուղարկել է Հռոմը, որպեսզի տիրի հայոց գահին: Այն դեպքում, երբ երկրին սպառնում էր արտաքին ահեղ վտանգը, նախարարները Ներսեհ Կամսարականի գլխավորությամբ և Ներսես կաթողիկոսի լռելյայն օժանդակությամբ, հարձակվում են Արշակավանի վրա, հիմնահատակ ավերում են այն և բնակչությանը սրի քաշում¹²:

⁹ Հայ ժողովրդի պատմություն, հ. II, ԳԱ հրատ., Եր., 1984, էջ 85:

¹⁰ Փավստոս Բուզանդ, Գ, ԺԹ:

¹¹ Հ. Մանանդյան, Երկեր, Բ հատոր, էջ 158:

¹² Մ. Խորենացի, Պատմություն Հայոց, Եր., 1968, Գ, իէ, էջ 263:

Ճշմարիտ է, շատ չանցած Արշակը վրեժ է լուծում՝ բնաջնջելով Կամսարականների տոհմը և նրանցից խլելով Արտագերս ամրոցը, բայց, այլևս դրանից հետո չի կարողանում կյանքի կոչել իշխանության ուժեղացման իր քաղաքականությունը: 363 թ. «ամոթալի պայմանագրից» հետո, երբ սկսվում են հայ-պարսկական պատերազմները, որում պարսիկները պարտություն են կրում, Արշակը զոհ է դառնում Շապուհի դավադրության:

Հոր քաղաքականությունը շարունակում է Պապը (369-374 թթ.), որը չնայած իր երիտասարդ տարիքին, հանդիսանում է պետական-քաղաքական մտքի փայլուն ներկայացուցիչ և ճկուն ղեկավար: Այս վերջին հատկանիշը դրսևորվում է նրա թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականության մեջ: 371 թ. Ձիրավի ճակատամարտից հետո, երբ հաղթում է պարսիկներին, Պապը վարում է Մեծ Հայքի թագավորության լիարժեք անկախությանը միտված քաղաքականություն: Նրա օրոք բանակի թիվը հասցվում է 90 հազարի, ինչը հնարավորություն է տալիս անկախ քաղաքականություն վարելու: Պապը բարելավում է նաև հայ-պարսկական հարաբերությունները, ինչը հանգեցնում է հռոմեասեր նախարարների (այդ թվում և Մուշեղ Մամիկոնյանի) և Ներսես կաթողիկոսի դժգոհությանը: Թագավորական իշխանության և եկեղեցու հակասությունները նոր ուժով են հանդես գալիս: Մինչև նրա թագավորելը, հայոց կաթողիկոսը ձեռնադրվում էր Կեսարիայում, ինչը Հռոմեական կայսրությանը հնարավորություն էր տալիս խառնվելու հայոց ներքին գործերին: Ներսեսի մահից հետո (373 թ.) Պապը կաթողիկոս ձեռնադրեց Աղբիանոսների տոհմից Հուսիկին՝ հայ եպիսկոպոսների ձեռքով: Դրանով հայ եկեղեցին անկախացավ: Ինչպես վկայում է Հ. Մանանդյանը, Պապը «վճռական ու կտրուկ միջոցներ ձեռք առավ եկեղեցականության դեմ, որը քաղաքականապես և տնտեսապես անչափ զորեղացել էր Ներսես կաթողիկոսի ժամանակ»¹³:

Նա փակում է վերջինիս հիմնադրած բարեգործական ու վանական անթիվ հաստատությունները, որոնց պահելը պահանջում էր հսկայական միջոցներ: «Եվ բացի այդ, - գրում է Փավստոսը, - Պապ թագավորը բռնագրավեց եկեղեցու հողերը, որ մեծն Գրիգոր քահանայապետի ժամանակ Տրդատ թագավորը տվել էր եկեղեցուն Հայոց ամբողջ երկրում պաշտամունքի սպասավորության համար, որովհետև յոթ հողից հինգը գրավեց արքունիք և միայն երկու հող թողեց»¹⁴:

Պապը նաև սահմանափակում է եկեղեցական դասի ազատությունը զինվորական ծառայությունից և պահանջում է, որ երեցների ու սարկավագների եղբայրները և որդիները մտնեն արքունի ծառայության մեջ:

Երկրի անկախության ամրապնդմանը միտված Պապի քաղաքականությունը նպաստում է հռոմեասեր նախարարների (այդ թվում Մուշեղ սպարապետի) և եկեղեցու դժգոհությանը: Նրա անկախ քաղաքականությունը չի հանդուրժում և Հռոմը: Եվ ահա նա զոհ է գնում Վաղես կայսեր դավադրությանը, որից, անշուշտ, անմասն չէր և Մուշեղ Մամիկոնյանը (374 թ.): Նրան

¹³ Հ. Մանանդյան, նշվ. աշխ., էջ 214:

¹⁴ Փավստոս Բուզանդ, V գլ., ԼԱ, էջ 237:

հաջորդած Վարազդատը, որը չուներ անհրաժեշտ ճկունությունը, գահընկեց է արվում Մանվել Մամիկոնյանի կողմից 378 թվականին:

Այսպիսով, ինչպես համոզվում ենք, հայոց պետության անկախության ամրապնդմանը ձգտող երեք արքաներն էլ (Տիրան, Արշակ, Պապ) զոհ են դառնում դավադրության: Հայ պետական-քաղաքական միտքը՝ նպատակաուղղված կենտրոնաձիգ պետության ստեղծմանը, հարկ եղած արդյունքը չի տալիս՝ բխվելով մի կողմից տնտեսական շահեր հետապնդող և կույր քաղաքական կողմնորոշում ունեցող նախարարների և եկեղեցու դավադիր ձգտումների և այդ ձգտումներն հոգուտ իրենց շահերին ծառայեցնող Հռոմի և Պարսկաստանի հակահայ քաղաքականությանը: Այս ամենն, ի վերջո, հանգեցնում է Արշակունյաց Հայաստանի 387 թ. բաժանմանը և վերացմանը 428 թվականին:

С.А. АРАКЕЛЯН – Государственно-политическая мысль в Аршакидской Армении в 30-70-ых годах 4-го века. – В статье подвергается анализу государственно – политическая мысль в Армении в 30-70-ых годах 4-го века. Эта мысль была направлена укреплению независимого государства, которому были против многие феодалы и церковь. Борьба для укрепления независимости дает временный результат, потому что внутренние разногласия используют Рим и Персия.

**Կ. ՊՈԼՍԻ ՀՅ.ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՐՄՆԻ ԺՈՂՈՎԸ (1909 թ. ԱՊՐԻԼ) ԵՎ
ՆՐԱ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ**

Ա.Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

1909 թ.-ի մարտի 31-ին (ապրիլի 13-ին) Կ. Պոլսում տեղի է ունենում հետադիմական շարժում, որի նպատակն էր վերականգնել Համիդի բռնապետությունը: Եվ ահա, գումարվում է ՀՅԴ Պատասխանատու Մարմնի ժողովը (1909 թ. ապրիլ), որին մասնակցում են Ս. Զավարյանը, Ակնունին, Ռ. Զարդարյանը, Վահագն Տաթևյանը, Հրաչ Թիրաքյանը, Սարգիս Բարսեղյանը և Ռուբենը: Ժողովը նախագահող Ս. Զավարյանը ներկայացնում է իրավիճակը, որից հետևյալ ճիշտ եզրակացությունն է անում. «Ներկա շարժումը մահաբեր լինելով ոչ միայն սահմանադրության և սահմանադրական տարրերուն, այլև հայ ժողովրդին, ամեն կերպ դեմ լինել անոր, ակտիվ պայքարել անոր դեմ, կողմ լինել բոլոր այն տարրերին, որոնք կը պայքարեն հակասահմանադրական այս շարժման դեմ, աջակցել անոնց անվերապահ կերպով: Միաժամանակ մեր շարքերը և ժողովրդին սպառնացող ֆիզիկական վտանգը կասեցնելու համար ձեռնարկել ինքնապաշտպանություն»¹⁵:

Ս. Զավարյանի այս եզրակացության ճշտությունը բոլորն ընդունում են: Այնուհետև նա մատնանշում է այն գործնական խնդիրները, որոնք արագորեն պետք է լուծվեին: Այդ խնդիրներն էին. «Առաջին. Մեզ մոտ ապաստանած Թալեաթին, Խալիլին և մյուս իթթիհատականներին ամեն կերպ աջակցել, որպեսզի հակասահմանադրական այս հորձանքի դեմ նրանք կազմակերպվեն: Առաջարկում եմ այս գործը հանձնել Գարոյին, Վարդգեսին և Զոհրապին: Նազիմ փաշայի մոտ է արդեն Ազարիկը: Վահագնին հանձնարարել կապվել նրա հետ և մեր աջակցությունը չզլանալ, եթե այն կպատրաստվի պայքարել շարժման դեմ: Սաբահետտինի կողմնակիցները հակառակ են հետաշրջական շարժումին աջակցելու: Նրանց հետ կապը և նրանց վրա հաջողությունը կը ստանձնե Ակնունին»¹⁶:

Ուշագրավ է, որ հակասահմանադրական շարժման դեմ պայքարելու հարցին անդրադառնալիս, քննարկվում է մի առաջարկ, որով հանդես էին եկել Ռուբենը և Վահագն Տաթևյանը: Այդ առաջարկն էր. «Քանի որ ժողովուրդը, բանակը խարխափման մեջ են և կը տատանին Ելտըզի և Սահմանադրության միջև, քանի որ սպայությունը, սահմանադրական տարրերը անգլուխ ու ահաբեկված՝ պահ տված են և կը սպասեն հրաշքի կամ օգնության, քանի որ մեր զանգվածը թիվ ու զենք չունի՝ մենք ձեռնարկենք հրաշքը իրագործելու,

¹⁵ Ռուբեն, Հայ Յեղափոխական ի մը հիշատակարանը, հ. Զ(6), Լոս Անձելես, 1951, նաև՝ Սիմոն Զավարյան, Ա հատոր, Բեյրութ, 1983, էջ 183:

¹⁶ Նույն տեղում, էջ 208-209, նաև՝ Սիմոն Զավարյան, էջ 183:

կրկնենք Սուլթանի մահափորձը այս ուրբաթ օրը, երբ Սուլթանը պիտի դուրս ելնէ Սելամլըքեն»¹⁷:

Ս. Զավարյանն այս առաջարկին դեմ է լինում հետևյալ ծանրակշիռ պատճառներով.

1. «-Հաջողությունը թեական է, և քանի որ արդեն փորձ եղած է արդեն մեր կողմէ, մեզ պիտի վերագրվի մահափորձը:
2. - Հաջողության պարագային, հակասահմանադրական տարրերն էլ չպիտի հանդուրժեն իրենց խալիֆայի հայերի կողմէ սպանվելուն, և հակասահմանադրական շարժումը պիտի ընդհանուր դառնա:
3. - Զախողության պարագային, բացի անկէ, որ պիտի վտանգվին հայերը, պիտի վտանգվի և սահմանադրական տարրերի գործի հաջողությունը, պիտի վարկաբեկվին նրանք և պիտի գորանա հակասահմանադրական հոսանքը: Մենք այդ քայլը վտանգավոր պիտի համարենք և անոր նախաձեռնությունը մեր վրան չպիտի վերցնենք»¹⁸:

Ս. Զավարյանն այնուհետև այն տեսակետն է հայտնում, որ շարժումը հնարավոր է ճնշել միայն բանակի միջոցով և «խանգարելու չէ անոնց գործը մասնակի դեպքերով: Անոնց պիտի միանանք և աջակցենք, երբ անոնք մտնեն Պոլիս»¹⁹:

«Ըստ իս` մենք առաջապահ լինելու չենք, - շարունակում է Ս. Զավարյանը, - այլ` դիմադրող տարրերի մեջը պիտի լինենք և կամ հետևապահը: Ուրեմն, պետք է հրահանգել, որ մերոնք օգնեն սահմանադրական տարրերին և անոնց հետ շարժին և կամ զբաղվին ինքնապաշտպանության կազմակերպմամբ»²⁰:

Անկասկած, ուժեղ են Ռուբենի և Վահագնի առաջարկներին Ս. Զավարյանի հակափաստարկները: Բայց Ռուբենի կողմից նման առաջարկը պայմանավորված է եղել այն տեսակետով, որ Հ.Յ. Դաշնակցությունը այդ ժամանակահատվածում պետք է ընտրեր այնպիսի գործելակերպ, որն է՛լ ավելի կնպաստեր նրա հեղինակության և ուժի աճին կամ դիրքերի ամրապնդմանը: Չէ՞ որ հակառակն էին ուզում երիտթուրքերը: Եվ դա պարզ երևաց հենց նույն օրերին, երբ մերժվեց Հ.Յ. Դաշնակցության ռազմական օգնությունը, որն ապահովելու շտապ քայլերը նա չուշացրեց: Պատասխանատու մարմնի ժողովի որոշմամբ Ռուբենը Վահագնի հետ միասին պետք է ճշտեր Կ. Պոլսի և շրջակայքի մարտական հնարավորության հարցը:

Ռուբենը և Վահագնը գիշերվա ընթացքում եռանդուն աշխատանքով կարողանում են ճշտել, որ վտանգի ժամանակ հնարավոր է ոտքի հանել «500 հոգիանոց կորիզ մը, որ կրնար բազմապատկվիլ ընթացքին»: Սակայն չկար ամենակարևորը` զենքը:

Պատասխանատու մարմնի հաջորդ ժողովը լսում է գիշերը կատարված աշխատանքների մասին: Փաստորեն, դրանք վերջացել էին անպտուղ: Բոլորը հանգում են հետևյալ եզրակացություններին.

¹⁷ Նույն տեղում, էջ 209 և էջ 183-184:

¹⁸ Նույն տեղում, էջ 209-210, նաև` Սիմոն Զավարյան, էջ 183-184:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

«Անատալուի հայությունը այնքա՛ն ցրված է, այնքա՛ն ապագեն, որ իսլամ տարրը ի վիճակի է և տրամադիր է բնաջնջելու բոլոր հայերը, եթե միայն Ելտրզեն թույլտվություն լինի:

Հայաբնակ նահանգները, մանավանդ մեկ քանիսը գավառներեն, ուժ ունեին դիմադրելու իրենց դեմ լարված իսլամ խուժանին, եթե գորքը և ոստիկանությունը չեզոք դիրք բռնեն, իսկ անոնց աջակցության պարագային իսլամության բոլոր հայկական գավառները քանի մը օրեն կրնան բնաջինջ լինել:

Հայաբնակ գավառներու մեջ զենքի ուժը շատ չնչին է. ան բավ կարող է լինել քրդական և այլ տարրերու դեմ քիչ թե շատ դիմադրության, բավական է գավառե գավառ իրար օգնության հասցնելու, իսկ գորքի ու ոստիկանության իրենց դեմ միջամտելու պարագային ան պարտության կը դատապարտվի քանի մը օրեն»²¹:

Ռուբենի և Վահագնի աշխատանքներից եզրակացությունը հետևյալն էր՝ «կարելի է ոչ միայն կազմակերպել ինքնապաշտպանությունը, այլև չվախենալ հակահեղափոխականութենեն, եթե տրամադրելի լինի գոնե 500 զենք, որոնց գործածողները պատրաստ կարելի է համարել»²²:

Բայց անհնար էր նույնիսկ այդ զենքերի կեսը ճարել, ինչպես ասում էր Ս. Զավարյանը, «որ հնարավոր լինի ինքնապաշտպանության մասին մտածել գործնականորեն»: Ուստի և, նա հանգում է հետևյալ եզրակացությանը. «Առանց խուճապի մատնվելու, պետք է համբերությամբ սպասենք դեպքերի ընթացքին և ապավինենք պատահականության և ճակատագրի բարյացակամության»²³:

Այս բոլորից հետո Ռուբենն առաջարկում է իրեն «թույլ տալ անցնելու Եվրոպական Թուրքիո մասը, ուր սահմանադրական տարրերը կհամախմբվեն»²⁴, որպեսզի գեթ այնտեղ կազմակերպվին ինքնապաշտպանական ուժեր՝ ազատարար բանակին օգնելու համար: Եվ ահա, նա մեկնում է Ռոդոսթո, ուր իջևանում է բժիշկ Մալաքյանի մոտ, որ «ազգային գործերու մեջ ղեկավար դիրք ուներ»²⁵:

Հուրախություն Ռուբենի՝ բժ. Մալաքյանը ճիշտ էր պատկերացնում իրավիճակը: Նրա եզրակացությունները հետևյալներն էին.

1. «Մեր ապահովությունը կախված է պատահականութենեն. Սահմանադրության վտանգի պարագային հաստատ պետք է համարել մեր ազգովին վտանգվելը:
2. Երբ աննշան Ռոտոսթոն վտանգը տեսավ, բնականաբար Պոլսո մեջ, որ կեղորոն է հակասահմանադրության, ավելի վտանգի ենթակա է հայությունը:
3. Երբ Պոլիսը վտանգվի, արդեն մենք վտանգված ենք՝ օր մը առաջ, օր մը հետո»²⁶:

²¹ Նույն տեղում, էջ 235, նաև՝ Աշոտ Ներսիսյան, Ռուբեն, էջ 115:

²² Նույն տեղում, էջ 236:

²³ Նույն տեղում, էջ 238:

²⁴ Նույն տեղում, էջ 239:

²⁵ Նույն տեղում, էջ 263:

²⁶ Նույն տեղում, էջ 263-264:

Ռուբենն իր հերթին մատնանշում է այն նպատակները, որոնց համար եկել էր Ռոդոսթո: Դրանք էին՝

1. «Եթե Ռոտոսթոն անմիջական վտանգի տակ է և մենք բանի մը պետք կարող ենք լինել, կը մնանք ձեզ հետ այդ վտանգը բաժանելու:
2. Եթե անմիջական վտանգ չկա և դուք ունիք մարդկային և զինական ուժեր, այդ ուժերը կազմակերպել և տրամադրել Պոլսո ինքնապաշտպանության, քանի որ անմիջական վտանգը կը սպառնա այնտեղի հայության:
3. Եթե Ռոտոսթոն չունի տրամադրելի զենք և մարդ այդ պարագային այս առավոտ իսկ մեկնիլ Սելանիկ կամ Մանաստիր, ուր հանձնարարականներ և ծանոթներ ունինք: Անոնց օգնությամբ կը ջանանք ուժ ստեղծել և վերադառնալ սահմանադրական ուժերի հետ Պոլիս»²⁷:

Պարզվում է, որ հնարավոր էր 1000 մարդուց ավելի զինել, որոնցից 500-ը կարելի էր «տրամադրել արտաքին օգնության», իսկ մնացածը պահել տեղում՝ ինքնապաշտպանություն կազմակերպելու համար:

Ռուբենն անմիջապես ներկայացնում է գործունեության հետևյալ ծրագիրը. «1) գտնել տեղիս վրա իթթիհատի ներկայացուցիչը, շահագրգռել զայն նյութապես կամ բարոյապես, որ նպաստավոր դիրք բռնե մեր առաջարկներուն հանդեպ և անոր միջոցով մեր առաջարկները փոխանցել Սելանիկ և Մանաստիր: Հայտնել, եթե կը ցանկացվի, որ Ռոտոսթոյի մեջ հակասահմանադրությունը ոչ մեկ հենարան ունի: Անհրաժեշտ է, որ արդեն պատրաստ մեկ թապուր հայ կամավորներու տրամադրեն 500 զենքեր, որոնք կը գտնվին հակասահմանադրական ազդեցության տակ գտնվող պահեստներու մեջ: 2) Այս գիշեր իսկ հավաքել մեր խմբապետները, ենթակոմիտեների անդամները և ցուցակը կազմել մեր կամավորներուն և զինական ուժերուն: 3) Առավոտուն համախմբել ժողովուրդը, բացատրել դրությունը և հրապարակալ ձեռնադրել մեր ուժերու և կամավորներու կազմակերպման»²⁸:

Բժ. Մալաքյանը հանդիպում է ունենում իթթիհատի ներկայացուցիչի հետ, որն ընդունում է իրենց առաջարկները: Վերջինս նույն գիշերն իսկ հեռագրով զեկուցում է այդ մասին Մալոնիկ, ուր տեղեկացնում է ՀՅԴ կենտրոնի՝ Ռուբենի միջոցով ծրագրած քայլերի մասին: Նա միաժամանակ Ռուբենի անունից հեռագիր է ուղարկում Մանաստիր՝ Վեհիբին, որ նա պատրաստ է կազմակերպված ուժերը դնել նրա տրամադրության տակ և շարժվել Կ.Պոլիս:

Գիշերը գործում են Ռուբենի ծրագրի համաձայն և կազմում են 500 հոգուց բաղկացած մարտական ուժերի ցանկը: Սակայն, առավոտյան Մալոնիկի իթթիհատական կենտրոնից հրահանգ է գալիս, թե գործը շարունակիր «մինչև որ նոր հրահանգ տրվի հետագա անելիքներու մասին»:

Իթթիհատի ղեկավարներն ունենին իրենց հաշիվները, որոնք մի քանի օրից պարզ դարձան, այն է՝ նրանք չէին ուզում, որ **Հ.Յ. Դաշնակցությունը ունենար դեր հետադիմական շարժումը ճնշելու գործում:**

²⁷ Նույն տեղում, էջ 265:

²⁸ Նույն տեղում, էջ 278:

Ռոտոսթոյում Ռուբենի տենդագին աշխատանքները տվեցին այն արդյունքը, «որ Ռոտոսթոն ոչ միայն ինքը ապահով դարձած էր այս քանի մը ավուր մեջ, այլև դարձած էր շրջանի ապահովության հենարանը»²⁹:

Բացի այդ նա խորամանկությամբ, մինչև Սալոնիկից լուր առնելը, կարողանում է պոկել թուրքերի խոստացած գնքի մի մասը, որոնք պետք է տրամադրվեին Կ. Պոլիս շարժվելու պարագային: Իսկ Հ.Յ. Դաշնակցության պարագլուխների՝ երիտթուրքերին օգնելու պատրաստակամության և որպես դրա ապացույց՝ Ռուբենի Ռոտոսթոյում արդյունավետ գործելու օրերին, վերջիններս խորամանկորեն, այդ օգնությունը չցանկալով, Սալոնիկից տեղի և Ադրիանապոլսի կորպուսների միավորումով կազմելով 100 հազարանոց «գործողության բանակը», ապրիլի 16-ին շարժվեցին Կ. Պոլիս: Ապրիլի 23-ին այն չորս զորապետով շարժվեց քաղաքի վրա: Գլխավոր ճակատամարտը սկսվեց ապրիլի 24-ին, իսկ ապրիլի 26-ին Կ. Պոլիսն անցավ «գործողության բանակի», վերահսկողության տակ: Հաջորդ օրը, ապրիլի 27-ին, պատգամավորների պալատի և ծերակույտի համատեղ նիստում Շեյխ-ուլ-իսլամը կարգաց Աբդուլ Համիդ երկրորդին գահընկեց անելու մասին ֆեթվան:

Երիտթուրքերի կառավարման պատմության մեջ սկսվեց նոր ժամանակաշրջան, որի բնորոշ գիծն էր պանթուրանիզմը:

Ռուբենը մենակ, առանց իր ստեղծած կամավորական խմբերի, հաղթական երիտթուրքական զորքերի հետ մեկնում է Կ. Պոլիս: Ընկերների առաջ նա հետևյալ կարճ հաշվետվությամբ է հանդես գալիս. «Հոս ավալ-թափալ եղանք (Ռոտոսթոյում-Ա. Ն.) և երկու «չաթլաղուզ» իրար քով չկրցանք բերել, որ որսի դուրս գանք: Հոն «բարեխնամ» իշխանությունը մեզ տրամադրեց 500 այնալու, 160 մաուզեր հրացան և 340-ի ալ խոսքը տվավ: Մեր չաթլաղուզները մեզի պահեցինք: Ռոտոսթոն մեկ մարդու պես հագած կապված այդ գնքերով, ըսավ՝ գնամ օգնության Պոլիս, եթե անոր գլխին փորձանք կը պատրաստեն: Իսկ եթե այդ փորձանքը չեղավ, կը միանանք սահմանադրական բանակին և կը մտնենք անոր հետ Պոլիս և Ելտըզի տակ թող մատաղ լինենք: Այս բոլորը երևի դուր չեկավ Սելանիկին, թեև հոն հեռագրվեցավ և Ակնունու անունն ալ հիշատակվեցավ: Սելանիկն ըսավ կողմնակի կերպով. «Պատրաստվեցեք և հրամանի սպասեցեք: Հեռագրեցինք և՛ հրամանատարության, Զամալին ալ հարցուցինք, Ակնունու, Վարդգեսի, Գարոյի և Վահագնի անուններն ալ հոլովեցինք: Բայց այն մնաց պապանձված: Հեռագրեցինք և Մոնաստիր՝ Վեհիբին, որ իմ «եղբայրն» էր իբր թե: Ո՛չ մեկ պատասխան: Մտածեցի անձամբ գնալ Սելանիկ, բայց երբ հասկացա, որ ամեն ինչ վերջանալու վրա է, ճամբաս փախեցի և զորքի հետ քաղաք մտա: Եղածը այդ է»³⁰:

Միանգամայն ճիշտ էր և խոսուն Ռուբենին լսելուց հետո Հրաչ Թիրաքյանի հետևյալ ընդհանրացումը. «Երբ մեր բարեկամները նեղն են՝ մենք կանք, երբ լայնն են՝ մենք չկանք»³¹:

²⁹ Նույն տեղում, էջ 278:

³⁰ Նույն տեղում, էջ 288-284:

³¹ Նույն տեղում, էջ 284:

Եզրակացություններն այս ամենից կրկին ու կրկին հետևյալներն են.

Առաջին. Հ.Յ. Դաշնակցությունը անկեղծորեն իրեն նվիրել էր Սահմանադրությանը և նրա բերած կարգախոսներին, երիտթուրքերի նկատմամբ չունեի կեղծիքի որևէ նշույլ և ձգտում էր անկեղծորեն համագործակցել նրա հետ՝ հանուն Թուրքիո Բարեփոխման:

Երկրորդ. Երիտթուրքերի Բարեկամությունը Դաշնակցության հետ կեղծ էր, նրանք ամեն կերպ ձգտում էին, որ շատ չբարձրանա նրա հեղինակությունը, զգուշանում էին նրանից և չէին ուզում տեսնել նրան որպես գլխավոր դերակատարներից մեկը քաղաքական գործընթացներում:

Երրորդ. Նրանց այս մոտեցումը հետապնդում էր մեկ, գլխավոր միտում՝ պահպանել Թուրքիայի ամբողջականությունը, չհանդուրժել ոչ միայն որևէ անջատողականություն, այլ՝ նույնիսկ մշակութային ինքնավարություն:

Վերջին ապացույցներն այս առումով տվեց ՀՅԴ խորհրդարանական գործունեությունը:

А. НЕРСИСЯН – *Собрание в Константинополе Ответственного органа А.Р. Дашнакцутюн (апрель 1909 г.) и оценки его решений.* – В статье раскрывается стремление А.Р. Дашнакцутюн в Константинополе в помощи младотурков в ликвидации попытки переворота султана 31-го марта 1909 г. Доказано, что младотурки не желали помощи от А.Р. Дашнакцутюн, так как боялись роста его авторитета.

**ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՏ
ՆՈՐ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ
(1991-2009թթ.)**

Հ. Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Նորանկախ ռուսական պետությունը ձևավորվում էր ներքին և արտաքին միջազգային բավական բարդ պայմաններում: Եվ ինչպես 20-րդ դարի սկզբին, այն ծնվում էր քառսի և անիշխանության պայմաններում: Դեռևս մինչև Խորհրդային Միության փլուզումը ՌԽՖՍՀ-ում նույնպես ձևավորվում էին ԽՄԿԿ-ին ընդդիմադիր ուժեր և շարժումներ, որոնց շարքում հատկապես ծանրակշիռ դեր ունեւ «Ժողովրդավարական Ռուսաստան» միավորումը, որը 1990թ. հոկտեմբերին անցկացրեց իր հիմնադիր համագումարը: Այդ համագումարին մասնակցում էին Ռուսաստանի 73 մարզերի և տարածաշրջանների ներկայացուցիչներ, 165 հասարակական կազմակերպություններ, կուսակցություններ, ԽՍՀՄ 23 և ՌԽՖՍՀ 104 ժողովրդական պատգամավորներ: «Ժողովրդավարական Ռուսաստանը» միավորում և ներկայացնում էր 500 հազար մարդ: Նրա ազդեցության, հեղինակության հետ մեկտեղ մեծանում էր նաև հետաքրքրությունը լիբերալ (ազատական) գաղափարների նկատմամբ:

Հետաքրքիր է ասել, որ 1990թ. «Ժողովրդավարական Ռուսաստան» միավորման շրջանում անցկացված հարցումների արդյունքներով հարցվածների 32%-ը գտնում էր, որ Ռուսաստանը պետք է նմանվի ԱՄՆ-ին, քանզի այն հանդիսանում է ճիշտ կազմակերպված պետության օրինակ: Մինչդեռ հինգ տարի հետո՝ 1995թ. անցկացված հարցումների համաձայն, այդ կարծիքին էր արդեն բնակչության 10%-ը, որն էլ վկայում է հասարակության զգալի մասում հիասթափության մեծացման մասին:

ՌԽՖՍՀ-ի անկախության գործընթացը իրավական հիմքերի վրա դրվեց, երբ 1990թ. հունիսի 12-ին հրավիրված ժողովրդական պատգամավորների համագումարն ընդունեց երկրի պետական անկախության մասին հռչակագիր, որով էլ այդ օրը համարվեց Ռուսաստանի անկախության օր: Հարկ է ասել, որ Հռչակագրում դեռևս չէր խոսվում ԽՍՀՄ-ից դուրս գալու մասին, բայց ասվում էր, որ ռուսական օրենքները ունեն գերակայություն համամիութենական օրենքների նկատմամբ:

1991թ. հունիսի 12-ին, անկախության առաջին տարելիցին, Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ տեղի ունեցան երկրի նախագահի ընտրություններ: Երկրի նախագահ ընտրվեց Բ. Ն. Ելցինը, որը բավական մեծ առավելության հասավ մրցակիցներ Ն. Ի. Ռիժկովի, Վ. Վ. Ժիրինովսկու, Ա. Մ. Տոլենի, Ա. Մ. Մակաշովի և Վ. Վ. Բակատինի նկատմամբ: Նույն թվականի նոյեմբերին նախագահ Բ. Ն. Ելցինի գլխավորությամբ ձևավորվեց երկրի նոր կառավարությունը՝ երկու փոխվարչապետներով՝ Գ. Բուրբուլիսի և Ե. Գայդարի: Կառա-

վարությամբ կից գործում էր նաև խորհրդականների ինստիտուտը, որում առաջատար դեր ուներ ամերիկյան լիբերալ-տնտեսագետ Դ. Սաքսը:

Կառավարությունը պետական կառավարման ապարատում բարեփոխումներ իրականացնելու քայլեր ձեռնարկեց, որի արդյունքում վերացվեցին իշխանության կառավարման նախկին կառույցները, վերափոխվեց ողջ համակարգը: Մի շարք միութենական հաստատություններ, նախարարություններ դրվեցին ռուսական կառավարության տրամադրության տակ:

1992թ. ապրիլի 2-ին փոխվեց նաև ռուսական պետության պաշտոնական անվանումը. ՌԽՖՍՀ-ն վերանվանվեց Ռուսաստանի Դաշնություն կամ Ռուսաստան: Խորհրդային Միության փլուզումով Ռուսաստանի Դաշնությունը կանգնած էր նոր մարտահրավերների, նոր ճանապարհների ընտրության առջև, քանզի երկրում տեղի էր ունենում հասարակության արմատական փոխակերպում՝ տրանսֆորմացիա, որի մասին երկրի նոր ղեկավարությունը հասկանալի պատճառներով չէր կարող առաջին իսկ օրերից բացահայտ խոսել:

Խորհրդային ավանդույթներով պայմանավորված մարդիկ բացասական պատկերացումներ, քննադատական մոտեցումներ և դիրքորոշումներ ունեին կապիտալիստական հասարակարգի, շուկայական հարաբերությունների, ազատական-լիբերալ գաղափարների և Արևմուտքի այլ արժեքների նկատմամբ:

Երկրի նախագահ Բ. Ն. Ելցինը 1991-1992թթ. իր հրապարակային ելույթներից և ոչ մեկում չէր խոսում կապիտալիզմի կառուցման՝ որպես պետության վերջնական նպատակի մասին: Իսկ դա նշանակում է, որ հարցի կարևոր պատասխանը, թե որն էր Ռուսաստանի զարգացման ճանապարհը, մնում էր անպատասխան: Դա է պատճառը, որ 1991թ. աշնանը Ռուսաստանի ներքաղաքական իրավիճակը դեռևս անկայուն էր: Երկիրն ապրում էր տագնապալի և խառնակ օրեր:

Ինչպես գնահատում են պատմաբանները, քաղաքագետները, Բ. Ն. Ելցինը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո չէր ցանկանում «նավակը ճոճել», տարուբերել, քանզի նման հեռանկարը ձեռնտու չէր ռուսական նախկին կուսակցական պաշտոնյաներին և ոչ էլ ռուսական նոր դեմոկրատներին: Նաև անհրաժեշտ էր հաշվի առնել այն հանգամանքը, որ Ռուսաստանի Ֆեդերացիայի, նրանում ապրող հարյուրից ավելի ազգերի, ազգությունների ներկայացուցիչները երկրի հասարակական-քաղաքական զարգացումների մասին ունեին տարբեր մոտեցումներ, տարբեր ընկալումներ, հոգևոր, մշակութային, քաղաքակրթական տարբեր մակարդակներ և, որ կարևոր է, պահպանողական հայացքներ, ուստի երկրի առջև ծառացած վերափոխումները պետք է իրականացվեին ոչ այնքան հապճեպությամբ:

Բավական է ասել, որ Ռուսաստանի Դաշնության կազմում կային 89 սուբյեկտներ, այդ թվում 21 ինքնավար հանրապետություններ³²: Իրողություն էր նաև այն, որ երկրի ղեկավարության առջև ծառացած ամենակարևոր հարցերից մեկը երկիրը քաղաքական և տնտեսական ճգնաժամից հանելն էր, երկ-

³² См. у А. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2006, էջ 468:

րում սկսված ժողովրդավարական վերափոխումների իրականացումը և իրավական պետության ստեղծումը: Ընդ որում փոփոխությունները կատարվում էին բավական դանդաղ և զգույշ, քանզի դրանք բախվում էին հին խորհրդային նոմենկլատուրայի (անվանակարգային ցուցակի աշխատողների) դիմադրությանը: Դա է պատճառը, որ խորհուրդների նոր ընտրություններ տեղի չունեցան, ուստի խորհուրդներում և տնտեսական մյուս կառույցներում դեռևս շարունակվում էին գերիշխող դիրք գրավել նախկին նոմենկլատուրայի ներկայացուցիչները: Իսկ փոփոխություններն առաջին հերթին վերաբերում էին ԽՄԿԿ ապարատին, որի գործունեությունը արգելվեց, իսկ կուսակցության ունեցվածքը, գույքը արգելափակվեց: Իրականում իշխանության տարբեր թների միջև կային խոր հակասություններ, որոնք հանգեցնում էին միմյանց միջև սուր պայքարի: Խոսքը վերաբերվում է օրենսդիր և գործադիր իշխանություններին, նրանց կողմից երկրում կատարվող արմատական փոփոխություններին, դաշնային և տարածաշրջանային (ռեգիոնալ) ինքնավար կազմավորումներին, որոնց մի մասի շրջանում ուժեղանում էին անջատողական ձգտումները՝ որոնք սպառնում էին Ռուսաստանի Ֆեդերացիայի պառակտմանը:

1991թ. սեպտեմբերին Չեչենա-Ինգուշթական ինքնավար հանրապետության Գերագույն Խորհուրդը հայտարարեց Ռուսաստանի կազմից դուրս գալու մասին, որը հետագայում հանգեցրեց տարածաշրջանում ծանր ճգնաժամային իրավիճակի և ի վերջո՝ պատերազմի:

Ռուսաստանի Ֆեդերացիայի փլուզման վտանգը հատկապես ուժեղացավ 1992 թվականին: 1992թ. ամռանը Ռուսաստանի Դաշնության տասնյակ սուբյեկտներ՝ Թաթարստանը, Բաշկիրիան, Յակուտիան, Ուդմուրտիան, Նովոսիբիրսկի, Տյումենի մարզերը կա՛մ ուշացնում էին, կա՛մ դադարեցնում էին Դաշնային բյուջեին տրվող հարկերը: Իսկ որոշ սուբյեկտներ առաջարկում էին երկիրը վերափոխել համադաշնության, ոմանք էլ ավելի հեռուն էին գնում. կամ անջատվել Կենտրոնից կամ էլ ավելի հստակեցնել Կենտրոնի և ծայրամասերի, ինքնավար քաղաքական միավորումների իրավունքներն ու պարտականությունները: Նման տրամադրությունները սպառնում էին երկրի միասնությանը, ամբողջությանը՝ ստեղծելով վտանգ պառակտման համար:

1992թ. մարտի 31-ին Ռուսաստանի Դաշնության բոլոր սուբյեկտները, բացառությամբ Թաթարստանի և Չեչնիայի, կնքեցին դաշնային պայմանագիր, որով հստակեցվեցին Դաշնության մեջ մտնող սուբյեկտների միջև եղած հարաբերությունները, իրավունքներն ու պարտականությունները, միմյանց միջև իրավունքների բաշխումը և այլն: Այդ պայմանագրով զգալիորեն մեղմացվեց երկրի ներքաղաքական լարվածությունը և մասնակիորեն դադարեցվեց օրենքների, պատկերավոր ասած, պատերազմը:

Երկրում առաջացած քաղաքական ճգնաժամը հաղթահարելու նպատակով Բ. Ն. Ելցինը 1993թ. սեպտեմբերի 21-ին հրաման արձակեց (թիվ 1400) «Մահմանադրական փուլային ռեֆորմներ» անցկացնելու մասին: Նա արձակեց ժողովրդական պատգամավորների համագումարը և Գերագույն Խորհուրդը, միաժամանակ նպատակ ունենալով անցկացնել հանրաքվե՝ ձևավորելու երկպալատ դաշնային խորհուրդ (Պետական դումա, Դաշնային խորհուրդ):

Սակայն ընդդիմությունը մերժեց լեգիտիմ ճանապարհով դեպքերի զարգացման նման ընթացքը և դիմեց վճռական քայլերի նախագահի նախաձեռնությունների դեմ: 1993թ. սեպտեմբերի 23-ի գիշերը ժողովրդական պատգամավորների արտահերթ տասներորդ համագումարը, որը քվորում չուներ, ընդունեց որոշում, որով նախագահ Բ. Ն. Ելցինի քայլը որակեց «պետական հեղաշրջում» և նրան հեռացրեց պաշտոնից: Համագումարը փոխնախագահ Ա. Վ. Ռուցկոյին ընտրեց նախագահի պաշտոնակատար: Դեպքերի նման զարգացումը հանգեցրեց պայքարող կողմերի միջև զինված ընդհարման:

1993թ. հոկտեմբերի 3-ին ընդդիմությունը Մոսկվայի Սմոլենսկի հրապարակում կազմակերպեց անկարգություններ՝ ցանկանալով գրոհով գրավել «Օստանկինո» հեռուստակենտրոնը:

Նման պայմաններում Բ. Ն. Ելցինը, ամբողջ պատասխանատվությունը վերցնելով իր վրա, հրաման արձակեց շրջափակել «Սպիտակ տունը» և գրոհով այն վերցնել: Այդ գործողությունների ընթացքում երկու կողմից եղան զոհեր, իսկ խռովարարները ձերբակալվեցին³³: Նույն 1993թ. դեկտեմբերի 12-ին տեղի ունեցան ՌԴ-ի Պետական դումայի և Դաշնային խորհրդի ընտրությունները: Միաժամանակ անցկացվեց Սահմանադրության նախագծի վերաբերյալ հանրաքվե: Ընդ որում ընտրությունները Ռուսաստանի դաշնությունում 80-ամյա ընդմիջումից հետո տեղի էին ունենում բազմակուսակցական հիմքի վրա և ընթանում էին կուսակցությունների միջև մղվող սուր պայքարում: Սկզբնական շրջանում ընտրություններին հավակնում էին մասնակցել 35 քաղաքական կուսակցություններ և շարժումներ, սակայն դրանցից միայն 13-ին հաջողվեց գրանցվելու համար հավաքել անհրաժեշտ 100 հազար ընտրողների ստորագրությունները:

Ընդհանուր առմամբ Պետական դումայում ընտրվեցին 44 պատգամավորներ կուսակցական (համամասնական) և մեծամասնական (միամանդատ) ընտրացուցակներով: Ընտրություններին մասնակից 13 կուսակցություններից 8-ին հաջողվեց հավաքել անհրաժեշտ ձայներ Պետական դումայում իրենց ընտրողներին ներկայացնելու համար: Առավել շատ ձայներ ստացան «Выбор России» կուսակցությունը՝ 76 տեղ, Լիբերալ դեմոկրատական կուսակցությունը՝ 63 տեղ, Ագրարային կուսակցությունը՝ 55 տեղ և Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունը՝ 45 տեղ:

Կարևոր իրադարձություն էր նաև նոր Սահմանադրության ընդունման համար հանրաքվեի անցկացումը, որի օգտին քվեարկեց ժողովրդի 50%-ից ավելին: Դա կարևոր քայլ էր երկիրը ժողովրդավարության ուղիով տանելու համար: Չնայած որոշ թերություններին, անկատարությանը՝ այնուամենայնիվ 1993 թ. Սահմանադրությամբ երաշխավորվում էին միջազգային նորմերին համապատասխան մարդու իրավունքները, խոսքի, խղճի, տեղեկատվության ազատությունները և այլն: Այդ ամենը հանդիսանում էր որոշակի իրավական հիմք Ռուսաստանի Դաշնությունում երկպալատ պառլամենտի և ժողովրդավարական Ռուսաստանի ձևավորման համար:

³³ St' u, **В. А. Шестаков**, Новейшая история России. М., Владимир, 2008, էջ 417-418:

1994թ. աշնանը երկրում սկսվեց Պետական դումայի նոր ընտրությունների գործընթացը: Ի տարբերություն նախորդ ընտրությունների, որոնք տեղի էին ունենում քաղաքական և իրավական արտակարգ պայմաններում, 1995թ. ընտրությունները տեղի ունեցան համեմատաբար հանգիստ պայմաններում:

Ընդհանուր առմամբ գրանցվել էին 43 ընտրական միավորումներ և խմբավորումներ, որոնց առատությունն էլ ցույց տվեց, որ նման ցրվածությունը նախ վկայում էր ռուսական ժողովրդավարության ոչ հասունության մասին, որն էլ զգալի չափով խանգարեց որոշ խմբավորումների հաղթահարելու 5 տոկոսի սահմանը՝ Պետական դումայում տեղեր ստանալու համար:

Երկրորդ Պետական դումայում ընտրվեցին 450 պատգամավորներ: Պատգամավորների գերակշիռ մասը օրենսդիր և գործադիր մարմինների նախկին աշխատողներ էին, շատերը նախկին պատգամավորական խմբի անդամներ: Դումայի ընդհանուր թվի 36%-ը ՌԴՀՀ-ի անդամներ էին, 12%-ը՝ «Մեր տունը Ռուսաստանն է» (Наш дом-Россия) կուսակցության անդամներ, 11%-ը՝ Լիբերալ-դեմոկրատական կուսակցության անդամներ, 12%-ը՝ «Յաբլոկո» («Яблоко») խմբի անդամներ՝ Գ. Ա. Յավլինսկու գլխավորությամբ, 17%-ը՝ անկախ պատգամավորներ, իսկ 14%-ը՝ տարբեր ընտրական միավորումների անդամներ և այլն³⁴:

Պետական դումայի նման կազմը վկայում էր, որ միջկուսակցական պայքարը Դումայում բավական սուր բնույթ էր կրելու: Հիմնական պայքարը և տարաձայնությունները վերաբերում էին երկրի վարած ներքին և արտաքին քաղաքականությանը, հատկապես տնտեսական և քաղաքական բարեփոխումներին, Չեչնիայի նկատմամբ վարվող քաղաքականությանը, ՆԱՏՕ-ի հետ մերձեցման քայլերին և այլն:

Իշխանությունների նկատմամբ ընդդիմադիր ուժերի դիրքորոշումները (Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցություն, Լիբերալ-դեմոկրատական կուսակցություն, Գ. Ա. Յավլինսկու «Յաբլոկո» խմբավորում և այլն) պաշտպանություն էին գտնում հասարակության որոշակի խավերի շրջանում, որոնք ապրելով կարոտախտի զգացում՝ պայմանավորված տնտեսական դժվարություններով, ձգտում էին վերականգնել նախկին կարգերը, այսինքն վերադառնալ սոցիալիզմի արժեքներին: Հենց այն փաստը, որ Պետական դումայի երկրորդ գումարման ընտրություններում Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունը ուներ 158 մանդատ, վկայում է հասարակության մեջ տեղի ունեցող նման խմորումների մասին:

Այդ ամենը ավելի սուր ձևով դրսևորվեց 1996թ. երկրում անցկացվող նախագահական ընտրությունների ժամանակ, որին հավակնում էին 11 թեկնածուներ, այդ թվում՝ Բ. Ն. Ելցինը, Գ. Ա. Զյուգանովը, Վ. Վ. Ժիրինովսկին, Մ. Ս. Գորբաչովը, Գ. Ա. Յավլինսկին և ուրիշներ: Պայքարն այնքան սուր էր, որ ընտրություններն առաջին փուլով չավարտվեցին: Երկրորդ փուլում կրկին հաղթանակի հասավ Բ. Ն. Ելցինը, որի օգտին քվեարկել էին ընտրողների

³⁴ См. у А. С. Орлов, В. А. Георгиев, Н. Г. Георгиева, Т. А. Сивохина. История России. М., 2006, էջ 474-475:

55%-ը: Նրա գլխավոր մրցակից Գ. Ա. Զյուզանովը ստացել էր 40, 7%-ը: Բայց բոլոր դեպքերում նախագահական ընտրությունների արդյունքները վկայում էին, որ ընդհանուր առմամբ ընտրողների մեծ մասը պաշտպանում էր նախագահի վարած քաղաքական գիծը, որն ուղղված էր շուկայական հարաբերությունների ձևավորմանը և երկրի դեմոկրատացմանը:

Հետագա ընտրությունները տեղի էին ունենում նոր օրենքի հիման վրա, որը նպաստում էր երկրում բազմակուսակցության ձևավորմանը, ընտրությունները միայն համամասնական ընտրակարգով, կուսակցական ցուցակներով և այլն: Ընդ որում ռուսական քաղաքական կյանքի առանձնահատկություններից մեկն այն էր, որ երկրում աստիճանաբար տեղի էր ունենում կուսակցությունների միավորում, խոշորացում: 2003թ. երկրի առաջատար ուժ համարվող «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը Դումայի ընտրություններում ստացավ ընտրողների 37, 57%-ը, այսինքն՝ ավելի շատ, քան մյուսները միասին վերցրած, որոնք կարողացան հաղթահարել 5%-ի սահմանագիծը: Ընդհանուր առմամբ «Միասնական Ռուսաստան» ֆրակցիան Դումայում ուներ 303 պատգամավոր, որն էլ հնարավորություն տվեց սահմանադրական հիմքի վրա կազմել կառավարություն:

Իշխանական կուսակցության հետագա քայլերը ուղղված էին իր դիրքերի էլ ավելի ամրապնդմանը: Այդ նպատակով ընդունվեց օրենք, որի համաձայն կուսակցության անդամների նվազագույն թիվը 5 անգամ ավելացվեց՝ 10 հազարից հասցնելով 50 հազարի, որն էլ առաջին հերթին ապահովում էր վարչական ռեսուրսներ ունեցող կուսակցության հնարավորությունները: Իսկ այն կուսակցությունները, որոնք չէին կարող բավարարել նոր պահանջները, դատարանի միջոցով ենթակա էին վերացման: Նման հանգամանքը ունեցավ այն հետևանքը, որ գրանցված կուսակցությունների թիվը կտրուկ կրճատվեց: Եթե 2003թ. երկրում գործում էին 45 կուսակցություններ, ապա արդեն 2007թ. նրանց թիվը հասավ 15-ի, իսկ արդեն 2009թ. սկզբներին՝ 9-ի³⁵:

2005թ. ամռանը ընդունված նոր օրենքով ընտրական խմբավորումներում միավորված կուսակցությունները Դումայում ընտրվելու համար պետք է հաղթահարեին արդեն ոչ թե նախկին 5%-ի սահմանը, այլ արդեն 7%-ը: Վերացվեց նաև «բոլորի դեմ» ընտրակարգը: Մյուս նորությունն այն էր, որ նախկին խառը ընտրությունների համակարգը փոխարինվեց 100%-ոց համամասնական ընտրակարգով, որն էլ ավելի մեծացրեց «Միասնական Ռուսաստան» կուսակցության հնարավորությունները:

2007թ. Պետական դումայի ընտրություններում «Միասնական Ռուսաստան» կուսակցությունը ստացավ ընտրողների 64, 3%-ը՝ դրանով երկրորդ անգամ նվաճելով «սահմանադրական մեծամասնության» իրավունքը և կրկին հաստատելով, որ կուսակցական համակարգում շարունակում է գրավել առաջնային դեր: Նույնպիսի հաջողություններ «Միասնական Ռուսաստան» ունեցավ 2009թ. մարտի 1-ին կայացած տարածաշրջանային ընտրու-

³⁵ St' u, Вестник Московского университета. Серия 18. Социология и политология. № 4, 2009, էջ 213-214:

թյուններում, որտեղ հավաքեց 52%-ից ավելի: Իսկ մրցակցությամբ երկրորդ տեղը գրավող Ռուսաստանի Դաշնության կոմունիստական կուսակցությունը հավաքեց ընդամենը 8% ձայն³⁶:

Ռուսաստանի Դաշնության քաղաքական կյանքում հատկապես կարևոր դեր խաղաց այն հանգամանքը, որ 1999թ. օգոստոսի 9-ին Բ. Ն. Ելցինը երկրի կառավարության նախագահի (վարչապետ) պաշտոնակատար նշանակեց Վ. Վ. Պուտինին: Օգոստոսի 16-ին Պետական դուման հաստատեց նրա թեկնածությունը: Կառավարության նոր նախագահը ակտիվ քայլեր ձեռնարկեց չեչենական պատերազմը ավարտին հասցնելու ուղղությամբ: Կարճ ժամանակում զգալի տարածքներ ազատագրվեցին ռուսական ուժերի կողմից: Այդ քայլերը նպատակ ունեին տարածաշրջանում ստեղծելու կայուն վիճակ: 1999թ. դեկտեմբերի 31-ին Բ. Ն. Ելցինը հրաժարվեց երկրի նախագահի պարտականություններից և նախագահի պաշտոնակատար նշանակեց Վ. Վ. Պուտինին՝ համապատասխան երկրի Սահմանադրության: 2000թ. մարտի 26-ին Վ. Վ. Պուտինը նախագահական ընտրություններում հաղթեց և սկսեց կառավարել երկիրը՝ ձեռնարկելով ակտիվ քայլեր երկրում կարգ ու կանոն հաստատելու ուղղությամբ: 2003թ. Չեչնիայում անցկացվեցին ընտրություններ, որոնք նպատակ ունեին ձևավորել քաղաքացիական հասարակություն: 2003թ. հոկտեմբերի 5-ին Ահմադ Կադիրովը ընտրվեց երկրի նախագահ: Նա այդ պաշտոնում էր 2000 թվականից: Հետագա տարիները ցույց տվեցին, որ Չեչնիայում աստիճանաբար անցում էր կատարվում դեպի քաղաքական, տնտեսական նորմալ հարբերություններ՝ չնայած 2004թ. մայիսին ահաբեկիչների կողմից Ա. Կադիրովը սպանվեց, որին փոխարինեց իր որդին: Նման նշանակումը նպատակ ուներ խուսափել Չեչնիայում քաղաքական լարվածության մեծացումից: Երկրում ակտիվացող սոցիալական դժգոհությունը մեղմելու նպատակով Վ. Վ. Պուտինը հանդես եկավ ավելի համարձակ քայլերով՝ խնդիր դնելով 2010թ. այնտեղ կառուցել սոցիալական պետություն: Եվ չնայած Պուտինի մի շարք քայլերը, հայտարարությունները երկրի զարգացման մասին դեռևս հեռու էին իրականանալի լինելուց, բայց նա հաստատական և վճռական էր իր գործողություններում: Կարճ ժամանակում Վ. Վ. Պուտինը կառավարության մի քանի նախագահներ փոխեց. Մ. Ֆրադկով (2004թ. մարտ), Վ. Ա. Զուբկով (2007թ.), Դ. Ա. Մեդվեդև (2005թ. նոյեմբերի 9՝ երկրի վարչապետի առաջին տեղակալ):

2007-2008թթ. պառլամենտական և նախագահական ընտրությունների ժամանակաշրջանը հայտարարվեց «Պուտինի պլանի» իրականացման ժամանակաշրջան:

2007թ. դեկտեմբերի 2-ին անցկացված դումայական ընտրություններն ընթացան Վ. Վ. Պուտինի նկատմամբ յուրօրինակ վստահությամբ: «Միասնական Ռուսաստանը» Վ. Վ. Պուտինի գլխավորությամբ ստացավ ընտրողների 64,3%-ը, որը 21,5 մլն. ձայնով ավելին էր նախորդ ընտրություններից,

³⁶ St' u, Вестник Московского университета. Серия 18. Социология и политология. № 4, 2009, էջ 214-215:

Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը՝ 11,5% (350 հազ. ձայնով նախորդից ավելի), Լիբերալ-դեմոկրատական կուսակցությունը՝ 8,14% (նախորդից 1,3 մլն. ձայնով պակաս), «Արդարացի Ռուսաստան» կուսակցությունը՝ 7,4%: Մյուս կուսակցությունները, հատկապես «Յաբլոկոն», կորցրել էր նախորդի համեմատ 3 մլն. ձայն, Աջ լիբերալ կուսակցությունը և մյուս կուսակցությունները չկարողացան հաղթահարել ընտրությունների համար նախատեսված շեմը:

Պետական դումայի խոսնակ ընտրվեց «Միասնական Ռուսաստան» կուսակցության լիդեր Բ. Վ. Գրիզլովը:

Դումայական ընտրություններից հետո Վ. Վ. Պուտինը, որն արդեն սահմանադրորեն իրավունք չուներ երրորդ անգամ իր թեկնածությունը դնելու երկրի նախագահի ընտրություններում, ընտրեց այն հնարավոր թեկնածուին, որը պետք է փոխարիներ իրեն: 2007թ. դեկտեմբերի 10-ին երկրի չորս առաջատար կուսակցությունների լիդերների հետ հանդիպման ժամանակ («Միասնական Ռուսաստան», «Արդարության Ռուսաստան», «Ազդարային կուսակցություն» և «Քաղաքացիական ուժեր») նա, որպես հավանական թեկնածու ներկայացրեց Դ. Ս. Մեդվեդևին, որն էլ 2008թ. մարտի նախագահական ընտրություններում հասավ հաղթանակի՝ ապահովելով երկրի պետական քաղաքականության հաջորդայնությունը և քաղաքական կայունությունը:

Г. М. АБРАМЯН – *Процесс становления Российской Федерации, как новой государственности (1991-2009гг.)* - В статье показаны трудные и сложные процессы, которые произошли в период распада СССР и становления новой Российской государственности в постсоветский трансформационный период. Особое внимание уделено вопросу формирования новых политических сил и движений, возникших как альтернативные, оппозиционные силы в период перехода страны от тоталитарной системы к демократии. В статье подчёркивается важное значение принятия Декларации независимости Российской Федерации, а также проведения выборов в альтернативной обстановке Президента России как проявление демократических процессов. Особое место занимает проблема появления новых политических партий, которые в противовес правящей Коммунистической партии стали определяющей силой новой многопартийной России. Среди них решающими силами в общественной жизни страны стали партии «Выбор России», ЛДПР, ДПР, КПРФ, АПР, а в настоящее время важная роль, принадлежит «Единой России» и «Справедливой России».

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇՈՑՔԻ, ՀԱՐԹԱՇԵՆԻ ԵՎ ՆԱՎՈՒՐԻ ՄԵՆՀԻՐՆԵՐԸ

Ս. Գ. ՀՄՍՅԱԿՅԱՆ, Հ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ,
Մ. Է. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Աշխարհի գրեթե բոլոր քաղաքակրթություններն իրենց ձևավորման ընթացքում ստեղծել են մեգալիթյան հուշարձաններ: Դրանք հայտնի են թե՛ Ամերիկայում, թե՛ Աֆրիկայում, և թե՛ Եվրասիայում³⁷: Վերջիններս անչափ խորհրդավոր կառույցներ են, որոնց նշանակության, թվագրության և ճարտարապետների մասին եղած տվյալները բազմազան են:

Մեգալիթ բառը ծագում է հին հունարենից՝ **մեգա** («խոշոր», «մեծ») և **լիթոս** («քար») բառերից: Գերմաներենը մեգալիթ հասկացության համար ունի յուրահատուկ տերմին «steinsetzung»³⁸: Հայերենը այս հասկացության համար մշակված տերմին դեռևս չունի: Մեգալիթ ասելով նկատի են առնվում հիմնականում երեք տեսակի հուշարձաններ:

1. Մենհիր. Անգլերեն բառ է, և հայերեն սովորաբար թարգմանվում է «մենաքար» ձևով: Այն հողի մեջ խրված քարե սյուն է: Մենհիրները երբեմն հանդիպում են առանձին կանգնած, երբեմն՝ փոքրիկ խմբերով, դրանք կարող են կազմված լինել նաև մի քանի շարքերից ու ձգվել մի քանի կիլոմետր շարունակ: Սրանք հաճախ «ծառուղի» են անվանվում. այդպիսին է օրինակ Կառնակի մենհիրների «ծառուղին» Ֆրանսիայում (նկար 1):

Վերջերս մենհիրների մի «անտառի» մասին, որը գտնվում էր Վանից ոչ հեռու, տվյալներ են հրապարակվել թուրքական ամսագրերից մեկում (նկար 2)³⁹:

Սովորաբար մենհիր են կոչվում չմշակված քարերով կանգնեցված վերը նշված տեսակի հուշարձանները: Սակայն, կարծում ենք, որ իրենց ձևով, գեղարվեստական և խորհրդանշային առումներով բոլոր համանման հորինվածքները, որոնք չունեն կոնստրուկտիվ նշանակություն, կարող են նշվել այս տերմինով: Որպես այդպիսիք, ճիշտ է որոշ վերապահումներով, կարող են դիտարկվել նաև լավ մշակված, հաճախ քանդակազարդ (եգիպտական, ուրարտական և այլն) ստելաները, թերևս նաև Արտաշեսյան սահմանաքարերը, վաղ քրիստոնեական քարակոթողները, խաչքարերը: Ուշագրավ է, որ վերջիններս էլ հայտնի են «անտառակների» ձևով, ինչպես օրինակ, Նորադուսում, Ներքին Գետաշենում և կամ Նախիջևանում: Ելնելով այս մոտեցումից որպես մենհիր կարելի են դիտարկել նաև **վիշապները** և **ֆալոսաձև** կոթողները, որոնք, ինչպես հայտնի է, տարածված են Հայկական լեռնաշխարհում: Սակայն այսուհետև

³⁷ Jean-Pierre Mohen. The world of megaliths. New York, Oxford, Sidney, 1990.

³⁸ У. Брей, Д. Трамп, Археологический словарь, 1990, стр. 155.

³⁹ Veli Sevin, Anadolu uygarliklan, National Geographic Turkey, Doruktaki uy Garlik: Urartu, 2007, p. 58-77.

ասելով մենհիր՝ նկատի կունենանք այս հասկացության ավանդական նշանակությունը, այն է՝ հողի մեջ խրված՝ անմշակ կամ քիչ մշակված քարե սյուն:

2. Դոլմեններ. Վերջիններս մեծ քարերից պատրաստված վերերկրյա տնակներ են՝ նախատեսված հուղարկավորության համար:

Սեդրակ Բարխուդարյանը Սիսյանի Դոշուն-Դաշ (Ձորաքարեր) հուշարձանի մոտ ուսումնասիրել է երկարությամբ ձգվող, իրար հաջորդող, միմյանց կից դոլմենների մի շարան, որը մի տեսակ լաբիրինթոսի տեսք ունի: Այդ դոլմենները դրսից ծածկված են եղել մանր քարերից կազմված թմբերով⁴⁰:

Գոյություն ունի ևս մի հասկացություն՝ **portal dolmen**, որն ուղղանկյունաձև դամբանասրահ է: Նրա ետնամասը, սովորաբար ավելի նեղ է ու ցածր: Այն առանձնահատուկ է նաև նրանով, որ ունի հսկայական քարերից կառուցված «սյունասարահներ», որոնք փակված են սալաքարերով⁴¹:

Կա մի հասկացություն էլ՝ **dolmen deity** (դոլմենի աստվածություն): Այդպես կոչվել են կոպիտ մշակված սյունաձև քարարձանները, որոնք կարող են ներկայացնել տղամարդ կամ կին: **Դոլմենի աստվածուհին** հաճախ ունենում է իրար մոտ տեղադրված ստինքներ: Դոլմենի աստվածուհու կամ աստծո արձանը Արևմտյան Եվրոպայում դրվում էր մեգալիթյան կառույցների մեջ կամ ժայռափոր դամբարաններում: **Դոլմենի աստվածությունը** սովորաբար առնչվում է մայր հողի պաշտամունքի հետ ու հայտնի է նաև բարձրաքանդակների և պաշտամունքային խեցեղենի վրա եղած պատկերներից⁴²:

Ուշագրավ է, որ արևմտաեվրոպական գիտնականների կողմից «դոլմենի աստվածություն» անվանված կուռքերի նմանակներ հայտնի են նաև Հայաստանի հուշարձաններից: Հայ հնագետները դրանք անվանում են «ֆալոսաձև դիմաքանդակներ»: Վերջիններս հաճախ դրվել են դամբարանների վրա կամ դամբարանների մեջ և առնչվում են թերևս արական պտղաբերության և աշխարհի երեք հորիզոնների միջև կապի ապահովման գաղափարի հետ (նկար 3):

Հայտնի են նաև «դոլմենի աստվածուհիների» սակավաթիվ քարարձաններ, որոնք նույնպես դրվել են դամբարանների մոտ՝ որպես հուշարձան: Նման մի կոթող հայտնի է Շամիրամի դամբարանադաշտից և հնագետները արձանը պայմանականորեն հենց Շամիրամ էլ անվանել են:

3. Մեգալիթների երրորդ տեսակը կրոմլեխներն են՝ քարե օղակները: Կրոմլեխ բառն ունի վալոնական ծագում⁴³: Հայերեն թարգմանվում է որպես «մոգական շրջան»: Կրոմլեխ հասկացության ներքո հնագետները ի նկատի ունեն շրջանաձև դասավորված քարերից կազմված այն հորինվածքը, որից ներս գտնվում է արտաքին աշխարհից տարանջատված սրբազործած տաճար:

Հայաստանի մեգալիթյան հորինվածքների հնագիտական ուսումնասիրությունը սկսել է դեռևս Ժակ դը Մորգանը, այնուհետև այս խնդրին հանգա-

⁴⁰ Մ. Բարխուդարյան, Խորհրդային Հայաստանի նյութական կուլտուրայի հուշարձանները, Եր., 1935, էջ 32:

⁴¹ Մ. Брей, Д. Трамп, Археологический словарь, 1990, стр. 198-199.

⁴² Մ. Брей, Д. Трамп, Археологический словарь, 1990, стр. 76.

⁴³ Մ. Брей, Д. Трамп, Археологический словарь, с. 125.

մանորեն անդրադարձել են Նիկողայոս Մառը և Յա. Սմիրնովը⁴⁴: Նրանք հիմնականում ուսումնասիրել են **վիշապ** քարակոթողները: Ավելի ուշ նույն խնդրի մանրամասն քննությանը անդրադարձել է Բ. Բ. Պիտրովսկին⁴⁵: Այս գիտնականների կարծիքով՝ Հայաստանի «վիշապ կոթողները» առնչվում են քաղցրահամ ջրի պաշտամունքի հետ և խորհրդանշում են աղբյուրների հովանավոր առասպելական պահապանին: Այս խնդրի քննությանը հանգամանորեն անդրադարձել է նաև Մանուկ Աբեղյանը: Նա ուսումնասիրելով այս քարակոթողները, հետևելով Ն. Մառին, դրանք ստորաբաժանում է երկու տեսակի և ավելացնում է մի երրորդը:

Սրանցից առաջինը ձկան արձաններ են: Մյուս տեսակը սյունաձև քարեր են, որոնց վրա բարձրաքանդակված է եզան, իսկ հաճախ նաև գոմեշի գլուխ և կաշի: Կոթողի վրա գոմեշի բերանից սովորաբար ջուր է հոսում:

Վիշապների երրորդ տեսակին է վերագրված Ախալքալաքի արձանը, որի վրա պատկերված են երկու թռչուն և երկգլխանի մի օձ: Նա, մի կողմից ուսումնասիրելով Աստղիկ դիցուհու, մյուս կողմից ձկնակերպ Դերկետոյի պաշտամունքները, գտնում է, որ ժողովրդի կողմից վիշապ անվանված այս կոթողները առնչվում են Աստղիկ-Դերկետոյի կերպարի հետ և ներկայացել են որպես «գոհաբերություն»՝ արված ամպրոպային աստծուն՝ նրանից անձրև խնդրելու նպատակով:

Հետաքրքիր է այն հանգամանքը, որ Գառնիի վիշապը Արգիշթի I-ը վերածել է կոթողի՝ վրան փորագրելով սեպագիր արձանագրություն:

«Վիշապների» վրա երբեմն հանդիպում են փորագրված խաչեր և այս կերպ դրանք դարձել են «ցասման խաչեր»⁴⁶:

Վիշապներն ունեն տարբեր չափեր՝ շուրջ 1մ-ից մինչև 9, 5 մ բարձրություն: Ուշագրավ է, որ դրանք հայտնաբերվել են նաև դամբարանների ներսում: Դամբարանային նյութերից ելնելով՝ Էմմա Խանգադյանը դրանք թվագրում է մ.թ.ա. 16-14 դդ.⁴⁷:

Ցավոք, վերջին տարիներին «վիշապներին» հաճախ տեղաշարժում են: Այժմ տարբեր տեղերից բերված վիշապներ են կանգնած Երևանի Ֆիզիկայի ինստիտուտի մոտ, Երևանի ֆլորայի այգու մոտ, ճարտարապետության թանգարանի առջև (նկար 4), Սարդարապատ գյուղի թանգարանի մուտքի մոտ և այլուր:

Մենհիրների ուսումնասիրությամբ զբաղվել են՝ Գ. Արեշյանը, Կ. Ղաֆադարյանը⁴⁸, Է. Խանգադյանը⁴⁹ և այլ հայագետներ: Շիրակի մեզալիթների ուսումնասիրության խնդրին հակիրճ անդրադարձել են Ն. Խաչատրյանը, Հ.

⁴⁴ **Н. Я Марр и Я. Смирнов**, Вишеры, Труды Государственной академии истории материальной культуры, 1931.

⁴⁵ **Б. Пиотровский**, Вишеры, каменные статуи в горах Армении. Л., 1939.

⁴⁶ **Մ. Աբեղյան**, «Վիշապներ» կոչված կոթողներն իբրև Աստղիկ-Դերկետո դիցուհու արձաններ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտ, Եր., 1975:

⁴⁷ **Է. Խանգադյան**, Լճաշենի վիշապը: Հին Հայաստանի մշակույթ, 13, Եր., 2005, էջ 9:

⁴⁸ **Գ. Արեշյան, Կ. Ղաֆադարյան**, Հայկական լեռնաշխարհի ճարտարապետությունը նախնադարյան-համայնական հասարակարգի և պետական առաջին կազմավորումների ժամանակաշրջանում, «Հայկական ճարտարապետության պատմություն», հ. 1, Եր., 1996, էջ 14-86:

⁴⁹ **Է. Խանգադյան**, Լճաշենի վիշապը, էջ 86-91:

Խաչատրյանը, Բ. Գասպարյանը: Միսիանի մենհիրներն ուսումնասիրել են Օ. Խնկիկյանը, Պ. Հերունին⁵⁰ և այլոք:

Արևմտյան Հայաստանի մեգալիթյան հուշարձանները հանգամանորեն ուսումնասիրել են Ա. Կանսուն, Կ. Է. Բոստանջին, Մ. Օզդումանը և այլոք, իսկ ուսումնասիրությունների ամփոփ արդյունքները հրատարակել է Բաքի Յուքմենը⁵¹:

Հայաստանում գոյություն ունեցող մեգալիթների տարատեսակներից համեմատաբար լավ ուսումնասիրված են մենհիրները:

Այս հուշարձանները նշել են՝

1. Սրբագործված սահմանափակ տարածքը
2. Ինչպես կոեսենսը ստորև, մենաքարերով «ցանկապատվել» է սրբագործված վայրը, հատկապես, երբ այն գրավել է մեծ տարածք, և սրանով էլ տարբերվում է կրմվելից:

Սակրալ կետը նշող Հայաստանի ամենահռչակավոր մենաքարը հայտնաբերվել է Մոխրաբլուրում 1970-ական թթ. և թվագրվում է մ.թ.ա. 3-րդ հազարամյակի 1-ին կեսով: Այն գտնվել է բարձր պատվանդանի վրա՝ պառկած վիճակում: Ուսումնասիրողների կարծիքով ժամանակին այն կանգնած է եղել հենց այդ պատվանդանի վրա: Պաշտամունքային այս կառույցը գտնվում էր Մոխրաբլուր բնակավայրի կառուցապատված թաղամասում և բնակավայրի նման թվագրվում է վաղ բրոնզի դարով:

Առանձին կանգնած մի մենհիր էլ հայտնաբերվել է 1998 թ. Գեղարքունիքի մարզի Գեղիովիտ գյուղում՝ շինարարական աշխատանքների ժամանակ և ուսումնասիրվել է հայ-իտալական արշավախմբի կողմից: Սրանից ոչ հեռու մի ֆալոսաձև կոթող կար անտիկ ծեսի համար հարազատ միջավայրում:

Առանձին կանգնած մենհիրների մյուս խումբը հայտնի է Շամիրամի դամբարանադաշտի պեղումներից:

Շամիրամում մենաքարերը դրված են դամբարանների վրա և կրմվելիների հետ կազմում են մեկ համալիր: Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ որոշ դամբարանների մոտ կան նաև արձաններ հիշեցնող մենաքարեր: Այն դամբարանները, որոնք չունեն մենաքարեր, ունեն դամբանախցեր, որոնցում դրված են ուղղահայաց կանգնած ֆալոսաձև կոթողներ: Սա հետաքրքիր մի երևույթ է, քանի որ մատնացույց է անում այն հանգամանքը, որ վերջիններս՝ մենհիրները, քարակուռքերը և կրմվելիները, գոնե այստեղ ծառայել են մեկ նպատակի, այն է՝ հաստատագրել սրբագործված վայրը:

Հարթաշենի մենհիրները (նկար 5, 6) գտնվում են գյուղից արևելք: Կազմում են հարյուրավոր մետրերով ձգվող քարերի երեք զուգահեռ շարքեր: Մեծ, անմշակ քարերը շարված են իրար հետևից: Քարերի բարձրությունը հասնում է մինչև 1 մ:

⁵⁰ **Ս. Մ. Геруни**, Доисторическая каменная обсерватория Карахундж-Карениш, «Доклады национальной Академии наук Армении», «Астрономия», 1998, №4, стр. 30-32. **Օ. Տ. Մնկկյան**, Syunik During the Bronze and Iron Ages. Barrington, 2002, p. 25-41, III. 4.

⁵¹ **Bakiye Yükmén**, Anadolu megalitleri, İstanbul, 2003.

Համակարգի հարավարևմտյան անկյունում սկսվող եռաշար մենհիրների գանգվածի կոորդինատներն են՝ $41^{\circ} 00' 47''$ հս. և $43^{\circ} 56' 02''$ աե.: Սրանք գտնվում են ծովից 2178 մ բարձրության վրա: Հյուսիս-արևելյան կողմի անկյան կոորդինատներն են՝ $41^{\circ} 01' 03''$ հս. և $43^{\circ} 55' 52''$ աե., բարձրությունն է 2108 մ:

Առաջին շարքը պահպանվել է շուրջ 600 մ երկարությամբ: Մենհիրները կառուցված են բլրի լանջին և ամենաբարձր կետը հյուսիսարևելյան կողմում սկսվում է վերոհիշյալ 2108 մ-ից և ձգվելով լանջն ի վար՝ ավարտվում է 2078 մ մակարդակի վրա: Այսպիսով՝ մենհիրների երկու եռաշարերի միջև մակարդակը շեղվում է շուրջ 30 մ: Մենհիրների մի ուրիշ շարք էլ ձգվում է այս «գետի» հարևանությամբ: Սրանք արդեն ինչ-ինչ պատճառով շուտ եկած քարեր են և չափով քիչ ավելի փոքր են: Տեղայնացված են հետևյալ կոորդինատներով՝ $41^{\circ} 01' 13''$ հս., $43^{\circ} 56' 22''$ աե., բարձրությունը՝ 2144 մ: Հյուսիս-արևելակողմում՝ $41^{\circ} 01' 07''$ հս., $43^{\circ} 56' 29''$ աե., բարձրությունը՝ 2164 մ: Այս եռաշարն էլ իր հերթին ձգվում է շուրջ 250 մ երկարությամբ: Հյուսիս-արևելքից՝ հյուսիսարևմուտք տարբեր եզրերի միջև եղած բարձրությունը տատանվում է 20 մ-ով: Հարթաշենի մենհիրների №1 «գետակը» հեռու է №2-ից 300 մ հարավարևմտյան կողմում և 1000 մ՝ հյուսիսարևելյան կողմում:

Մենհիրների մի «գետակ» էլ գտնվում է Աշոցքի հարավարևմտյան արվարձանների մոտ՝ Աշոցք գյուղի և Անգլիական թաղամասի միջև (նկ. 7, 8): Ցավոք այս մենհիրների «խումբը» խիստ ավերվել է վերջին յոթ տարիների ընթացքում և պահպանված է միայն հատվածներով: Կոորդինատներն են՝ $41^{\circ} 01' 49''$ հս., $43^{\circ} 52' 51''$ աե., բարձրությունը 2046 մ է:

Այսինքն՝ համակարգի մեջ մտնող երկու եռաշարերի փոխադարձ դասավորությունը սեղանաձև է: Հարթաշենի և Աշոցքի մենհիրներն իրարից հեռու են շուրջ 7500 մ:

Ուշագրավ է, որ մենհիրների այս «գետակներից» ոչ հեռու՝ Զույգաղբյուր գյուղում հայտնաբերվեց պաշտամունքային մի հարթակ, որից քիչ հեռու գտնվում է հսկայական դոլմենը: Մենհիրների հարավարևմտյան անկյունից այն հեռու է դեպի արևմուտք շուրջ 4 կմ: Այս մենաքարերի «անտառներից» բացի Շիրակի տարածքում մենհիրներ են գտնվել նաև Բենիամին գյուղի մոտ, որոնք ցավոք վատ են պահպանված:

Նավուրի մենաքարերը գտնվում են Տավուշի մարզի Նավուր գյուղի հարավակողմում, Բերդի գլուխ ամրոցի հյուսիսային լանջի մոտ (նկ. 9, 10): Կոորդինատներն են՝ $40^{\circ} 51' 54''$ հս., $45^{\circ} 21' 08''$ աե., բարձրությունը՝ 1429 մ:

Իրարից ոչ հեռու տեղադրված երեք անմշակ քարայուներ են: Երկուսն ունեն շուրջ 2, 5 մ բարձրություն, իսկ մեկը, որը հայտնաբերվել է մեր կողմից, ավելի փոքր է ու թերի:

Բացառված չէ, որ ժամանակին այս քարահուշարձանները հսկայական «քարապուրակի» մասն են կազմել՝ ձգվելով մոտ 1 կմ դեպի հյուսիս-արևելք, որտեղ գտնվել են Ցից քարեր ամրոցի մենաքարերը, թերևս նմանվելով Աշոցքի մենաքարերի «պուրակներին»: «Ցից քարեր» անվանված մենհիրներից միայն մեկն է պահպանված, որը հայտնաբերվել է Ս. Գ. Հմայակյանի կողմից: Դրանց մասին տեղեկություններ ենք քաղել նաև տարածքի բնակիչներից:



Նկ. 1 – Կառնակի մենհիրների ծառուղին,
 Նկ. 2 – Մենհիրների պուրակ Վանի մոտ,
 Նկ. 3 – Կոթիի ֆալտսակերպ արձանը,
 Նկ. 4 – «Վիշապ»՝ Հանրապետության հրապարակի մոտ,
 Նկ. 5 – Հարթաշենի մենհիրների «ծառուղին» (հատված),



Նկ. 6 – Հարթաշենի մենհիրների «ծառուղին» (հատված),
 Նկ. 7 – Աշոցքի մենհիրների «ծառուղին» (հատված),



Նկ. 8 – Աշոցքի մենհիրների «ծառուղին» (հատված),
 Նկ. 9, 10 – Նավուր գյուղի մենհիրները:

Ի տարբերություն Կովկասի⁵² և Արևմտյան Հայաստանի տարածքից⁵³ Հայաստանի Հանրապետության մեզալիթյան հուշարձանները գրեթե չեն ուսումնասիրված (չեն քարտեզագրված, տեղահանությունը չունեն, բացառությամբ Զորաքարերից⁵⁴ և կրոմլեիներով պատված մի քանի դամբարանադաշտերից), այն դեպքում, երբ հուշարձանները առաջնակարգ նշանակություն ունեն նախնադարյան Հայաստանի արվեստի և հոգևոր կյանքի ուսումնասիրության համար:

С. АМАЯКЯН, А. АКОПЯН, М. МЕЛКОНЯН - Менгиры в Ашоцке, Арташене и Навуре. – Изучение мегалитических памятников Армении было начато в первых десятилетиях прошлого века. Однако и сегодня изучение этих памятников остается у нас в начальной стадии развития.

Данная статья посвящена менгирам в двух марзах республики: Ширак (Ашоцк, Арташен) и Тавуш (Навур). В Ашоцке и Арташене они простираются «аллеями», а в Навуре, как показали наши исследования, они когда-то тоже составляли «аллею», которая начиналась у киклопической крепости Берди-глух, и доходила до другой киклопической крепости Циц карер.

Эти «аллеи» из каменных столбов во всех трех случаях ограничивали достаточно обширное пространство по неизвестной нам причине считавшемся тогда сакральными.

⁵² В. Маркович, Племена северного Кавказа в эпоху бронзы, М., 1960, стр. 14-86

⁵³ Bakiye Yükmén. Anadoiu megalitleri. Istanbul, 2003.

⁵⁴ О. S. Xnkikyan. Syunik During the Bronze and Iron Ages. Barrington. 2002, p. 25-41, III. 4.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԸՍՏ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀԻԿ
ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Հայաստանում ընտանեկան հարաբերությունները կարգավորող նորմերը ձևավորվել են ավելի վաղ, քան հասարակական հարաբերությունների այլ բնագավառներինը, քանզի ընտանիքն է համարվում հասարակության սկզբնական բջիջը: Ընտանեկան հարաբերությունները աստիճանաբար, ժամանակի ընթացքում նախապես կարգավորվել են սովորութեկան իրավունքի նորմերով: «Սովորույթը, հակառակ օրենքի, որ սահմանվում է հայտնի օրենսդիր մարմնի կողմից, անդեմ է, նրա հեղինակն անհայտ է. նա ծագում է հասարակության մեջ, ինչպես լեզուն, բանահյուսությունը. նրա սկիզբն անորոշ է: Նա հայտնի է դառնում իր գոյությամբ միայն այն ժամանակ, երբ արդեն կադապարվել է ու կիրառվում է մարդկանց կողմից»⁵⁵: Պետության առաջացման հետ միաժամանակ, առաջանում է նաև իրավունքը որպես ողջ հասարակության անդամների փոխհարաբերությունները կարգավորող վարքագծի համընդհանուր կանոն: Պետության գոյության պայմաններում են նաև ձևավորվել կանոնական օրենքները, որոնցով կարգավորվել են ընտանիքի անդամների ինչպես անձնական, այնպես էլ գույքային փոխհարաբերությունները:

Քրիստոնեական կրոնի հաղթանակով տիրապետող աշխարհիկ իրավունքի կողքին հայ իրականության մեջ ծնվեց եկեղեցական կանոնական իրավունքը: Արդեն IV դարում կանոնական և աշխարհիկ իրավունքների գոյությունը Հայաստանում անժխտելի իրողություն էր: Վաղ միջնադարում մեզանում մեծ մասամբ օգտագործել են քրիստոնեական եկեղեցու՝ տիեզերական դարձած կանոնները: Այնուհետև երևան են գալիս բուն հայկական գրավոր կանոնները, որոնց առաջին գրի առնողները եղել են Գրիգոր Լուսավորիչը, Հովհան Մանդակունին և ուրիշներ:

Հայ կանոնական իրավունքի հիմնական աղբյուրն էր «Կանոնագիրք Հայոցը»⁵⁶: Քրիստոնեության ընդունած ժողովուրդների կանոնական իրավունքի զարգացումը խաբսխվեց Ս. Գրքի՝ Հին և Նոր Կտակարանների, եկեղեցական ավանդույթների և առաքելական կանոնների վրա: Կանոնական ակտերը ստանում էին պատվիրանների, կանոնների կամ օրենքների ձև: Այդպիսի իրավասությամբ օժտված էին ընդհանրական եկեղեցու տիեզերական, տեղական և ազգային ժողովները, որոնց ընդունած կանոնախմբերը ճանաչվում և կիրառվում էին Հայաստանում, դիտվում իբրև հայ կանոնական իրավունքի աղբյուր և վավերագրվում նրա կանոնագրքում: Ընդհանրական եկեղեցու

⁵⁵ Տե՛ս Ռ. Մամուլեյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Եր., 1939, էջ 26:

⁵⁶ Տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Ա, Եր., 1964, Բ, Եր., 1971, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի:

իրավական սահմանումներից հայ եկեղեցին ընդունել և իր համար պարտադիր է ճանաչել երեք տիեզերական ժողովների՝ Նիկիայի (325), Կոստանդնուպոլսի (381) և Եփեսոսի (431) որոշումները: Հարկ է նշել, որ օտար աղբյուրների կողքին անգնահատելի է նաև հայ ազգային-եկեղեցական կանոնախմբերի նշանակությունը հայ իրավունքի պատմության հետազոտման գործում: Դրանք բաժանվում են՝ ա) ազգային եկեղեցական ժողովների կողմից ընդունված կանոնախմբերի՝ Աշտիշատի (354), Շահապիվանի (447), Դվինի չորրորդ (648), Դվինի հինգերորդ (719), Պարտավի (768) և բ) հայ հոգևոր առաջնորդների կանոնների: Այդ ժողովներն, ի թիվս դավանական հարցերի, կարգավորում էին նաև ժամանակաշրջանի հուզող առանձին աշխարհիկ-իրավական հարաբերություններ: Նշված օտար և ազգային կանոնախմբերը հնարավորություն են ընձեռում ուրվագծելու հայ ընտանեկան, քրեական, քաղաքացիական իրավունքների կարևոր ինստիտուտները:

Հովհաննես Օձնեցի կաթողիկոսը (717-728) գիտական բարեխղճությամբ մեկ հավաքածուի մեջ ամբողջացրեց այդ կանոնախմբերը և ստեղծեց իրավաբանական պատմական կոթող՝ «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն: Նրա ստեղծած Կանոնագիրքն ամփոփում է 24 կանոնախումբ: Արդեն X դարում կանոնախմբերի թիվը Հայոց կանոնագրքում հասնում է 40-ի⁵⁷: Մեծ է եղել «Կանոնագիրք Հայոց»-ի դերն ու նշանակությունը հայ իրավունքի հետագա զարգացման համար:

Հայ իրավունքի, մասնավորապես ընտանեկան հարցերի ծիսարանն է «Մաշտոց»-ը, որն ստեղծվել է V դարում: Միայն Մաշտոցյան մատենադարանում ձեռագիր Մաշտոցների թիվն անցնում է 700-ից: Ցավոք, առ այսօր մենք չունենք նրա գիտական-քննական հրատարակությունը:

V և հաջորդ դարերի ամուսնական, քաղաքացիական և քրեական իրավահարաբերությունների մասին առանձին արժեքավոր նյութեր են պարունակում հայ եկեղեցու պաշտոնական գրությունների ժողովածուն՝ «Գիրք թղթոց»-ը, ինչպես և V-X դարերի պատմագրական, եկեղեցական բանավիճալին և հրապարակախոսական գրականությունը, որոնք օժանդակ աղբյուր են հայ իրավունքի պատմության մշակման համար:

Պատմական վկայությունները հավաստում են, որ IV-VI դդ. Հայաստանում գործել են աշխարհիկ օրենքներ: Հայ թագավորներն իրականացրել են երկրի գերագույն օրենսդիր իրավասություն, ընդունել են օրենքներ, արձակել հրամաններ, հրովարտակներ, որոնցով կարգավորել են զանազան հասարակական հարաբերություններ: Այդ են հավաստում V դարի գրեթե բոլոր պատմագիրները⁵⁸: Անժխտելի փաստ է, որ աշխարհիկ օրենքներ գործել են

⁵⁷ Մանրամասն տե՛ս «Կանոնագիրք Հայոց», Բ գիրք, էջ VII-XVIII:

⁵⁸ Խորենացին մի առիթով նշում է, որ Հայոց Արշակ թագավորը երկրում «շատ բարեկարգություններ մտցրեց»: Խորենացու վկայությամբ հայոց Արշակ թագավորը հրամանով արգելեց ազգությամբ հրեա թագադիր ասպետ Բագարատին և նրա արյունակլիցներին կին տալը, եթե թլպատությունից չհրաժարվեն (տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ ակադ. Ստ. Մալխասյանի, Եր., 1968, էջ 160-161): Ըստ Ագաթանգեղոսի հավաստման՝ Տրդատ Գ-ն հրամաններ ու հրովարտակներ էր արձակում ուղղված նոր կրոնի հավա-

նան VI դարում Բյուզանդական Հայաստանում, Հուստինիանոսի օրոք: Այդ հանգամանքը հաստատվում է Հուստինիանոս կայսեր «Հայոց ժառանգական իրավունքի մասին» եղիկտով և 21-րդ նովելայով: Այդ են վկայում դրանցից քաղված հատկապես հետևյալ արտահայտությունները. «Հայոց աշխարհում գործեն լավ օրենքներ», «Հայաստանում գործող օրենքները ոչնչով չտարբերվեն հռոմեացիների օրենքներից», «Բոլորի վրա հավասարապես թող տարածվեն մեր օրենքները»: Բերված քաղվածքները վկայում են, որ նվաճված Հայաստանում գործում էին հայկական օրենքներ: Հուստինիանոս կայսեր նպատակն էր՝ բեկանել հայկական օրենքների ազդեցությունը ենթակա Հայաստանում. «Մենք ցանկանում ենք հայերի վրա ևս ամբողջությամբ տարածել մեր օրենքները», «որպեսզի նրանք ևս ամեն ինչում հետևեն հռոմեացիների օրենքներին, որպեսզի «նրանք կառավարվեն միայն այն օրենքներով, որոնք ընդունված են հռոմեացիների մոտ»⁵⁹:

Ակնհայտ է նաև, որ նշված ժամանակաշրջանում Հայաստանում գործում էին նաև աշխարհիկ օրենքներ, գուցե և աշխարհիկ Դատաստանագիրք: Դա գիտության մեջ «Ասորական» կամ «Ասորահռոմեական» որակված դատաստանագիրքն էր, որը IV-VI դարի հուշարձան է⁶⁰: Հայկական ձեռագրերում այդ Դատաստանագիրքը վերնագրված է «Աւրէնք յաղթող թագաւորացն...»: Դատաստանագրքի հայկական խմբագրությունն ունի բյուզանդական օրենսդրության շերտ՝ բյուզանդական կայսրերին վերագրված ընդամենը 8 հոդված, մինչդեռ այն բովանդակում է 152 հոդված: Ահա թե ինչու ուսումնասիրողները հանգել են այն կարծիքին, որ «Դատաստանագիրքն իր ծանրակշիռ հիմքով ունի տեղական, հայկական ծագում», նամանավանդ «Աւրէնք յաղթող թագաւորացի» սահմանումները հարազատ են ոչ միայն «Կանոնագիրք Հայոց»-ին, այլև հայոց պատմիչների հաղորդումներին⁶¹: Եթե Դատաստանագիրքը նորմավորել է աշխարհականների աշխարհիկ իրավաբանական բազմապիսի հարաբերությունները, ապա «Կանոնագիրք Հայոց»-ը գլխավորապես նորմավորում էր կանոնաիրավական հարաբերությունները: Մակայն, ըստ երևույթին, մեծ է եղել նաև սովորութային իրավունքի նշանակությունը հատկապես հեթանոսական Հայաստանում: Այսպես, նշված աղ-

տացյալների, իսկ ապա՝ հեթանոսական աստվածներ երկրպագողների դեմ (տե՛ս Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Եր., 1983): Բուզանդը, խոսելով Հայոց արքա Խոսրով Կոտակի թագավորության շրջանի մասին, գրում է, թե նրա ժամանակ Հայաստանում «ծաղկում էր իրավունքն ու արդարությունը»: Արշակ Բ-ի առնչությամբ պատմիչը թվարկում է դատարանների իրավասությանը հանձնված մի շարք քաղաքացիական, քրեական, ընտանեկան վեճերի կամ գործերի տեսակները, ապա դժգոհությամբ ամփոփում է, «Դատ չկայր և իրաւոնք ումեք յարաքունուստ ոչ ելանէին» (տե՛ս «Փաւստոսի Բիւզանդանցոյ Պատմութիւն Հայոց», ի Վենետիկ, 1832, էջ 7, 106-107):

⁵⁹ «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին», պրակ 5: Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա, // Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Հրաչ. Բարթիկյանի, 1967, էջ 300-302:

⁶⁰ Տե՛ս Մ. Հ. Հովհաննիսյան, «Ասորական» կամ «Ասորահռոմեական» կոչված դատաստանագրքի աղբյուրը հայ իրավունքի հետ, ՊԲՀ, 1970, թիվ 2:

⁶¹ Տե՛ս Մ. Հ. Հովհաննիսյան, Իրավունք և դատավարություն, // Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Եր., 1984, էջ 480-486:

բյուրներից և պատմիչների հաղորդումներից իմանում ենք, որ սովորությանին իրավունքի շատ նորմեր հակասել են կանոնական իրավունքին, և պայքար է ծավալվել դրանց դեմ՝ քրիստոնեություն ընդունելուց հետո: Արգելվեցին, հավանաբար, սովորությանիրավական ծագում ունեցող հարձախումբներ, մերձավոր ազգականի, երկու քույրերի, հարսի հետ՝ տեգոր ամուսնանալու անգիր իրավունքը, կնոջ ամուսնային պատճառով երկրորդ կին ունենալը և այլն:

Հին Հայաստանում եթե մահանում էր կինը, ապա ամուսինը անարգել կարող էր նոր կին բերել, բայց երբ մահանում էր ամուսինը, ապա կինը չէր կարող դուրս գալ ամուսնու գերդաստանից և ամուսնանալ ուրիշի հետ: Այդ բացատրվում էր նրանով, որ նրա ծնողները ժամանակին զգալի չափերի հատուցում են ստացել աղջկա ամուսնության համար, այսինքն՝ նա փաստորեն փողով «գնված» էր, ուստի հարսը պարտավոր էր ամուսնանալ իր մահացած ամուսնու եղբայրներից մեկի, եղբոր որդու կամ ամուսնու այլ ազգականներից մեկի հետ: Եթե սրանք չէին լինում, ապա ամուսնու գերդաստանի հարազատները օտարականից նյութական հատուցում ստանալով, հարսին իրավունք էին տալիս ամուսնանալ նրա հետ:

Պահպանվեցին նշանի և հարսանյաց հանդեսի սովորությանական ծեսերը, հարսանյաց տոնախմբությունը, հրավիրվածների ընծայատար մասնակցությունը, վարձանքը (տուայրը), օժիտը (պոույզը), ամուսինների բաժան-գույքային իրավունքները և այլն:

Իրավունքի օժանդակ աղբյուր են նաև հայ և օտար պատմիչների երկերը: Հայ պատմիչներից Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու, Եղիշեի, Փարպեցու, Կաղանկատվացու և այլոց երկերը ուշագրավ նյութեր են պարունակում առանձին ընտանեկան, հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման մասին: Նույնը վերաբերում է ասորական, բյուզանդական և արաբական պատմիչների գործերին: Ընտանեկան հարաբերությունները, որպես այդպիսիք, կանոնագրերի հեղինակներին քիչ են հետաքրքրել, սակայն նրանք անուղղակիորեն անդրադարձել են նաև ընտանեկան որոշ հարցերի, որպիսիք էին՝ ընտանիքի անձնակազմի արյունակցական-սերնդական կապերը, ծնողների և զավակների իրավունքներն ու պարտականությունները, ամուսնական հավատարմությունը, սերնդաձր, ամուսնության թույլատրելիության հին ու նոր պայմանները, որբությունը, որդեգրությունն ու խնամակալությունը, կնոջ վիճակը, վերնախավերում դայակ, ծառա ու հարձ պահելու սովորությունները և այլն:

Կանոնական իրավունքը նորմավորեց նշանադրությունը, պսակադրությունը, ամուսնալուծությունը և մասամբ ամուսինների գույքային հարաբերությունները, իսկ խնամակալությունը, հոգաբարձությունը և որդեգրումը շարունակեցին կարգավորել աշխարհիկ օրենսդրության նորմերով՝ «Աւրէնք յաղթող թագաւորաց»-ով⁶²:

⁶² Տե՛ս Ս. Հ. **Հովհաննիսյան**, Ամուսնաընտանեկան իրավունքը վաղ ավատական Հայաստանում, Եր., 1976, էջ 84-89:

Ընտանեկան իրավունքը դրանցում բնութագրվում էր հաստատուն սկզբունքներով. իշխող դասակարգերի ներկայացուցիչներին շնորհվում էին առավել իրավունքներ, սեռերի անհավասարություն՝ կնոջն ընտանիքում վերապահվում էին ավելի նվազ իրավունքներ, քան տղամարդուն՝ ամուսնության, ամուսնալուծության և գույքային հարաբերություններում, դավանանքի հողի վրա սահմանված խտրականությամբ, ըստ որի արգելված էր հավատացյալի բարեկամական և ամուսնական հարակցությունը հեթանոսների, այլադավանների և աղանդավորների հետ, ամուսնությունն իրականացվում էր պսակադրությամբ՝ սահմանելով, որ առանց եկեղեցական պսակի չկա ամուսնություն, սահմանված էր մենամուսնությունը: Արգելվեցին սովորութաիրավական ծագում ունեցող հարձությունը, նշանածի հետ մինչև պսակի արարողությունը սեռական հարակցության մեջ մտնելը, բազմակնությունը, բազմամուսնությունը, մերձավոր ազգականների և բարեկամների, խորթ մոր կամ հոր կնոջ, քրոջ, հորաքրոջ և մորաքրոջ, եղբոր և քրոջ դստեր, մոր և նրա աղջկա, երկու քույրերի, տեգոր՝ այրիացած հարսի հետ ամուսնանալը, կնոջ ամուսնության պատճառով երկրորդ կին ունենալը, ազատ ամուսնալուծության իրավունքը և այլն: Վերահաստատվեցին կամ պահպանվեցին նոր պահանջներին համապատասխան նշանը, հարսանյաց հանդեսով ամուսնությունն օրինականացնելը, հարսանյաց տոնախմբության ընծայատար մասնակցությունը, ամուսնության դասային բնույթը, օժիտ-պրույզը, վարձանք-տուայրը, ամուսինների բաժան գույքային իրավունքը, ամուսնու առավել իրավունքները կնոջ և զավակների նկատմամբ, ընտանիքի անդամների անձնական և գույքային իրավունքները, որդեգրումը:

Ըստ եկեղեցական և աշխարհիկ նորմերի՝ ընտանիքի ամենակարևոր գործառնությունը սերնդի վերարտադրությունն ու հայրական ծխի պահպանումն ու զարգացումն էր: Ընտանեկան իրավունքով կարգավորվող կարևոր հարաբերություններից էր նշանադրությունը, որն իրականացվում էր սովորութային իրավունքով ու ծեսերով: Նշանադրության ժամանակ ծնողների համաձայնությունը, ըստ եկեղեցական կանոնների, չէր դիտվում իբրև անհրաժեշտ պայման և խստիվ պատվիրվում էր խափանել ծնողների բռնադատությունը: Նշանադրության պարտավորության ոտնահարումը մեղավոր կողմի համար ունենում էր գույքային-իրավական հետևանքներ: Եթե հրաժարվողը փեսացուն էր, նա զրկվում էր հարսնացուին հանձնած նյութական արժեքներից, իսկ եթե աղջիկը՝ նա պարտավոր էր փեսացուին վերադարձնել ստացածի կրկնապատիկը (տե՛ս «Արենք յաղթող թագաւորացի» 57- 58 հհ.):

Ընտանեկան իրավունքի կարևորագույն ինստիտուտը պսակադրությունն էր: Այն ամուսնության օրինականացումն էր, որը մշակվել է հայ կանոնական իրավունքի ուժեղ ազդեցությամբ: Սահմանելով պսակը սրբությամբ և քահանայի օրհնությամբ եկեղեցում օրինականացնելու կարգը՝ մշակվեցին համապատասխան ծիսական կանոններ. մենամուսնություն, ամուսնական չափահասություն, ամուսնացողների փոխհաճություն, ազգակցական և խնամիական չհասություն, դավանակցություն⁶³:

⁶³ Տե՛ս Ն. Մելիք-Թանգյան, Հայ եկեղեցական իրավունքը, Բ գիրք, Շուշի, 1905, Վ. Բաստամեան, Ամուսնությունը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան, «Փորձ», 1880, թիւ 6-7, 8-9, 11-12, 1881, թիւ 4, 8-9:

Արնակցական և խնամիական չհասության հարցն առավել կարգավորվածների թվին էր պատկանում: Ամուսնության անհրաժեշտ պայման էր մերձավոր ազգականների միջև ամուսնության արգելքը: Մերձավոր ազգականների ամուսնությունն արգելելուն հայոց եկեղեցու հոգևոր հայրերն անդրադարձել են Աշտիշատի, Շահապիվանի, Դվինի 4-րդ ժողովներում՝ արգելվում էր ներառյալ երրորդ աստիճանի ազգականների ամուսնությունը, իսկ 768 թ. Պարտավում կայացած ժողովի որոշմամբ՝ մեկ աստիճանով խստացվեց արգելքը: Խնամիական չհասության մասին ընդունված կանոնների համաձայն՝ արգելված էր ամուսնանալ կնոջ մոր, կնոջ քրոջ հետ, չէր թույլատրվում երկու եղբայրների ամուսնությունը երկու քույրերի հետ: IV-VII դդ. ընթացքում ընդունված կանոնական նորմերով արգելվեց ամուսնությունը հեթանոսների, հրեաների, քաղկեդոնականների և զանազան աղանդավորականների ու հերձվածողների հետ: Ամուսնության պայման էր համարվում նաև ամուսնությունների որոշակի տարիքի հասած լինելը՝ ամուսնական չափահասությունը: Բսկ սա իրոք առաջադիմական քայլ էր:

Նշված բոլոր պայմանների ոտնահարման դեպքերում սահմանվում էին իրավական ներգործության տարբեր միջոցներ, մասնավորապես ամուսնությունը ճանաչվում էր անվավեր, նգովվում էին մեղավորները, պաշտոնազրկությամբ էին սպառնում պսակն օրինականացրած քահանային, ենթարկում էին ապաշխարանքի, տուգանքի և այլն:

Տղամարդու և կնոջ ամուսնական միությունը հռչակվեց ցմահ պարտականություն: Նոր Կտակարանի համաձայն՝ միայն ամենակարող մահը կարող էր նրանց բաժանել: Միակ ընդունելի պատճառ համարվեց ամուսնական դավաճանությունը՝ պոռնկությունը: Բուզանդը նշում է, որ IV դարի երկրորդ կեսին կաթողիկոս Ներսես Պարթևի ահից ոչ ոք չէր համարձակվում Հայոց աշխարհում մեկի կինը խլել և թողնել իր կնոջը, ուրիշ կին առնել չէր համարձակվում⁶⁴: Կանոնական օրենսդրությամբ օրինականացվեցին ամուսնալուծության այլ դրդապատճառներ ևս՝ ամուսիններից մեկի երկարամյա անհայտ բացակայությունը (Դվինի 645 թ. ժողով), բորոտությունը, դիվահարությունը, կախարդությունը, կնոջ ամլությունը և ամուսնու անկարողությունը:

Մյուս կարևոր խնդիրը ընտանեկան իրավունքի նորմերում ամուսինների գույքային իրավունքների հարցն է եղել: Ըստ կանոնական և աշխարհիկ իրավական աղբյուրների՝ ամուսնությունը չէր ստեղծում գույքի նկատմամբ ամուսինների ընդհանուր սեփականության իրավունք: Մինչև ամուսնությունը և ամուսնության ընթացքում ամուսիններից մեկի միջոցներով կամ այլ իրավական հիմքով ձեռք բերված գույքը ճանաչվում էր տվյալ ամուսնու անբաժան սեփականությունը: Կինն իր բաժինքի (պոռույգ-օժիտի), ամուսնության ժամանակ ստացած ընծաների, ժառանգության և նվիրատվության կարգով ստացած գույքի սեփականատերն էր: Օնոդի կենդանության օրոք զավակը ծնողի գույքի նկատմամբ սեփականության իրավունքներ չուներ և ընդհակառակը (տե՛ս «Աւրենք յաղթող թագաւորացի» 6, 11 և այլ հոդվածները):

⁶⁴ Տե՛ս Փավստոս Բուզանդ, նշվ, աշխ., էջ 229:

Ընտանեկան իրավունքի կարևոր խնդիրներից մեկն էլ որդեգրության, խնամակալության և հոգաբարձության կարգավորումն էր: Այս հարցը սերտորեն կապված էր սեփականության հարաբերությունների հետ՝ հանուն որդեգրողի ծխի շարունակման: Որդեգրության գիրը, որ հաստատվում էր կնիքով, հիշատակում է Եղիշեն⁶⁵: Հոգաբարձու նշանակելիս նախապատվությունը տրվում էր ազգականներին: «Աւրենք յաղթող թագաւորացի» 5-րդ, 8-րդ, 142-րդ հոդվածներով նախատեսվում էին հոգաբարձուի իրավունքներն ու պարտականությունները: Հոգաբարձուն երեխաների նկատմամբ իրականացնում էր նաև ոչ գույքային պարտականություններ՝ կնունքը, սնուցումը, դաստիարակությունը:

Ուշագրավ է, որ այդ օրենսգրքերում խիստ պատիժներ էին նախատեսել հանցանք գործող անձանց նկատմամբ: Կախված հանցանքի աստիճանից՝ պատժի ձևեր էին՝ տուգանքը, ապաշխարանքը մեկուսարաններում, մարմնական պատիժները՝ ծեծը, ճակատին խարան՝ աղվեսադրոշմ դնելը, ջիլեր կտրելը, բորոտանոց գցելը, մահապատիժը, եկեղեցական կարգից և քահանայական պաշտոնից զրկելը, բանադրելը՝ քրիստոնեական եկեղեցուց հեռացնելը, նգովելը՝ եկեղեցու հետ ամեն կարգի հարաբերություններից զրկելը, որոշակի պատվից՝ պաշտոնից զրկելը, վնասի բազմապատիկ հատուցումը և այլն (տե՛ս «Աւրենք յաղթող թագաւորաց» դատաստանագրքի 34, 63, 69, 118, 119, 120, 122 և այլ հոդվածները): Հայ պատմիչները հավաստում էին, որ սահմանվել են նաև այլ կարգի պատիժներ՝ կուրացնելը, կախաղան բարձրացնելը, անդամահատելը, ունեցվածքի բռնագրավումը, ուրկանոց (բորոտանոց) աշխատանքի ուղարկելը և այլն: Հայրենիքին դավաճանությունը, դավադրությունը, ապստամբությունը, լրտեսությունը պետականության գոյության շրջաններում պատժվում էին արքայի վճռով: Այդպիսիները դատապարտվում էին մահվան, բնաջնջվում էր նրանց ողջ ընտանիքը, իսկ նրանց ունեցվածքը բռնագրավվում էր արքունիքի օգտին: «Կանոնագիրք Հայոցը» խիստ պատիժներ էր սահմանել գողության, ավազակության, կողոպուտի, գույքի ոչնչացման, դիակողոպտության և այլ հանցանքների նկատմամբ: Ծանր ու մեծ վրդովմունք առաջացնող հանցագործություն էր դիակողոպուտը⁶⁶: Գողը, ավազակը, հափշտակողը «Աւրենք յաղթող թագաւորացի» 118 հոդվածով ենթակա էր մահապատժի: Մահապատիժ էր սահմանվել նաև մարդասպանության, կույսին և ամուսին չունեցող կնոջը հափշտակելու և այլ հանցագործությունների համար: Պատիժները մեղմացվում էին, երբ հանցագործը խոստովանում էր իր մեղքերը, և նման դեպքում իբրև պատիժ է սահմանվել նգովքը, երկարամյա ապաշխարանքը: Օրենսգրքում կարևոր տեղ էր գրավում նաև սեռական անձեռնմխելիության, արվամոլության, արժանապատվության ոտնահարման համար նախատեսված պատիժները: «Կանոնագիրք Հայոց»-ում անողորմաբար պատիժներ էին սահմանված աստվածուրացության, կախարդության

⁶⁵ Տե՛ս Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, թարգմանությունը և ծանոթագրությունները Ե. Տեր-Մինասյանի, Եր., 1989, էջ 87:

⁶⁶ Տե՛ս **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց (Աղանդների հերքումը) աշխարհաբար թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ Ա. Ա. Աբրահամյանի, Եր., 1970, էջ 14-15:

(վիուկություն, թուլություն), հեթանոսական պաշտամունքին, արգելված սովորություններին հետևելու գործողությունների դեմ:

Մինչև XII դարը Հայաստանում գոյություն չի ունեցել ազգային օրենսգիրք: Միայն այդ դարում է սկիզբ առնում և իրականանում ազգային օրենսգիրք ստեղծելու ձգտումը⁶⁷: Եվ հաջորդաբար ստեղծվում են Ալավկա որդի Դավիթ Վարդապետի Դատաստանագիրքը (մոտավորապես 1130-ական թվականներ), Մխիթար Գոշի Դատաստանագիրքը (1184թ.), Սմբատ Գունդատարի Դատաստանագիրքը (1265թ.): Այդ օրենսգրքերով կարգավորվել են ամուսնաընտանեկան հարաբերությունները ոչ միայն XIII–XIV դարերում, այլև Մեծ Հայքում և Կիլիկիայում հայոց պետականությունը վերացվելուց հետո: Հատկապես Մխիթար Գոշի Դատաստանագրքով սահմանված նորմերը կիրառվել են հայ իրականության մեջ մինչև XIX դարը, մինչև Արևելյան Հայաստանում ցարական Ռուսաստանի օրենսդրությունը կիրառման դնելը:

Р. А. Нагапетян – Семейное право согласно каноническим и светским источникам раннего средневековья. - В статье отмечается, что нормы, регулирующие семейные отношения, сформировались в Армении раньше, чем нормы, относящиеся к другим областям общественных отношений. Семейные отношения регулировались общепринятыми устными нормами. Одновременно с возникновением государства возникают также канонические и государственные национальные законы. Общепринятое право, так же как и канонические решения, а в дальнейшем и национальные судебники, регулировали и личные, и имущественные взаимоотношения членов семьи.

С принятием христианства уже в IV веке существование канонических и светских семейно-брачных прав являлось в Армении неоспоримой реальностью. Католикос Оганес Одзнец (VIII в.) с научной скрупулёзностью собрал воедино своды правил и создал юридический и исторический памятник раннего средневековья «Армянский Свод законов». Каноническое право регулировало обручение, венчание, развод и, частично, имущественные отношения супругов. Исторические свидетельства подтверждают, что в IV – VI вв. в Армении действовали также светские законы. Об этом говорят почти все историки V века. Автор обращается также к трактовке канонических и светских норм, направленных на регулирование семейно-брачных отношений.

⁶⁷ Տե՛ս խ. Մամուկյան, Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1., Եր., 1939, էջ 73-74:

ԿՅԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ
«ԻՐ ՄԱՀԸ» ԵՎ «ՄԱՀ, ՈՐ ԻՐԵՆԸ ՉԷ»

Լ. Գ. ԲԵԳԻՆՅԱՆ

Նախապատմական ժամանակներից սկսած մարդը ձգտել է աշխարհի և, մասնավորապես, իր էության իմաստավորմանը: Իրեն չառանձնացնելով շրջակա բնությունից և սոցիալական միջավայրից, ձևավորել է կոլեկտիվ մտածողությամբ ծնունդ առած գրույցներ, պատմություններ, ուր արտահայտված են աշխարհի իրենց մտորումները: Դրանցում ոչ միայն ամեն ինչ պատճառաբանված է, ոչ միայն առկա է երկակի հակադրությունների սկզբունքը, այլև արտացոլված են մարդկությանը բնորոշ այնպիսի արմատական զգացմունքներ, ինչպիսիք են սերը, վախը, ատելությունը, վիշտը և այլն: Անկասկած, այդ ոլորտում մահվան վախը գլխավոր տեղ էր զբաղեցնում, քանի որ մինչ այժմ մարդկանց պատկերացումներում զգալի են հոգիների և հանդերձյալ կյանքի իրական լինելու թյուր ըմբռնումները: Կապված լինելով անցյալի մտածողության հետ՝ դրանք շատ գծերով դարձել են միաժամանակյա, բնորոշ ինչպես անցյալին, այնպես էլ ներկային՝ պահպանվելով մտքի մեջ և նրանից դուրս՝ խոսքի (ֆրազի) մակարդակում (Ֆ. դե Մոսայոր)⁶⁸:

Դժբախտ դեպքերի ժամանակ և թաղման ծիսակարգի ընթացքում հաճախ է լինում, երբ մարդիկ կատարվածի վերաբերյալ իրենց վերաբերմունքն են արտահայտում հետևյալ ձևերով. **«բնական մահ է», «իսկական ժամանակն էր», «իր մահով գնաց», «իրա դարն ապրած մարդ էր»** և ընդհակառակը՝ **«իրա ժամանակը չէր», «իրա մահով չգնաց»**⁶⁹: Վերբայ մտածողության այս ձևերում կարևորվում են «ժամանակ», «իր մահը», «մահ, որ իրենը չէ» ընկալումները: Ծերունական մահը «իր մահն» է, ծննդյան շրջանից սկսած մինչև նախածերունական մահը «մահ է, որն իրենը չէ»⁷⁰:

Մահը բնական է և սովորական, երբ գալիս է իր *ժամանակին*, ժողովրդական ձևակերպմամբ՝ կյանքի մայրամուտին: Այստեղ հետաքրքրական է կյանքի ավարտի և կյանքի մայրամուտի ժողովրդական համադրությունը, որտեղ կյանքը համեմատվում է արևի հետ: Դեռ հնագույն ժամանակներից արևը համարվել է կյանքի խորհրդանիշ: Նրա պաշտամունքը Հայաստանում ծայր է առել հնուց և հազարամյակներ հարատևել տեղաբնակ ցեղերի և

⁶⁸ Структура мифов, <http://www.culture.niv.ru/doc/anthropology/stross/012.htm>:

⁶⁹ Հոդվածում ներկայացված դաշտային ազգագրական նյութերը (այսու՝ ԴԱՆ) գրավել են 2009-2010թթ.

Տավուշի մարզի Սարիգյուղ, Այգեհովիտ, Գետահովիտ, Աղավնավանք, Գանձաքար, Բաղանիս, Բերդավան, Կողբ, Կոթի, Այգեձոր, Թեղուտ գյուղական համայնքներում և Իջևան, Դիլիջան, Բերդ քաղաքներում իրականացված հարցումների արդյունքում:

⁷⁰ «Իր մահը» և «ոչ իր մահը» ընկալումները ռուսական գիտության մեջ առաջին անգամ նկարագրել է Դ. Կ. Ջելենինը: Այս մասին մանրամասն տես՝ Мифология смерти, «Своя» и «не-своя» смерть <http://www.voloshba.nm.ru/tradision/slavsm3.htm>:

նրանցից կազմավորված հայ ժողովրդի հավատալիքների ու գաղափարական պատկերացումների մեջ: Դրանցում արևի պաշտամունքը հաճախ հանդես է գալիս անձնավորված պատանու կերպարով, որը երկնակամարում պտույտ կատարելով, ծովի ջրերի մեջ լողանում, նորից երիտասարդանում և ուժեղանում էր⁷¹: Այս առումով հատկանշական է Գարեգին Սրվանձտյանցի կողմից գրի առնված ավանդությունը Օձամանուկի և Արևամանուկի մասին, ըստ որի. «արևը մի պատանի է, որն ունի թեթև, բարեսիրտ, բայց և երբեմն չար մի մայր, որի որդու արևով (կյանքով) լուսավորվում են երկինքն ու երկիրը: Նա բնակվում է արևի պալատում, որը գտնվում է արևելքում՝ աշխարհի ծայրին, ուր չկան ոչ սպիտակ, ոչ սև մարդիկ, ոչ էլ թռչուններ են երևում: Այնտեղ գնալու համար պետք է հագնել երկաթե կոշիկներ և ձեռքին վերցնել երկաթե գավազան: Ուր կմաշեն կոշիկներն ու կկոտրվի գավազանը, այնտեղ էլ կլինի արևի պալատը: Կան իրար հետևից տասներկու գավիթ: Դրանք կառուցված են կապույտ մարմարից և կամարապատված: Այնտեղ չկան ծառ ու խոտ, ոչ էլ թռչուններ կամ այլ էակներ: Ցերեկն այնտեղ մեծ լռություն է տիրում, երբ արևն իր օրական ուղևորության մեջ է: Բյուրավոր աստղեր են այնտեղ հանգստանում: Նրանց անդորրը վրդովում են միայն ցայտաղբյուրները, որոնք ցայտում են յուրաքանչյուր բակի մեջ: Մեջտեղի բակի աղբյուրի վրա կառուցված է մի ոսկե տաղավար: Նրա մոտ մարգարտապատ մի մահիճ է բացված, եզրին՝ լույսերի մեջ, նստած է արևամայրը և իր որդուն է սպասում: Եվ ահա, նա բոցավառված վերադառնում է իր պալատը՝ հոգնած օրվա իր ուղևորությունից: Աստղերը ոտքի են կանգնում, ողջունում նրանց ու երկնակամար բարձրանում: Արև-հերոսը լողանում է գուլալ ջրի մեջ, մայրը գրկում է գավակին, հանում ջրից, տեղավորում մահճում իր գրկի մեջ և կուրծք տալիս հավերժ երիտասարդ Արև-հերոսին: Վերջինս հանգստանում է, որպեսզի հաջորդ օրն առավոտյան վաղ վերսկսի իր երթուղին»⁷²: Արևի երթուղու այս ըմբռնման համաձայն՝ հայերն ասում են ոչ թե օրինակ «արևը վայր է գլորվում» (солнце закрутился), այլ՝ «**արևը մայր է մտնում**»⁷³:

Հայ ազգագրության և բանահյուսության մեջ պահպանված տվյալները ապացուցում են, որ արևի պաշտամունքը բրոնզեդարյան և շատ ավելի վաղ ժամանակներից պահպանվել է հայ ժողովրդի մեջ նաև քրիստոնեական դարաշրջանում, դեռ ավելին, արևի պաշտամունքի վերապրուկները մնացել և ապրում են հայ ժողովրդի մեջ նաև մեր օրերում: Եկեղեցիներում բազրաստունիների թողած արձանագրություններում շատ անգամ է գրվել. «Ի հիշատակ բարերարների արևապաշտության», այսինքն՝ արվում է երկար ապրելու մաղթանք: Հաճախակի լսվող երդման ձևերից կամ փաղաքշական արտահայտություններից են. «արևովդ եմ երդվում», «արևդ սիրես», «արևիդ դուրբան» և այլն, ինչպես

⁷¹ Նման մոտիվներ հանդիպում ենք նաև հնագիտական նյութերում՝ սկսած նեոլիթյան և էնեոլիթյան ժամանակներից: Այս մասին տես՝ **Հ. Բարսեղյան**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Եր., 1973, էջ 50-51; Լ. Բարսեղյան, Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ, «Պատմա-բանասիրական հանդես», N 3, 1966, նկ. 7:

⁷² **Մ. Աբեղյան**, Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. է, Եր., 1975, էջ 41:

⁷³ **Մ. Աբեղյան**, նշվ. աշխ., էջ 42; Հր. Աճառյան, Հայերենի արմատական բառարան, հ. 3, Հ-Չ, Եր., 1977, էջ 248:

և հին ժամանակներում «... մեռնելու կամ մեռցնելու համար ասում էին **արևը հատնել, արևից զցել, ընկնել** և սրանց նման բացատրություններ: Անչափահաս կամ երիտասարդ մեռնողն էլ կոչված է **արեւպետ վախճանեալ**»⁷⁴:

Ազգագրական գրի առնված նյութերում կյանքը ևս ընկալվում է որպես երթուղի, որի ընթացքում ժողովրդական պատկերացմամբ մարդը պետք է ամուսնանա, ունենա երեխաներ, նրանց ամուսնացնի և իր ժառանգներին օգտակար լինի որքան կարող է, վայելի ծերունական տարիները և դրանից հետո նոր միայն հեռանա կյանքից: Ներքին Բասենում ծերունիներն այսպես էին նայում կյանքին. «Իսանը գարնան խոտի պես է. կանաչում, աճում, բարգավաճում, սերմակալում և չորանում է»:

Կարևորվում է կյանքի երթուղու **ժամանակային** ընկալումը: Ըստ ժողովրդական մտածողության, մարդու կյանքի տևողությունը պետք է լինի 80-100 տարի: Շատ հաճախ բարեմաղթելով «**երկար ապրես**» կամ «**կյանքդ ջրի նման երկարի**» նկատի ունեն 90-100 տարի: Այս տարիքի մարդկանց նկատմամբ տաժում են խորին հարգանք և վերաբերվում ակնածանքով: Որոշ ընտանիքներում նրանք նույնիսկ սրբացվում են, իսկ խորհուրդները փոխանցվում սերնդից սերունդ: Ընտանիքի և միջավայրի կողմից ծերունիների նկատմամբ առանձնահատուկ հարգալից վերաբերմունքը պայմանավորվում է ինչպես ապրած տարիներով, ապագայի խորհրդավորությամբ, այնպես էլ կյանքում կուտակած փորձով «**պատավը գիտակ չի լինում, ոտքը քարին դիպած ա**»⁷⁵:

Ծերունիները առանձնահատուկ հարգանք են վայելում նաև իրանցիների, հնդիկների, վիետնամցիների, ինդոնեզացիների, կամբոջացիների միջավայրում⁷⁶: Ավստրալիայի բնիկների մոտ ծերերը մինչև մահն օգտվում էին մեծ իրավունքներից⁷⁷:

Մեծ հարգանք էին վայելում նաև Նոր Զելանդիայի բնիկների՝ մաորիների՝ հողագործների, ծովագնացների և որսորդների ցեղի ծերունիները: Երբ ինչ-որ ատիթով տեղի էր ունենում երկու ցեղերի հանդիպում, ապա այն սկսվում էր ցե-

⁷⁴ Դ. Ալիշան, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 52:

⁷⁵ Լ. Բեգիյան, ԴԱՆ, Տավուշ, 2009-2010, հարցազրույց N12, 20:

⁷⁶ Հնդիկները հարգանքով են վերաբերում բոլոր մեծերին և հատուկ հարգանքով ու ուշադրությամբ են շրջապատում ծեր ծնողներին: Ընդհանրապես կրտսերը երբեք չի նստում ավագի ներկայությամբ, առանց նրա հրավերի կամ թույլատվությամբ: Եվ եթե նստի, ապա միայն ավելի ցածր կամ ավելի վատորակ նստարանին, քան այն, որին ավագն է նստած: Հնդիկը միշտ նրբազգաց է և խոսակցության, և ավագների, հատկապես ծերունիների հետ հաղորդակցության ժամանակ: Նա ամեն կերպ ջանում է շրջանցել այն պահերը, որոնք ծերունու համար կարող են տհաճ լինել՝ հատկապես ծերության, թուլության, հիվանդությունների մասին հիշելը:

Ինդոնեզիայում, մասնավորապես Ճավայում, ավագին և, հատկապես, տարեց մարդուն չի կարելի դիմել ինչպես պատահի, չմտածելով և չընտրելով համապատասխան արտահայտություններ: Ճավայական լեզվում գոյություն ունի չորս հիմնական ոճ, որոնք գործածվում են իրենցից մեծ կամ փոքր մարդկանց հետ խոսելիս: Ամենահարգալից ոճը, որով խոսում են միայն տարեց մարդկանց հետ՝ կոչվում է կրոմանիգգիլ (տես՝ Ա. Դրիձո, Լ. Մինց, Մարդիկ և սովորություններ, Եր., 1987, էջ 172-173):

⁷⁷ Երջապատող աշխարհի մասին ցեղի գիտելիքների ամբողջ գումարին տիրապետող և այդ գիտելիքներն երիտասարդներին հաջորդող սովորությունների պահպան ծերունիներն ավստրալացիների մեջ շրջապատված են մեծ ուշադրությամբ ու հարգանքով: Այս հանգամանքը ստիպել է որոշ ավստրալացիների եզրակացնելու, որ Ավստրալիայի բնիկների մոտ գոյություն ունեն «հերոնտոկրատիա», այսինքն՝ «ծերունիների իշխանություն» (նույն տեղում, էջ 173):

դերը ներկայացնող երկու ծերունիների ելույթներով: Առաջինը խոսում էր հյուրը: Նա մանրամասն պատմում էր իր ցեղի ծագման մասին առասպելներ՝ սկսած այն պահից, երբ առաջին մակույկով կղզի ոտք դրեցին վերաբնակիչները՝ մատրիների նախնիները: Թվելով բոլոր նախնիներին՝ ծերունին անցնում էր այն պահին, երբ դրանցից երկու եղբայր միասին գնում են որսի կամ արշավի: Փոքր եղբոր մասին նա գրեթե ոչինչ չէր ասում, բայց մանրամասնորեն պատմում էր մեծ եղբոր մասին, որին էլ ներկայացնում էր որպես իր ցեղի նախնի: Երկրորդ հռետորն սկսում էր այն պահից, երբ եղբայրները բաժանվում են, և պատմում էր փոքր եղբոր՝ իր ցեղի նախահոր մասին: Ստացվում էր երկխոսություն երկու ցեղերի ազգակցության մասին, որտեղ գլխավորը ազգակցության հաստատումն էր: Իսկ դա կարող էին անել միայն պատվարժան ծերունիները⁷⁸:

Ուշագրավ է նաև ծերունու՝ **նախնու** կերպարի ընկալման ձևավորումը: Այն կապվում է սերնդային ազգարյունակցական **նախահայր, պապ, նախապապ** հասկացությունների հետ: Ըստ դաշտային ազգագրական նյութի, հետաքրքրական է այն, որ երիտասարդ տարիքում մահացածը ևս ընկալվում է նախնի, եթե ամուսնացած է, ունի երեխաներ, սակայն միայն երրորդ և չորրորդ սերնդի կողմից, այսինքն այն հասակում, երբ նա կլինեք կրկին ծերունական՝ պապի և նախապապի կարգավիճակում: Հինգերորդ սերնդի համար նրա կերպարը միաձուլվում է ավելի վաղ ժամանակներում եղած արյունակից հանգուցյալներին և ընդհանուր անունով կոչվում **«նախնիներ»** կամ **«պապեր»**⁷⁹: Երիտասարդ տարիքում մահացածը, եթե չունի երեխաներ, երբեք չի ընկալվում որպես նախնի: Այս դեպքում ասում են. **«նա մեռավ անհիշատակ»** կամ **«գնաց հավասարվեց հազար տարվա մեռելներին»**, այսինքն՝ այդ ժամանակվանից սկսած նրա կերպարը սերնդակիցների մտածողության մեջ սկսում է աղոտանալ և մոռացության է տրվում այնպես, ինչպես հնագույն հանգուցյալներինը: Ինչպես մատրիների մոտ նախնու տավուշյան ընկալումներում ևս գործում է ավագության ինստիտուտը՝ ազգակցության մեջ նախնու կերպարը կապվում է ավագ եղբոր հետ⁸⁰:

Եթե մարդը երկար է ապրում, նշանակում է ճակատագիրը նրա նկատմամբ բարյացակամ է: Սակայն միանշանակ չէ այն, որ բոլոր երկարակյացներին վերաբերում են հարգալից, ավելի շատ դա պայմանավորված է նրա լավ կամ վատ մարդ լինելու հանգամանքով: Ժողովրդի բանավոր խոսքում հաճախակի կարելի է լսել արտահայտություններ, երբ կյանքի տևողությամբ բնորոշում են մարդուն. **«վատ մարդը երկար է ապրում, իսկ բարին կարճ»**, **«որ մի լավ մարդ լինեք այդքան չէր ապրի»**, **«Աստված վատից էլ է երես թեքում»**, **«հողն էլ է նույնիսկ չարից վախենում»**: Երբեմն համեմատում են Նոյի ագռավի հետ. **«ծնվելը գիտի, մեռնելու մասին խոսք չկա»** կամ **«մահը գլխից կտրածա»**⁸¹:

⁷⁸ Նույն տեղում, էջ 172:

⁷⁹ Այս մասին տես նաև Խ. Սամուելյան, Հայ ընտանեկան պաշտամունքը, ԱՀ, գ. XIII, Թիֆլիս, 1906, էջ 115:

⁸⁰ Լ. Բեգիյան, ԴԱՆ, հարցազրույց N16:

⁸¹ Լ. Բեգիյան, ԴԱՆ, հարցազրույց N21, 22: Այս արտահայտությունը ըստ էության կապվում է ագռավի՝ տապան չվերադառնալու ավանդության հետ (տես՝ Ա. Ղանալանյան, Ավանդապատում, Եր., 1969, էջ 14):

Սովորական է համարվում նաև երկարակյաց մարդկանց՝ բույսի կամ կենդանու հետ համեմատման երևույթը: Ուշագրավ է համեմատումը մի դեպքում **կաղնու ծառի** և **Սիմոն ծերունու** հետ (հիմնականում տղամարդկանց), մեկ այլ դեպքում **բայդուշի, ագռավի և կատվի** հետ (հիմնականում կանանց և այն էլ չար կանանց)⁸²:

Հնագույն ժամանակներից սկսած՝ Հայաստանի անտառապատ վայրերում բազմաթիվ հին ու մեծ ծառեր սուրբ են համարվել՝ ինչպես կաղնին⁸³: Այն իր մեծությամբ, սփռվածությամբ, հնությամբ սրբազան էր ոչ միայն հայերի այլև հույների և հատկապես կելտերի համար⁸⁴: Իսկ Սիմոն ծերունին ոչ միայն երկարակյաց էր, այլև իմաստուն⁸⁵: Հետաքրքիր է երկարակյաց չարերի համեմատումը բայդուշի (բու), ագռավի և կատվի հետ: Դրանք այն կենդանիներն են, որոնք հայ ժողովրդական հավատալիքային համակարգում առնչվում են մահվան գաղափարի հետ:

Բուի օրը ցերեկով հայտնվելը մահվան նշան է դիտվում, այնպես ինչպես ագռավի կոկոռը⁸⁶ և գյուղական շատ վայրերում մարդիկ հալածում են այդ կենդանիներին դժբախտությունից խուսափելու համար:

Ագռավի կերպարը հայ ժողովրդական հավատալիքներում արմատացել է իբրև դժբախտություն բերող խորհրդանիշ: Որոշ գրույցներում ագռավը հանդես է գալիս որպես սատանայի միջնորդ ու դիվային օգնական: Ավանդության համաձայն սատանան ներկայանում է սև ագռավի կերպարանքով և սատանայի եղունգ կոչված քարը ցույց տալով՝ Կայենին հուշում, որ մորթի իր եղբորը: «Ագռավն էր, - ասվում է ավանդությունում, - «սատանի եղունգ» Կայենին ցույց տվեց իր եղբորը՝ Աբելի տեղը և վերջինս սպանվեց իր եղբորից: Սպանության գաղափարը առաջին անգամ ագռավը հղացավ»⁸⁷: Հայ ժողովրդական էպոսում ևս հիշատակվում է ագռավը, որտեղ նա Փոքր Մհերին առաջնորդեց դեպի քարանձավ⁸⁸, այնտեղ էլ վերջինս մնաց փակված⁸⁹: Ժողովրդական պատկերա-

⁸² Լ. Բեգինյան, ԴԱՆ, հարցազրույց N1, 2, 5, 6, 22, 23:

⁸³ Կաղնու և ագռավի երկարակեցության վերաբերյալ տավուշցիների մեջ պահպանվել է մի գրույց. «Մի օր կաղնին ու ագռավը կռվում են թե, ով ավելի շատ կապրի: Հարյուր տարեկանում կաղնին ընկնում է: Ագռավը ծիծաղում է կաղնու վրա: Կաղնին ասում է. «**մի ծիծաղի ագռավ, հարյուր տարի կանգնած եմ ապրել, հարյուր տարի էլ թիզնե տված կապրեմ, բայց դու կմեռնես հետքդ էլ չեն հիշի**»», Լ. Բեգինյան, ԴԱՆ, հարցազրույց N30:

⁸⁴ Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 42:

⁸⁵ Նոր կտակարան, Ղուկաս 2:25, Ս. Էջմիածին, 1994, էջ 78:

⁸⁶ Նման մտածողություն կար նաև Նոր-Բայազետի գավառում, Վասպուրականում և Ջավախքում (տես՝ Ե. Լալայան, Ջավախք - ԱՀ, գ. 1, Շուշի 1895, էջ 308; նույնի՝ Երկեր, հ. 1, էջ 204; Վասպուրական - ԱՀ, գ. XX, էջ 191; Նոր-Բայազետի գավառ - ԱՀ, գ. XVI, էջ 57-58, 109):

⁸⁷ Ս. Մովսիսյան (Բենսե), Հարք (Մշո Բուլանքի), Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), գ.3, Եր., 1972, էջ 52; Ա. Պետրոսյան, Ագռավի և ծիծեռնակի պաշտամունքը հայ ժողովրդական հավատալիքներում, «*Տարեգիրք*» ԵՊՀ պատմության ֆակուլտետի, Եր., 2005, էջ 203; Ա. Պողոսյան, Թռչունները հայ և ընդհանուր դիցաբանության մեջ, Հայ ազգագրության և հնագիտության ինդիքներ -3, Եր., 2007, էջ 120:

⁸⁸ Քարանձավը կապվել է մայր հողի ընդերքը տանող մուտք-էք գաղափարին: Քարանձավային թաղումները արտահայտում են բնական ճանապարհով մայր հողին վերադառնալու իմաստը: Այս մասին տես Օ. Խնկիկյան, Հայաստանի հնագիտություն, Եր., 2009, էջ 188:

⁸⁹ Ա. Ղանալանյան, նշվ. աշխ., էջ 337:

ցումներում հոգեառ հրեշտակը մարդու հոգին առնելիս ևս ներկայանում է ագռավի (կառկառ) տեսք ստացած⁹⁰: Ժողովրդական հավատալիքների համաձայն անարդար մարդու հոգին ևս դուրս է գալիս սև թռչնի տեսքով⁹¹:

Կատվի հետ համեմատման դեպքում տավուշցիներն ասում են. «սա գլխակեր ա կատվի նման յոթ կյանք ունի»⁹²: Սև կատուն համարվում է **սատանայաճուտ**, խուսափում են նրանցից ամենուր, թե առօրյա կյանքում, թե սգո արարողության ժամանակ՝ մինչև հուղարկավորությունը⁹³: Դեռ ոչ վաղ անցյալում ճանապարհին սև կատու հանդիպելիս շատ դեպքերում փոխել են ճանապարհը կամ տեղում երեք անգամ պտույտ են գործել: Հանգուցյալին այսօր էլ երբեք միայնակ չեն թողնում, փակ են պահում տան լուսամուտները, քանի որ մտածում են թե սև կատուները այդ ժամանակ հավաքվում են հանգուցյալին վնասելու⁹⁴:

Կա նաև երրորդ տարբերակը, երբ ասում են. «շուն ա, գել ա, տան մեծն ա»:

Կյանքի ժամանակային ընկալումները կապված են նաև **ճակատագրի**⁹⁵ մասին եղած պատկերացումների հետ: Վաղահաս մահվան դեպքերում անմիջապես հիշում են ճակատագրին ու ասում. «**ճակատին էտ էր գրված**» կամ «**ճակատագրից չկարեցավ փախչի**»: Ճակատագիրը գրվում է մարդու լույս աշխարհի գալու ժամանակ՝ հոգի տվողի կողմից: Այդ գրով էլ նախապես որոշվում է մարդու կյանքի տևողությունն ու մահվան օրը և այն մնում է անբեկանելի: Կյանքի օրերի հաշվարկը պահվում է երկնքում և երբ նախախնամությամբ որոշված վախճանը գալիս է՝ մարդը մեռնում է⁹⁶: Հավատում են, որ ոչ մի հանգամանք ու ոչ մի միջոց չի կարող փոխել նաև նշանակված **Ժամը**⁹⁷ և մարդու մահվան դեպքում կարևորվում է ոչ միայն մարդու կյանքի ժամանակը այլև այն ժամը, երբ մարդը դադարում է գոյություն ունենալ (արտահայտվում է ժամացույցը կանգնեցնելու սովորությունով):

Կյանքի վերաբերյալ ունեցած ժողովրդական պատկերացումներից կարևոր է **կյանքի իմաստի** խնդիրը և այն թե երբ է կյանքը իմաստազրկվում: «Կյանքի իմաստ» և «մուրազին հասնել» խոսքի ձևերը որոշ դեպքերում հանդես են գալիս որպես հոմանիշներ, այսինքն կյանքը իմաստ է ստանում երբ մարդը հասնում է իր մուրազին: Այն ընդգծվում է հատկապես թաղման ծեսի

⁹⁰ Լ. Բեգինյան, ԴԱՆ, Վայոց Ձոր, 2003, տ.1, էջ 23:

⁹¹ Ե. Լալայան-ԱՀ, գ.1, էջ 317:

⁹² Լ. Բեգինյան, ԴԱՆ, հարցազրույց N5, 23, 30:

⁹³ Լ. Բեգինյան, ԴԱՆ, տ.1, էջ 28:

⁹⁴ Համշենահայերը մտածում էին, որ կատուն մեռելի վրայից անցնի, մեռելը «խօրաթաղ» կդառնա: Բորչալուի գավառում մտածում էին, որ գրողը ներկայանում է սև կատվի կերպարանքով ու գրելով մարդկանց անունները նրանց մահ բերում: Ղզլարում սև կատու տանը պահել չէր կարելի, նրան նմանեցնում էին սատանայի Ջավախքում (տես՝ Ե. Լալայան, Համշենցի հայեր - ԱՀ, գ. 5, էջ 403; նույնի՝ Բորչալուր գավառ - ԱՀ, գ. X, էջ 211; Ղզլար, ՀԱԲ, գ. X, էջ 65):

⁹⁵ Տավուշցիները պատմում են տարբեր պատմություններ կապված ճակատագրի հետ, Լ. Բեգինյան, ԴԱՆ, հարցազրույց N 2, 5, 6, 20, 21, 28:

⁹⁶ Կյանքի օրերի հաշվարկի մասին կան տարբեր պատմություններ: Այդ մասին տես՝ Ե. Լալայան, Երկեր, գ. 1, էջ 203; նույնի՝ Վարանդա, էջ 146; Գանձակ, էջ 408; Համշենցի հայերը - ԱՀ, գ. V, էջ 401; Բորչալուի գավառ - ԱՀ, գ. X, էջ 167; 212; Ս. Լիսիցյան, Ջանգեզուրի հայերը, էջ 207-208; Ե.Ջաքարյան, Սատանայի պայմանագիրը, Հայ ժողովրդական մշակույթ XIV, Եր., 2007, էջ 68:

⁹⁷ Այս մասին տես՝ Ջանգեզուր - ԱՀ, գ. IV, էջ 100 -101:

Ժամանակ օգտագործվող խոսքի ձևերում: Չամուսնացած երիտասարդների համար ասում են. «**մուրազին չհասավ**», «**մուրազը փորում մնաց**», իսկ ամուսնացած, բայց իր երեխաներին չամուսնացրած մարդկանց դեպքում ասում են. «**մուրազը կիսատ մնաց**»: Մարդու ապրելն իմաստ ունի այն ժամանակ, քանի դեռ նա առողջ է և կենսունակ, կարող է օգտակար լինել իր ընտանիքին, հարգված լինել նրանց կողմից և ամենակարևորը որդու կորուստ չունենալ: Երբ մարդը կորցնում է իր աշխատունակությունը, ծանր հիվանդ է ու բեռ է ուրիշների համար, երբ միայնակ է ու լքված, անտեսված է ու մերժված շրջապատում և կամ շատ հարազատներ է կորցրել, ասում են. «**էլ նրա ապրելն ում է պետք**»⁹⁸: Անկախ տարիքից նույն արտահայտությունը կիրառվում է այն մարդկանց նկատմամբ, որոնք իրենք են հուղարկավորել իրենց երեխաներին: Խախտվում է կարծես բնության օրենքը, կյանքը իմաստազրկվում է և դառնում **անիմաստ**: Այս դեպքում օգտագործվող արտահայտություններից են՝ «ջահելը որ մեծի առաջնա ընգնում, մեծին գելն ուտում»⁹⁹:

Կարևորվում է նաև **մահվան իմաստի** ընկալումը, այն առանձնակի ընդգծվում է թաղման ծեսի ժամանակ: Մահը իմաստ ունի, երբ գալիս է իր ժամանակին: Իր մահով մահացած ծերունու մահը իմաստավորված է և ոչ ողբերգական: Դրա հետ միասին, եթե «**աչքը ցամաք է հեռացել**» փառավոր թաղում են անում, առանց լաց ու կոծի, առանց ավելորդ հուզումների, մահն ընդունվում է որպես բնական երևույթ, արարողակարգը կատարվում է բոլոր սովորույթներին համապատասխան, նվազը դիտվում է որպես մեծ հարգանքի նշան: Մահը չի համարվում մեծ կորուստ և թե հարազատները, թե մասնակիցները հոգու խորքում իրենց թեթև են զգում ասելով. «**թող սաղ էլ նրա չափ ապրեն**»: Հոգեհացի արարողությունը ևս հանգիստ է անցնում, շատ դեպքերում տանտիրոջ կողմից հայտարարվում է, որ սեղանը պատրաստված է ի պատիվ հանգուցյալի հարյուրամյակի, և այն ընթանում է ուրախ կերուխումով:

Մահը **իմաստազրկվում** է, երբ գալիս է **վաղաժամ**: Անիմաստ է համարվում մահը նաև դժբախտ դեպքերի, սպանությունների, ինքնասպանությունների դեպքում: Այս պարագայում հաճախ կարելի է լսել. «**անիմաստ մահ է**» արտահայտությունը: Ամեն ինչ դառնում է դրամատիկ ու ողբերգական:

Նման դրամատիկ վարվելաձև մարդիկ դրսևորել են նաև արևի խավարման ժամանակ¹⁰⁰, քանզի հայերի մեջ գոյություն է ունեցել այն տարածված հավատքը, թե խավարման ժամանակ արևն ու լուսինը կռվի են բռնված դեերի՝ հատկապես «մեծ վիշապի» հետ, որն ուզում է նրանց կռվ տալ: Որով-

⁹⁸ Հյուսիսամերիկյան հնդկացիների մոտ զինվորի և որսորդի համար ավելի խայտառակ բան չկա քան թուլությունը: Երբ ծերունին չի կարողանում զբաղվել որսորդությամբ, դժվար է քայլում, զգում է որ ընտանիքի համար բեռ է դարձել ինքնակամ հեռանում է կյանքից: Նախահեղափոխական շրջանում թուլացած ու ընտանիքի ուսերին բեռ դարձած ծեր չուկչերը խնդրում էին իրենց որդիներին, ազգականներին ու թոռներին «օգնել իրենց գնալու վերին մարդկանց մոտ» այսինքն՝ մեռնել (տես՝ Ա. Դրիժո, Լ. Մինգ, նշվ. աշխ., էջ 169-170):

⁹⁹ Գայլ-խորհրդանիշը ևս կապվում է անդրաշխարհի հետ; Այս մասին տես՝ Լ. Սահակյան, Գայլի կերպարը կենդանական հեքիաթներում, Հայ ազգագրության և հնագիտության խնդիրները, նշվ. աշխ., էջ 129:

¹⁰⁰ Ղզլարում արևի խավարումը համարում էին պատերազմի և արյունահեղության նշան (տես՝ Ե. Լալայան, Ղզլար - ԱՀ, գ. X, էջ 65):

հետև հավատում էին, թե հասել է աշխարհի վերջը, ուստի և խիստ վախենում էին: Դներին հալածելու համար մեծ աղմուկ էին բարձրացնում, իրար էին զարկում պղնձե ամաններ, տապակներ, կաթսաներ և այլն: Հնչեցնում էին եկեղեցու զանգերը այնքան ժամանակ, մինչև որ արևն ու լուսինը մարդկանց օգնությամբ հաղթում էին իրենց թշնամիներին: Նման ձևով աղմկելն առօրյա կենցաղում էլ համարվում էր չար ոգիներին հակառակվելու միջոց¹⁰¹:

Այստեղ հիշատակելի է նաև արևի մասին պատմվող երկու գրույցի բովանդակությունը: Համաձայն մի գրույցի՝ մի որսորդ՝ Արևամանուկ անունով, երեք օր շարունակ որս չի ունենում: Զայրացած դրանից՝ արևածագին նա ուզում է իր նետը խփել «արևի ճակատին», որպեսզի արևը երկնքից ցած բերի: Սակայն արևածագին նետը ձեռքը վերցնելուն պես նա հանկարծ նկատում է արևի դեմքը: Տղայի երեսին ու աչքին բոցեղեն ապտակ է իջնում: Արևի հրեղեն ձեռքը բռնում է նրա մազերից և շարտում նրան ամայի մի վայր: Արևի անեծքով այնտեղ նա պետք է մեռած մնա, որպեսզի արևի լույս չտեսնի և միայն գիշերը կենդանանա: Որդուն փրկելու նպատակով որսորդի մայրը ուղևորվում է դեպի արևմուտք՝ բարեսիրտ արևամայր թագուհու մոտ, որպեսզի սա իրեն որպես դեղ արևի աղբյուրից ջուր տա, որի մեջ հենց նոր է լողացել Արև-հերոսը: Մյուս գրույցն ասում է. «մի տղա խնդրում է մայր մտնող արևին. «Ջան, արեգակ, մի քիչ սպասիր, մայրս վերջացնի զիզի գուլպաս, հագնեմ, հետո մորդ մոտ գնա»: Արևամանուկը սպասում է և երբ նա սովորականից ուշ է տուն վերադառնում, արևամայրը, - որն այնտեղ հանդես է գալիս իբրև մի չար կին, - հարցնում է, թե ինչու է ուշացել և նա անիծում է իր որդուն ուշացնող տղային, որ նա ցերեկը մեռած մնա և միայն գիշերն ապրի¹⁰², իսկ նրա մայրը երբեք չավարտի գուլպան»¹⁰³:

Վաղաժամ մահը կամ ժողովրդի խոսքով ասված «**ոչ իր մահով**» կյանքից հեռանալու հանգամանքը, ինչպես արևի խավարման ժամանակ, այս դեպքում ևս կապվում է չար ուժերի ազդեցության հետ և բացատրվում չար աչքի, անեծքի, ուրիշներին արված վատության, Աստծո պատժի, նավսի, թուղթ ու գրի հանգամանքով: Մեծ նշանակություն է տրվում հատկապես անեծքին: Նման մոտիվ նկարագրվում է նաև Հ. Թումանյանի՝ «Մարոն» պոեմում, որտեղ մոր ողբի մեջ ասվում է. «-Ով քեզ ծեծեց, Մարո ջան, Ով անիծեց, Մարո ջան»¹⁰⁴:

Լինում են դեպքեր, երբ վաղահաս մահվան ժամանակ ասում են. «**նրա անեծքն էր**» և ուղղում են պատասխան անեծքներ: Խոսքի ուժի հավատքը՝ հատկապես հոր անեծքը մեծ տեղ է գրավել հայերի կյանքում, օրինակ՝ Արտաշեսի անեծքը Արտավազդին և Դավթի անեծքը Մհերին¹⁰⁵:

Վաղաժամ մահվան դեպքում թաղման ծեսը տարբեր է լինում:

¹⁰¹ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 42-43:

¹⁰² Տավուշյան գրառումներում հանգուցյալները գիշերով դուրս են գալիս գերեզմաններից և շրջում, ըստ նման մտածողության՝ առգելվում է գիշերով գնալ գերեզմաններ կամ խոսել հանգուցյալներից: Լ. Բեգինյան, ԴԱՆ, տ.1, էջ 21, 38: Գիշերով հանգուցյալների կենդանացման մասին տես՝ Խ. Մամուլեան, Հայ ընտանեկան պաշտամունքը, - ԱՀ, գ. XII, էջ 214-216; Ե. Լալայան, Երկեր 1, էջ 211:

¹⁰³ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 43:

¹⁰⁴ Հ. Թումանյան, Մարոն, Երկերի ժողովածու, հ. 1, Եր., 1969, էջ 28:

¹⁰⁵ Մ. Աբեղյան, Երկեր, հ. ա, Եր., 1966, էջ 442-443:

Երեխաներ: Երեխաների մահվան դեպքում օգտագործվող արտահայտություններն են. «**Էս կյանքի համար չէր ստեղծվել**», «**Աստված տվեց, Աստված էլ տարավ**», «**մեր փայը չէր**» կամ «**մեր բաժինը չէր**», «**ուս ինչ վատություն էր արել**», «**չարը տարավ**», «**տուրը տարավ**», ¹⁰⁶ «**Աստված տվեց ու իր բաժինը տարավ**»¹⁰⁷: Այս դեպքում ծիսակարգը պայմանավորվում է երեխայի՝ կրծքով կերակրվելու կամ հաց ուտելու հանգամանքով: Եթե երեխան կրծքով կերակրվող է (մոտավորապես մինչև մեկ տարեկան), ապա այս դեպքում թաղման ծեսը շեղվում է իր ընթացքից, ոչ մի սովորույթ չի կիրառվում: Անմիջապես կատարում են թաղման կարգը և երեխային տանում գերեզմաններ¹⁰⁸ (եթե դեպքը պատահում է երեկոյան՝ արևի մայր մտնելուց հետո, ապա՝ հաջորդ օրը վաղ առավոտյան): Հուղարկավորությունը կատարում են մի քանի տարեց տղամարդիկ, նրանք փոքրիկին հողին են հանձնում կամ ընտանեկան գերեզմանոցում՝ տատի ու պապի ոտքի տակ (որպեսզի մեծերի հովանավորության տակ լինի), կամ էլ իրենց այգում՝ մի ծառի տակ (եթե հատկապես երեխան քառասունքի մեջ է, այսինքն՝ հարամ է): Ընտանիքը սուգ չի պահում, հոգեհաց չի կազմակերպվում, յոթ, քառասունք, տարի չի նշվում¹⁰⁹: Գերեզմաններում տապանաքար չի դրվում: Փոքրիկների դեպքում մորն ընդհանրապես արգելվում է մասնակցել թաղման արարողությանը:

Օգտագործվող խոսքի ձևերում առավել հետաքրքրական է «**փայ**» կամ «**բաժին**» հասկացությունը, որը լայն կիրառություն ունի ինչպես հայոց լեզվի բառապաշարում, այնպես էլ ժողովրդի առօրյա կյանքում: «**Մեր փայը չէր**», «**Աստված տվեց ու իր բաժինը տարավ**» արտահայտություններին համահավասար՝ կենցաղում հաճախ կիրառելի է նաև «**Աստված ամենքին իր սրտով է փայ տալիս**» արտահայտությունը, այսինքն՝ Աստված ամենքին տալիս է իր գործածի համաձայն: Կամ թաղման ծեսում հուղարկավորությունից անմիջապես հետո կազմակերպվող հոգեհացի սեղանին կարևորվում է օգտվելու կարգը, ավագ սերնդակիցների կողմից հաճախակի հնչեցվող հանդիմանական խոսքի ձևերից է. «**կերեք, հանգուցյալի բաժինն է**» (доля умершего)¹¹⁰: Օգտվելը մասնակիցների կողմից դառնում է կարծես պարտադիր, հակառակ դեպքում ասում են. «**հանգուցյալը երազ կգա**»: Ժողովրդի ներկայացմամբ լինում են դեպքեր, երբ հանգուցյալը երազի միջոցով իր «**փայն**» է ուզում: Եթե հանգուցյալի հոգին հայտնում է, որ սոված է, առավոտյան մտով ճաշ են եփում և հացի հետ միասին հինգ կամ յոթ տան բաժանում՝ ասելով. «**թող քո բաժինը լինի**»¹¹¹: Նույն ձևով հոգեհացի ճաշից յոթ տեղ բաժին է հանվում հիվանդ հարևաններին, բարեկամներին և անգամ հողիներին: Հոգեհացի սեղանից օգտվելը պարտադիր է դառնում մեկ տարի շարունակ՝ ինքնահողին, յո-

¹⁰⁶ Տուրի մասին տես՝ **Լ. Քեզիկյան**, Տու-Ալ-Լիլիթ ոգիները, Տավուշ (նյութական և հոգևոր ժառանգություն), Եր., 2009, էջ 24-32:

¹⁰⁷ **Լ. Քեզիկյան**, ԴԱՆ, հարցազրույց N 6, 9, 19, 21, 28:

¹⁰⁸ Նույնը կատարվում էր նաև Գողթն գավառում: Տես՝ Ե. Լալայան - ԱՀ, գ. XII, Թիֆլիս, 1904, էջ 145:

¹⁰⁹ Դա արվում է նորի պատրաստության համար, **Լ. Քեզիկյան**, ԴԱՆ, հարցազրույց N20:

¹¹⁰ Мифология смерти, «Своя» и «не-своя» смерть, с. 2;7:

¹¹¹ **Լ. Քեզիկյան**, ԴԱՆ, Վայոց Ձոր, 2003, էջ 72, 79-80:

թին, քառասունքին, տարին նշելիս: Հանգուցյալի տարին նշելուց հետո՝ հաջորդ օրը, նույն հացով կամ կերակուրներով հյուր չեն ընդունում: Հյուրի համար նոր սեղան են բացում, ինչը նշանակում է, որ տանը նրա համար այլևս «**փայ**» չկա: Երագում հանգուցյալին տեսնելիս դիմում են մի շարք միջոցների¹¹². վաղ առավոտյան արթնանալով՝ առանց որևէ մեկի հետ խոսելու, վերցնում են մի կտոր հաց, վրան աղ ցանում (կամ կեղտ քսում), տնից դուրս գալով՝ մեջքով կանգնում դեպի գերեզմանները և ետ շարտելով ասում. «**առ բաժինդ, գնա**»¹¹³: Պատահում է նաև, որ նույն օրվա ընթացքում հարևանին կամ ծանոթին հաց կամ քաղցրավենիք են տալիս ասելով. «**իմ այսինչի փայը**»:

Այսինքն ընդհանուր պատկերացումներում առանձնացվում է «**փայ**» և «**հանգուցյալի փայ**» ընկալումները, որտեղ յուրաքանչյուր մարդու՝ կենդանի և մեռած, պատկանում է այն ամենը ինչ նա «**վաստակել**» է կյանքի ընթացքում և ինչ նրա համար արվում է մահից հետո հարազատների կողմից:

Համաձայն այս մտածողության երեխաների մահվան դեպքում «**մեր փայը չէր**» խոսքի ձևի կիրառումը և թաղման ծես չկատարելը գուցե ստանում են իրենց բացատրությունները¹¹⁴:

Երիտասարդներ: Ամուսնության տարիքում գտնվող, բայց չամուսնացած մարդու մահը բնութագրվում է որպես վաղաժամ, անիմաստ, վաղահաս, անպատակ, չարաբաստիկ: Կատարվածը տնեցիները և շրջապատի մարդիկ կապում են անեծքի, ուրիշներին արված վատության, թուղթ ու գրի և այլ չար ազդեցության հետ: Լինում են նաև դեպքեր, երբ որպես կատարվածի պատճառ, փաստում են այն, որ ծնողները ամուսնության քառասուն օրվա ընթացքում այցելել են գերեզմաններ կամ մասնակցել թաղման արարողության՝ խախտելով հին ժամանակներից ընդունված սովորությունները¹¹⁵: Չամուսնացածների թաղման ծիսակարգը առանձնանում է մասնակիցների թվով և սեռատարիքային առանձնահատկություններով: Մասնակիցների մեջ մեծ թիվ են կազմում երիտասարդները: Այս դեպքում ծիսակարգում նվազը դառնում է պարտադիր, հանգուցյալին, անկախ տարվա եղանակից, հարսանյաց հագուստ են հագցնում, թաղմանը մասնակից չամուսնացած աղջիկները հավաքում են իրենց մագերը, ճանապարհին երիտասարդի անունը և տարիքը գրված սև ժապավեն են փակցնում, իսկ որոշ գյուղերում տարիքի թվի չափ կրակում են: Այս ծիսակարգում հատուկ նշանակություն են ստանում մոր և եթե նշանված է՝ սիրեցյալի կերպարը, ամուսնացած, բայց իր երեխաներին չամուսնացրածների դեպքում՝ կնոջ և երեխաների կերպարները: Բավականին շատ օգտագործվող արտահայտություններից են. «**արևից ընգած**», «**անմուրազ գնաց**», «**անհիշատակ գնաց**», «**օջախը խավարեց**», «**օջախի ծուխը մա-**

¹¹² Վայոցձորցիները այս դեպքում վերցնում էին մի կտոր տաք հաց, մեկ անգամ կծում և ետ շարտելով ասում. «**առ բաժինդ, գնա**»: Նույնը կատարում էին նաև վերցնելով զլուխ տխ, վերջում խաչակներելով: Նույն տեղում, էջ 12:

¹¹³ Լ. Բեգինյան, ԴԱՆ, էջ 24:

¹¹⁴ Երեխայի մահվան դեպքում արգելվում է նրա անունով կոչել հաջորդ նորածնին՝ նոր մահից խուսափելու համար «անվանը որ արժանի լինեք, ինքը կվայելեք»: Լ. Բեգինյան, ԴԱՆ, հարցազրույց N 26:

¹¹⁵ Մրանով շատերը բացատրում են նաև իրենց չբերությունը, Լ. Բեգինյան, ԴԱՆ, Տավուշ, էջ 49:

րեց», «ծնողի փոխարեն մեղքերը քավեց», «կանաչ-կարմիրից ընգած», «պսակը սև կապվեց», «ուս տեղը խլեց»¹¹⁶ և այլն:

«Օջախը խավարեց», «օջախի ծուխը մարեց», արտահայտությունները օգտագործվում են միայն տղաների դեպքում: Օջախը ընտանիքի գաղափարի մարմնացումն է: Ժողովրդական լեզվում ընտանիքը կոչվում է «օջախ», այսինքն օջախ և ընտանիք բառերը ունեն հոմանիշների նշանակություն: Օջախի պաշտամունքը կապված է նախահոր պաշտամունքի հետ: Ուստի հայկական ընտանիքներում անհրաժեշտ էր արու գավակ ունենալը¹¹⁷: Դրանով լրիվ հասկանալի են դառնում թաղման ծեսում «**օջախը խավարեց**», «**օջախի ծուխը մարեց**» արտահայտությունները: Իսկ «**կանաչ-կարմիրից ընգած**» և «**պսակը սև կապվեց**» արտահայտությունների գործածումը, թաղման ծիսակարգում հանգուցյալին հարսի ու փեսայի հագուստ հագցնելը և նմանատիպ մյուս սովորությունների կիրառումը գուցե ունեն հնագույն՝ հնդեվրոպական ակունքներից սերող մտածողություն:

Հարկ է ուշադրություն դարձնել նաև **տեղ** հասկացությանը: Երիտասարդների հուղարկավորության ժամանակ հաճախ կարելի է տեսնել, երբ ծնողները (մասնավորապես մայրը) փորձում են իրենց նետել գերեզմանափոսը՝ երեխայի հետ թաղվելու ցանկությամբ և ասում են. «**էտ իմ տեղն էր քոնը չէր**»: Այն ներկայացված է նաև Հ. Թումանյանի «Անուշ» պոեմում Սարոյի մոր ողբում. «...Դու իմ գերեզմանն ընչի ես իլում, Թշնամի որդի, դավաճան որդի...»¹¹⁸: Այստեղ ընդգծվում է կյանքի բնական ընթացքի խաթարումը՝ այն մտածողությունը, որ երեխաները պետք է հուղարկավորեն մեծերին, ոչ թե հակառակը¹¹⁹: Կատարվածը երբեմն բացատրվում է «**ուրիշի տեղը խլելով**»: Նման մտածողությունը հին աշխարհում բնորոշ էր շումերներին և աքքադացիներին¹²⁰: Երբ ինչ որ մեկը հանդերձյալ աշխարհ է գնում մեկ ուրիշի փոխարեն: Շումերա-աքքադական առասպելներում Իշտար աստվածուհին սիրեցյալին փրկելու համար ուղևորվում է Հանդերձյալ աշխարհ և երբ ցանկանում է հետ վերադառնալ, նրան հայտնում են, որ համաձայն անդրաշխարհի օրենքների, նա կարող է վերադառնալ միայն այն ժամանակ, երբ իրեն փոխարինող գտնի: Նույն առասպելի մեկ այլ տարբերակում ասվում է.

- Если Инанна покинет «Страну без возврата»
За голову голову пусть оставит!¹²¹

Սյուժետային նույն գծերը հայոց վիպական երգերում առկա է «Ասլան աղա» վիպերգում: Ասլան աղան մենամարտի է բռնվում Գաբրիել հրեշտա-

¹¹⁶ Լ. Բեգիկյան, ԴԱՆ, հարցազրույց N 15, 26, 28, 29:

¹¹⁷ Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 118-122:

¹¹⁸ Հ. Թումանյան, նշվ. աշխ., էջ 97:

¹¹⁹ Նման մտածողության հետ կարելի է կապել տավուշցիների կողմից օգտագործվող խոսքի հետևյալ ձևը. «Հերը երեխու վրա չի գնա, երեխեն հոր վրա կգնա»: Ղարաբաղցի ծննդյան ժամանակ երեխային տուն բերելիս, նախ անհրաժեշտ էր երեխային շեմքից դուրս բերել, ներս թողնել հորը և ապա նոր ներս բերել երեխային: Տես՝ ՀԱԲ, գ. XII, էջ 51:

¹²⁰ Богиня Иштар, Шумерская и аккадская мифология, <http://gotsbay.ru/orient/istar.html>:

¹²¹ Сошествие богини Инанны в подземный мир и возвращение ее на землю, **Кутийско-шумерские мифы**. В основе - книга Абдурагимов Г. А. "Лезги и древнейшие цивилизации Передней Азии". М., 1998г. <http://www.middleeast.org.ua/history/ancient.htm>

կապետի հետ, պարտվում նրանից և հոգին կարող էր փրկել միայն ուրիշի կողմից իր տեղը հոգին տալու դեպքում:

Հարկ է, հիշել նաև որ տավուշցիները որոշակի նախապաշարմունքներով են վերաբերվում հոգեդարձությանը՝ մտածելով, որ էն աշխարհից հետ գալը 40 օրվա ընթացքում ընտանիքում մեկ ուրիշի մահվան պատճառ կարող է դառնալ¹²²: Հոգեդարձ եղածին ասում են երկար է ապրելու. «իր փայն արդեն մեռելա»: Նմանապես երազում մարդու մահը բացատրվում է որպես երկարակեցության նշան: Հետաքրքրական է նաև այն, որ երբ ընտանիքում մեկի մահից հետո մի քանի օրվա տարբերությամբ նոր փոքրիկ է ծնվում ասում են. «մահացողին փոխարինող է ծնվել», «տեղը նորը աշխարհ է ընկել», «Աստված փոխարինող ուղարկեց», «մեկին վերցրեց, մյուսին տվեց», «գլխափոխը ծնվեց»¹²³ և բարեմաղթանքներն էլ կատարվում են ըստ գլխափոխի՝ նրա պակասը նրան ավելանա: Իսկ երբ երեխայի ծննդից հետո մի քանի օրվա տարբերությամբ ընտանիքի անդամ է մահանում, ասում են. «գլխակեր երեխա է», հատկապես, երբ փոքրիկը մեծանալով չար գործեր է կատարում հիշում են նրա ծնունդը և ասում. «դեռ էն գլխից գլխակեր էր»:

Դժբախտ դեպքեր: Դժբախտ դեպքերի ժամանակ մահը դառնում է հանկարծակի, իսկ թաղման ծեսը դրամատիկ: Այս դեպքում ծեսը աչքի է ընկնում իր մասնակիցների մեծ թվաքանակով, հատկապես հուղարկավորության ժամանակ: Դժբախտության պատահարի վայրում 40 օր ծաղկեպսակ են դնում (որոշ դեպքերում նաև նկար), սև ժապավեն են կապում (եթե անգամ դեպքը պատահել է խոր անտառում), ծանոթ վարորդները այդ վայրով անցնելից ձայնային ազդանշան են տալիս, իսկ հետո հուշադրյուր են կանգնեցնում: Միայն այս դեպքում է, որ գերեզմանը կարող է պատրաստել ոչ թե սգատերը, այլ մահվան պատճառ հանդիսացող անձը՝ այսինքն ընտանիքին բոլորովին օտար մի մարդ:

Ինքնասպանություն: Ինքնասպանության դեպքում ոչ միայն մահն է իմաստազրկվում, այլ նաև ողջ թաղման արարողակարգը: Ամեն ինչ դառնում է ձևական, անգամ լացը չի ընդունվում. «նա իրա համար մեռելա, ես գնամ լաց լինեմ»: Կատարվածը որակվում է որպես գործած մեղք և մասնակիցները սգո տուն են այցելում ոչ այնքան ցավակցելու, որքան կատարվածի պատճառն իմանալու: Այս դեպքում օգտագործվող խոսքի ձևերն են. «մեղքի տակ մնաց», «Աստված չպատժեց, ինքն ով էր, որ իրեն պատժեց», «Աստծո տված կյանքն իրավունք չունեի կտրի» և նմանատիպ այլ խոսքեր: Կատարվածը դառնում է հասարակության քննարկման առարկա, սոցիալական միջավայրում ընտանիքը քիչ թե շատ հեղինակազրկվում է և լինում են դեպքեր, երբ մարդիկ իրենց անհարգալից վերաբերմունքն արտահայտելով՝ չեն մասնակցում ինքնահողին, յոթին, քառասունքին:

Ինքնասպանության ծեսում ուշագրավ է նաև այն, որ որոշ գյուղական շրջաններում ինքնասպանի ծնողները նրա՝ հոգին ավանդելու ժամանակ կրած

¹²² Լ. Բեգինյան, ԴԱՆ, Տավուշ, էջ 35: Վայոց Ձորում գրանցվել է դեպք, երբ հայրը պատվիրում է հուղարկավորել հոգեդարձ եղած իր աղջկան, Լ. Բեգինյան, ԴԱՆ, Վայոց Ձոր, 2003, էջ 64:

¹²³ Լ. Բեգինյան, ԴԱՆ, Տավուշ, հարցազրույց N 6, 9, 23:

հագուստները, որոնք սովորաբար պարտադիր դրվում է հանգուցյալի հետ, այս դեպքում հանգուցյալի հետ չեն դնում, այլ պահում են իրենց հետ հուղարկավորելու համար¹²⁴։ Իսկ մինչև 1960-ական թվականները նրանց հուղարկավորությունը արգելվում էր կատարվել ընդհանուր գերեզմանատանը¹²⁵։

Վաղահաս մահվան ժամանակ նշված խոսքի ձևերից բացի օգտագործվում է նաև «**կյանքը ուրիշին բաշխել**» արտահայտությունը։ Այն նույնպես կապվում է կյանքի ժամանակային ընկալման հետ «չապրած տարիները թող երեխեքի վրա ավելանա»¹²⁶։ Այն պատկերացումը գոյություն ունի, թե մարդը մահանալով կյանքի չապրած տարիները կարող է բաշխել ուրիշներին՝ ընտանիքի անդամներին։

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ կյանքի ու մահվան ժողովրդական ընկալումներում **դար, ժամ, փայ, տեղ** հասկացությունները հնագույն մտածողության արգասիք են։ Որքան էլ, որ դրանք արտաքինապես աղավաղվել են, կտրվել իրենց սկզբնական ակունքներից, այնուամենայնիվ նրանց բեկորները շարունակել են պահպանվել առասպելաբանության մեջ, գրական ստեղծագործություններում, հնագիտական նյութերում, ծիսական արարողություններում և ժողովրդի կողմից գործածելի շատ խոսքի ձևերում, որոնք գուցե և հանդես են գալիս վերապրուկային տարբերակով։

Նրանցում ներկայացված շատ մոտիվներ դրսևորվելով թաղման ծիսակարգի գործող սովորույթներում՝ ստանում են իրենց գենետիկական բացատրությունները և հնարավորություն ընձեռում վերականգնելու նախապատմական մտածողության տարրերը ոչ թե առանձին, որպես կտրված հարաբերություններ, այլ այն դիտարկել մեկ միասնական շղթայի մեջ, որպես հարաբերությունների ամբողջություն։

Л. Г. БЕГИНЯН – *Временное восприятие жизни «Своя смерть» и «Не своя смерть».* - С доисторических времен человек стремился к познанию мира самого себя. Не отделяя себя от окружающего мира и социальной среды, человек сформировал при коллективном мышлении беседы и рассказы, где высказал свои размышления о мире.

Сформированные при коллективном мышлении представления о жизни и смерти обусловили процесс погребального обряда. Исследование выраженных в погребальном обряде обычаев и устойчивых оборотов речи доют возможность возродить некоторые черты устаревшего мышления. В этом подтексте значение приобретают понятия «век» «час», «доля», «место». Несмотря на то, что эти понятия претерпели внешние изменения и отошли от своих корней, тем не менее некоторые элементы сохранились в мифологии, литературных произведениях, археологических материалах, ритуальных процессах и существующих в народе оборотах речи, которые возможно, и представляются как пережитки.

¹²⁴ Համշենահայերը հավատում էին, որ սպանվածի հոգին իսկույն որոշակի տեղ չի հասնում, սպասում է մինչև նախասահմանված ժամանակի լրանալը, որ նշանակված է եղել սպանվողի կյանքի համար։ Երբ խփում է ժամը, նա այն ժամանակ է տեղը գնում։ Տես՝ Համշենցի հայերը - ԱՀ, գ. V, էջ 403։

¹²⁵ Այս մասին ներկայացվում է նաև Հ. Թումանյանի «Մարոն» պոեմում։ Տես՝ **Հ. Թումանյան**, նշվ. աշխ., էջ 27-28։

¹²⁶ **Լ. Բեգինյան**, ԴԱՆ, Տավուշ, հարցազրույց N 2, 5, 22, 23։

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ

Ա. Ա. ԱՂԱՍՅԱՆ

*Մեր ներկա բանաստեղծներուն
մեջ ամենեն «ազգային» էր Թու-
մանյան, ամենեն «Հայը», ամենեն
ավելի ցեղային համն ու հոտը բնա-
կանորեն և ճոխապես ունեցողը:*

Ա. ՉՈՊԱՆՅԱՆ

19-րդ դարավերջի հայ գրական կյանքը նշանավորվեց գեղարվեստական ու գաղափարական նոր որոնումներով և ուշագրավ նվաճումներով, գրական ասպարեզ ելած նոր սերնդի հայտնությամբ: Եվ եթե արևմտահայ գրականության մեջ առաջին հիմնահաստատ քայլերն էին կատարում ռեալիստական չափանիշների ու ավանդների մշակմամբ ու զարգացմամբ տոգորված «80-ականների գրական շարժման» երիտասարդ առաջամարտիկները, ապա 19-րդ դարի 80-90-ական թթ. արևելահայ գրական աշխարհում ի հայտ եկան մի խումբ շնորհաշատ սկսնակ բանաստեղծներ, ովքեր նոր ու շրջադարձային փուլ սկզբնավորեցին հայ քնարերգության անդաստանում: Նրանցից մեկին, սակայն, ի վերուստ առանձնահատուկ դեր էր վերապահված. դա հանճարեղ լոռեցին էր՝ Հովհ. Թումանյանը՝ անցման դարաշրջանի այն մեծ արվեստագետը, որ բացեց հայ պոեզիայի մայրուղին և գեղարվեստական նոր փորձի ու նոր սկզբի անգերազանց սերմնացանը դարձավ:

*

* *

Դ. Դեմիրճյանը մեկն էր այն մարդկանցից, որոնց վիճակվեց շատ մոտ լինել Թումանյանի կյանքին և գրական գործունեությանը: Ու թեև բանաստեղծի ստեղծագործության քննությանը նվիրված նրա տեսական հոդվածները գրվել են Թումանյանի մահից գրեթե երկու տասնամյակ անց, սակայն լինելով Թումանյանի մտերիմ գրչակիցներից մեկը՝ նա բանաստեղծի պոեզիայի ուշագրավ և էական կողմերը դիտարկում է կրտսեր ժամանակակցի և գրական ընկերոջ հայացքով՝ դրսևորելով աչալուրջ տեսաբանի խոր դիտողականություն: Ուստի և Թումանյանի մասին Դեմիրճյանի հուշերը և հոդվածները

խիստ արժեքավորում ու նորովի են բացահայտում բանաստեղծի ստեղծագործական գաղտնիքների ինքնօրինակ աշխարհը: Այս առումով ուշագրավ են հատկապես բանաստեղծի ծննդյան 70-ամյակի կապակցությամբ գրված զույգ հոդվածները՝ «Հովի. Թումանյանի պոեզիան» և «Թումանյանի արվեստի մի հատկությունը» վերնագրերով: Հիմնավոր ու համոզիչ են Դեմիրճյանի եզրահանգումները. պարզ երևում է, որ նա խորագիտակ է իր ավագ գրչակցի գեղարվեստական ակունքներին ու տարբերակիչ առանձնահատկություններին:

Ազգային մեծատաղանդ բանաստեղծի պոեզիան, որքան էլ զանազան աղերսներ ունենար նախորդների և ժամանակակիցների գրական ավանդների հետ, այնուամենայնիվ, բացառիկ և ինքնատիպ երևույթ էր հայ քնարերգության մեջ:

Դեմիրճյանի քննական հայացքը նախ բևեռվում է **բանաստեղծ-գրական ազդեցություններ** կապին: Իհարկե, ստեղծագործական որոնումների ճանապարհին պատանի բանաստեղծի կյանքում նշանակալից է եղել համաշխարհային դասականների, մասնավորապես Շեքսպիրի, Գյոթեի, Պուշկինի, Լերմոնտովի դերը, բայց ազդեցությունները կարևորվում են սոսկ այն չափով, թե որքան ճիշտ և զորեղ ազդակներ են եղել՝ իր ինքնատիպությունը գտնելու դժվարին առաքելության մեջ օգնելով բանաստեղծին: Հիշենք, որ Թումանյանն ինքն էլ ընդգծում էր անհրաժեշտ ու ճշմարիտ ազդեցությունների դերը նորընծա բանաստեղծների կյանքում՝ գրական ազդեցությունը համարելով այն սանդուղքը, որով սկսնակը բարձրանում է դեպի ինքնուրույնություն: Այսպիսով՝ Թումանյանը միացրեց ու խորացրեց իր նախորդների ստեղծագործական ավանդների առողջ ու լավագույն տարրերը և ստեղծեց նոր, տիրական հոսանք, նոր բանաստեղծություն: Այդ նորությունը տեսանելի դարձրին ոչ միայն բանաստեղծի լեզուն, ոճն ու արվեստը, այլ նախ և առաջ նորահայտ թեմատիկան և գրական դավանանքը: Թումանյանի պոեզիային որոշիչ նկարագիր հաղորդեց ռեալիզմը: Եվ եթե հետագայում բանաստեղծը տուրք տվեց ռոմանտիկական որոշ տարրերի, համոզված է Դեմիրճյանը, դա թերևս ոճ էր, քան՝ ուղղություն: «Հիմնականում Թումանյանը եղավ ռեալիստական պոեզիայի հաստատիչը հայ բանաստեղծության պատմության մեջ», - գրում է տեսաբանը, ապա շարունակում. «Ժողովուրդը և ժողովրդական ստեղծագործությունը դառավ այն հիմնական հողը, որի մեջ Թումանյանը մշակեց իր պոեզիան:Ժողովրդի բախտն ու վիճակը, այդ՝ դարերով կեղեքված, հալածված, տանջված, երբեմն զոհվող, երբեմն պայքարող և միշտ հուսացող ժողովրդի պատմությունը, նրա ուրախությունն ու վիշտը, նրա հանդիսավոր և առօրյա կյանքը - այս ամենը նյութ դառան նրա պոեզիային»¹²⁷: Այսպիսով՝ ժողովրդական կենսահայեցողության գողտրիկ հրաշակերտները՝ լեզենդները, հեքիաթները, առակներն ու զրույցները, բանաստեղծին թելադրելով իրենց ոճն ու լեզուն, ժանրային և կառուցվածքային առանձնահատկությունները, միաժամանակ պայմանավորեցին գրական նոր՝ **թումանյանական արվեստի** (ընդգծումը մերն է՝ Ա. Ա) առաջացումը:

¹²⁷ Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 12, Հոդվածներ, Եր., 1985, էջ 163:

«Կամենալով ձևավորել ժողովրդին՝ ձև առավ նաև ինքը՝ բանաստեղծը»¹²⁸, -իրավամբ նկատում է Դեմիրճյանը:

Հիշարժան է այն փաստը, որ բանաստեղծն իր գրական գործունեության առաջին իսկ տարիներին արդեն հանգել էր հիշյալ ճշմարտությանը՝ խորապես ըմբռնելով իսկական ազգային բանաստեղծի կոչման ու դերի նշանակությունը հարազատ ժողովրդի կյանքում: Քիչ էր լինել **հայ** բանաստեղծ, պետք էր լինել **հայոց** բանաստեղծ. «....Բոլորը հաստատ մի բան գիտեն. որ ունեն մի թշվառ հայրենիք, բայց թե ի՞նչ բան է այդ հայրենիքը, ինչի՞ մեջն է նրա թշվառությունը, ինչպե՞ս են ապրում, ինչպե՞ս են խոսում, լալիս, ուրախանում, նրա ժողովուրդը, ահա, այդ է հարկավոր, այդ առավելությունը, այդ հատկությունները միայն կարող են նրանց ձեռնադրել հայոց բանաստեղծ, հակառակ դեպքում նրանք կմնան հայ բանաստեղծներ, ոչ թե հայոց բանաստեղծներ»¹²⁹:

Պատահական չէ, որ այս խորիմաստ բնորոշմանն ավելի ուշ անդրադարձավ մեր գրականության ուրույն և ինքնատճ դեմքերից մեկը՝ Պարույր Սևակը՝ վերադառնալով այն հեղինակին՝ համազգային աննախադեպ սիրուն և հիացմունքին արժանացած Թումանյանին. «Նույն ինքը՝ նա է գիտակցել և մեկընդմիջ տարբերակել **հայ բանաստեղծ** ու **հայոց բանաստեղծ**, ինչպես նաև **տարաշխարհիկ** ու **բնաշխարհիկ** հասկացությունները: Եվ Թումանյանն է մեր բանաստեղծներից ամենից ավելի **հայոցը**, ամենից ավելի **բնաշխարհիկը**»¹³⁰:

Կարևոր ենք համարում նշել, որ «ազգային բանաստեղծ» երևույթի արտաքին և խորքային հակակշիռ ըմբռնումների տարբերակման խնդիրը մշտապես հուզել է Թումանյանին: Ազգային կյանքի անհանգիստ ծովի շառաչին ունկնդիր քնարերգուն տեսնում էր, թե ինչպես շատ բանաստեղծներ, անտեսելով երևույթի բովանդակային ատաղձը, գերի են դառնում արտաքին ձևի պաճուճագարդ ու կաշկանդիչ կաղապարներին. հայ բանաստեղծին առավելապես հուզում, վշտացնում էին «Մասիսի ձյունափառ գագաթին կուտակված սև ամպերը», և նա գրեթե չէր նկատում վաստակաբեկ ու հոգսաշատ «հայ գյուղացու ճակատի սև ամպերը», հայ հայրենասերն Արտազն ու Տարոնն ավելի շատ էր սիրում, քան Արտագում և Տարոնում ապրող ժողովրդին... Ահա թե ինչու վշտացյալ բանաստեղծը՝ Թումանյանը, նման հայրենասիրությունն անվանում էր «քրմական, կույր, կեղծ ու անխելք»:

Թումանյանի արվեստի՝ իր համակողմանի ու խորաքնին գնահատման մեջ Դեմիրճյանն առանձնացնում է ևս մեկ հիմնակետ՝ բանաստեղծի անհատականության և ժողովրդայնության փոխհարաբերության խնդիրը: Ըստ վերլուծաբանի՝ բանաստեղծի կենսազգացման անհատական և հասարակական որակները սերտորեն փոխշաղկապված են: «Թումանյան անհատն ու այդ անհատական լիրիկան և Թումանյան հասարակությունն ու այդ հասարակական էպիկան» իրենց համամիությամբ հանդես են գալիս իբրև «արյունակցական մի հարազատ ամբողջություն»: Ուստի Դեմիրճյանի համոզմամբ՝ «Թումանյանի

¹²⁸ Նույն տեղում:

¹²⁹ Թումանյանը քննադատ, Եր., 1939, էջ 18:

¹³⁰ Պարույր Սևակ, Երկեր, երեք հատորով, հ. 3, Եր., 1983, էջ 104:

թախծի և օպտիմիզմի աղբյուրները ժողովրդական մեծ հոգուց են գալիս, բանաստեղծի անհատական-հասարակական հոգեբանությունից»¹³¹:

Դեմիրճյանը միաժամանակ խոսում է Թումանյանի ստեղծագործական նկարագրին բնորոշ ևս մեկ զարմանալի հատկության մասին. մի սյուժետային գերիշխող գիծ, մի «լայտմոտիվ թեմա» համառորեն կրկնվում է գրողի երկերում: Դա **հալածվածության** թեման է, որ ուղեկցում է Թումանյանի բոլոր հերոսներին: Մի էակ, մի պանդուխտ, մի ճամփորդ հալածված գնում է «դեպի տուն», «դեպի վայրերը իր անցած կյանքի», «դեպի Արևելքն աստվածային-հայրենիքը իր հոգու»:

Դեմիրճյանը հավաքական անուն է ընտրում այդ հերոսների համար՝ նրանց անվանելով «բախտահալած փախստականներ»: Թումանյանի և՛ լիրիկան, և՛ էպիկան ասես ողողված լինեն հալածվածության թախծով, նկատում է Դեմիրճյանը, և դա հնչում է բազմապիսի լարերի միջոցով: Ահա Անուշն ու Մարոն. նահապետական գյուղի դաժան բարքերը հալածում են այս երկու սիրող էակներին, և նրանք փախչում են լեռները: Ահա մատաղատի Մարոն, որ բռնի ամուսնու կենակցությունից ու խստասիրտ ծնողներից հալածված՝ փախչում է տնից և քարափից նետվում ձորը: Չարքերը հալածում են հովիվ Սաքոյին, փախչում է նաև նախապաշարումների ա՛յդ գոհը: Գյուղի թավաղներից հալածական մի խումբ ըմբոստներ ապաստանում են ձորերում («Հառաչանք»): Մի ամբողջ ժողովուրդ, Լենկթեմուրից հալածված, փոխակերպվում է աղավնու և ազատվում բռնակալից («Աղավնու վանքը»): Հալածական հոպոպ է դառնում խեղճ հարսը և փախստական թոչում հանդերում, նույն փախստականներն են Պողոս և Պետրոս եղբայրները, Գառնիկ ախպերը... Հոգու հալածանք է ապրում քաղքենի ու նյութապաշտ հասարակության ծաղրին ու կշտամբանքին արժանացած պոետը, հալածանքի հորդուն ալիքը հետզհետե իր հոսքի մեջ է առնում ողջ ժողովրդին.

*Ու մեր քարվանը շփոթ-սուկահար,
Թալանված, ջարդված,
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար...*

Այդ հալածանքն իր հոգում կրում է և բանաստեղծը.

*Էն սև ծովում տառապելով
Լող է տալիս իմ հոգին...*

Դեմիրճյանը մատնանշում է նաև Թումանյանի ստեղծագործության մյուս կարևոր առանձնահատկությունը. այն է՝ հալածանքի կամ ճնշման ենթարկված նրա հերոսները դիմադրում են. Սասունցի Դավիթն ամենատիպական է այդ շարքում:

Դեպի կատարելություն տանող ճանապարհը գրողը տեսնում է անշահախնդիր սիրո և նվիրվածության, մարդկանց ներելու մեծ և գեղեցիկ կարողության մեջ («Ինչքա՛ն ցավ եմ տեսել ես...»): Սակայն սա միջոց է դեպի կա-

¹³¹ Դ. Դեմիրճյան, հ. 12, էջ 165:

տարելությունը, իսկ ցավն ու դավը, վատը շարունակում են ապրել և ավերածություններ գործել մարդկային կյանքում: Մարդ արարածի գործն ու էությունը համահունչ չեն մարդ լինելու վեհ կոչմանը. դեռ շատ հեռու է «մարդացման» ճամփան («Բերանն արնոտ Մարդակերը էն անբան...»): Ահա թե ինչու, Դեմիրճյանի հավաստմամբ, քառյակագիրը, փնտրելով ու չգտնելով իր երազը շրջապատող միջավայրում, ձգտում է հեռուն՝ Արևելքի եղեմների պայծառ իրիկունները, ուր հեքիաթ պալատներում սպասում են իր հոգուն: Նա ցեխերի, աղմուկների մեջ է և ճամփա է փնտրում դեպի տուն: Նա կարեկցում է տիեզերքում հեռացող Սիրիուսին, նա «աստվածային մի ճամփորդ է տիեզերքում»: Ահա Թումանյանի թախիծը, եզրափակում է Դեմիրճյանը. ըստ որի «Թումանյանի հալածանքի ոգին ներսիցն է»¹³²:

Ինչ խոսք, խորաբուխ և նպատակադրված չէր լինի Դեմիրճյանի դիտարկումը, եթե գրական նյութի մտահղացման ու շարադրման, ստեղծագործական խնդրի լուծման թումանյանական ընկալումները կաշկանդվեին հալածականության միտումի միաշեշտ գերակայությամբ: Ճիշտ է, գրական մեծություններն էլ իրենց մտասնեռումներում երբեմն հանգում են սուր և անսովոր բևեռացումների՝ մեծացնելով երևույթի իրական չափերը, և դա երբեմն նոր երանգ է հաղորդում նրանց ինքնատիպությանը, բայց Դեմիրճյանն ակներևաբար ձգտում է իր բազմերանգության մեջ տեսնել ու վերծանել Թումանյանի հոգեմտավոր աշխարհը: Ահա թե ինչու նա հիշատակում է նաև այն մոտիվները, որոնք հնչում են թախծի ու հառաչանքի, հալածանքի ու փախուստի «լայտմոտիվին» զուգընթաց. դրանք տենչանքների, հուսադրումների և ուրախ, «լայնսիրտ» փիլիսոփայության երգեր են. «Բանաստեղծի անհատական թախիծին զուգահեռ գնում է զվարթ երգը. իրենից դուրս ապրող հերոսների հալածվածության կողքին մենք տեսնում ենք օպտիմիզմի, փիլիսոփայական հանգստության, հավատի, լավագույն օրերի սպասումի, ուժի և հաղթանակի ուրախ զգացումը»¹³³:

Դեմիրճյանը Թումանյանի ստեղծագործության իր քննական ուրվագծում կարևորում է ժողովրդի՝ անվերջանալի քանակության և հավաքական որակի միասնական արդյունք հանդիսացող այդ «բարդ սոցիալ-հոգեբանական երևույթի» դերը: Բանաստեղծի գրեթե բոլոր ստեղծագործությունների հպանցիկ անդրադարձումներում տեսաբանը ցույց է տալիս ժողովրդական կենսահայեցողության և աշխարհայացքի բազմազան, բայց փոխկապակցված դրսևորումները: Ահա՛ այդ ժողովուրդը, որ իր հալածանքներից ելք է գտնում Անիծած հարսի, Պողոս-Պետրոսի, Աղավնու վանքի ժողովրդի փոխակերպություններով: Նույն այդ ժողովուրդը ստեղծել է ճակատագրի անխուսափելիության («Անուշ»), աշխարհի ու կյանքի փոփոխականության և անցողիկության գաղափարները («Էսպես չի մնա»): Իր զավակների ու հատվածների ոչնչացման դարավոր շղթայում նա յուրացրել և ամրագրել է մի նվիրական ճշմարտություն. այն, որ ինքը միշտ մնացել է, որ ինքն անմահ է: Բազմակունք ու

¹³² Դ. Դեմիրճյան, հ. 12, էջ 83:

¹³³ Նույն տեղում, էջ 166:

բազմաբյուր են ազգային կեցության երկա՛ր ճանապարհին դարանած վտանգներն ու տառապանքները, բայց բարու, գեղեցիկի, արդարի հաղթանակը հաստատուն է և անբեկանելի. սա է «Հազարան բլբուլի» և ժողովրդական հեքիաթների հիմնական գաղափարը: Ժողովուրդը հումանիստ է, լավատես, կենսուրախ, հնարամիտ, ճշմարտատենչ ու հուսացող. ահա թումանյանական թախծի, վշտի, հույսի և սպասման, լայնասրտության և մարդասիրության ակնադրյուրը, եզրակացնում է քննադատը:

Դեմիրճյանն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում Թումանյանի խոսքարվեստին և ոճին. հայտնի է, որ ժամանակին բանաստեղծի ոճը հակասական, երբեմն՝ ուղղակիորեն մերժելի տարակարծությունների տեղիք տվեց մամուլում և գրաքննադատության մեջ: Դեմիրճյանն այն քչերից էր, ովքեր արժանավորապես գնահատեցին և ըմբռնեցին բանաստեղծի ստեղծագործության այդ էական ցուցիչը՝ որսալով ձևի և բովանդակության համահյուս ներդաշնակությունը: Անուշի, Մաքոյի, Մարոյի, «Հառաչանքի» ծերունու իրականությունն ու միջավայրը պահանջում էին այն ոճը, որ գործածում էր Թումանյանը, իրավացիորեն նկատում է քննադատը: Այդ ամենը պայմանավորված է այն խոշոր հիմնաքարով, որ դրել է Թումանյանը. «Դա նրա ժողովրդայնությունն է ընդհանրապես, նրա հարազատությունն է գլխավորապես, նրա արվեստի մեջ այն կլասիկ կառուցիկությունն է, ժուժկալ, պարզ և խիստ ոճն է ընդմիշտ»¹³⁴, -գրում է Դեմիրճյանը:

Այո՛, Թումանյանի արվեստը չի ընդունում շքեղ ոճ: Թումանյանը դեմ է «ամեն գեղեցկացումների, փարթամության»: Նրա ոճարվեստին հատուկ է ժողովրդական ոճի վսեմ պարզությունը: Այնուհետև իր միտքը Դեմիրճյանը շարունակում է հայ ճարտարապետական ոճի և բանաստեղծի լեզվաոճական առանձնահատկությունների համադաշն զուգահեռով. ժողովրդական ոճի հույաշունչ պարզությունը որդեգրած Թումանյանի ոճի կարևոր հատկանիշն այն է, որ նա երկրորդական տեղ է հատկացնում մանրաքանդակ զարդանախշին և հիմնավորապես կենտրոնանում է ամբողջի կառուցիկության՝ «արխիտեկտոնիկայի» վրա. այդպիսին է հայ ճարտարապետական ոճը՝ իր կառուցիկ, պարզ ու վսեմ ամբողջությամբ և մանրաքանդակի երկրորդական փարթամությամբ:

Իսկապես, հայ գրականության նվիրյալները շատ են: Նրանցից յուրաքանչյուրը երգել է իր սերը, հայրենիքի սերը, իր վիշտը, հայրենիքի վիշտը. երգել է երբեմն շատ նուրբ արվեստով և զգացումներով, բայց թերևս ոչ մի բանաստեղծ հայ կյանքի ներկային ու անցյալին հոգու բոլոր թելերով այնպես կապված չի եղել, ինչպես Թումանյանը, միաժամանակ ոչ մեկի արվեստը այնքան պարզ ու հարազատորեն ժողովրդական չէ, որքան Թումանյանինը: Նա հոգեպես անտարանջատելի էր իր ժողովրդից, որի կենսական բոցավառ ակունքներից էլ վերցնում էր իր նյութերը՝ ներդնելով իր ազգային ու համամարդկային նվիրական խոհերը, հույզերը, մտորումները: Ահա այս հատկանիշներից էլ ելնելով՝ Ստ. Զորյանը մեծ համոզմունքով գրում է. «Հովհ. Թումանյանը հայ գրականության համար նույնն է, ինչ որ Պուշկինը՝ ռուս գրա-

¹³⁴ Դ. Դեմիրճյան, հ. 12, էջ 161:

կանության»¹³⁵: Ջորյանն իր միտքը հիմնավորում է այն իրողությամբ, որ երկու բանաստեղծներին էլ միավորում է միևնույն տարերքը՝ ցեղային ոգու և ցեղային առանձնահատկությունների խորին ըմբռնումը և սեփական ժողովրդի անցյալի, ներկայի, սովորությունների և ավանդույթների, առասպելների հանդեպ լուսավառած սերը:

*
* *
*

Ինքը՝ Թումանյանը, ամենայն լրջությամբ և անվերապահությամբ էր բնութագրում նաև ժամանակի գրական քննադատությունը, ընդգծում այդ դժվարին արվեստի նրբությունները. «Քննադատելը հեշտ բան չի ու ամեն մարդու բան չի: Գրողի արժանիքները պիտի գտնել, էդ արժանիքներով մոտենալ ու բնորոշել նրան: Բանաստեղծին իր հաջող գործերի մեջ պետք է ճանաչել, նրանցով պետք է գնահատել»¹³⁶:

Գրական առաջին քայլերից սկսած՝ մինչև ստեղծագործական կյանքի վերջնագիծը հայոց մեծ բանաստեղծը անդավաճան մնաց ճշմարիտ գրողի ու ճշմարիտ մտածողի իր կոչմանը, ճշմարիտ գրականության իր ազնիվ հավատամքին՝ լուսավառելով նորօրյա հայ բանաստեղծության հրաշալիորհուրդ և կենսահորդ այգաբացը...

А. А. АДАМЯН – Литературные взгляды Д. Демирчяна о творчестве Ованеса Туманяна. - В статье рассматриваются воззрения одного из самых знаменитых армянских писателей о творчестве О. Туманяна. Писатель-критик Демирчян высказывает глубокие, интересные мысли об идейно-художественном своеобразии и богатстве туманяновских произведений, анализирует и оценивает такие важные аспекты творчества поэта, как, например, взаимоотношение двух особенностей поэтической натуры – индивидуальности и общности, а также ставит ряд вопросов стилистического характера. Публикации Демирчяна значительно обогатили литературно-критическую мысль о творчестве О. Туманяна.

¹³⁵ Մտ. Ջորյան, Երկերի ժողովածու 12 հատորով, հ. 12, Ուրվագծեր, Եր., 1990, էջ 94:

¹³⁶ Նվ. Թումանյան, Հուշեր և գրույցներ, Եր., 1987, էջ 156:

ՄԻՐՈ ՎԱՅԵԼՔՆ ՈՒ ՏԱՌԱՊԱՆՔԸ ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՔՆԱՐԵՐԳՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Պոեզիայի ծագման շուրջ հետաքրքրական ենթադրություններ շատ կան: Բանաստեղծությունը ոմանց կարծիքով ծնվել է այն պահին, երբ մարդն առաջին անգամ հիացել է գեղեցկությամբ և ուժով, առաջին անգամ զարմացել: Ըստ երևույթին բավական տրամաբանական այս ենթադրությանը կարելի է գումարել ուրիշ շատ ենթադրություններ, կարելի է անվերջ լրացնել: Թերևս բանաստեղծությունը ծնվել է այն պահին, երբ մարդու աչքերը լայնացել են հիացմունքից ու զարմանքից, և այն պահին, երբ մարդու դեմքը կնճռոտվել է կորստյան ցավի առաջին զգացողությունից, ներքին հարցումը սկսել է տանջել նրա հոգին: Հիացումը և ցավը մշտապես եղել են բանաստեղծության ներքին դրդիչները: Տառապանքը, ցավը, հիացումը, սերը դեպի մարդը և աշխարհը, այս ամենը բանաստեղծության սկիզբն են ու ընթացքը, բանաստեղծության տարերքը, որի ծանրությունը իր սրտի վրա տանում է բանաստեղծը: Մերը, բանաստեղծի ընկալումով, մարդուն բաժին ընկած երկնային ու երկրային գերագույն պարզուն է և որքան էլ տառապալից ու ողբերգական լինի, մեկ է, մարդկային միակ հավերժական երջանկությունն է այն: Մի սուրբ քավարան է սերը, որ մարդուն գտում, մաքրագործում է անմաքուր կրքերից ու արատներից, ազնվացնում ու վեհացնում է նրան և տանում դեպի բարու, գեղեցիկի ու կատարյալի հեքիաթային աշխարհը:

Հայ միջնադարյան սիրո և բնության առաջին երգիչն է համարվում **Կոստանդին Երզնկացին**: Նա առաջիններից էր, որ բանաստեղծության նյութ դարձրեց անձնական վիշտը, սերը, սիրո տարաբնույթ ապրումները: Երզնկացու տաղերում էական նորամուծություն էր այն, որ կինը (Մորճը) սկսում է երևան գալ նաև իր բնավորությամբ, ներքին ապրումներով: Նա հաղթահարում է իր համար «ստեղծված» պայմանական մոդելը, անձնավորվում և դառնում է կոնկրետ մարդ: Այդ կինը նաև համարձակ է, քաղցրալեզու, և թվում է, թե վերջինս արդեն արձագանքել է բանաստեղծի զգացմունքներին՝ մեծ ուրախություն պատճառելով նրան.

*Դու զարնան քամի, ես ծաղիկ ծառաւած,
Իմ ծառաւ սրտիս համար հողմն հընչեց¹³⁷:*

Կոստանդինը հաճախ է տեսել նրան, տեսել է դրսում, երբ նա «Յորդորելով մանրաքայլէ», և խնջույքներում՝ կեր ու խումի մեջ, իր աչքի առջև շրջելիս կամ պարելիս: Այդ ժամանակ բանաստեղծը երգել է իր ուրախությունն ու սերը, հանդիպման հաճույքը, հոգու բավականությունը, նկարագրել Մորճի

¹³⁷ Կոստանդին Երզնկացի, Տաղեր, Եր., 1962, էջ 166:

պարը, ինքը ևս սազը ձեռքին ընդառաջ գնացել նրան, ուրախացել նրա հետ, խմել կարմիր գինին՝ պատրաստ կատարելու նրա բոլոր ցանկությունները:

*Ձնա երբ ի խաղ տեսնում նագով՝
Լուսին սուրաթ, սիահ մագով,
Ես իւր դէմն ելնեմ սագով
Եւ թէ ծառայ լինիմ կամով¹³⁸:*

Կոստանդինը նրան սիրել է առաջին իսկ հանդիպումից, երգել այդ պահը՝ որպես նվիրական, անմոռաց բուպե, և գոհացել կյանքից.

*Ի յայն պահուն սիրտս իմ ետեց,
Երբ իւր տեսն ինձ երևեցավ¹³⁹:*

Սակայն սիրո և ուրախության գովքը չէ միայն, որ անում է Երզնկացին, այլև վայելքի: Մերը, կյանքը, գեղեցկությունը պետք է վայելել, դրա մեջ է երջանկությունը, կյանքի իմաստը: Անկատար սերը վիշտ ու տրտմություն է բերում: Կյանքի անցողիկ լինելով, վաղանցիկ են նաև սերն ու երջանկությունը. և հեղինակը կարծես ուղղակիորեն թելադրում է վայելել սերը, քանի հարմար է առիթը, քանի դեռ կարելի է, քանի դեռ չի անցել ժամանակը.

*Այսօր խօսէ զինչ քեզ պիտի,
Ձի է խընդման օր և շատի,
Թէ չէ՝ երբ վարդըն երթայ զատի,
Քո սիրտտ այլ ու ը երթայ հաւան¹⁴⁰:*

Ամեն ինչ մոռացած՝ նա զվարճանում է կյանքով, երգով, գինով ու սիրով արբած: Տաղերգուն լի է սիրով, ապրում ու շնչում է նրանով.

*Այսօր մեզ տար անուշ զինի,
Ձի ես ուրախ սիրով սագի.
Մեզ խընդութեան օր և խաղի
Այսօր էհաս ու օր խընդման¹⁴¹:*

Սակայն երկար չի տևում տաղերգուի ուրախությունը: Մորճը հեռանում, զատվում է նրանից, չի արձագանքում նրա զգացմունքներին՝ պատճառ դառնալով կարոտի ու վշտի սրտաշարժ տողեր գրելու: Մորճը ծածկում է երեսը, հույս է տալիս հանդիպել, փախչում է հեռու: Կոստանդինը գանգատվում է, թվում է՝ նաև նախատում, որ ուրիշների համար, ինչպես լուսին, «պարզ» ու «թամամ» է ելնում և իրեն տեսնելիս է միայն ծածկվում «նամուսով» ու ամոթխած դառնում.

*Լուսին սուրաթով լուս էս,
Պատրես ու թամամ ելնես,
Ձիս տեսնուս ի մայր մըտնուս.
Ար-եկ աչերուս իմ լոյս:*

¹³⁸ Նույն տեղում, էջ 165:

¹³⁹ Նույն տեղում, էջ 163:

¹⁴⁰ Նույն տեղում, էջ 133:

¹⁴¹ Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 132:

*Երբ որ քո գերիդ տեսնուս,
Շատ դիպն ու նամուս առնուս...¹⁴²։*

Թե ինչ է եղել անջատման պատճառը, դժվար է ասել, երևում է միայն, որ նա, հանգիստ ու քունը կորցրած, արյուն-արցունք թափելով, շրջել ու ամենուր փնտրել է Մորճին, կարոտել նրան, քուն թե արթուն նրա գեղեցիկ պատկերը, շիտակ մարմինն է տեսել աչքերի առջև, իր միտքն ու հոգին անդադար նրա հետ են շրջել։

*Ես եմ կարօտ ի իւր սիրուն,
Ձինչ ծարաւած երկիր՝ ցօղոյն,
Կամ զինչ զարնան անուշ քամուն՝
Թե ե յբ հընչէ հողմըն հարաւ։
Քանի որ յիմ տեսուս զատեր՝
Կենաց ճարակն է ինձ հատեր,
Լացն ու հառաչն է զիս պատեր,
Հոգու քաղիլ ու սրտացաւ¹⁴³։*

Այնուհետև Կոստանդինի հոգում սկսվում է անհույս սիրո հետևանքով ծնված ծանր հույզերի, դառն ապրումների ու մտորումների շարքը։ Նա կորցնում է ուրախությունը, տանջվում՝ սիրուց հիվանդացած, խելքը կորցրած։ Նա միայն իր սերն է փնտրում, իր միակ դեղը, միակ բժշկին, որի տեսքն իսկ բավական է բուժվելու համար։

*Քո սիրոյդ հիւանդ եմ ես,
Հէքիմ և ճարակ դու ես,
Դու դեղ իմ սրտիս առնես՝
Թէ զտեսդ աչերուս օժտես¹⁴⁴։*

Մոռացած իր անձը՝ Կոստանդինը պատրաստ է ամեն տեսակ զոհողության. նույնիսկ ծառա ու գերի դառնալու՝ դա իր համար ազատություն համարելով։ Եթե ծառաներն ազատվելով են փրկվում գերությունից, ազատ լինում, ապա Կ. Երզնկացու համար սիրելիին ծառայելն է ազատությունը։

*Դու հուքմով փատիշահ ես՝ քո եասիրով,
Եասիր կամ քո ծառայ՝ զինքն ազատես,
Ես ազատ եղեալ եմ այս օր երկրի վերայ,
Թէ ծառայ սըրտի կամով զիս տեսանես¹⁴⁵։*

Սիրած էակին նա համարում է իր սրտի տաճարը։ Նրան տեսնելն իսկ այնպիսի գերագույն հաճույք է ու բավականություն, որ հոժար կամով հենց այդ պահին նա պատրաստ է հոգին տալ, մեռնել նրա ոտքերի տակ։

*Թէ լինէր որ զքեզ տեսնի առ յիս գալով,
Եւ խընդութեամբ ի դէմ գայն քեզ սիրով,*

¹⁴² Նույն տեղում, էջ 160-162։

¹⁴³ Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 164։

¹⁴⁴ Նույն տեղում, էջ 160։

¹⁴⁵ Նույն տեղում, էջ 168։

*Ի յերկրի երես դընի քեզ կոխելով
ՈՒ գհոզիս անդ հանէի յօժար կամով¹⁴⁶:*

Ուրիշ ելք այլևս չկա, քանի որ զրկվել սիրած կնոջից, նշանակում է զրկվել կյանքից՝ այլևս որևէ իդձ, փափագ չունենալ, ապրել աննպատակ.

*Այլ չըկայ քեզ, Կոստանդին՝, կեանք մուրատով,
Երբ ի իւր քաղցր տեսուն հանց կարօտ ես¹⁴⁷:*

Սերն է մարդուն կյանքին կապող հիմնական օղակը, առանց սիրո չկա երջանկություն, չկա կյանք:

Եթե Կոստանդինը առանց իր սիրած կնոջ անիմաստ էր համարում նույնիսկ ապրելը՝ ցանկալի կնոջը դարձնելով ազատության ավետաբեր, ապա **Հովհաննես Թլկուրանցին** պատրաստ է ծայրահեղությունների, սակայն միայն իր սերը վայելելու համար: «Միրով մի՛ սպանաներ» տաղում սիրահար բանաստեղծը պատրաստ է զոհել ամեն ինչ հանուն մի համբույրի.

*Պագ մի յերեսէդ աժէ զԵզնկան,
ԶՀապաշ ու զԵաման, զՏիլ ու զՀնդուստան
Երկու վարսդ է գին, է՛ Զին ու Խութան,
Պուլղար ու զԼստամբօլ ու շահրի Եագտան:
Միրով մի՛ սպանաներ, ճէլլատ էֆենտի¹⁴⁸:*

Իսկ համբույրի արժանացած սիրահարը «խնդմով անցնէ զբոլոր տարին»:

Բայց որքան էլ սերն ուրախություն է, այնուամենայնիվ, ինչպես գերմանացի փիլիսոփան կասեր, «դառնություն կա նաև ամենալավ սիրո բաժակում»¹⁴⁹: Ահա այս դառնությունն է, որ խաթարում է սիրահար սիրտը, պղտորում միտքն ու հոգին:

Միրելի ու սրտակից սիրուհին դառնացնում է սիրո ուրախությամբ ապրող բանաստեղծին:

*Անթուր եւ անդանակ արինս հեղեր ես...¹⁵⁰:
Իսկ մի տեղ էլ սերը պարզապես համարում է խոց.
Այ իմ դումրի ես ինչ լինիմ.
Երբ այս խոցոյն դեղն է դիժար¹⁵¹:*

Կամ էլ՝

*Հանցեղ նետով զիս խոցեցիր,
Որ այլ չունիմ բժշկարար¹⁵²:*

Եվ դառնացած ու դաժան խոցված բանաստեղծը աղաղակում է իր սրտի բողոքը, սիրո ցավն ու տառապանքը: Իսկ այդ տառապանքից ծնունդ է առնում ճշմարիտ ու մեծ արվեստը՝ «Տաղ Յովաննեսի վասն սիրոյ» չքնաղ տաղը, որի

¹⁴⁶ Նույն տեղում, էջ 167:

¹⁴⁷ Կոստանդին Երզնկացի, նշվ. աշխ., էջ 168:

¹⁴⁸ Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, Երևան, 1960, էջ 156:

¹⁴⁹ Ֆր. Նիցշե, Այսպես խոսեց Զրադաշտը, Եր., 1990, էջ 97:

¹⁵⁰ Հովհաննես Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 151:

¹⁵¹ Նույն տեղում, էջ 132:

¹⁵² Հովհաննես Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 159:

մասին Չոպանյանը գրում է. «Եթե ապացուցվի, որ սիրերգին հեղինակը Յովհաննես Թլկուրանցին է, այդ արդեն իսկ զմայլման հասնող քերթողը ավելի ևս պիտի մեծանար մեր աչքին, - որովհետև այս կտորը ավելի խոր է և ուժեղ, քան Թլկուրանցիի մեզի ծանոթ սիրերգերը»¹⁵³: Ապա, զարգացնելով միտքը՝ Չոպանյանը նույն տաղի մասին գրում է. «Սիրերգ մըն է զգացման և ձևի հազվագյուտ ինքնատիպությամբ, զայն հորինելու համար կարծես արևելյի Պոտլեր մը և Վերլեն մը իրենց տաղանդները միացուցած ըլլան»¹⁵⁴: Տաղը գրված է անսահման բռնկումով, հոգու ու մարմնի անհասանելի լարումով, տառապանքի ու սիրո ցավի մրմուռներով: Հենց սկզբից տաղը սկսվում է հոգեկան բարձր լարումով, որը սիրո և մահվան խտացման արտահայտություն է.

*Ես քո սիրուն չեմ դիմանար, հալալ արա, հանսը մեռայ,
Առ ի հետ այլ զոսկի փետատ,¹ և եկո փորէ ինծի թուրպայ¹⁵⁵:*

Մահից այսքան սարսափող բանաստեղծը ցանկանում է գերեզման մտնել սիրուհու ձեռքով կառուցված դամբարանում.

*Թող զիս երեն տառայպուլով, որ իմ սրտիս բոցն գոռայ,
Շատ մարդ ի յայս կրակն ընկնի, չորն երի դալարն ի վրայ¹⁵⁶:*

Սիրահար բանաստեղծը այրվում ու տոչորվում է սիրո կրակից, և նրա «տառայպուլը» սրտակեղեք հնչյուններ է արձակում ու ավելի բորբոքում սրտի կրակն ու բանաստեղծը տառապանքից գոչում է.

*Թող լվանան զիս գինով, մտրուպ բերեն ինձ քահանայ,
Կանաչ տերևն թող պատնեն՝ տանին թաղեն ի նոր պաղչայ¹⁵⁷:*

«Արյուն-արցունքով» գրված այս տաղը գրավել է նաև Վալերի Բրյուսովին, և վերջինս նրա մասին թողել է ուշագրավ դատողություններ. «Համարձակորեն կարելի է ասել, որ շատ քչերին ծանոթ այդ Հովհաննեսը թերևս մի պարզ վանական է՝ անհայտ ընկած հայկական մի մենաստանում (կարծում ենք Երզնկայում), 14 կամ 15-րդ դ., որ գրել է համարյա առանց ընթերցող ունենալու հույսի, իր զգացմունքն արտահայտելիս շատ բանով իր ժամանակակից ամբողջ պոեզիայից երկու կամ երեք դար առաջ է անցել: Իսկական կրքոտ այդպիսի ճիչեր չկան ո՛չ Պետրարկայի տոնետներում, որ ապրել է հարյուրամյակ առաջ, ո՛չ էլ Ռոնսարի սիրային երգերում, որ հավանաբար գրել է մի հարյուրամյակ հետո: Հովհաննեսի բանաստեղծությունը (կրկնում ենք՝ միակ պահպանվածը) վերջանում է հաշտարար ակորդով: Մակայն կարևորն այս չէ. կարևորն այն է, որ բանաստեղծը գտել է այնպիսի խոստովանություններ («Զսիրտ երեցիր ու աղկեցիր»), որոնք լիովին հասկանալի դարձան միայն մեր օրերում, երբ և Ալֆրեդ դը Մյուսեն, և Հայնեն, և Բոդլերը տվին իրենց հայտնությունները»¹⁵⁸:

¹⁵³ Արշակ Չոբանյան, Հայ էջեր, Փարիզ, 1912, էջ ԼԶ:

¹⁵⁴ Նույն տեղում, էջ ԼԵ:

¹⁵⁵ Հովհաննես Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 217:

¹⁵⁶ Նույն տեղում:

¹⁵⁷ Հովհաննես Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 217:

¹⁵⁸ Վալերի Բրյուսով, Հայաստանի և հայ կուլտուրայի մասին, Եր., 1967, էջ 91:

Հովհաննես Թլկուրանցին իր տաղերում երգում է սիրո ուրախությունը: Եվ այդ երգը զգացմունքային է ու վարակիչ՝ հագեցած սիրով ու գեղեցկությամբ: Անգամ սիրո ցավն ու տառապանքը երգելիս այս «խն» բանաստեղծը չի կորցնում լավատեսությունը՝ աշխարհն ընկալելու իր ըմբռնումը: Թլկուրանցին մի սիրավատ անհատականություն է՝ ամբողջովին բռնկված սիրո կրակով: Նրա սիրերգերն ունեն զգացմունքի խորություն և զմայլելի անմիջականություն: Սերն աստվածային շնորհ համարող բանաստեղծը գիտի սիրո ամենահաղթ ուժի ու զորության մասին:

Թլկուրանցին ապրված զգացումների ու վայելած սիրո երգն է հյուսում: Նրա նկարագրած կինը գեղեցկության կատարելատիպն է, որի սիրուց բոցավառված բանաստեղծը ցանկանում է վայելել իր սիրային կյանքը բնության գրկում.

*Այլ դու դեղ ես ուրախութեան,
Որ զքեզ տանին ի պաղշանին՝
Զծամդ ու զվարսերդ ի վայր թողուս,
Զծոցդ բանաս ի մեջ պաղշին¹⁵⁹:*

Բանաստեղծին երիցս գեղեցիկ է թվում ծաղկած այգին, երբ սիրուհին ծոցն է բացում իբրև մի անմահական դրախտ: Այնքան զորավոր է գեղուհու տեսքը, որ բանաստեղծը հարբել է նրա սիրուց, մոմի պես հալվում է նրան տեսնելիս, խնանում և դառնում սիրո հիվանդ, որի բուժումը գիտի միայն իր սիրուհին: Իսկ «ճալատ-դահիճ» սիրուհին ավելի է խոցում սիրուց խնացած բանաստեղծին, որը սիրո տառապանքից սրտամաշ ճիչեր է արձակում:

Սիրած կնոջ սիրով է հարբած նաև միջնադարյան մեր մյուս տաղերգուն՝ **Նահապետ Քուչակը**: Երգչի համար այդպես էլ պարզ չի դառնում, թե երբ իր սրտում բույն դրեց սիրո զգացումը: Այնքանը միայն գիտի, որ ինքը «անմեղ կանգնած» էր և սերը «գետ նետի չարիսն ելաւ ու եկաւ իր սիրտը գամուեցաւ»: Քնարական հերոսի համար անբացատրելիորեն ծնունդ է առնում սիրո զգացումը: Եվ նա այդ սերը դիտում է իբրև ամենահաճելի ու ամենաքնքուշ զգացումը, որի շնորհիվ կյանքը իմաստավորվում է.

*Քան զսերն այլ քաղցրիկ պտուղ
Ի յաշխարհս չաւտամ թէ լինի
Շէքերն նշով շաւղած՝
Մօտ ի սերն է դառն ու լեղի...¹⁶⁰:*

Սիրուց դուրս բանաստեղծը չի երևակայում ո՛չ մարդու և ո՛չ էլ կյանքի ու աշխարհի գոյությունը: Այնքան է բանաստեղծը տարված սիրո զմայլելի զգացմունքով, որ կարծում է, թե աշխարհում տարածված սիրո աղբյուրն ինքն է, իր հոգին.

*Երբ սերն ի յաշխարհ եկաւ,
Եկաւ յիմ սիրտըս բնակեցաւ,*

¹⁵⁹ Հովհաննես Թլկուրանցի, նշվ. աշխ., էջ 135:

¹⁶⁰ Նահապետ Քուչակի բանաստեղծական աշխարհը, Եր., 2001, էջ 521:

*Հապայ յիմ սըրտէս ի դուրս
Ի յերկրէ յերկիր թափեցաւ...¹⁶¹:*

Երբ սիրուին մոտ է, սիրահարին ամեն ինչ հիանալի ու կատարյալ է թվում, իսկ երբ նա հեռանում է՝ աշխարհը գունաթափվում է, իմաստագրկվում: Սիրահարն այլ երջանկություն չունի, քան սիրած կնոջ ծոցում հանգչելը.

*-Հա՛յ իմ փոքրիկ շամամ,
Քո ծոցուդ ա՛մ ե՛րբ տիրանամ.
Քո ծոցդ է՛ի ծով նման,
Ծովըն դեղ կ'ասեն ի ջերման.
Փոքրիկ մտերմիկ լինամ,
Ու մտնում ի ծոցդ ու լողամ.
Ծոցուդ ալ ի դուրս ելնում,
Ուներու՛դ շուքըն քնանամ¹⁶²:*

Քուչակը հիմնականում սիրո ուրախության և վայելքի երգիչ է: Բայց սերը միայն վայելք չէ: Բանաստեղծը մեծ վարպետությամբ նկարագրում է սիրո պատճառած դառնությունները: Ահա խաբված երիտասարդի ապրումների ճշմարիտ նկարագիրը, որին յարը քնած թողել ու հեռացել է: Այնքան խոր է սիրահար երիտասարդի կսկիծը, որ ստիպված դիմում է սարերին, ձորերին, քարերին ու թփերին՝ նրանց պատմելով իր վիշտն ու տառապանքը:

*Ա՛յ սարեր, ա՛յ ձորեր,
Գիտացե՛ք, եար եմ կորուսել,
Ա՛յ քարեր, ա՛յ թփեր,
Աճապ ի ձեզ չե՞ եկել.
Ա՛յ քարէ կարմընջնի,
Ի ձեզ չե՞ անցել.
Զիս ի քուն թողեր
Ելեր գնացեր¹⁶³:*

Բանաստեղծը հավատում է մեծ ու ազնիվ սիրուն: Նա անկարող է հավատալ, որ սիրող մարդը ի վիճակի է դավաճանության, այն համեմատելով ամուսն կեսին ձյան գալու հետ.

*Հառչեմ նա կու գայ արիւն՝
Աղուորին իր շատ արևուն,
Հառաչն ի յերկինքն ելել՝
Երկընուց ի վար կուգար ձիւն.
Ամռով ձիւն ո՞վ է տեսել,
Որ կուգայ ի մանուկ մարդուն,
Զգիտեմ թէ ի՞նչ մէն կուգայ,
Թէ կուգայ հաւսար ամէնուն¹⁶⁴:*

¹⁶¹ Նույն տեղում:

¹⁶² Նահապետ Քուչակ, նշվ. աշխ., էջ 577:

¹⁶³ Նույն տեղում, էջ 538:

¹⁶⁴ Նահապետ Քուչակ, նշվ. աշխ., էջ 521:

Եվ այսպես, Քուչակի քառյակներում փոխնիփոխ իրար են հաջորդում սիրո վայելքի ու բերկրության, թախծի ու տանջանքի հոգեվիճակները: Երբեմն անգամ քնած ժամանակ բանաստեղծի «սրտի ականջը» մնում է բաց սիրո քաղցր անուրջների համար, երբեմն «լեզուն կապվում է», երբ լուր է առնում, թե սիրելին իրեն մոռացել է և այդպիսի պահերին նրան թվում է, «երկինքն որոտաց, դողաց, աստղն իսկի ի տեղ չմնաց»: Նրա քառյակները երբեք իրար չեն կրկնում և զգացմունքների գեղեցիկ պատկերներով հիացնում են ընթերցողներին:

Նաղաշ Հովնաթանը նման է իր նախորդ տաղերգուին՝ Նահապետ Քուչակին: Համեմատելով Հովնաթանի պատկերած սերը Քուչակի սիրո հետ, տեսնում ենք, որ երկուսն էլ սիրո մեջ են երջանիկ ու բախտավոր:

Հովնաթանի սերը անպատասխան չի մնում: Ըստ Նաղաշի անպատասխան սեր չկա: Եթե մեկը սիրում է, ապա ինքն էլ պիտի սիրվի: Սիրահարված բանաստեղծը երջանիկ է սիրո մեջ և ուրախությունից բացականչում է.

*Այսօր ծագեցաւ նոր արեւ,
Իմ սիրելին ետ ինձ բարև
Մըտիս բուսաւ կանաչ տերև¹⁶⁵:*

Կենսուրախ ու սիրո մեջ բախտավոր, երջանիկ երգիչը, որն ամեն բոլոր լիակատար վայելել է ուզում, չէր կարող, այնուամենայնիվ, չունենալ տվայտանքի բոլորներ.

*Առաւօտուց վարդ կու քաղես,
Ինձ լաց կանես, դու՝ ծիծաղես...
Բարև չես տալ, խապար չեմ թէ
Քեզ ի նչ արի¹⁶⁶:*

Երբեմն Հովնաթանի սիրած կինը՝ «գալումը», անճանաչելիորեն փոխվում է՝ ցավ ու տառապանք պատճառելով սիրահար երիտասարդին: Նա այցի չի գալիս, չի բարևում, լուր չի ուղարկում, իսկ տեսած ժամանակ անգամ չի խոսում Նաղաշի հետ.

*Ինչ կելնի՝ դուշմանն անարգես,
Քո փիս խասիաթն թարկես,
Թե ինձ մէկ խաբար ուղարկես,
Ես էլ չեմ լալ, հէ՛յ, եար, ամա՛ն¹⁶⁷:*

Բայց, այնուամենայնիվ, սիրահարը չի հուսահատվում: Նա հավատացած է, որ վաղ թե ուշ «գալումը» իրեն նամակ է ուղարկելու, մեջը «մեխակ ու շաքար դրած» և այդ հույսն ու սպասումը երջանկացնում են իրեն.

*Քո ձեռքն մէկ գիր ես գրել,
Մեխակ ու շաքար մէջն դրել,*

¹⁶⁵ **Նաղաշ Հովնաթան**, Եր., 1983, էջ 44:

¹⁶⁶ Նույն տեղում, էջ 39:

¹⁶⁷ **Նաղաշ Հովնաթան**, նշվ. աշխ., էջ 55:

*Ես հիվանդ էի, մէյլ էր տվել,
Ողջացայ, զալում, զալում¹⁶⁸:*

Սիրուհու խոստումը երջանկացնում է Նադաշին: Նա ուրախ է, որ իր սերը անարձագանք չի մնում և, որ ամենակարևորն է՝ սիրուհին «իւր կամով է սիրում»:

*Իմ եարբն նըստել դամով,
Լեզուն քանց շաքար համով,
Ինձ կու սիրե իւր կամով,
Չալում, ուրախ եմ, ամա՛ն, ամա՛ն¹⁶⁹:*

Ծանոթանալով Հովնաթանի սիրո երգերին՝ նկատում ենք, որ նրա սիրերգը անհատական սիրո արտահայտություն է: Նրա սիրո երգի մեջ կենտրոնական տեղը ինքը՝ բանաստեղծն է, իր զգացմունքներով ու հույզերով: Այս ամենից հետո դժվար է չհամաձայնվել Արեղյանի այն գնահատականի հետ, թե «...Նադաշի (Հովնաթան-Վ.Ա.) երգերով մեր քնարերգությունը կատարելապես աշխարհականացել է»¹⁷⁰:

Եթե Հովնաթանի համար սերը լուսավոր երեսով, քաղցր լեզվով է ներկայանում, ապա բոլորովին այլ է **Սայաթ-Նովայի** քնարական խոհը, և դա պայմանավորված է սիրո զգացումի բուն էությամբ: Սերը, ըստ բանաստեղծի, որքան էլ մարդուն երջանկություն բերող հաճելի զգացում է, իր ներքին էությանբ բարդ է, դժվար ու ողբերգական («Երկու խոսկով անգիր ասիմ՝ սերը վուր կա դրժար բան է»): Բանաստեղծը հաճախ է իր ճակատագիրը նմանեցնում արևելյան սիրավեպի հերոսներին (Բահլուլի, Մեջլումի կամ Ֆարիատի), որոնք ևս տոգորված էին մեծ սիրով, բայց դեմ առնելով կյանքի հակասություններին վերջ ի վերջո դժբախտանում էին, խորտակվում:

Հետևելով Սայաթ-Նովայի կենսագրությանը՝ տեսնում ենք, որ նրա խաղերում աստիճանաբար վերանում է «սիրող ու տիրող» երգչի վայելքի ծաղկում ու բերկրանքի ձգտումը՝ տեղի տալով թախծին, վշտին, տառապանքին ու ողբերգությանը, իսկ ուրախությունը նրա խաղերում դառնում է մի «մաթահ» շատ հազվագյուտ երևույթ: *Իսկ այդ ուրախությունը երևում էր նրա սկզբնական տաղերում*:

*Դարդ մի՛ անի ջան ու ջիգար, միթկըտ դիվուց չըտեսնե,
Ավալ քու տեսնողըն մեռնի՝ քիզ գլխաբաց չըտեսնե:
...Թեվուր չըգամ ու չըտեսնիմ՝ հազար բաբաթ բան կոսիս,
Քա՛ շկա մարթ վու՛նց գա, վու՛նց խոսի, վու՛նց քի տըխրած չըտեսնե:
Աստուծու բերնեմեն առնիս մըխիթարիչ սուրփ հոքին.
Է՛լ վաղ միռնի Սայաթ-Նովեն՝ ճիտըտ գըրցած չըտեսնե¹⁷¹:*

Այս տողերից պարզ երևում է, որ կարոտում է ոչ այնքան բանաստեղծը, որքան իր «ջան ու ջիգար» յարը, ով և սիրածին հանդիմանում է իրեն ուշ-ուշ

¹⁶⁸ Նույն տեղում, էջ 17:

¹⁶⁹ Նույն տեղում, էջ 58:

¹⁷⁰ Մ. Արեղյան, Երկեր, հ. Դ, Եր., 1970, էջ 510:

¹⁷¹ Սայաթ-Նովա, Խաղերի ժողովածու, Եր., 1987, էջ 15:

այցելելու համար («Թե վուր չը գամ ու չը տեսնիմ՝ հազար բաբաթ բան կոսիս»): Ոչ թե բանաստեղծն է «ճիտը գցած» «արին արտասուք» լալիս, այլ իր սիրուհին: Որ Սայաթ-Նովան սկզբնապես ուրախ էր, առավելապես վկայում են նրա ավելի վաղ հորինված խաղերը, երբ նա դեռևս «հլա ջահել խի»¹⁷² էր: Այդ շրջանի խաղերում զգացվում է նաև վայելքի ծարավը, ճիշտ է՝ ոչ այնքան իր նախորդների՝ Քուչակի կամ Հովնաթանի նման:

*Էս գիշեր քու մոդ իմ գալու, մատա՛ղ իմ քի, ունքիրըտ բաց.
Շուտ-շուտ չասիս՝ «Վի՛կաց զընա», յիս քի հուր իմ, գի՛ղիս աջաբ»¹⁷³:*

Գիշերով հյուր գնալու պատկերն ենք տեսնում վրացերեն լեզվով գրված մեկ այլ խաղի մեջ.

*Ի՞նչ կուլի վուր մե գամ հյուր գաս, ինձ հիշած,
Վուր մինչև լուս նըստինք, խոսանք համաշա՛ւ»¹⁷⁴:*

Սայաթ-Նովային բախտ չէր վիճակված երկար ժամանակ վայելելու սերը: Զգիտես ինչու, նրա յարը բոլորովին փոխվում է, դառնում ուրիշ մարդ, «ուրիշ մե յար», որ «հլա ջահել խի» բանաստեղծին դարձնում է «ջունուն ու դիվանա»: Այնուհետև սիրահարին չի մնում այլ բան, քան երգելու իր ցավն ու վիշտը, կսկիծն ու մորմոքը: Գիշերով հյուր գնացող ու հյուր կանչող երեկվա ուրախ երիտասարդին այլևս ոչինչ չի մնում, քան յարին սպասելով տանջվել կարոտից: Իր ողջ էությունը ցնցված է բանաստեղծը, ճակատագրի կամքով իրեն բաժին ընկած մերժված սիրո տառապանքներից շվարել, կորցրել է մտքի թելը, կարկամել է ինքը, այնքան արտասովոր ու ողբերգական է թվում իր վիճակը.

Աշխարքն աշխարով կշտացավ, իմ սիրտըն քեզանից սով ա՛ւ»¹⁷⁵:

Այս տողերը անընդհատ այրում են սիրահարի շուրթերն ու միտքը: Այս տողերն է կրկնում նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը «զարթուն, սիրտն է քնած» ու ես մի անգամ կրկնում է.

*Աջաբ քիզ ի՞նչ գեթ իմ արի՛՝ կենում իս խըռո՛վ, աչկի լո՛ւս.
Աշխարս աշխարով կըշտացավ, յիս քիզանից սո վ, ա՛ չքի լուս՛ւ»¹⁷⁶:*

Անկարող էր երգիչը հեռանալ իր կենսատու ակունքից: Դա իսկապես հավասարագոր էր մահվան, ինքնասպանության և դեռ ավելին՝ «Յա՛ր, քիզանից հիռանալըս միռնելուս վըրա դըժար ա»¹⁷⁷: Ուստի ինքնակամ հեռանալը բացառվում է: Իսկ հնարավոր է հասնել, տիրանալ սիրած յարին: Պարզվում է, որ դա նույնպես անհնար է:

Բանաստեղծի համար, որքան էլ նա դժբախտ է սիրո մեջ, որքան էլ անպատասխան են նրա զգացմունքները, որքան էլ անսիրտ ու անխիղճ է նրա

¹⁷² Սայաթ-Նովա, նշվ. աշխ., էջ 137:

¹⁷³ Նույն տեղում, էջ 94:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 96:

¹⁷⁵ Նույն տեղում, էջ 26:

¹⁷⁶ Նույն տեղում, էջ 44:

¹⁷⁷ Սայաթ-Նովա, նշվ. աշխ., էջ 47:

«գոգալ» յարը, մեկ է, Սայաթ-Նովան անմնացորդ սիրահարված է: Յարը մշտապես մնում է նրա հոգեկան ծանր վերքերը ապաքինող միակ բժիշկը, նրա ցավերը թեթևացնողն ու ամոքողը, առանց որի կյանքն ու աշխարհը նրա համար ոչինչ են:

Երգիչը ամբողջովին կլանված է սիրո զգացումով, ապրում ու շնչում է միայն նրանով՝ աստվածացնելով իր տարաբախտ, անպատասխան մնացած սերը և նրան, ով իրեն այդքան տառապանք է պատճառել.

*Քու էշխըն ինձի մաստ արավ, յիս զարթուն իմ, սիրտս է քընած.
Աշխարս աշխարով կըշտացավ, իմ սիրտըս քիզնից սով մընաց.
Յա ր, քիզ ինչո՞վ թարիփ անիմ՝ աշխարումըս բա՛ն չըմընաց.
Կրակե, ծովեմեն դուս էկած, ռաշ ու ջեյրան իս ինձ ամա:*

Եվ ապա՝

*Էնդուր աշկըս չէ ցամաքում՝ սըրտիս մեշըն արին մընաց.
Վունչինչ դարով չըլավացավ՝ մըհլամըս հիդ յարին մընաց.
Էշխեմեն հիվանդ պառկեցա, աշկըս ճանապարհին մընաց.
Յիփ միռա՝ իժում տիս էկավ՝ նազըն բեհդրարին մընաց¹⁷⁸:*

Եվ որքան էլ դժբախտ է բանաստեղծի սերը, որքան էլ անգոր ու անօգնական է ինքը սիրո առաջ, այնուամենայնիվ, նա ոգեշնչված է իր զգացմունքով: Նա ոչ միայն հպարտ ու գոբեղ է իր սիրով, այլև անսահման երջանիկ է նրանով, հոգ չէ, թե այդ սերը մերժված է, անպատասխան: Նա երջանիկ է թեկուզ իր դժբախտ սիրով ու տառապանքով:

Իր անհատական, բանաստեղծական ինքնատիպ քնարով երգելով սերն ու սիրո տառապանքը՝ Սայաթ-Նովան կատարելության հասցրեց հայ սիրերգությունը, որ դարեր շարունակ մշակվել ու հարստացել էր հայ ժողովրդական ու գուսանական երգերում ու միջնադարյան տաղերգուների ստեղծագործություններում:

В. А. АГАБАБЯН – *Наслаждения и муки любви в средневековой армянской любовной лирике.* - Статья посвящена описанию любви в средневековой армянской поэзии. Знакомясь со средневековой армянской поэзией, видим, что отношения между героями становятся более интимными. Влюбленные поэты восхваляют не только блаженство любви, но и страдания и боль, которые она несет.

И, как правильно заметил один немецкий философ, - «горесть есть и в самом хорошем бокале любви». Страдание, боль, восхищение, любовь к человеку и миру – начало и продолжение стихотворения, стихия стихотворения, тяжесть которой поэт несет в своем сердце. Любовь по пониманию поэта – высший дар, несмотря на боль, причиненную ею, единственное вечное человеческое счастье.

В статье обратились к любовной лирике Константина Ерзнкаци, Оганнеса Тлкуранци, Наапета Кучака, Нагаша Овнатана и Саят-Новы.

¹⁷⁸ Նույն տեղում, էջ 34:

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՑԱՎԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ ՄԵՋ

Մ. Լ. ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ

Առաջին համաշխարհային պատերազմը թուրքերին ինքնադրսևորվելու փայլուն հնարավորություն տվեց: Եվ նրանք առիթը բաց չթողեցին, չնայած մինչ այդ էլ թուրքի հրեշավոր էությունը հայտնի էր, և որի մասին Թումանյանը այսպես էր արտահայտվում. «Արևելքը երբեք չէր ունեցել էսքան վայրենի, էսքան անկուտուր, անարժան մի ներկայացուցչություն: Թուրքական գերիշխանությունից հետո Արևելքը և խավարն ու բարբարոսությունը դարձան հոմանիշ հասկացություններ»¹⁷⁹: Իսկ այդ խավարի ու բարբարոսության մեջ ինչ վիճակում պիտի լիներ հայ գեղարվեստական խոսքը: Հետաքրքիր է, եթե երջանիկ պատեհությամբ Միամանթոն փրկվեր մեծ նախճիրից, ինչի մասին կգրեր:

Ակնհայտ է, որ եղեռնի՝ տասնամյակներ չմարող մորմոքներով ստեղծագործելն ինքնին արդեն վերապրելու խորհուրդ ուներ: Իսկ ստեղծագործելու մասին ահա թե ինչ է գրում Հակոբ Կարապենցը. «Ասել եմ: Կրկնում եմ: Գրում եմ, որովհետև կյանքը ոչ արդար է, ոչ էլ կատարյալ: Գրելով փորձում եմ կերպարանք տալ իմ ներքին քառսին, ապա՝ իմ շրջապատի քառսին: Արդեն այդ է արվեստի նպատակը - առնել մի հատված կյանքի ժամանակից՝ ձև ու կյանք պարզել նրան: Այդ են վկայում գրքերը, նկարչական պաստառները, երաժշտական գործերը, քարե քանդակները, թատրոնը, որմերն ու կամարները, նույնիսկ լուսանկարներն ու հաջող շարժանկարը: Այնքան իրականության պատկերումը չէ նպատակը, որքան մի նոր իրականության ստեղծելը, որը թե՛ արտացոլի կյանքը և թե՛ միաժամանակ տա պատրանքը մի ավելի արդար կյանքի: Երբեմն արվեստի գործը այնքան իրավ է լինում, որ կյանքը օրինակում է արվեստին: Ահա թե ինչու արվեստը ազնվացնում է կյանքը, ջանում իմաստ պարզել մեր առօրյա հեռապառ գոյությանը»¹⁸⁰:

Կարապենցի տեսական այս նրբին դիտարկումը կարող ենք ասել, որ կատարվել է՝ աչքի առաջ ունենալով հենց հայ կյանքն ու գրականությունը:

20-րդ դարասկզբի հայոց եղեռնը խորապես փոխեց, տակնուվրա արեց մեր ժողովրդի կյանքն ու ստեղծագործությունը. Թումանյանը լավ է բնորոշել՝ («խանգարված ժողովրդի խանգարված գրականություն»): Ողբերգության արձագանքները մեր գրականության, արվեստի մեջ և ընդհանրապես հասարակական ու քաղաքական շրջանակներում տարբեր՝ հակասական ու իրարամերձ որակումների ու կարծիքների տեղիք են տվել, և մինչև հիմա էլ չեն դադարում բուռն վեճերը, սակայն չկա միասնական տեսակետ: Այն, որ այս մասին

¹⁷⁹ Զ. Թումանյան, ԵԺ, հ. 6, էջ 233:

¹⁸⁰ Զ. Կարապենց, Երկու աշխարհ, Գրական փորձարարություններ, Բոստոն, 1992, էջ 56:

պետք է գրել, պետք է խոսել, կարծում ենք, միանշանակ անհրաժեշտ է: Բոլորովին այլ հարց է, թե ինչպես գրել և ինչ տեսանկյունից այս խնդիրը դիտարկել:

Հարցի առնչությամբ Կարապենցը առանձնակի վերաբերմունք է դրսևորում. «Մարդկայնորեն այնքան անթափանցելի է Հայոց Եղեռնը, անըմբռնելի ու անհատակ, որ անկարելի է համապարփակ պատմությունը: Մինչև հիմա գրվածները հատուկտոր հուշեր են, ականատեսի վկայություններ, ողբերգական ու հերոսական դրվագներ, քերթողական ցասում ու ողբ, փաստագրական անկատար փորձեր, մեկուսի ճիշ, ամեն մի հայ մի հատոր, բյուր բյուրավոր հատորներ՝ մի կերպ պատմելու անպատմելին, որ եղավ օրհասը մեր ժողովրդի, սերնդից սերունդ՝ մթագնելով մեր օրն ու աշխարհը»¹⁸¹:

Այն, որ բազմավաստակ գրողն ու գիտնականը մինչև 1980-ականները ազգային ողբերգության մասին գրված ստեղծագործությունները համարում է «հատուկտոր հուշեր», «ականատեսի վկայություններ» կամ «փաստագրական անկատար փորձեր», կարծում ենք՝ իրավացի չէ: Պետք չէ հակափաստարկներ բերել. այդ թեմայով գրած հեղինակների պարզ թվարկումն անգամ՝ Տերյան, Չարենց, Մահարի, Բակունց, Թոթովենց և ուրիշներ, արդեն խոսուն հավաստարկ է:

Այս հեղինակների ստեղծագործությունների գեղագիտական և գաղափարական արժեքը վիճարկելն անհնարին է, քանի որ դրանք դիմացել են ժամանակի քննությանը: Այլ բան է, որ այդ գրականությունը պիտի այնպիսին լինի, որ չմթագնի սերունդների հոգեկան աշխարհը: Այս ողբերգության հետագա գեղավեստական արծարծումների մասին տրամագծորեն հակառակ տեսակետ է հայտնում գրականագետ Դավիթ Գասպարյանը՝ պնդելով, որ եղեռնի մասին գրվել է. «1915-ի ազգային ողբերգությունը դեմք ու դիմագիծ է տվել 20-րդ դարի ամբողջ հայ գրականությանը՝ Դ. Վարուժանից, Ա. Յարճանյանից, Ռ. Սևակից, Ե. Չարենցից, Կ. Ջարյանից, Շ. Շահնուրից, Վ. Թոթովենցից, Գ. Մահարուց մինչև Հ. Շիրազ, Պ. Սևակ, Վ. Դավթյան, Ս. Գալշոյան... Այս նյութի մեջ ներգրավվել են ինչպես օտարագիր հայ գրողները՝ Վ. Մարոյան, Լ.-Զ. Սյուրմելյան, Մայքլ Արլեն Կրտսեր, Վ. Քաչա, Ս. Սևան և ուրիշներ, այնպես էլ այլազգի գրողներ՝ Ֆրանց Վերֆել՝ «Մուսա լեռան քառասուն օրը», Էդգար Հիլգենրատ՝ «Վերջին մտքի հեքիաթը»:

Սա նաև պատասխան է բոլոր այն գրողների դիրքորոշումներին, որոնք տարբեր դրդապատճառներ նշելով, ասում են, թե եղեռնի մասին հնարավոր չէ գրել, պետք չէ գրել (Հ. Օշական, Հ. Կարապենց, Հ. Մաթևոսյան): Պատասխանը մեկն է. եղեռնի մասին պետք է գրել, պետք է գրել բարձր արվեստով և դարձնել համաշխարհային հանրության սեփականություն»¹⁸²: Իհարկե, պետք է գրել արվեստով և անչափ պատասխանատվությամբ՝ չխաղաղով արյան ու ավերի պատմության հետ: Այս ամենից անհրաժեշտ է ինքնաճանաչման դասեր քաղել և ազգային վերածնության փիլիսոփայությունը զարգացնել, որպեսզի հնարավոր լինի ապրել ու առաջ ընթանալ: Եղեռնին տրված բազում գնահատական-

¹⁸¹ Հ. Կարապենց, նշվ. աշխ., էջ 37:

¹⁸² «Գարուն» ամսագիր, 2003 թ., N 7-8, էջ 35:

ների մեջ թերևս առավել ճշմարիտն ու կենսունակը Էրզրի շառավիղ, տաղանդավոր գրող Մուշեղ Գալշոյանինն է: Նա «Տերն ենք մեր պատմությանը» հողվածում գրում է. «Մուտ առասպելներ չստեղծենք մեզ համար, թե մենք հերոս ժողովուրդ ենք, ապրում ենք. ամո թ է, լոգունգ ենք դարձրել:

Փյունիկի պես զարթոնում ենք, կանգնում ենք, վերածնվում ենք և այլն: Իսկ դա խեղճություն է, ընդունենք, որ կորցրել ենք և ռիսով ընդունենք, վրեժով ընդունենք, ցավով ընդունենք մեր կորուստը և կամ ինչ նորմալ է, լավ է, այսօր դա պետք է լինի, այսօր ուրիշ բան չունենք անելու»¹⁸³:

Այսուհանդերձ դժվար ու տանջալի է ազգային ողբերգության մասին գրելը, այն գրողից ու ընթերցողից պահանջում է ինքնատիրապետում: Կարծում ենք, դա էր պատճառը, որ Չարենցը գիշեր ու ցերեկ հանգիստ չուներ. «Վաղուց, վաղուց մտախուժ է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք է փնտրում կուտակված մի կարոտ: Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, երբ ես զբաղված եմ լինում առօրյա հոգսերով, կամ անգամ երբ ես տարված եմ լինում գինու կամ կնոջ հմայիչ հաճությամբ, - ներսը՝ սրտիս խորքում, գողի պես զգույշ, կամացույց շարժվում է նա:

Ինչպես վաղուց տրված մի խոստում, կամ ինչպես ժամանակին չվճարված պարտամուրհակ - ծանրանում է սրտիս, անողոր - ուտում է սիրտս»¹⁸⁴:

Փաստորեն սա սոսկ գրական նախասիրություն կամ ներշնչանք չէ, այլ հոգեկան անչափ խոր մի երևույթ: Եվ այս ստեղծագործության նկատմամբ ընթերցողն ու քննադատը պիտի առանձնահատուկ վերաբերմունք ցուցաբերեն: Այս «տարօրինակությունը» չի տեղավորվել նաև էպիկական ժանրի շրջանակներում՝ (հիշենք, որ ստեղծագործությունը պոեմանման վեպ է համարվել) և կարևորվել է պոեզիային հատուկ հուզական հզոր լիցքը: Իսկ հետգրության մեջ Չարենցը գրում է. «Մեր աշխատության մեջ գուցե և կան, իհարկե, ավելի մեծ, թեկուզ մի քիչ այլ կարգի սխալներ ու թերություններ, քան վերոհիշյալները - բայց այդ սխալները, թերությունները շտկելու համար հարկավոր էր թերևս նորից գրել այս վեպը, բայց դա ոչ թե շտկում կլիներ, այլ անդամահատություն՝ մահվան սպառնալիքի ներքո»¹⁸⁵:

Սա մեկնակետ է, բանալի, որ Չարենցը տալիս է ընթերցողին: Համանման բացատրություն է տալիս Գուրգեն Մահարին «Այրվող այգեստաններ» վեպի հենց սկզբում. «...Եվ ու՛մ, ու՛մ մտքով կանցնի իր զավակի դագաղի վրա ողբացող մոր ողբասացության մեջ քերականական կամ հնչյունական սխալներ որոնել, գտնել կամ չգտնել... կամ վշտից ծամածոված նրա դիմագծերում ժպիտ հիշեցնող նշույլներ փնտրել, տեսնել կամ չտեսնել...»¹⁸⁶:

Հետաքրքրական է հատկապես այն, որ չվճարված պարտամուրհակ ուներ նաև Մահարին, որ հար և նման էր Չարենցի պարտքի զգացմանը.

«Ի տվնջյան և ի գիշերի, առանց հաշվի առնելու հանգստի օրն ու կիրակին, եթե ոչ հինգ, ապա ապահովաբար չորս տասնամյակ է, ինչ նրանք ան-

¹⁸³ Մ. Գալշոյան, Ագռավաքար, Եր., 1990, էջ 360-361:

¹⁸⁴ Ե. Չարենց, Երկիր Նաիրի, Եր., 1977, էջ 3:

¹⁸⁵ Ե. Չարենց, Նշվ. գիրքը, էջ 4:

¹⁸⁶ Գ. Մահարի, Երկերի ժողովածու, հ. IV, Եր., 1979, էջ 3:

ձամբ ծեծում են իմ դուռը և խնդրում են, հրամայում, հարկադրում, որ ես գրեմ իրենց մատյանում: Նրանք փնտրել և գտել են իմ հասցեն, անկախ նրանից, ես տա՞նն եմ, թե ճամփորդության մեջ, հարու՞ստ եմ, թե աղքատ, աշխատունա՞կ եմ, թե անդամալույծ...

Այսպես հետևեցին նրանք ինձ տարիներ ու տասնամյակներ շարունակ և հետևում էին մինչև այսօր...»¹⁸⁷:

Այս երևույթը շատ կայուն ու կենսունակ մնաց և հետագայում, ժամանակի ամենագոր ձեռքն անգամ չկարողացավ մարել կամ գոնե խամրեցնել կոորույալ հայրենիքի կարոտը, նրա այրող հուշը: Թեմայի արժանի շարունակողները եղան Էրգրի շառավիղներ Քոչարը, Գալշոյանն ու Դաշտենցը: Դաշտենցը «Ռանչպարների կանչը» վիպասքի առիթով, որը ի դեպ, նույնպես դուրս է դասական վեպի կանոններից, ուր չկան մանրակրկիտ վերլուծումներ, ոչ էլ պոմեոտային հետևողական, կանոնավոր զարգացում, որը նույնպես խոսում է «անսովոր» նյութի պարտադրանքի մասին և որի արդյունքում էլ ստացվում է վիպական նման «անկանոնություն», գրում է. «1952 թվականին, երբ ես Իրինդ գյուղում էի, երևելի շինական Գալուստ Քոթանյանը (ավիո Գալուստ) իր հարկի տակ դիմելով ինձ՝ ասաց.

- Շատ ուրախ եմ «Խողեղանի» համար:

Շատ ձորերի գլուխը մի ձոր է, շատ խոսքերի գլուխը մի խոսք. էնպես արեք, որ մեր հետքերը չկորչեն:

1963-ի հունիսի 2-ին Ներքին Թալին գյուղում ես հանդիպեցի «Խողեղան» վեպի հեղինակներից մեկին՝ Գոմաս Մելիքի կնոջը: Նա ասաց. «Մելիք հարիր տարեկան կեղներ, որ մեռավ: Թալինու բժիշկ մեկ օր Մելիքին տեսնելով՝ ասաց. «Մելիք ջան, դու քու ուժից ես էսքան երկար ապրել: Չաթալ օսկոր կա քու սրտի մեջ ու չորս պլոճիկ»:

Իմ այս վեպը իրենց սրտի մեջ «չաթալ օսկոր» և «չորս պլոճիկ» ունեցող այդ սերնդի մասին է»¹⁸⁸:

Այս ամենից հետո վստահորեն կարելի է ասել, որ ո՛չ Չարենցը, ո՛չ Մահարին, ո՛չ Բակունցը և ո՛չ էլ Գալշոյանն ու Դաշտենցը գրիչը չեն վերցրել ու լուռումուռն զրասեղանի առաջ նստել, ձերմակ թղթերի վրա ստեղծագործել, վեպ ու բանաստեղծություն գրել:

Նրանք որդիական պարտք ու պատգամ են կատարել: Նույն կերպ, իբրև ճշմարիտ հայ ու հայրենասեր մեկ այլ հայ իր պապերից ավանդված հողն է մշակում, այդ հողի վրա տուն կառուցում ու պապենական ակուրթ միշտ վառ պահում: Իսկ այդ գրողներին ճակատագրով վիճակված էր վառ պահելու նախնիների ու կորույալ հայրենիքի հուշը:

Ահա թե ինչ է գրում Մահարին «Այրվող այգեստաններ» վեպի առիթով. «Միտքս կորցրած Վանի հետ է, զարմանում եմ հիշողությանս վրա, ինչքան շատ բան է մնացել: Երևի թե կարոտն է դուրս մղում տպավորությունների այդքան հարուստ ավար:

¹⁸⁷ Ս. Աղաբաջան, 20-րդ դարի հայ գրականության զուգահեռականներում, գիրք I, Եր., 1983, էջ 227:

¹⁸⁸ Խ. Դաշտենց, Ռանչպարների կանչը, Եր., 1984, էջ 9:

Ահա թե ինչ է նշանակում ծննդավայրի կարոտ: Իսկապես որ դա հիվանդություն է՝ կարոտախտ»¹⁸⁹:

Խոսելով 20-րդ դարի ազգային ողբերգության մասին, նրա գեղարվեստական արծարծումների, քաղաքական, բարոյական ու հոգեբանական հետազա ազդեցությունների մասին, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այստեղ ազգային ողբերգությունը անհարկի շահարկելու կամ աշխարհի առաջ խեղճուկրակ գոհի կեցվածքով երևալու մտայնություն երբեք չպետք է դրսևորենք: Միևնույն ժամանակ ամենատարբեր միջոցներով պիտի աշխարհին հասցենք այն իրողությունը, որ խնդրո առարկան հայ-թուրք հարաբերությունները չեն լույ, այլ ավելի ճակատագրական, բարդ հարցեր: Անցյալ դարի հայոց ցեղասպանությունը ոճիր էր համայն մարդկության նկատմամբ, որը մնաց անպատիժ: Եվ ուղղակիորեն հենց դա էր հիմնական պատճառներից մեկը, որ անպատիժ մնացած չարիքը ուռճանալով, ծավալվելով ծնեց նորը՝ ֆաշիզմը, որը իր դաժանությամբ չզիջեց նախորդին: Արդեն քաղաքակիրթ Եվրոպան էր դեմ առ դեմ բախվում չարիքին: Իսկ ֆաշիստական Գերմանիայի առաջնորդ Հիտլերը լկտի ցինիզմով ոգևորում էր իր համախոհ-դահիճներին, ասելով, թե ով պատասխան տվեց հայերի ցեղասպանության համար... Եվ եղավ հրեաների ցեղասպանությունը: Ավերումի պղտոր հեղեղը խուժեց Եվրոպա, ջարդուփշուր արեց մարդկության կողմից դարերի ընթացքում ստեղծած հավերժության անցազիր ունեցող արժեքները: Ահա թե ժամանակին ինչ տազնապներ է ունեցել ֆրանսացի գրող Անտուան դը Սենտ-Էքզյուպերին իր «Նամակ պատանդին» վիպակում. «Բայց Պորտուգալիան անտեղյակ էր հրեշի ախորժակին: Նա չէր ուզում հավատալ վատ կանխանշաններին և անհույս հավատով խոսում էր արվեստի մասին: Կհամարձակվեի՞ն նրան ճզմել արվեստի իր պաշտամունքի մեջ: Նա ի ցույց էր հանել իր բոլոր հրաշալիքները: Կհամարձակվեի՞ն նրան ճզմել իր իսկ հրաշալիքների մեջ: Նա ցուցադրում էր իր մեծ մարդկանց: Բանակ չունենալու, թնդանոթ չունենալու պատճառով ներխուժողի մետաղի հորձանքի դիմաց պարզել էր իր բոլոր քարե ժամապահներին՝ բանաստեղծներին, հետազոտողներին, նվաճողներին: Պորտուգալիայի ողջ անցյալն էր բանակ և թնդանոթ չունենալու պատճառով փակում ներխուժողի ճանապարհը»¹⁹⁰:

Ֆրանսացի գրողի տազնապները ցավոք իրականություն դարձան: Ֆաշիզմը, ծնվելով Եվրոպայում, ավերեց այն, իսկ սա մարդու և հակամարդու հարատև բախման պատմության ոչ վաղ անցյալի էջերից մեկն էր: Ահա այս մետաղի հորձանքի դիմաց գոնե պիտի մետաղյա սաղավարտ ունենալ, սակայն միևնույնն է. բոլոր տեսակի չարիքներին ու ավերներին ըստ էության պիտի հակադրել ստեղծագործաբար ու մարդավայել ապրելու ճշմարիտ ու կենսունակ գաղափարը: Այստեղ տեղին ենք համարում հիշատակել Բորիս Պաստերնակի հայտնի վեպի հերոսներից մեկի խոհը, ուր մեկ անգամ ևս շեշտվում է չարիքի մշտական գոյությունը ու նրա դեմ ստեղծագործությամբ

¹⁸⁹ Մ. Աղաբաբյան, Նշվ. գիրքը, էջ 384:

¹⁹⁰ Ֆրանսիական նովել, XX դար, Եր., 1990, էջ 118:

ու արարելով պայքարի անհրաժեշտությունը. «Եթե մարդու մեջ նիրհող գազանին հնարավոր լիներ կանգնեցնել սպառնալիքով, միևնույնն է, կալանատան թե դժոխային հատուցման սպառնալիքով մարդկության բարձրագույն խորհրդանշանը կլիներ կրկեսի մտրակավոր վարժեցնողը և ոչ թե իրեն գոհաբերող քարոզիչը: Բայց հենց բանն էլ այն է, որ մարդուն հարյուրամյակների ընթացքում անասունից զատել ու վեր է բարձրացրել ոչ թե խարազանը, այլ երաժշտությունը՝ անգեն ճշմարտության անհերքելիությունը, նրա օրինակի գրավչությունը»¹⁹¹:

Բերված բազում փաստերը վկայում են, որ առաջադեմ մարդկության խաղաղ ու ներդաշնակ ապրելու հեռանկարը մեծապես պայմանավորված է չարի դեմ նաև մշակույթով պայքարելու աներեր վճռականությամբ:

Ուրեմն՝ 90-ամյա Ժամանակի ու տարածության հեռվից ցավը չի մեղմանում, ցավը մերն է, և մենք պարտավոր ենք խոսել այդ մասին:

Մ. Լ. ՏԱՐՄԱՆՅԱՆ – *Отзвуки боли великой резни в армянской художественной речи.* - Великая резня армян была продолжением большой темы армянских судеб, но совершенно новое. Армянская литература стала одной из тех главных средств, с помощью которой армянский народ должен был попробовать понять, оценить геноцид. В статье делается попытка исследовать созданную на эту тему художественную литературу с точки зрения возбужденного геноцидом задач, который разрешает следить за процессом восприятия великой национальной трагедии, понять новейшую историю нашего народа, которая по сути бесконечный процесс.

¹⁹¹ Բ. Պաստերնակ, Դոկտոր Ժիվագո, Եր., 1991, էջ 52:

ՄՏ. ՆԱԶԱՐԵԱՆՅԸ ԵՎ ԳՐԱԲԱՐԻ ՀԱՐՅԸ ՆՈՐ ԳՐԱԿԱՆ ԼԵԶՎԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Լ. Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Հայ ազգային լեզվի պատմության մեջ XIX դ. 50-60-ական թվականները բնորոշվում են ոչ միայն հին գրական լեզուն ասպարեզից դուրս մղելու և գրականության մեջ նոր լեզվի դիրքերն ամրապնդելու առումով, այլև այդ նոր գրական լեզուն մշակելու և կատարելագործելու ուղղությամբ կատարվող աշխատանքների տեսանկյունից:

Այդ հանգամանքը նոր ձևավորվող միջավայրի անմիջական պահանջն էր. այն է՝ լեզվի կազմավորմանը զուգընթաց ստեղծել նոր, մշակված լեզու:

Աշխարհաբարի զարգացման պատմության մեջ 1858 թվականը բավականին նշանակալից էր, քանի որ հենց այս շրջանում էլ սկսում է լայնանալ գրական լեզվի գործառնությունների շրջանակը, թեև, ինչպես նկատում է Գ. Ջահուկյանը, «19-րդ դարի սկզբից մինչև 1858 թվականը գրական աշխարհաբարի զարգացումը դեռևս թույլ էր ընթանում, այն կրում էր տարերային բնույթ՝ լինելով ընդհանուր հասկանալի լեզու, հանդես գալով իբրև ընդհանուր բանավոր հաղորդակցության միջոց՝ այս լեզուն շարունակում էր գրականության մեջ կատարել երկրորդական դեր: Նա դեռևս անմիօրինակ էր և չէր ենթարկվում գրական համապատասխան մշակման: Այս շրջանում էր, որ գրական լեզվի զարգացումը վերջիվերջո հանգեցնում է գրականության մեջ նրա վերջնական հաղթանակին»¹⁹²:

Պետք է նկատի ունենալ նաև, որ այս շրջանում աշխարհաբարի նորմավորման գործընթացը տարվում է գիտակցաբար և դիտվում է որպես լուծման կարիք ունեցող ծրագրված խնդիր:

1858թ. նշանավորվում է գրական աշխարհաբարի լիակատար հաղթանակով. այս ժամանակից ավելանում է աշխարհաբար պարբերական և այլ կարգի հրատարակությունների թիվը: Այժմ «գրապայքարի» հիմնական առանցքը դառնում է մի այլ հարց, որը արդեն սկսել էր արծարծվել նախորդ շրջանի վերջին ենթաշրջանում՝ աշխարհաբարի հետագա զարգացման ուղիների հարցը: Այս հարցի նկատմամբ հասարակական տարբեր խավեր տարբեր դիրք են գրավում:

Լեզվի մշակման հարցը արդեն կենտրոնական ու գլխավոր էր դարձել: Պահպանողական հոսանքի աջ ներկայացուցիչները (Մ. Մսերյան, Գ. Այվազովսկի և ուրիշներ) լեզվի մշակման հատուկ ուղի էին մատնանշում, որը գրաբարի պաշտպանության յուրատեսակ մի ձև էր: Ելնելով ժամանակին իշխող աստվածաբանական լեզվագիտության դիրքերից՝ նրանք իրենց ամսա-

¹⁹² См. у Г. Джаукян, Армянская лингвистическая мысль и вопросы новоармянского языка в XVIII-XIX веках, автореферат, Ер., 1955, էջ 103:

գրերում («Բազմավեպ», «Մասեաց Աղավնի», «Ճռաքաղ») տարիներ շարունակ գրաբարի հիման վրա աշխարհաբարը մշակելու՝ «ըստ կարի գրաբառին մոտեցնելու» և հետագայում գրաբարին դարձնելու միտքն էին տարածում¹⁹³։ Այսինքն՝ այս ուղղության ներկայացուցիչների գլխավոր նպատակն է աշխարհաբարը մշակել գրաբարի ազդեցության տակ, մոտեցնել նրան և վերջինս կրկին դարձնել ընդհանուր լեզու։

Գրաբարը համարելով աշխարհի առաջին և մաքուր լեզուն՝ նրա կողմնակիցները Առ. Արարատյանի գլխավորությամբ նշում էին, թե աշխարհաբարը մայր գրաբարի «ծնունդն» է և այդ պատճառով էլ պետք է նմանվի նրան՝ իր «ծնողին», որ «աշխարհիկ լեզուն չէ առանձին, ուրիշ և օտարաձայն, այլ նույն ընդ գրաբառին, ի նման է ծնեալ, ի նման է զկենդանութիւն իւր առեալ և վասն էր ծնանելոյն չնմանիլ և չհետնել հարազատ մօր խրում, քան ընդ հակառակն ստիպել, զի մայրն յարմարեսցի ծնելոյն»¹⁹⁴։

Աշխարհաբարի պաշտպանները տարբեր ուղղություն էին ներկայացնում։ Եթե նախորդ ուղղության ներկայացուցիչները ձգտում էին աշխարհաբարը զարգացնել գրաբարի հիմքի վրա, և, հնարավորության դեպքում, վերջիվերջո այն դարձնել միակ տիրապետողը, ապա երկրորդ ուղղության ներկայացուցիչները աշխարհաբարը ձգում են դեպի բարբառները։ Համախմբված «Մեղու Հայաստանի», «Կունկ հայոց աշխարհին» պարբերականների շուրջը՝ մատնանշում էին բարբառների միջոցով լեզուն մշակելու ուղղությունը։ Հարցին փորձում էր այդպիսի լուծում տալ Հ. Չերքեզյանցը։ Նա գտնում է, որ «մեր ժողովրդական լեզուն էն ժամանակ միայն առաջ կը գնա, երբ որ սկսեն գրել տեղական բարբառներով. մեր ժամանակը դեռ չէ հասել մեկ ընդհանուր լեզվի համար, կը գա ժամանակ, որ կարելի է՝ մի բարբառ տիրի մյուս բարբառների վրա։ Հիմիկ պետք է գրել ուրիշ բարբառներով, որ էսպեսութենով կարելի ըլնի ամեն մի բարբառի հատկությունը գուգել, կամ առավել լավ է ասել՝ մի բարբառ ինքն իրան կենդրոնական կամ ընդհանուր կը դառնա»¹⁹⁵։

Աշխարհաբարի կողմնակիցները պահանջում էին գրականության լեզուն դարձնել ընդհանուր լեզու և ժամանակի ընթացքում այն մշակել ու կատարելազործել։

«Հյուսիսափայլ» ամսագիրը, ի հակադրություն ժամանակի աշխարհաբարի տարբեր ուղղությունների նկատմամբ եղած տարակարծությունների, իր էջերը ամբողջովին նվիրեց աշխարհաբարի պաշտպանության ու մշակման գործին՝ հանուն աշխարհաբարի հետագա զարգացման ու հարստացման։ Նազարյանցը դարձավ աշխարհաբարի մշակման այն նոր ուղղության հիմնադիրը և հեղինակներից մեկը, որը հետագայում «Հյուսիսափայլ» ամսագրի անունով «հյուսիսափայլյան աշխարհաբար» կոչվեց¹⁹⁶։ Այս հարցում Նա-

¹⁹³ «Բազմավեպ», Ա տարի, թիվ 6, էջ 108։

¹⁹⁴ Առ. Արարատեան, Դիմագրու ընդդէմ..., Թիֆլիս, 1858, էջ 14։

¹⁹⁵ «Մեղու Հայաստանի», թիվ 5-6, 1860թ., էջ 38։

¹⁹⁶ Այս մասին տես Մ. Գալստյանի «Ակնարկներ աշխարհաբարի պատմության» աշխատության մեջ, Եր., 1963։

գարյանցին աջակցեց և ողջունեց հայ ազատական մտքի ձախ ներկայացուցիչ Միք. Նալբանդյանը: Նրանք միասին լայն գործունեություն ծավալեցին գրականության մեջ՝ ամրապնդվող ժողովրդի կենդանի լեզուն մշակելու ուղղությամբ:

Հյուսիսսփայլյան համատեղ գործունեության առաջին շրջանում նրանց հայացքներն ու ըմբռնումները միասնական էին. աստիճանաբար այդ ըմբռնումները սկսեցին տարանջատվել և զգալիորեն տարբերվել:

Պայքարի այս բուռն շրջանում Նազարյանցը հանդես է գալիս գիտականոթեն հիմնավորելու և գործնական ուղիներ հարթելու, գրական նոր լեզվի մշակման, մատենագրության ստեղծման և հոգևոր վերածնության համար. «Մեր քննությունն այստեղ մի մտածող և բանական եղբայրակիցների հետ է և այն խնդրի վերայ, թե ինչպես է մեր առջև դրած ճանապարհը ինչ հնարներ մեր ձեռքին կային, մեր անապատ աշխարհի շինութեան համար»¹⁹⁷:

Նա աշխարհաբարի իրավունքները պաշտպանող մի շարք հոդվածներում վեր է հանում ժողովրդական լեզվի առաջացման պայմանները, ներկայացնում է հին ու նոր հայերենների, գրական լեզվի և բարբառների միջև եղած զանազան փոխհարաբերություններ:

Ինչպես արդեն նշել ենք, Նազարյանցը գրական նոր լեզվի հարցում անվերապահորեն աշխարհաբարի դիրքերում էր կանգնած, և «Հյուսիսսփայլ» հրատարակումը դրա վառ ապացույցն էր:

Նազարյանցը գտնում էր, որ ազգը ժողովուրդն է, և պետք է ծառայել նրան և ոչ թե առանձին անհատների: Իսկ ժողովրդին ծառայելու միակ ուղին նրան հասկանալի լեզուն, այն է՝ աշխարհաբարը «հասարակաց լեզու» դարձնելն է: Հայ ժողովուրդն ուներ հարուստ, զարգացած և ճկուն հին լեզու, որի գրավոր արտահայտությունը գրաբարն է: Նա լավ է ծառայել մեր ժողովրդին, նրանով ստեղծվել են մշակութային վիթխարի արժեքներ, որոնցով մեր ժողովուրդն աշխարհին ներկայանում է բաց ճակատով: Բայց հին լեզուն պատմության գիրկն է անցել և շատ վաղուց դադարել է հաղորդակցման միջոց լինելուց: Գրականության մեջ նրա կիրառումն էլ արդեն անմատչելի է ժողովրդին: Ժողովուրդն իր երբեմնի լեզուն այլևս չի գործածում այն պատճառով, որ իր համար հասկանալի չէ, այլևս չի համապատասխանում նրա մտածողությանը, չի կարող նրա մտքի ձևը լինել: Ազգային գրավոր լեզուն պետք է հասկանալի և մատչելի լինի ամբողջ ազգին: Եթե գրավոր լեզուն իր ժամանակի խոսակցական լեզուն է, որ մշակվում ու կատարելագործվում է գրականության մեջ, ապա բնական է, որ նոր ժամանակի գրական լեզուն պետք է հիմնված լինի հենց խոսակցական, կենդանի լեզվի վրա. «... ոչ ոք բարեմիտ ազգասերներից երբեք ուրացած չէ Հայկական հնութեան վաստակքը և պարծանքը, չկամին ուշադիր լինել թե դոյն այդ հնութեան յիշատակարանքը կարող չեն ընտրանի շինվիլ և տարածվիլ այժմեան ազգի մեջ, եթե ոչ նոր զգեստով, այժմեան ժամանակի խօսելու ոճով, աշխարհաբար լեզուով»¹⁹⁸:

¹⁹⁷ Մտ.Նազարյանց, Երկեր, Թիֆլիս, 1913, էջ 4-5:

¹⁹⁸ Նույն տեղում, էջ 7:

Գրաբարն արդեն ժողովրդին անհասկանալի էր և չէր կարող բավարարել նոր ժամանակի պահանջները: Եվ որքան էլ ճոխ, մշակված ու գեղեցիկ լինի գրաբարը, այնուամենայնիվ նա չէր կարող այլևս ծառայել ազգին. Նրանից, իբրև ժամանակակից գրական լեզվից, պետք է հրաժարվել. «Հայոց ազգի տունը...պիտոյ է շինվի նորա լեզվի շինութեամբը: Հայոց լեզու ասելով այստեղ հասկանում ենք մեր հայ ժողովրդի կենդանի բարբառը, նորա բերանի խօսքը, այն լեզուն և ձևերը, որով մեր ժամանակի հայերը լավ ու վատ հասկացնում են միմեանց իւրեանց միտքը, դատողութիւնքը և զգացողութիւնքը: Հայոց լեզու ասելով իմանում ենք միայն աշխարհաբառ լեզուն, որ կեանք ունի մեր ժամանակումը, և ոչ թէ ուսումնական գրոց ասած լեզուն, որ այժմ մեռած է և կարող է միայն պիտանի լինել գիտնական հային, լեզուի նորաշինութեան համար, աշխարհաբառ լեզուի թերութիւնքը լցուցանելու մայրենի աղբիւրներից»¹⁹⁹:

Նազարյանցը գրում էր, որ հայերը պետք է ենթարկվեն զարգացման նույն օրենքներին, ինչպես որ առաջ են գնացել եվրոպական ազգերը, ուստի և չպետք է Մխիթարյաններին օրինակ բերելով հավատացնել, թե մեռած գրաբարը երբևէ կարող է վերակենդանանալ: Սակայն նա չի ժխտում, չի թերագնահատում կամ նսեմացնում գրաբարի դերը նոր գրական լեզվի կազմավորման գործում և գտնում է, որ հին լեզվի հարստությունը կարևոր է նոր լեզվի համար, և պետք է այն, ինչ որ անհրաժեշտ, պակաս է նորին, լրացնել հին լեզվից. «Հայոց հնությունների ուսումնասիրությամբ զբաղվող ուսյալ հայը, ժողովրդական լեզվով ստեղծող հայ գրողը միշտ պետք է դիմեն հին հայերեն լեզվի նվիրական սրբություններին. առաջինը՝ ժողովրդական հնության հուշարձանների ուսումնասիրության, երկրորդը՝ հնագույն խոսքի անսպառ ակունքներից ժողովրդական բառարանը հարստացնելու և վսեմացնելու համար»: Նազարյանցի խոսքերից, ձևակերպումներից երևում է, որ նա ընդունել է այդ լեզվի գեղեցկությունը, հարստությունն ու ճկունությունը և գործնականում էլ օգտվել դրանից: Բայց այլ բան է իր դարն ապրածը, թեև հարուստ ու գեղեցիկ, և ուրիշ բան՝ նորն ու անհրաժեշտը:

Դեռևս 1851թ. «Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ» ձեռնարկի առաջաբանում Նազարյանցը կարևորում է նոր լեզվի անհրաժեշտությունը ժողովրդի կենցաղում, գրականության և ուսուցման մեջ: Նա այն կարծիքին է, որ թեև հին լեզուն գեղեցիկ է, ճոխ, ունի ամփոփ ոճ, իսկ նոր լեզուն պարզ է, անմշակ, այնուամենայնիվ պետք է ընդունել վերջինը, քանի որ գրաբարն արդեն անհասկանալի է:

Նազարյանցի համոզմամբ եվրոպական ազգերի նման մեզանում ևս աշխարհաբարը սկսել է զարգանալ անհամեմատ ավելի վաղ. դեռևս XI դարում նկատելի էին նրա առանձին տարրեր, բայց ճակատագրի բերումով չունեցավ իր բնականոն զարգացումը, «վասն զի բանալի նուիրական տաճարիդ այդորիկ անգիւտ իմն կորուսեալ է նմա ի շրջապտոյտս դարուս և ժամանակաց»²⁰⁰:

¹⁹⁹ Մո. Նազարյանց, Երկեր, Թիֆլիս, 1913, էջ 6:

²⁰⁰ Մո. Նազարյանց, Յաղագս փորձական յոգեբանութեան ճառ, Մ., 1851, էջ Բ:

Այժմ ժամանակն է վեր հանել այդ տարրերը, վերածնել կենդանի լեզուն ժողովրդական բարբառների ակունքներից և սեփական լեզուն դարձնել միջնորդ հայ մանուկների լուսավորության համար, քանի որ օտար լեզվով երեխաներին ուսուցանելը կամ աշխարհաբարն արհամարհելը նույնն է, թե «սեփական կենդանությունը ուրանալով օտարի կենդանությամբ ապրել ախորժել»։ Միաժամանակ պետք է ունկնդրել ժամանակի ձայնին, ստեղծել մի հասկանալի լեզու՝ օգտագործելով գրաբարի ճոխ գանձերը և ժամանակակից բարբառները, հետզհետե այն մաքրել օտարաբանություններից և ճանապարհ բացել ժողովրդի հոգևոր զարգացման համար։

Ավելի ուշ՝ «Հայկական լեզուի խորհուրդը» հողվածում, Նազարյանցը զարգացնում է այն միտքը, թե նոր լեզուն պետք է զարգանա ազատ ու անկախ ձևով, բայց և առանց գրաբարին արհեստականորեն մոտեցնելու ձգտման, առանց բարբառայնության մակարդակին իջեցնելու։

Նա գտնում է, որ Մխիթարյանների աշխարհաբարը, կտրված լինելով ժողովրդական լեզուների բուն աղբյուրներից, չի համապատասխանում համազգային լեզվի պահանջներին։ Նազարյանցը ոչ առաջ և ոչ էլ այժմ չի հրաժարվում գրաբարի գանձարանից օգտվելու և գրական նոր լեզուն հարստացնելու անհրաժեշտությունից. «Հայոց նոր հայկաբանը, լինելով տեղեակ իւր լեզուի ճոխ գանձերին, տեղեակ և կենդանի ժողովրդական լեզուի բնատրությունը, պարտական է խելացի տնտեսությամբ գործ դնել լեզուի ընդհանուր նիւթը, **պահպանել հին լեզուից, ինչ բան կարելի էր պահպանել, փոխ առնուլ հնիցք ինչ որ պակաս էր նորին, և պիտանի կացուցանել, ինչ որ արդեն պատրաստ էր այժմեան լեզուի մեջ, հետևելով իւր ընտրողական ճաշակին** (ընդգծումն իմն է՝ Լ.Թ.)։ Նոր լեզուն կամաւ և գիտությամբ ձգձգել և մոտեցնել հին գրոց լեզուին և այդպէս մեռուցանել կենդանի աշխարհաբարի ինքնաշարժ հոգին, ինչպէս տեսանվում է նոր յունական լեզուի մեջ, անպատշաճ է ամենևին, որովհետև այդպէս յառաջանալու էին խորթ և անսովոր ձևեր, որ չէին բղխում ազգի սրտի խորքից»²⁰¹։

Նազարյանցն ու Նալբանդյանը տարբեր վերաբերմունք ունեին աշխարհաբարի մեջ գրաբարը ներառելու հարցում։ Եթե Նազարյանցը գտնում էր, որ հնարավորինս պետք է օգտագործել գրաբարի ընձեռած հարստությունը, ապա սկզբնական շրջանում Նալբանդյանը դեմ էր աշխարհաբարի առջև գրաբարի դռները լայնորեն բացելուն. «Անհրաժեշտ ենք համարում ասել, որ ստրկանալով հին լեզվին, առանց ժողովրդին ականջ դնելու՝ լեզվի նոր ծլած ձևերը, որ դեռ թարմ են և կերպարանագործվելու վրա, կապելով և ճնշելով անցածի և մեռածի պատրանքի մեջ, նոր լեզվի մշակության գաղափարը ազգի համար դառնում է նույնպէս ամուլ և անպտուղ, ինչպէս հին և մեռած լեզվի գործածության գաղափարը»²⁰²։

Բայց, պետք է նշել, որ գրաբարն իբրև մշակված գրական լեզու, իբրև հայերենի հին որակ իր մեջ պարունակում էր աշխարհաբարին պետքական

²⁰¹ Սո. Նազարյանց, Երկեր, էջ 36-37։

²⁰² Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 4, Եր., 1949, էջ 194։

շատ տարրեր, որոնց կիրառումը և՛ անխուսափելի էր, և՛ անհրաժեշտ: Այդ պատճառով էլ Նալբանդյանը, մերժելով գրաբարը և դրա ազդեցությամբ աշխարհաբարը մշակելու ուղղությունը, չէր կարող բոլորովին բացառել գրական լեզվի մշակման գործում գրաբարի դերը և նրանից օգտվելու խնդիրն է դնում. «Նոր լեզուն, գոյանալով այդ պատմական դեպքերի, այլ աշխարհների և այլ ժամանակների ազդեցության տակ, շատ բառ չունի, որովհետև ժողովուրդը կամ չունի այդ բառերի գաղափարը կամ օտար բառ է գործածում: Հայտնի է, թե այդպիսի դիպվածում, *պիտի բառ փոխ առնենք հին լեզվից*»²⁰³: (Ընդգծումը իմն է՝ Լ.Թ.): Այսինքն՝ նա դեմ էր գրաբարին իբրև լեզվի, բայց միաժամանակ գտնում էր, որ պետք է օգտվել գրաբարի բեկորներից:

Ըստ Նալբանդյանի՝ գրաբարից կենդանի գրական լեզվին պիտի անցնեն այն տարրերը և բառերը, որոնք կյանքի ու գործածության են կոչվում հենց նոր լեզվի թելադրանքով: Բնական է, որ այդ բառերի տեղն ու դերը պետք է որոշվի կենդանի լեզվի քերականական օրենքներին «համապատասխան». «Եվ ավերակի քարերը, եթե քո դիտավորությունը այն է, որ շինվածքը ծառայե քո իրական պետքերին, ապա ուրեմն պիտի կազմեն իրական պետքերի համար, նոր ճարտարապետական կանոնների համաձայն»²⁰⁴:

Այսպիսով՝ Մ. Նալբանդյանը գտնում է, որ գրաբարյան անհրաժեշտ տարրերը պետք է բոլոր դեպքերում համապատասխանեն լեզվի քերականական օրինաչափություններին:

Սակայն Նազարյանցը, հենց սկզբից էլ ճիշտ դրույթը պաշտպանելով, գտնում էր, որ աշխարհաբարը մի ոտքով պետք է կանգնած լինի գրաբարի վրա, որ աշխարհաբարի մշակման մեջ գլխավոր հենքը պետք է լինի գրաբարը:

Պարզաբանելով հին ու նոր լեզուների դերը ազգային լուսավորության գործում՝ Նազարյանցը գտնում էր, որ հին լեզուն պետք է կատարի իր «մայրական պարտականությունը դեպ ի իւր մանուկը»՝ ամբողջ «հիւթն ու ծուծը» տալով նրան, որից հետո «.... ցաւալի չէր մօր մահը, այլ մանաւանդ թէ հարկաւոր ևս, ինչպէս բուսական մահը, որ յառաջացնելով ստեղունք, ծաղիկներ և սերմեր, մեռնում է ինքը, շատ արդիւնքներ գործելով ապագայում»²⁰⁵:

1870թ. ապրիլի 19-ին Մամոն Մայսուրյանին գրած նամակում Նազարյանցը մատնանշում է հին լեզուների օգտակարության հարցը. «Լատինի լեզուն յուր բոլոր մատենագրությամբ նույնպէս հարկավոր է Ձեզ և մեզ ամենեցուն, իբրև մի հին լեզու, որոյ վերայ հիմնված է եվրոպական լուսավորության շինվածք, որ մի էական պատմական օղակ է, որով նոր եվրոպական աշխարհը կապակցվում է հին հետ... հին լեզուքը առ հասարակ՝ են առաջին նախադասությունքը և հարկավոր նախադասությունքը»²⁰⁶:

Հենց այս դրույթներն էլ Նազարյանցի մոտ որոշակի արտահայտություն են գտնում այն առումով, որ և՛ իր առանձին աշխատություններում, և՛ «Հյու-

²⁰³ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Եր., 1943, էջ 212:

²⁰⁴ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հ. 3, Եր., 1943, էջ 323:

²⁰⁵ Մո. Նազարյանց, Երկեր, էջ 37:

²⁰⁶ Մո. Նազարյանց, Նամականի, Եր., 1969, էջ 360:

սիսափայլում» մեծանում էր հակումը դեպի գրաբարը, առավել մեծ տեղ էին գրավում գրաբար արտահայտությունները, շարադասական առանձին երևույթներ:

Նազարյանցի մահից հետո, 1888 թվականին, «Հանդես գրականական ու պատմական»-ում տպագրվել է նրա «Հայոց ժողովուրդը, նորա այժմյան լեզվի և մատենագրության վիճակը Ռուսաստանում, համառոտ տեսություն» վերնագրով մի ուսումնասիրություն, որն իր ժամանակի մամուլի մատենագրական քննությունն է:

Այստեղ ևս նա խոսում է մեր գրական նոր լեզվի երկրորդ աղբյուրի՝ գրաբարի մասին՝ նորից կրկնելով իր հին, բայց շատ կարևոր ելակետը. «...յետ դառնալ, գնալ, մտնել մեր նախահարց կեանքի պայմանների մեջ, որ չեն մեր ներկայ կեանքի պայմանքը, կարող չենք, որովհետև այդպես պիտի ուրանայինք կենդանի ժողովրդի իրաւունքը, մեռածի, անցած ու գնացածի իրաւունքը առաւել վերին դասելով, որ մի անխորհուրդ բան է»: Նազարյանցը հարկ է համարում նորից կրկնել, որ «յարուցանել գերեզմանից կարելի չէ ոչինչ կախարդական գաւազանի հարմար (զարկով)», բայց պետք է օգտագործել մեզ հասած հարստությունը. «...պիտանի կացուցանել, մեր այժմեան աշխարհիկ լեզուն բարեկարգելու և մատենագրութեան յարմարաւոր անօթ շինելու համար»²⁰⁷:

Նա առաջադրում է բարբառներից և «գրոց ասած հին լեզուից» ճիշտ օգտվելու հարցը. «Ժողովրդական բարբառով մաքուր, յստակ և գեղեցիկ հայախօսել ես չեմ հասկանում այն, որ նոր հայկական լեզուն խառնակուէր և ճամկաւորուէր գրոց լեզուի ռճերով, այլ պինդ և ամուր մնալով ժողովրդի այժմեան կեանքի պայմանների մեջ, չխտորուէր հայկազեան լեզուի հոգուց ու գաղափարից ընդհանրապէս»²⁰⁸:

Հենց հնի ու նորի միջև կամուրջ գցելու սկզբունքն էլ հետագայում՝ խորհրդային շրջանում, պատճառ է դարձել Նազարյանցի հանդեպ քննադատական վերաբերմունքին՝ նրա մեջ տեսնելով հայ լիբերալ բուժուազիայի գաղափարախոսին, այսինքն՝ մարդու, որը կանգնած էր ռեֆորմների և «բարենորոգումների» ուղու վրա:

Փաստորեն Նազարյանցը առաջադրում էր ստեղծել մի այնպիսի լեզու, որ, իր նախնական հիմքն ու արմատը հաստատ պահելով, կծառայեր նոր ժամանակի հայախոսությանը:

Л. В. ТУМАНЯН - Ст. Назарянц и вопрос грабара в развитии новоармянского литературного языка. - В статье рассматриваются затронутые в работах и статьях Ст. Назарянца вопросы, касающиеся борьбы за обновление армянского языка, которая развернулась в армянской действительности в 50-70 гг. XIX века. Ст. Назарянц полагает, что новый литературный язык должен обогащаться такими элементами староармянского, которые понятны современному поколению.

²⁰⁷ Մո. Նազարյան, Երկեր, էջ 395:

²⁰⁸ Նույն տեղում, էջ 387:

ОРИГИНАЛ И ПЕРЕВОД: ВЗАИМОДЕЙСТВИЕ ДВУХ КУЛЬТУР

М. О. ЗУРАБЯН

При художественном переводе в контакт вступают не только два языка, но и две культуры. Они включают в себя как культурные универсалии, без которых вообще невозможно было бы общение представителей разных культур, так и элементы, совпадающие лишь частично (частичная эквивалентность) и вообще не совпадающие. Это могут быть элементы религиозного культа, обычаи, обряды, нормы поведения, этикета, символика цветов, компоненты невербального языка, т.е. мимики и жеста, наконец, фон национального культурного наследия. Но адекватное понимание текста предполагает и адекватное понимание этих в той или иной степени чуждых читателю элементов. В противном случае смысловому и, особенно, эстетическому восприятию произведения может быть нанесен серьезный урон.

Именно поэтому И. Левый и считал ядром переводческой проблематики «соотношение трех единств: объективного содержания произведения и его двух конкретизаций – в сознании читателя оригинала и в сознании читателя перевода. Эти три структуры неизбежно будут несколько отличаться одна от другой, главным образом в зависимости от того, до какой степени при их создании проявились оба дифференцирующих фактора: различие между двумя языками и различие в объеме знаний между двумя кругами читателей. Вопрос о том, как свести к минимуму эти различия, – важнейшая проблема переводческого труда, а из попыток анализировать и нормативно определить соотношение упомянутых трех единств вытекают главные теоретические проблемы науки о переводе»²⁰⁹.

В СССР целостное теоретическое осмысление явления было впервые предпринято в методике преподавания русского языка как иностранного – авторами известного исследования «Язык и культура» Е. М. Верещагиным и В. Г. Костомаровым. Фоновые знания они подразделили на общечеловеческие, региональные и страноведческие, наиболее важные для преподавания русского языка иностранцам. Фоновые страноведческие знания, в свою очередь, делятся авторами на актуальные фоновые знания и фоновые знания культурного наследия²¹⁰.

Теоретики и практики перевода сразу заинтересовались этой классификацией. В. С. Виноградов предложил более узкое понимание фоновых знаний, отделив их от понятия тезауруса, т.е. объема знаний вообще. Тезаурусы он подразделяет на 1.глобальные (вся человеческая культура), 2.региональные, 3.национальные, 4.групповые и 5.индивидуальные. «В региональных и национальных тезаурусах есть известная доля сугубо на-

²⁰⁹ И. Левый. Искусство перевода. М., Прогресс, 1974, стр. 59.

²¹⁰ Е. М. Верещагин, В. Г. Костомаров. Указ. соч., стр. 126-127.

циональных знаний, совладельцами которых не стали другие национальные общности. Только эту часть знаний, по нашему мнению, следует именовать фоновыми знаниями»²¹¹.

Однако, на наш взгляд, когда речь идет о переводе классики, обычно более или менее удаленной от читателя во времени, такое понимание фоновых знаний не может быть принято без оговорок, даже если речь идет о читателях оригинала. Говоря конкретнее, даже читатель оригинала может не владеть какими-то элементами своего национального, тем более регионального тезауруса, на который рассчитывал автор произведения. Роман Булгакова «Мастер и Маргарита», при кажущейся легкости повествования, обладает огромными подтекстовыми и затекстовыми пластами смысла и уже в оригинале рассчитан на чрезвычайно подготовленного читателя. Тем более это касается современного читателя романа М. Булгакова «Мастер и Маргарита» в переводе А. Ованнисяна на армянский язык. Распад единого культурного пространства после распада СССР и отсутствие единой школьной программы на постсоветском пространстве осложнили понимание русской классики именно из-за несовпадения фоновых знаний.

«Мастер и Маргарита» требует для своего полноценного понимания весьма обширного тезауруса. Условно в нем можно выделить следующие блоки: демонологический, репрессивный, литературный и музыкальный. Разумеется, это деление крайне условно и не охватывает всего богатства отсылок и ассоциаций. Так, мотив репрессий, проходящий через все произведение (арест Иешуа, исчезновение людей из «нехорошей квартиры», аресты в домоуправлении, арест Мастера и многое другое) задан уже в заглавии первой главы – «Никогда не разговаривайте с неизвестными». По ней же рассыпаны десятки намеков, сигнализирующих о встрече с дьяволом (небывалая жара, укол в левый висок или сердце, зеркало пруда как дверь между мирами, внешность незнакомца, трость с набалдашником в виде головы черного пуделя, разговор о черной магии и чернокнижнике Герберте Аврилакском, намекающая звукопись на «чер» и т.д.). Все эти намеки затем будут развернуты в романе и дополнены другими.

Что касается литературы, то только о Пушкине можно сказать, что в романе Булгакова «прямо или косвенно включенными в повествование оказываются «Евгений Онегин», «Пиковая дама», «Скупой рыцарь», «Руслан и Людмила», «Борис Годунов», «Медный всадник», «Сказка о золотом петушке», «Песнь о вещем Олеге»²¹².

Очень активно присутствует в романе Гоголь, нетрудно заметить переклички с Лермонтовым, Толстым и Достоевским. Из западной литературной классики бросается в глаза, кроме прямо заявленной уже в эпиграфе переклички с Гете, перекличка с Гофманом, Сенкевичем (особенно с «Камо грядеши»), с Шиллером, Шекспиром и, конечно, Данте.

²¹¹ В. С. Виноградов. Лексические вопросы перевода художественной прозы. М., МГУ, 1978, стр. 86-87

²¹² Б. М. Гаспаров. Из наблюдений над мотивной структурой романа М. Булгакова «Мастер и Маргарита». Даугава, Рига, 1989, №1, стр. 84.

Над всем этим царит, естественно, евангельская проблематика. Булгаков, как известно, подверг изменениям канву канонических Евангелий. Однако, чтобы отметить и осмыслить эти отклонения, надо знать канонический текст.

Велик пласт мировой органной, оперной и симфонической музыки, так или иначе затронутой в «Мастере и Маргарите». Назовем лишь один штрих: три персонажа – Берлиоз, Стравинский и Римский – однофамильцы известных музыкантов, и это обыграно в романе. Этот перечень можно продолжить. Понятно, что большая часть этой информации неподвластна переводчику. Но понятно также, что утрата такого количества информации очень обедняет роман для читателя перевода. Очевидно, здесь нужен разумный компромисс в виде определенного справочного аппарата, а также переводческих разъяснений в тексте или сносках.

Никак не отрицая ценности предложенных выше классификаций, мы считаем, что для переводческой и издательской практики наиболее приемлемой и удобной является классификация, предложенная К. Л. Мкртчяном в его книге «Петербургские повести Гоголя в армянских переводах».

В своей монографии он не только указал на недостатки предшествующих классификаций, пусть принадлежащих столь авторитетным авторам, но и предложил свою классификацию, которая кажется нам оптимальной в качестве инструмента как переводческого анализа, так и читательского постижения: «разделить их (фоновые знания оригинала) на функционально активные и функционально пассивные, понимая под первыми те фоновые знания (безотносительно к их важности для культуры страны в целом), которые необходимы для правильного понимания оригинала и нераскрытие которых приводит к существенным издержкам в понимании общего смысла произведения и эстетическом сопереживании читателя перевода. Под функционально пассивными понимаются такие фоновые знания (опять-таки безотносительно к их абсолютной значимости), которые такого значения в данном тексте не имеют»²¹³.

Таким образом очерчивается круг фоновых знаний, которые должны быть обязательно объяснены читателю. В последние десятилетия появилась новая тенденция: примечания к тексту иногда пишут сами переводчики. На наш взгляд, эту тенденцию следует только приветствовать: переводчик, по необходимости – самый внимательный читатель переводимого текста, хорошо знающий его непонятные места. Более того, он хорошо знает, что именно и сколько надо сказать о предмете речи для понимания именно этого конкретного текста. Стоит прислушаться к мнению К. Мкртчяна и о характере примечаний, если они все-таки имеются в тексте. Приведя примеры со словами «капуцин» и «масон», к которым в армянском тексте Гоголя были даны примечания, переведенные с русского, но, как и в русском издании, не работающие на текст, он затем пишет: «Из-

²¹³ К. Л. Мкртчян. Петербургские повести Н. В. Гоголя в армянских переводах (прочтение оригинала как переводческая проблема). Ереван, ЕГУ, 1984, стр. 34.

лишнее разъяснение» или даже «неразъясняющее разъяснение» имеют своей причиной забвение специфики примечания в художественном тексте. Примечание тоже должно быть функциональным и, следовательно, не останавливаться на всех сторонах разъясняемого предмета, а только (или, во всяком случае, - в основном) на тех его сторонах, которые обязательны для понимания текста. Тогда не будет таких ситуаций, когда о «капуцине» или «масоне» сказано многое, может быть, даже все... кроме того, что следовало сказать. Таким образом, только последовательно функциональный подход как при выборе фоновых элементов художественного произведения, нуждающихся в комментировании, так и при самом комментировании, позволит избежать принципиальных ошибок»²¹⁴.

Применительно к «масону» скажем, что исследователи романа Булгакова находят в нем определенные следы масонской обрядности и символики (тот же бриллиантовый треугольник Воланда – своего рода Великого Командора ордена – может напоминать золотой треугольник Мастера Хирама) и сам титул Мастера может соотноситься, в числе прочих толкований, также и с масонством²¹⁵. Однако, в отличие, скажем, от романа Л. Толстого «Война и мир», эти знания не являются для романа Булгакова «Мастер и Маргарита» функционально активными и не требуют обязательного комментария, тем более, что они выражаются не в словах, а в деталях, которые подскажут возможность подобного толкования внимательному и образованному читателю на любом языке. Но вот пример, когда самый внимательный читатель, если он не владеет немецким языком, не поймет, в чем тут дело. Когда в Варьете пытаются вспомнить фамилию «черного мага», в конце концов эти попытки дают близкий не только к форме, но и к сути результат:

- Во... Кажись, Воланд. А может быть, и не Воланд? Может быть, и не Воланд. Может быть, Фаланд»²¹⁶.

-Վը... Վայրէ, Վըլինդ: Իսկ գըլ-
ցը ոչ Վըլինդ: Գըլցը ոչ Վըլինդ:
Գըլցը, Զալինդ»²¹⁷:

Дальше в тексте идет абзац, что обеспечивает итоговую паузу после вывода. Заметим, что знаки препинания сигнализируют: несобственно-прямая речь персонажей («А может быть и не Воланд?») переходит в утвердительный и разъясняющий ответ автора: «Может быть, и не Воланд. Может быть, Фаланд». Но что значит «Фаланд»? Здесь необходима сноска, извещающая читателя как оригинала, так и перевода, что Фаланд по-немецки – одно из наименований черта (типа «нечистый», «лукавый» и т.п.). Булгаков мог думать, что фраза понятна и так. Сегодня это однозначно не так, и читателю нужна помощь.

²¹⁴ К. Л. Мкртчян. Указ. соч., стр. 39-40.

²¹⁵ Б. В. Соколов. Булгаковская энциклопедия. М., Локид-Миф, 2000, стр. 283, 287.

²¹⁶ М. Булгаков. Мастер и Маргарита. Собрание сочинений в 5 томах. т. 5, М., Художественная литература, 1990, стр. 181. Далее текст оригинала цитируется по данному изданию с указанием страницы в тексте.

²¹⁷ Մ. Բուլգակով, Վարպետը և Մարգարիտան, Եր., Սովետական գրող, 1985, էջ. 207: Далее текст армянского перевода цитируется по данному изданию с указанием страницы в тексте.

Или вот пример другого рода, когда дело не в словах, а в ситуации. Рассмотрим эпизод с Алоизием Могарычем. По знаку Азazelло в «нехорошей квартире» появляется

растерянный и близкий к умоисступлению гражданин в одном белье, но почему-то с чемоданом в руках и кепке (280).

շշկլված ու խելացնորդութիւնը մոտ մի քաղաքացի՝ մեկ տակ սալտակեղենով, քայք, չգիտեա ինչու, ճամպրուկը ձեռքին ու կեպին գլխին (323):

Как у русского, так и у армянского читателя невольно возникает вопрос, почему выдернутый из постели среди ночи человек тем не менее захватил с собой чемодан? Современники Булгакова, если бы они прочитали роман в те годы, такого вопроса не задали бы. Действие романа происходит в годы жесточайших репрессий. Людей забирали в любое время суток, чаще по ночам, без права на какие-либо сборы. Поэтому многие имели наготове чемоданчик с самым необходимым «на всякий случай». Могарыч же знает за собой вину – ложный донос, и перепуган еще и поэтому. Не случайно, после вопроса Азazelло о ложном доносе «Новоявившийся гражданин посинел и залился слезами раскаяния» (280).

Думается, читателю нужны какие-то ориентиры в этом отрывке текста, важном для «репрессивного» блока, весьма обширного в романе и существенного для него.

Эта же тема, непонятная без объяснений, затронута и еще в одном отрывке. Как мы помним, в середине октября, через полчаса после ухода Маргариты, за Мастером пришли. Через два месяца, доведенный до психического расстройства Мастер был выпущен и вернулся домой, но выяснилось, что его квартира уже занята и идти ему некуда. Об аресте говорится намеками, и один мы видим в следующем отрывке:

...в половине января, ночью, в том же самом пальто, но с оборванными пуговицами, я жался от холода в моем дворике (145).

...հունվարի կեսերին, գիշերով, այդ նույն վերարկույով, քայք կոճակները կտրած, ցուրից կծկված կանգնած էի իմ քաղնով (166):

Без пояснения может быть непонятна подчеркнутая нами деталь, которая современникам делала ситуацию предельно ясной: в тюрьме у арестантов отрезали все пуговицы на верхней и нижней одежде²¹⁸. Слово **կտրած** в переводе ясно показывает, что сам переводчик хорошо понял значение детали.

Еще несколько примеров: Читатель оригинала, хорошо знакомый с реалией «лихач», хотя бы по русской литературе, с интересом прочитает такую, например, информацию в наиболее полном на сегодня собрании сочинений Булгакова в 5-ти томах: «В Москве было три класса извозчиков: «лихачи», владельцы хороших лошадей и рессорных экипажей; «ваньки» - с пролетками без рессор и разбитыми лошадьми и «резвые»,

²¹⁸ Г. А. Лесскис. Последний роман Булгакова. Михаил Булгаков. Собрание сочинений в 5 томах, т. 5, М., Художественная литература, 1990, стр. 651.

занимавшие промежуточное положение. Какое-то время извозчики успешно конкурировали с такси, появившимися в Москве в 1925 г.»²¹⁹.

Поскольку данная реальия нигде в романе активной роли не играет, А. Ованнисян поступил совершенно правильно, не фиксируя на ней особого внимания и заменив ее, в полном соответствии с рекомендациями теории, родовым понятием по отношению к лихачу, т.е. просто извозчиком (**կառավար**).

Другой пример:

Затем он почему-то очутился в театральном зале, где под золоченым потолком сияли хрустальные люстры, а на стенах кенкеты (157).

Հետո, չգիտեա ինչու, հայտնվեց թատրոնի դահլիճում, ուր ոսկեգոծ առաստաղի տակ բյուրեղապակյա ջահեր էին շողշոյում, իսկ պատերին աշտանակներ (180):

«Кенкеты – лампы с горелкой ниже резервуара, наполненного маслом (по фамилии французского фабриканта)»²²⁰.

В армянском тексте сохранено ощущение и торжественности, и некоторой старины (**աշտանակ – подсвечник, канделябр**), хотя характер светильников чисто предметно изменился.

Наконец, в ряде случаев А. Ованнисян использует объяснительный перевод непосредственно в тексте.

Приведем один пример:

- Ах, нет, нет, мессир, - отозвалась Маргарита, сидящая в седле как амазонка, подбоченившись и свесив до земли острый шлейф (365).

-Ահ, ոչ, ոչ մեսիր, - արձազանքեց Մարգարիտան, որն ամազոնուհու պէս էր նստած թափին՝ կողքանց, մինչև գետին կախած քրանցքի արածայր տուտը (422):

Здесь имеется в виду женская посадка «как амазонка», когда всадница сидит в специальном женском седле боком, спустив обе ноги по одну сторону лошади. Для езды верхом женщине полагалось специальное седло и платье особого покроя. Все это очень естественно объяснено в переводе, не отвлекая от повествования, в котором роль этой детали минимальна.

К сожалению, порой переводчик изменяет этому принципу и переносит в перевод слова и предметы, не только, по большому счету, ненужные читателю перевода, но еще и непонятные ему. Как известно, роман издан и без предисловия, хотя его можно было бы тоже перевести с русского, поскольку уже тогда (и тем более, сегодня) на русском языке существует несколько действительно первоклассных предисловий, но и без каких бы то ни было примечаний (точнее, имеется одно-единственное примечание – переведено французское крылатое речение «ноблесс обличж» «**ծագումը պարտավորեցնում է**» (308), причем трудно понять, почему достаточно известное и часто цитируемое по-французски выражение переведено, а другое, менее извест-

²¹⁹ Там же, стр. 645.

²²⁰ Там же, стр. 652.

ное, к тому же, произнесенное перед переполненным залом Варьете – авек плезир – так и осталось непереуслуханным: «ապէք փէզիր» (136).

Приведем два примера таких ненужных для перевода деталей, напрасно, как нам кажется, перенесенных без изменений из оригинала:

1. - *А куда же вы их (деньги – М.З.) там засунули?*

- *В погребе, в коробке из-под Эйнема* (164).

- *Իսկ այնտեղ, քրտէ՞ղ էր թարցրել:*

- *Նկուղում: Էյնեմի տուփի մէջ* (188):

Приведем опять-таки комментарий специалиста: «Эйнем – владелец кондитерской фабрики в Москве (совр. «Красный Октябрь»). В металлических коробках продавалось фирменное монпасье фабрики Эйнем»²²¹.

Сегодня Эйнема не помнит и русский читатель. Нам кажется, в переводе достаточно было написать «в коробке из-под монпасье». Такие коробки известны всем и сегодня, а объяснение вполне достаточно для понимания смысла фразы.

2. *В громадной, до крайности запущенной передней, слабо освещенной малюсенькой угольной лампочкой под высоким, черным от грязи потолком...* (52)

...*կեղտից սևացած անաստիղի պսակիկ անոթալամպով թույլ լուսավորված նախասենյակի...* (54-55)

В современных лампочках нить накаливания делается из вольфрама. До этого употреблялась угольная спираль. Она давала мало света, но и энергии потребляла мало, поэтому в местах общего пользования просуществовала, в целях экономии, еще долго после появления более современной²²². В армянском тексте эпитет «угольная» в применении к лампочке может быть опущен не только совершенно безболезненно, но и к пользе для текста: «պսակիկ անոթով թույլ լուսավորված».

Несколько слов о принятых в оригинале обращениях к высокому начальству. «Прокуратор» переведено А. Ованнисяном как *կուսակալ*, и это хороший вариант. Однако в тексте никак не прокомментированы «игемон» и «мессир». Между тем, они нуждаются в объяснении даже в оригинале и, тем более, в переводе. Иешуа, для которого все люди равны и все добрые, называет и Пилата «добрый человек», что вызывает резкое неприятие прокуратора. И дело, думается, не просто в нарушении правил. Пилат знает, что он никак не добрый человек, что его называют в Ершалаиме «свирепое чудовище», что это совершенно верно и это его устраивает: правителя должны бояться. И Марку Крысобою поручено объяснить, как следует титуловать прокуратора, что и делается с большой жестокостью. Читателю и так понятно, что называть начальство «добрый человек» не положено, но почему именно «игемон» - так и остается загадкой до конца. Между тем, эта сценка очень важна, кроме всего прочего, еще и потому, что и здесь еще раз сталкиваются принцип человечности (Иешуа) и прин-

²²¹ Там же, стр. 652.

²²² Там же, стр. 643.

цип государственности (Пилат): «игемон» по-гречески означает «наместник», т.е. это название должности Пилата. В русских переводах Евангелия слово передано как «правитель»²²³.

Почти сходным образом, т.е. без объяснения, вводится в текст и обращение «мессир» применительно к Воланду, наместнику над всей Землей.

- Ни в каком случае... - начала Маргарита.

- Мессир... -дохнул Коровьев в ухо.

- Ни в каком случае, мессир, -справившись с собой, тихо, но ясно ответила Маргарита (246-247).

-Ոչ մի դեպքում... - սկսեց Մարգարիտան:

-Մեսսիր... - շնչաց Կորովինն աղանջին:

-Ոչ մի դեպքում, մեսսիր, - տիրապետելով իրեն, ցածրաձայն, բայց հստակ պատասխանեց Մարգարիտան (283-284):

Так впервые в романе появляется обращение «мессир», проходящее затем через весь оригинал и через весь перевод. Но почему именно «мессир»? «Мессир – почтительное наименование феодальных сеньоров, позднее употреблялось перед собственными именами священнослужителей, юристов, медиков»²²⁴. Отношения между Воландом и его свитой, а также Маргаритой вполне укладываются уже в первую часть этого толкования, а вторая также не противоречит образу: вспомним отношение Воланда к религии, его функции арбитра справедливости и правосудия, а также и врача, борющегося с болезненными отклонениями в организме человечества. Наконец, это еще одно напоминание о западном происхождении Воланда. Нам кажется, логика этого титулования должна быть разъяснена читателю.

В романе Булгакова нет немотивированных деталей. Поэтому нам кажется излишним разъяснить иногда и такие детали, которые при чтении не вызывают вопроса «почему?» и, тем не менее, их прояснение идет на пользу тексту. Так, в первой же главе Воланд (пока еще просто «иностранец») сообщает Берлиозу и Бездомному:

Тут в государственной библиотеке обнаружены подлинные рукописи чернокнижника Герберта Аврилакского, десятого века. Так вот, требуется, чтобы я их разобрал. Я – единственный в мире специалист (19).

Այստեղ, պետական գրադարանում, հայտնաբերվել են հմայող Հերբերտ Ավրիակացու բնագրերը՝ տասներորդ դար: Եվ ահա պահանջում են, որ վերծանեն: Ես միակ մասնագետն եմ աշխարհում (17):

В принципе имя здесь для понимания текста совсем не обязательно (как в оригинале, так и в переводе). И однако же, оно названо. Из этого следует, что оно несет в себе нужную для романа информацию. Так оно и оказывается на самом деле.

Герберт Аврилакский (938-1003) существовал реально и был выдающимся мыслителем X века. Он учился везде не только у христианских, но и у арабских ученых, в том числе, у алхимиков и магов. За это, уже буду-

²²³ Там же, стр. 638.

²²⁴ Там же, стр. 647.

чи епископом, был предан церковному суду (злободневная для 30-ых годов XX века параллель), но вышел победителем из поединка с судьями. Трусость, не была его пороком, что тоже важно для романа. В 999 году бывший еретик стал Папой Римским, главой римской церкви под именем Сильвестра II. Дружил с молодым императором Оттоном и внес немалый вклад в формирование концепции Священной Римской империи (а тема Рима, и Москвы как Третьего Рима, опять-таки весьма актуальна для произведения Булгакова).

Иногда Булгаков специально вводит в текст какие-то элементы, допускающие двоякое толкование. Так, в эпилоге мы узнаем, что Алоизий Могарыч, вернувшись в Москву, «Через две недели (...) уже жил в прекрасной комнате в Брюсовском переулке» (380), что и переведено соответственно, *Բրյուսովսկի նրբանցքում* (439). Чьим же все-таки именем назван этот переулочек, и почему Могарыч поселился именно там? Первый напрашивающийся ответ: именем В. Брюсова. Известно, что Валерий Брюсов интересовался черной магией, слыл в писательских кругах чернокнижником и чародеем, а его роман «Огненный ангел», где эта проблематика присутствует, отразился в романе Булгакова целым рядом ассоциаций. Однако реально существовавший в центре Москвы переулочек был назван не в честь В. Брюсова, а в честь сподвижника Петра Первого генерал-фельдмаршала Якова Вилимовича Брюса (1670-1735), человека очень разностороннего, в числе прочих своих занятий переводившего на русский иностранные книги, издавшего в Московской гражданской типографии, которой он руководил, первый в России гражданский календарь. Брюс составлял гороскопы, сонники и книги гаданий, ставил химические опыты и поэтому слыл в народе чернокнижником и колдуном. Как видим, оба варианта работают на роман.

Очевидно, имеет смысл выделить среди многих десятков ассоциативно-аллюзивных фактов и ситуаций тот минимум, который совершенно необходимо разъяснить в примечаниях к роману при его переиздании на армянском языке. При этом можно и нужно использовать материалы публикаций на русском языке. Однако, используя эти материалы, не следует забывать о разнице тезаурусов: в России роман «Мастер и Маргарита» входит в обязательную школьную программу, по творчеству Булгакова проводятся олимпиады, чтения, конференции и т.п.

Армянский читатель принадлежит другой культурной традиции, у него во многом другой тезаурус, и подбор объясняемых фактов должен учитывать это обстоятельство, хотя, конечно, многое будет и совпадать — у нас во многом общее прошлое.

Մ. Հ. ԶՈՒՐԱԲՅԱՆ - Բնագիր և թարգմանություն. Երկու մշակույթների փոխգործակցություն: - Հոդվածում զուգահեռաբար վերլուծվում են Մ. Բուլգակովի «Վարպետը և Մարգարիտան» վեպի բնագրային և թարգմանական փոխգործակցությունները. լեզվաոճական որոշակի մոտեցումներով ցույց են տրվում թարգմանության ժամանակ ծագած տարբերությունները:

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀՈՒՄԱՆԻՄՏԱԿԱՆ ԱՌԱՋՆԹԱՅՆ, ՍՈՑԻԱԼԻՉՄԸ ԵՎ ՇՈՒԿԱՆ

Հ. Ա. ՄԱՐԶՊԱՆՅԱՆ

Ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս սոցիալ-փիլիսոփայական և սոցիալ-տնտեսագիտական հետազոտություններում որպես արդիական (գուցե և՛ «մոդայիկ») և բանավեճային հիմնախնդիր պարբերաբար արծարծվում է սոցիալիզմի և շուկայի, սոցիալիստական տնտեսության և շուկայական տնտեսության հակադրության հարցը: Այդպիսի հակադրության համար թերևս գոյություն ունեն որոշակի օբյեկտիվ հիմքեր, սակայն որպես կանոն այն բավականաչափ միակողմանի է ներկայացվում՝ մակերեսորեն բնութագրելով նաև հակադրվող երևույթների համապարփակ էությունը:

Նախ՝ շուկայի այլընտրանքն, ինչպես հայտնի է, առանձնացված անհատական բնատնտեսությունն է: Պատմականորեն և տրամաբանորեն միմյանց հակադրվում են մի կողմից՝ նյութական բարիքների արտադրության և անմիջական յուրացման անհատականորեն առանձնացված եղանակը (անհատական սեփականությունը) և, մյուս կողմից՝ արտադրության և յուրացման հանրայնացված, աշխատանքի օտարմամբ միջնորդավորված եղանակը (մասնավոր սեփականությունը):

Այնուհետև՝ տնտեսական կապի շուկայական ձևը ծագել է կապիտալիզմից էլ, սոցիալիզմից էլ շատնշատ առաջ, իհարկե արտադրության տարբեր եղանակներում արտահայտելով տարբեր սոցիալ-տնտեսական հարաբերություններ և հասարակական և անհատական վերարտադրության գործընթացներում ունենալով տարբեր դերակատարություն: Ուստի «շուկա» կամ «շուկայական տնտեսություն» հասկացությունն իր իմաստային տարողունակությամբ և հիմնական բովանդակությամբ նույնական է «ապրանքային արտադրություն» հասկացությանը, որն առավել ընդհանրական ձևով է ներկայացնում կապի ձևը: Սակայն այստեղ օրինաչափորեն ծագում է մի խրթին հարց: Ինչպես հայտնի է ապրանքային արտադրությունը որպես արտադրաեղանակ գոյություն է ունեցել (և ունի) տարբեր կոնկրետ ձևերով՝ պարզ ապրանքային արտադրություն, կապիտալիստական ապրանքային արտադրություն, սոցիալիստական ապրանքային արտադրություն: Այդ դեպքում ո՞րն է «շուկայական տնտեսություն» հասկացության բովանդակային առանձնահատկությունը, արդյո՞ք այն հատկորոշելի է ինքնին:

Եվս մի կարևոր վերապահում. շուկայի նույնականացումը առքուվաճառքի գործողությանը, մի կողմից չափազանց նսեմացնում է դրա՝ որպես տնտեսական կյանքի կարգավորման մեխանիզմի դերը, մյուս կողմից՝ չափից ավելի

ընդլայնում է «շուկայական տնտեսություն» հասկացության պատմական ու բովանդակային «դաշտը», քանի որ առքի և վաճառքի միջոցով մարդկանց շփումն սկզբնավորվել է դեռևս նախնադարյան համայնական կարգերի քայքայման շրջանում: Իսկ ստրկատերերն ու ֆեոդալները (և ոչ միայն նրանք) արդեն շատ լավ «գգում էին» փողի ուժը և օգտվում ոչ միայն իրենց հասարակական դիրքից, այլև շուկայի ընձեռած հնարավորություններից:

Եվ, վերջապես՝ շուկան տնտեսական համակարգի այն տարրն է (ոչ միակը), որին վերապահված է տնտեսության տարերային կարգավորման գործառույթը և, որպես այդպիսին, պատմականորեն տարբեր (ավելի ստույգ՝ գնալով կրճատվող) նշանակություն է ձեռք բերում տնտեսության կարգավորման հասարակական համակարգում: Այսպես՝ մանրապրանքային արհեստավորական արտադրության, կապիտալիստական ազատ մրցակցության և կապիտալի ժամանակակից շուկաները գործնականում տարբեր տնտեսական երևույթներ են, արտահայտում են սոցիալ-տնտեսական հարաբերությունների հասունության տարբեր աստիճաններ: Ավելին, տնտեսապես զարգացած ժամանակակից երկրները՝ ԱՄՆ-ը, Գերմանիան, Ճապոնիան, Շվեդիան և այլն, միմյանցից տարբերվում են հենց շուկայական մեխանիզմի օգտագործման չափերով ու ձևերով, և, հետևաբար, դրանց տնտեսական համակարգերի ընդհանրական հայտանիշը ոչ միայն և ոչ այնքան շուկան է, որքան այլ էական բնութագրեր:

Այսպիսով, «շուկայական տնտեսություն» հասկացությունը զուտ գիտական առումով կոռեկտ համարել չի կարելի, քանի որ այն մարդկանց սեփական կյանքի արտադրության սոցիալ-տնտեսական մեխանիզմի պատմական տարբերությունները բնութագրում է միակողմանի, ոչ լիարժեք և ոչ ըստ գլխավոր հայտանիշի: Այն չի արտահայտում հասարակական արտադրության հատկորոշված նպատակը և դրա իրացման եղանակների պատմական տարբերությունները: Հնարավոր չի դառնում նույնիսկ հստակորեն տարբերակել և պարբերացնել պատմական առաջընթացը, քանի որ «շուկայական տնտեսություն» հասկացությամբ միատեղվում են անհատների արտադրության՝ ձևով միատեսակ, բայց բովանդակությամբ միանգամայն տարբեր համակարգեր:

Հետևաբար, մեթոդաբանորեն անընդունելի է ինչպես կապիտալիզմի նույնացումը շուկայական տնտեսության հետ, այնպես էլ՝ վերջինիս հակադրումը սոցիալիստական տնտեսությանը: Իրականում զուտ կապիտալիզմին՝ որպես արտադրության եղանակի, հակադիր է զուտ կոմունիզմը (սոցիալիզմը), իսկ ժամանակակից խառը տնտեսական համակարգերն ապացուցում են «արտադրության կազմակերպման և սոցիալ-կարգավորելի տնտեսության ստեղծման «կապիտալիստական» և «սոցիալիստական» երկու անընդունելի համարվող պատմական ծայրահեղությունների հաղթահարման իրական հնարավորությունը, որի պայմաններում թեև պահպանվում է շուկան, սակայն այն «սանձահարվում է» պետության կողմից: Նոր, «խառը» տնտեսական համակարգում արտադրողի տնտեսական ինքնուրույնությունը դառնում է հարաբերական, իսկ կարգավորումը՝ կողմնորոշող»²²⁵:

²²⁵ Ա. Խ. Մաքկուսյան, Պետությունը և շուկան, գիրք առաջին.- Եր., «Տիգրան Մեծ», 2000, էջ 5:

Անընդունելի է նաև շուկայի հակադրումը պլանաչափությանը. վերջինս վերացնում է շուկայական տնտեսության «ավանդական» բնութագրերից մեկը՝ տարերայնությունը, բայց չի բացառում փողի և ապրանքափողային հարաբերությունների գոյությունն ու օգտագործումը տնտեսական կյանքում:

Տեսամեթոդաբանական առումով անառարկելի է, որ շուկայի հակադրությունը վարչահրամայական համակարգն է, որի պայմաններում հասարակական արտադրությունը և դրա արդյունքների բաշխումը կարգավորվում են կենտրոնացված եղանակով: Ընդամին չի կարելի վերացարկվել հետևյալ ելակետային կանխադրություններից. 1) այդպիսի կենսունակ հասարակական համակարգ գոյություն էրբեք գոյություն չի ունեցել (ունենա), 2) այն միանգամայն խորթ է ավարտուն հումանիզմին՝ կոմունիզմին, որի գլխավոր սկզբունքներից է տնտեսական համակարգի առանձին օղակների ինքնակառավարումն ու ինքնակարգավորումը՝ ի շահ անհատների ինքնիրացման լիակատար ազատության:

Ավելի քան անհամոզեցուցիչ է շուկայի ջատագովումը, երբ այն ներկայացվում է որպես ազատության, ժողովրդավարության, սոցիալական արդարության, իրավահավասարության մարմնավորում: Նշվածներից և ոչ մեկը շուկան չի կարող ինքնըստինքյան «ապահովել», նրան բնորոշ գիծ չէ: Շուկան փողի իշխանություն է, սիրում է փողը և միմիայն փողը, ուստի ճանաչում և փայփայում է յուրաքանչյուրին, նույնիսկ՝ մարդասպանին, ով փող ունի և մերժում ամենապարկեշտին, եթե նա փող չունի: Անցյալում շուկան զանգվածաբար ընդունել է ստրկատերերին և ֆեոդալներին, ովքեր գնում և վաճառում էին արտադրության «խոսող գործիքներ»՝ ստրուկներ և ճորս գյուղացիներ, ներկայումս՝ կավատներին, թմրանյութեր վաճառողներին, իրենք իրենց մարմինն ու հոգին վաճառողներին և այլն, այսինքն՝ մարդուն գնահատում է միայն ապրանքային ձևի մեջ՝ նպաստելով մարդկային հարաբերությունների համընդհանուր ապրանքայնացմանը: Արդյո՞ք շուկան «մեղավոր» չէ բազմաթիվ պատերազմների սանձազերծման, մարդու և մարդկության դեմ հրահրվող հանցագործությունների կատարման հարցերում: Արդյո՞ք ժամանակակից քաղաքակրթությունն առանց շուկայի մասնակցության է հայտնվել գլոբալ էկոլոգիական և սոցիալական աղետների նախաշեմին:

Շուկայական տնտեսության ծնունդ հանդիսացող ձևական ժողովրդավարությունն իրականում ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ մարդկանց տարբերակում հարուստների և աղքատների, տերերի ու նրանց վարձու ծառաների: Այնպես որ շուկայի անհիմն գովերգումը՝ որպես մարդկային քաղաքակրթության բարձրագույն նվաճում, ոչ միայն մեթոդաբանորեն մերժելի է, այլև հակասում է սոցիալ-տնտեսական առաջընթացի ողջ էությանը:

Անկասկած, քանի դեռ արտադրողների միջև կապը հանդես է գալիս ապրանքա-փողային ձևով, շուկան մնում է առավել ազատ և արդար յուրացման անհրաժեշտ մեխանիզմներից մեկը: Սակայն դրա պատճառը (ի դեպ՝ նաև վերը նշված բոլոր բացասական երևույթների պատճառը) ոչ թե ինքը՝ շուկան է, այլ արտադրության այն պատմական եղանակը, որ ծնել է իրեն: Ամեն դեպքում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ առքուվաճառքի ազատու-

թյունը, վերջինիս բովանդակության լիարժեք իմաստով, հումանիստական ազատություն չէ, քանի որ դրա հիմքը իրական ազատության, իրական հումանիստական ինքնիրացման ժխտումն է: Դա ազատություն է արտաքին անհրաժեշտության՝ անազատության շրջանակներում:

Վերոնշյալ իրողություններից ելնելով կարելի է գալ հետևյալ մտահանգմանը. շուկան անհրաժեշտ է ուսումնասիրել որպես պատմականորեն անհրաժեշտ երևույթ, որպես հումանիստական զարգացման ձև, որի միջոցով արտահայտվում են մարդկանց՝ պատմականորեն որոշակի հարաբերությունները և որը չի կարող լինել ո՛չ ավելի լավը, և ո՛չ էլ ավելի վատը, քան մարդիկ, որոնց հարաբերություններն այն արտահայտում է: Եվ այնպես, ինչպես մարդկային հարաբերություններում միշտ առկա կլինեն չարն ու բարին, արդարն ու անարդարը, ազնիվն ու անազնիվը և այլն, այդպես էլ շուկայական հարաբերություններում դրանք կգտնվեն իրենց աղեկվատ արտացոլումը: Այստեղ գլխավորն այն է, որ շուկան ինքնուրույն հումանիստական բարիք չէ, հասարակության կառուցվածքի կամ դրա վերակառուցման նպատակ չէ: Նպատակը մարդու արտադրության եղանակի հումանիզացումն է, իսկ շուկան որպես մեխանիզմ պետք է օգտագործվի այն չափով, որչափով աղեկվատ է արտացոլում հասարակական հարաբերությունների հասունության աստիճանը և նպաստում դրանց հումանիզացմանը:

Այսպիսով, թե՛ տնտեսականորեն, թե՛ գործնականում ճիշտ չէ շուկայի նույնացումը հասարակության սոցիալական կառուցվածքի հետ, սոցիալ-տնտեսական հարաբերությունների ողջ համակարգի հետ: Շուկան որպես ապրանքափողային հարաբերությունների համակարգ, որպես մասնավոր սեփականության և դրան համապատասխան ձևերի համակարգ, տնտեսական մեխանիզմի պատմական ձև է, որն աղեկվատորեն արտացոլում է մասնավոր սեփականության զարգացումը: Եվ այդ մասին համոզեցուցիչ վկայում է մարդկային հասարակության զարգացման ողջ պատմությունը:

Որպես տնտեսական մեխանիզմի ձև, շուկան, հետևաբար, այս կամ այն հաջողությամբ կարող է գոյակցել այլ ձևերի հետ, ինչպես որ եղել է բոլոր տնտեսական համակարգերի ձևավորման ու զարգացման ընթացքում: Հետևաբար, շուկայի փոխարինումը նոր հարաբերություններին առավել աղեկվատ այլ մեխանիզմով ոչ միայն չի բացառում, այլև ենթադրում է տարբեր մեխանիզմների համատեղ գոյությունը երկար ժամանակ՝ քանի դեռ լիովին չեն հաստատվել և գործնականում իրենց առավելությունները չեն ապացուցել ավելի կատարյալ տնտեսական հարաբերությունները: Հազիվ թե շուկայի հարատևության գաղափարի որևէ խելամիտ կողմնակից կփորձի ժխտել այն իրողությունը, որ տնտեսական հարաբերությունների զարգացումը որևէ սահման չունի, ինչպես որ սահման չունի հենց իր՝ մարդու զարգացումը:

Շուկայի պատմական դերը, դրա տեղը սոցիալ-տնտեսական առաջընթացի մեջ ըստ արժանվույն է գնահատում դասական մարքսիզմը: Այստեղ մեթոդաբանորեն կուռ մտահայեցողությամբ հիմնավորվում է ապրանքափողային հարաբերությունների պատմականորեն անցողիկ բնույթը և, դրանով հանդերձ, դրանց խորքային էության՝ մասնավոր սեփականության անցողիկ

բնույթը: Եվ սա պարզորոշվել է կայացող ու զարգացող կապիտալիզմի գրեթե բոլոր ձևերում: Խոսքը վերաբերում է թե՛ արտադրության պրոցեսից տնտեսական աշխատանքի դուրս մղմանը, ինչը քայլ առ քայլ վերացնում է մասնավոր սեփականության հիմքերը, և թե՛ մասնավոր սեփականության հանրայնացման մակարդակի բարձրացմանը, ինչը հանգեցնում է շուկայի տարերային-կարգավորիչ դերի կտրուկ նվազմանը՝ հատկապես խառը տնտեսության պայմաններում:

Եթե ընդունենք, որ սոցիալ-տնտեսական առաջընթացի բովանդակությունը տնտեսական աշխատանքի վերացումն է, ապա մարքսիզմի տրամաբանությունը դառնում է անառարկելի. մասնավոր սեփականության վերացումը վերացնում է նաև դրա դրսևորման ձևերը: Հետևաբար, ապրանքափողային հարաբերությունների վերացումը հիրավի հումանիստական շարժընթացի՝ գիտատեխնիկական առաջընթացի ծավալման օրինաչափ հետևանք է, առաջընթաց, որը վերացնում է մասնավոր սեփականությունը որպես օտարված աշխատանքի ձև:

Իրապես կասկածից վեր է, որ շուկայի անհրաժեշտությունը պայմանավորված է աշխատանքի հասարակական բաժանմամբ և յուրահատուկ՝ ապրանքային ձևով աշխատանքի օտարմամբ: Եթե արտադրության պրոցեսում տեղի է ունենում տնտեսական մարդու մասնատում և նրա ամրակցում առանձնացված, նեղ մասնագիտացում պահանջող մասնակի գործառույթի, ապա շուկան օբյեկտիվորեն անհրաժեշտ է որպես մի տնտեսական ոլորտ, որտեղ առքուվաճառքի միջոցով տեղի է ունենում անհատի ինտեգրումը հասարակական մարդու մեջ և նրա հետագա վերինտեգրումն ինքն իրեն՝ առանձնացված, լիարժեք, ինքնաբավ անհատին:

Այս մեխանիզմի առանցքը աշխատանքային կապն է և անհատի կողմից կենսամիջոցների յուրացման բոլոր հարաբերությունների պայմանավորվածությունը բուն աշխատանքով: Սակայն եթե աշխատանքն այն աստիճան դուրս մղվի նոր տեխնոլոգիաների կողմից, որ յուրացման աշխատանքային պայմանավորվածությունը կորցնի իր նշանակությունը, ապա շուկան՝ որպես անհատի հանրայնացման մեխանիզմ, նույնպես կդադարեցնի իր սոցիալ-տնտեսական գործառույթները: Հասարակական արդյունքն արդեն իրենից կներկայացնի բնատուր ուժերի գործողության արգասիք, որն ապրիորի անհատականացված յուրացման կենթարկվի արտադրության պրոցեսում:

Այստեղ ոչ մի պատրանքային անհավատալի, կամ անհավանական բան չկա: Միթե՞ բնական աղբյուրից ջուր խմելու համար անհրաժեշտ է հանրայնացվել և ստեղծել շուկա: Ներկայիս, և առավել ևս՝ ապագայի հետինդուստրիալ տեխնոլոգիաները կարող են վերածվել այդպիսի աղբյուրի:

Ապրանքափողային հարաբերությունների սահմանափակման և վերացման նախադրյալը բնատուր ուժերի տեխնոլոգիական յուրացման ճանապարհով տնտեսական աշխատանքի վերացումն ու հասարակական սեփականության զարգացումն է, այլ ոչ թե մասնավոր սեփականության ձևական (հրավական) հանրայնացումն ու պլանային համակարգի արմատավորումը, ինչպես քարոզվում էր քաղաքատնտեսության խորհրդային դասագրքերում:

Շուկայի վերացման համար պլանաչափությունը բավարար հիմք չէ, քանի որ այն ամենից առաջ տեխնոլոգիական կատեգորիա է: Պլանաչափության անհրաժեշտությունն առաջանում է շատ ավելի վաղ, քան կստեղծվեն նախադրյալներ տնտեսական աշխատանքի վերացման համար:

Շուկայի վերացումը միանգամայն իրավական ակտով որևէ տեղ և որևէ ժամանակ հնարավոր չէ, քանի որ դա արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների էվոյուցիայի պատմականորեն երկարատև գործընթաց է: Դրա համար նախ և առաջ պետք է հաղթահարված լինեն մարդուն ստրկացնող ենթարկվածությունը աշխատանքի բաժանմանը, հակադրությունը մտավոր և ֆիզիկական աշխատանքի միջև աշխատանքի արդյունքների օտարման հարաբերությունները:

Այնպես որ միանգամայն օրինաչափ էր, որ իրական սոցիալիզմի հետ նույնացվող՝ մասնավոր սեփականության ձևական հանրայնացումը և տնտեսության շուկայական կարգավորիչների վարչական սահմանափակումը, դարձան այդ համակարգի ճգնաժամի և փլուզման էական պատճառներից մեկը: Այդպես էլ «չգիտակցվեց» և գործնական քաղաքականության հիմքում չդրվեց մարքսիստական աշխարհընկալման փիլիսոփայության տառին ու ոգուն համահունչ այն մոտեցումը, որի համաձայն սոցիալիզմը՝ որպես տնտեսական զարգացման հումանիզացման գործընթացի պատմական փուլ, ծագում է կապիտալիզմից և որպես տնտեսական համակարգ կյանքի է կոչված նախ և առաջ լուծելու մասնավոր կապիտալիստական յուրացման այն հակասությունները, որոնք վերածվել են արտադրության ինդուստրացման և «մարդկայնացման» խոչընդոտի, իսկ այնուհետև՝ հիրավի սոցիալական նպատակամիտվածությամբ շարունակելու նոր տեխնոլոգիաների, արտադրության կազմակերպման և դրա արդյունքների յուրացման առաջադիմական համակարգերի զարգացումն ու օգտագործումը՝ ընդհուպ տնտեսական աշխատանքի լիակատար ոչնչացումը: Այսպիսի մոտեցմամբ հետևողականորեն առաջնորդվելու պարագայում կիստակեցվեր նաև սոցիալիզմի պատմական առաքելությունը. սոցիալիզմն սկսվում է մասնավոր կապիտալիստական սեփականության՝ հանրային կապիտալիստականի ձևական փոխակերպմամբ և ավարտվում՝ մասնավոր սեփականության ու դրա դրսևորման ձևերի ոչնչացմամբ:

Հետևաբար, յուրացման սոցիալիստական համակարգի զարգացման ամբողջ ընթացքում շուկան պետք է հանդիսանա մարդկանց միջև կապի անհրաժեշտ ձևը և տնտեսական համակարգի գիտակցական հումանիզացման մեխանիզմներից մեկը: Այստեղ տիրապետում է այն նույն սկզբունքը, որով կարգավորվում է ապրանքների փոխանակությունը: Եվ այս տեսակետից ինքը՝ սոցիալիզմն էլ անցումային վիճակ է, որն իր ներսում շարունակում է կրել կապիտալիզմի տարրերը այն պարզ պատճառով, որ հասարակական արտադրությունը դեռևս չի հասունացել մասնավոր սեփականության իրավունքի վերացման համար: Ինչ վերաբերում է ապրանքափողային հարաբերությունների վերացման խնդրին, ապա դրա համար անհրաժեշտ է ստեղծել սեփական՝ կապիտալիզմի համեմատ ավելի հզոր, նյութատեխնիկական և ինտելեկտուալ բազա: Այնպես որ հասարակությունը «եթե նույնիսկ նա գտել

է իր զարգացման բնական օրենքի հետքը, ... չի կարող ո՛չ ցատկել զարգացման բնական փուլերի վրայից, ո՛չ էլ դեկրետներով վերացնել դրանք: Բայց նա կարող է կրճատել և մեղմացնել երկունքի ցավերը»²²⁶: Իհարկէ, երբնիցե Կ. Մարքսը մտքի ծայրով անգամ չէր կարող անցկացնել, որ իր մահվան հետ միաժամանակ լույս աշխարհ է գալու մի մեծատաղանդ ազգակից,²²⁷ ով, հետագայում դառնալով քաղաքատնտեսության դասական դպրոցի վերջին մոհիկաններից մեկը, վերոնշյալ հանրահայտ դրույթը կոնկրետացնելու է սոցիալիստական շինարարության տխրահռչակ փորձի խորաթափանց իմաստավորմամբ. «սոցիալիզացիայի կենսագործումը բավականաչափ չնախապատրաստված պայմաններում, ինչը պահանջում է իրականացնել հեղափոխություն, - հասկանալով ոչ միայն իրավական ժառանգորդության խզումը, այլև՝ դրան հաջորդող տեռորի իշխանությունը, - ո՛չ կարճաժամկետ, ո՛չ էլ երկարաժամկետ պլանով չի կարող ծառայել որևէ մեկի շահերին՝ բացառությամբ դրա կազմակերպիչների»²²⁸:

Արդյո՞ք «սոցիալիստական» հեղափոխության՝ «երկունքի ցավերի մեղմացման» բարի մտադրություններով տոգորված «կազմակերպիչների» շահերը չէին պատճառը, որ սոցիալիզմի «հետքը գտնելու» առաջին իսկ օրերից տնտեսապես ու տեխնոլոգիապես ամեննին չհիմնավորված կատաղի պայքար է ծավալվում ընդդէմ շուկայի, իրապես պահպանելով դրա հիմքը՝ մասնավոր սեփականությունը: Անտարակոյս, այս հանգամանքը զգալի արգելք է դառնում նոր ձևավորվող տնտեսական համակարգի հետևողական հումանիզացման համար:

Միանգամայն բնական կարելի է համարել այն, որ Ռուսաստանում իրավական լծակներով շուկայի վերացման բոլոր անհետատես փորձերը դատապարտվեցին ձախողման. անցումը ՆԷՊ-ին ոչ այլ ինչ էր, քան այդ ձախողման ուղղակի կամ անուղղակի ընդունում: Այդ կապակցությամբ Վ. Ի. Լենինը խոստովանում է, որ «նախկին տնտեսական քաղաքականությունը, եթե չի կարելի ասել՝ հաշվարկում էր, ... ապա մեծ չափով ենթադրում էր, - կարելի է ասել **անհաշվենկատորեն** ենթադրում էր, - որ հին ռուսական տնտեսությունից անցում կկատարվի պետական արտադրությանը և բաշխմանը՝ կոմունիստական սկզբունքներով»²²⁹:

Չնայած նոր տնտեսական քաղաքականության անհրաժեշտության հիմնավորմանը, Վ. Ի. Լենինն այդպես էլ չդարձավ «շուկայական սոցիալիզմի» տեսաբան, չընկալեց ու չգնահատեց շուկայի իրական դերն ու նշանակությունը հումանիստական նպատակամիտվածությամբ սոցիալիստական տնտեսակարգի կայացման գործում: Ըստ ամենայնի, նա ՆԷՊ-ը դիտարկում էր

²²⁶ **Կ. Մարքս**, Կապիտալ, հ. 1, Եր., Հայպետհրատ, 1954, էջ 8:

²²⁷ Նկատի է առնված Ժ. Ա. Շումպետերը, ով իրեն յուրահատուկ գիտական անաչառությամբ Կ. Մարքսին արժևորել է ոչ միայն որպես տնտեսագետ, սոցիոլոգ և ուսուցիչ, այլև, ամենից առաջ՝ որպես մարգարե (Տե՛ս՝ Ի. Ա. Шумпетер, Теория экономического развития. Капитализм, социализм и демократия. - М.: Эксмо, 2008, էջ 377-438):

²²⁸ Նույն տեղում, էջ 622:

²²⁹ **В. И. Ленин**, Полн. собр. соч., т. 44, стр. 156.

միայն որպես հանգամանքներով պարտադրված ժամանակավոր միջոցառում: Ասել է թե՛ նա այդպես էլ չհաղթահարեց իր իսկ քննադատած հեղափոխական ռոմանտիզմը, ենթադրելով, որ «եթե մենք ի գորու լինենք հենվելու ռազմական և քաղաքական խանդավառության վրա, ինչն անվիճելի ու հսկայական պատմական ուժ է եղել և մեծ դեր է խաղացել, ...եթե այդ խանդավառությունը, մշակույթի որոշակի աստիճանի և մեր ձեռնարկությունների որոշակի չավերվածության պայմաններում, օգնել անցնելու սոցիալիստական շինարարության, ապա մենք չէինք զբաղվի այնպիսի տհաճ բաներով, ինչպիսին են առևտրային հաշվարկն ու առուծախի արվեստը: Այդ ժամանակ դրա կարիքը չէր լինի»²³⁰:

Ապրանքափողային հարաբերությունների անհրաժեշտության հարցում ցուցաբերած գաղափարաբանական ու գաղափարախոսական զգալի վայրիվերումներով հանդերձ, Վ. Ի. Լենինը, վերջին հաշվով, մնում է այն համոզմանը, որ սոցիալիզմը և շուկան գործնականում անհամատեղելի են: Նա պնդում էր, որ սոցիալիզմին համապատասխանում է արդյունքների փոխանակությունը, պետական կապիտալիզմին՝ ապրանքափոխանակությունը, մասնավոր կապիտալիստական կացութաձևին՝ պետության կողմից կարգավորվող ապրանքափողային փոխանակությունը, իսկ մանրապրանքային տնտեսությանը՝ ազատ առևտուրը, վերջինիս անհրաժեշտությունը պայմանավորելով Ռուսաստանում կապիտալիզմից սոցիալիզմին անցման ձևերով²³¹:

Պատահական չէ, որ Վ. Ի. Լենինի մահից հետո սոցիալիզմի և ապրանքային հարաբերությունների հարաբերակցության հարցում նրա արմատական դիրքորոշումը վերաձևակերպվեց առավելապես քաղաքական բնույթի բանաձևով՝ կա մ սոցիալիզմ, կա մ ապրանքափողային հարաբերություններ: Ով ապրանքափողային հարաբերությունների կողմնակից էր, նա հակակոմունիստ էր: Դժբախտաբար, այս քաղաքական դրոշմն իրեն զգացնել տվեց ապրանքային արտադրության վերաբերյալ հետագա բոլոր գիտական քննարկումներում:

Հատկանշական է, որ Ի. Վ. Ստալինն «ավարտեց» այդ հարցի շուրջ ծավալված գրեթե երեսնամյա բանավեճը, հայտարարելով, թե սոցիալիզմի ժամանակ ապրանքափողային հարաբերությունների պահպանման պատճառը հանրային սեփականության երկու՝ պետական-համաժողովրդավարական և կոոպերատիվ-կոլտնտեսային ձևերի գոյությունն է: Այդտեղից էլ՝ խտրական քաղաքականությունը կոոպերատիվ սեփականության՝ որպես սոցիալիզմին «խորթ» երևույթի, արհեստական սահմանափակման և դուրս մղման ուղղությամբ: Թե՛ տեսական, թե՛ գործնական առումներով սա դասական մարքսիզմի ամենագավեշտական աղավաղումներից մեկն էր:

Բնական է, որ ապրանքափողային հարաբերությունների պատճառների և անհրաժեշտության թյուր ընկալումն ու անհիմն թերագնահատումը պետք է հանգեցնեին արտադրական հարաբերությունների անժամանակ տեխնո-

²³⁰ Նույն տեղում, էջ 216:

²³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 207, 229:

կրատացման, անձնական շահի ստորադասման՝ դրան հակադրելով որպես վարչափրամայական գերակայություն ընկալվող հասարակական շահը:

Ո՛չ կոլտնտեսությունները, ո՛չ խորհրդային տնտեսությունները, ո՛չ էլ ազգայնացված արդյունաբերական ձեռնարկություններն առանց ապրանքափողային հարաբերությունների չէին կարող տնտեսվարել այն ակնհայտ պատճառով, որ ըստ էության չէր վերացվել մասնավոր սեփականությունը, այլ բռնի հանրայնացման ճանապարհով փոխվել էր լոկ դրա կազմակերպարավական ձևը: Այդ պատճառով էլ դրանք չիրացվեցին որպես ավելի բարձր կարգի արտադրողական ուժ, որի ձևավորման պայմաններում միայն կարող է հնարավոր դառնալ մասնավոր սեփականության իրական ոչնչացումը:

Մանրապրանքային արտադրության կոոպերացումը և արդյունաբերության ազգայնացումն ինքնին դեռևս սոցիալիստական բնույթի գործողություններ չեն: Դրանք, հնարավոր դարձնելով շուկայական տարերքի սանձահարումը և վերացնելով գիտատեխնիկական առաջընթացի սոցիալական արգելքները, կարող են սուկ նախադրյալներ ստեղծել բուն սոցիալիստական գործողության համար, այն է՝ հետևողականորեն զարգացնել հանրային սեփականությունը՝ որպես տնտեսակարգի հումանիզացման անհրաժեշտ նախադրյալ: Ընդհանրապես, այդ խնդիրը մասամբ լուծվում է դեռևս կապիտալիստական ուղիով զարգացման պայմաններում, էվոլյուցիոն ճանապարհով, ոչ այնպիսի բռնատիրական մեթոդներով, որոնք կիրառվում էին խորհրդային իշխանության կողմից կապիտալիզմից սոցիալիզմին անցման շրջանում:

Սոցիալիզմը հիմնվում է հասարական հարաբերությունների զարգացման այնպիսի բարձր աստիճանի վրա, երբ շուկան որպես տնտեսական մեխանիզմ դադարում է լինել էական արտադրողական ուժ: Մակայն որպես համալրիչ արտադրողական ուժ այն կարող է օգտագործվել տնտեսակարգի հումանիզացման նպատակով և պետք է օգտագործվի այն չափով և այնպիսի ձևերով, որոնք առավել ադեկվատ կարտացոլեն մասնավոր և հանրային սեփականության զարգացման մակարդակը: Եվ ընդհանրապես, հասարակական հարաբերությունների հումանիզացման գործընթացում այս կամ այն տնտեսական կամ քաղաքական ձևի օգտագործման նպատակահարմարության չափանիշ պետք է ընդունել հասարակական արտադրության սոցիալ-հումանիստական կողմնորոշման ուժեղացումը, իրական ժողովրդավարության և յուրաքանչյուր անհատի ինքնագործունեության ընդլայնումը:

Մինչդեռ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հասունության մասին մեծ մասամբ դատում էին ձևական, հաճախ արհեստականորեն ներմուծված հայտանիշների հիման վրա, որոնք առանց լուրջ հիմքերի երկրորդ պլան էին մղում շուկայական հարաբերությունները: Պատահական չէր, որ ապրանքափողային հարաբերությունների վարչական սահմանափակումն ամենից ավելի արգելակում էր սպառման առարկաների արտադրության զարգացումը և հատկապես՝ գյուղատնտեսական արտադրության զարգացումը, որտեղ համեմատաբար ավելի շատ էր կիրառվում կենդանի աշխատանք և, հետևաբար, ավելի մեծ տարածում ուներ մասնավոր սեփականությունը: Նման պայմաններում, երբ հնի փոխարեն պարզապես ձևավորվել էր մասնավոր սեփականության նոր

կառուցվածք, չէր էլ կարելի լուրջ առաջընթաց ակնկալել սեփականության այդ ձևի իրական ոչնչացման գործընթացում: Հետևաբար, շուկայի դեմ պայքարը զիտակցված թե չզիտակցված շարժում էր նաև ընդդեմ սոցիալիզմի, քանի որ իրապես խոչընդոտում էր նրա շինարարությանը, թույլ չտալով լիովին օգտագործել տնտեսական համակարգի ողջ ներուժը, դրա կարգավորման առաջադիմական ձևերի առավելությունները:

Իրենց կենսունակությունն ապացուցած և սոցիալական զարգացում ապահովող տնտեսաձևերի փլուզման փոխարեն պարզապես անհրաժեշտ էր «հանգիստ թողնել» դրանց, ներմուծել իրական առևտրային հաշվարկ, սահմանափակել վարչարարությունը, գործնականում ժողովրդավարացնել հասարակական կյանքը: Մինչդեռ ոչնչացվում էին նաև մասնավոր սեփականության կազմակերպման այնպիսի ձևերը, որոնք գերաճել էին այն մակարդակը, երբ դեռ շուկան կարող էր ամրապնդել այդ սեփականության դիրքերը: Դա հանգեցրեց տնտեսության անարդյունավետության աճի և բնակչության զգալի զանգվածների ունեզրկման, ինչը հակասում է տնտեսական առաջընթացի հումանիստական շահերին ու նպատակներին: Մեկ անգամ ևս վերահաստատվեց այն դրույթը, որ ձևի և բովանդակության անհամապատասխանությունը կա մ պայթեցնում է ձևը, կա մ կործանում բովանդակությունը:

Վերը ներկայացված մտահայեցողության շրջանակներում շուկայի և տնտեսական զարգացման հումանիզացման փոխառնչությունները կարելի է ներկայացնել հետևյալ ամփոփ դրույթներով.

1. Սոցիալ-տնտեսական զարգացման պատմական փորձը վկայում է, որ ապրանքափողային հարաբերություններն ինքնին տնտեսության հումանիստական վերափոխումների այլընտրանքը չեն: Շուկայական համակարգը հնարավորություններ ընձեռում է հասնելու անհատների բարեկեցության և ազատության բավականաչափ բարձր մակարդակի: Ավելին, եթե հասարակությունը դրոշ է պարզում «յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» նշանաբանով, դրանով իսկ պահպանում է մասնավոր-աշխատանքային սեփականության հիմքերը, հետևաբար և՛ կապի ապրանքային ձևը, ինչը հասարակական արտադրության կազմակերպման, կարգավորման և արդյունքների յուրացման մեխանիզմներից մեկն է:
2. Խելամիտ չէ տնտեսական ձևերի գաղափարայնացումը. Դրանք, վերջին հաշվով, հասարակայնորեն անհրաժեշտ և իրականում գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների դրսևորումներն են՝ պայմանավորված անհատի արտադրության պատմականորեն որոշակի եղանակով: Տնտեսական ձևերի քաղաքական խտրականությունը վերջին հաշվով հակադարձվում և դրսևորվում է անհատների իրավունքներում և ազատություններում խտրականության ձևով: Ապրանքափողային հարաբերությունները մնում են այդպիսին ստրկատիրական, կապիտալիստական, թե սոցիալիստական համակարգում և, որպես այդպիսին, նույնն են թե՛ Ֆրանսիայում, թե՛ Հարավ-Աֆրիկայի Հանրապետությունում: Փոխվում է միայն այդ տնտեսական ձևի

հասարակական նշանակությունը, դրա օգտագործման նպատակը, եղանակներն ու մասշտաբները:

3. Շուկան, որպես տնտեսական մեխանիզմի ձև, զարգացել է դարեր շարունակ, անընդհատ հարստանալով բազմազան գործառույթներով: Նրա դուրս մղումը ևս տեղի է ունենում աստիճանաբար, փոխարինվելով ինքնաշխատ գործառույթներով, գիտակցական կարգավորման մեխանիզմներով: Այս դիտակետից պլանաչափությունը՝ որպես տնտեսական հարաբերությունների գիտակցական կարգավորման մեխանիզմ, ոչ թե ընդհանրապես շուկայի, այլ տնտեսության տարերային զարգացման այլընտրանքն է և ժխտում է տնտեսության կարգավորման շուկայական մեխանիզմի միայն տարերային բաղկացուցիչը: Շուկայի վերացման նախադրյալը ոչ թե սոցիալական հեղափոխությունն է, այլ՝ գիտատեխնիկական առաջընթացը:

А. А. МАРЗПАНЯН – *Гуманистический прогресс, социализм и рынок* - В статье показывается, что товарно-денежные отношения сами по себе не являются альтернативой гуманистическому развитию, позволяя достичь достаточно высоких степеней благосостояния и свободы при разумном использовании рыночных отношений. Плановость как механизм сознательного регулирования экономических отношений также выступает альтернативой не рынку, а лишь стихийному развитию экономики. Основой упразднения рынка является не социальная революция, а научно-технический прогресс. Политическая дискриминация экономических форм в конечном счете оборачивается дискриминацией прав и свобод индивидов.

**ՏԱՐԱԾԱՇՐՁԱՆԱՅԻՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ
ԱԿՈՒՆՔՆԵՐԸ**

Ա. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՀ տնտեսությունը այսօր, դեռևս գտնվում է ճգնաժամային իրավիճակում, որն աստիճանաբար համընդհանուր բնույթ է ստանում: Ընկնում է Հայաստանի վարկը միջազգային ասպարեզում, երկիրը աստիճանաբար դառնում է ինվեստիցիոն ձեռնարկատիրական գործունեության համար ոչ նպաստավոր տարածաշրջան:

Մինչդեռ, ՀՀ-ն գտնվում է դեռևս չհավասարակշռված և պայթյունավտանգ տարածաշրջանում, որտեղ չնչին անակնկալներն անգամ կարող են տարածաշրջանային լուրջ տեղաշարժերի առիթ հանդիսանալ: Այդպիսի անակնկալները կարող են ճակատագրական լինել, թե Հայաստանի, թե Արցախի և թե երկրին հարակից հայաբնակ տարածաշրջանների համար: Դրանք կարող են ծնվել, թե ներսից և թե դրսից: Բացի այդ համաշխարհային տնտեսական ճգնաժամի պատճառով դժվարացել է նաև Արցախի տնտեսության վերականգնման և զարգացման խնդիրները, ՀՀ-ին հարակից հայաբնակ տարածաշրջանների օգնության հարցերը:

Նշանակում է ՀՀ տնտեսության արագ վերականգնման և զարգացման հարցը ոչ միայն տնտեսական, այլ նաև քաղաքական հնչեղություն է ստանում:

Օտարերկրյա մասնագետ-խորհրդատուների և միջազգային կազմակերպությունների միջամտություններն արդեն տվել են իրենց «դրական» արդյունքները: Ժամանակն է հենվել ազգային կադրերի փորձի և իմացության վրա, ձերբազատվելով ինդուստրիալ զարգացած երկրների տնտեսական տարաբնույթ մոդելների կրկնօրինակման արատավոր պրակտիկայից: Վերջապես պետք է գործի դրվի ազգային ներուժը, որը պետք է կոնսոլիդացվի և նպատակաուղղվի: Հարկ է արդյունավետ ձևով կիրառել պետական գաղափարախոսական զինանոցը, հասարակության մեջ արմատավորելով՝ ազգայինը, բարոյականը, աշխատանքը, կարգապահությունը, գործարար ազնվությունը և այլ բարոյական նորմեր, որոնք հանդիսանում են քաղաքացիական հասարակության ձևավորման հիմքը, որոնք բխում են քրիստոնեության ակունքներից և ներհատուկ են հայ հասարակությանը, որոնք, ի դեպ, միաժամանակ նաև հանդիսանում են նաև շուկայական տնտեսական համակարգի ձևավորման և զարգացման հիմքը:

Նկատի ունենալով վերոհիշյալը, հաշվի առնելով նաև ՀՀ տնտեսության մեջ ստեղծված իրավիճակը և այդ ուղղությամբ զարգացող անցանկալի միտումները, փորձենք ներկայացնել՝ ՀՀ տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականության գաղափարախոսության ակունքները, որը կարող է օգտակար լինել ՀՀ տնտեսության զարգացման (ընդհանրապես), մաս-

նավորապես ՀՀ տարածաշրջանների զարգացման սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման, հետագայում նաև շուկայական տնտեսության զարգացման ազգային մոդելի ձևավորման համար:

Այն կարող է կիրառվել նաև ԼՂՀ-ի համար, քանի որ այդտեղ ևս կենսունակ են միևնույն գաղափարախոսական հենքն ու ակունքները, նաև այն նախադրյալները, որոնք անհրաժեշտ են նոր շուկայական տնտեսական համակարգ ստեղծելու համար:

Շուկայական տնտեսության կառուցումը խիստ բարդ գործընթաց է: Այդ մասին է վկայում, թե՛ համաշխարհային, թե՛ անցումային տնտեսություն ունեցող երկրների և թե՛ ՀՀ տնտեսավարման առկա փորձը: Բարդությունը, սակայն միայն գործնական հարաբերություններում չէ: Խնդիրը առկա է նաև տեսական բնույթի հիմնախնդիրներում, որոնք ընկած են գործնական հարաբերությունների հիմքում: Տեսական բնույթի մեկնաբանությունները պետք է ոչ միայն բավարարեն նոր սոցիալ-քաղաքական համակարգի էության ու սկզբունքների պահանջները, այլ միաժամանակ պետք է դառնան տնտեսության վերարտադրության համապատասխան մեխանիզմների ստեղծման հիմք:

Այն տեսական բնույթի մոտեցումները, որոնք ներկայումս մատուցվում են հայ հանրությանը դասական տնտեսագիտության քողի տակ, նոր շուկայական տնտեսության կառուցման համար տեսական բնույթի համապատասխան հիմք հանդիսանալ չեն կարող, քանի որ դրանք վերացական են, բնորոշ են դասական կապիտալիզմին և չեն կարող հիմք հանդիսանալ առանձին երկրի տնտեսական համակարգի ձևավորման համար: Դրանք կարող են պիտանի լինել տնտեսագիտության տեսական մոքի զարգացման առումով, ոչ ավելին:

ՀՀ տնտեսավարման մոտ քսանամյա փորձը ապացուցեց դա: Ապացուցեց նաև, որ առանց համապատասխան մեխանիզմների շուկայական տնտեսական համակարգը ոչ միայն վերարտադրվել, այլ մինչև անգամ ձևավորվել չի կարող: Իսկ մեխանիզմը առաջին հերթին համապատասխան տեսության արդյունք է: Այստեղ քննարկվող հարաբերությունների առանցքը շուկան է, նրա տարածաշրջանային բաղադրիչը, նրա մեխանիզմը, նրա բազայի վրա կառուցվող սոցիալ-տնտեսական համակարգը: Արտաքինից այն ունի շատ պարզ ուրվագիծ, սակայն միաժամանակ շատ բարդ է, քանի որ, նախ ինքնուրույն է գործում, երկրորդ՝ առնչվում է երկրի տնտեսության ու քաղաքացիների իրավունքի և սոցիալ-տնտեսական մեխանիզմների հետ, որոնք, ի վերջո, առնչվում են հասարակության բոլոր շերտերի ու խավերի կենսական շահերի հետ, երրորդ՝ պահանջում է նոր մոտեցում, նոր վերաբերմունք և կառավարման նոր և ճկուն համակարգ, որտեղ գործում են նոր մեխանիզմներ և նոր շահերի համակարգ:

Այդ մեխանիզմները միաժամանակ շատ պարզ են և հստակ: Այսպես, օրինակ՝ առկա են բնական շուկայական օրենքներ, որոնք որոշակի մեխանիզմի, կոնկրետ դեպքում շուկայական մեխանիզմի ձևավորման հիմք են հանդիսանում: Դրանք կարելի է ճանաչել և միաժամանակ արտացոլել իրավական օրենքներում (որոնք կարգավորում են տնտեսությունը, նրա առանձին օղակները և սոցիալական համակարգը), համապատասխան սոցիալ-տնտեսական մեխանիզմներ ձևավորելու նպատակով: Այդ օրինաչափու-

թյունների հիման վրա միաժամանակ կարելի է կառուցել նաև երկրում վերարտադրվող սոցիալ-տնտեսական համակարգ: Կարելի է, իհարկե, սակայն դրա համար անհրաժեշտ են, թե՛ երկրում և թե՛ նրա տարածաշրջաններում ունենալ համապատասխան նյութական, աշխատանքային, քաղաքական, կազմակերպչական նախադրյալներ, այդ թվում նաև՝ շուկայական տնտեսության վերաբերյալ ընդհանուր իմացություն, համընդհանուր գիտակցում, պահանջ, նրա մեխանիզմների ճանաչման ու ներդրման վերաբերյալ: Բարդ է իհարկե, երբ պետք է կառավարես միջնորդավորված ձևով, կարգավորես այն, որի հիմքերը և մեխանիզմը գործում է քո կամքից անկախ, քո տիրապետության տիրույթից դուրս համակարգերում, այնտեղ որտեղ շոշափվում է հանրության բոլոր անդամների, նաև միջազգային սուբյեկտների շահերը: Բարդությունը այստեղ նաև կայանում է նրանում, որ կառավարողը այստեղ հարկադրված առաջնորդվում է արդեն հանրային շահերով, որը նոր որակի կառավարողի և կազմակերպողի պահանջ է ներկայացնում: Մակրո համակարգում այդ բարդությունն ավելի է ընդգծվում, քանի որ ամիջականորեն առնչվում է կենտրոնական իշխանությունների կառավարման համակարգի լիազորությունների սահմանափակման հետ:

Սեփական սոցիալ-տնտեսական համակարգի կազմակերպման հիմնախնդիրը յուրաքանչյուր ազգ լուծում է յուրովի, իր ազգային և տնտեսական պոտենցիալի կարողություններին համապատասխան: Սակայն, խնդիրը միայն կարողությունները չեն, անչափ կարևոր է դրանց նպատակային և արդյունավետ կիրառումը: Այն երկրները և ազգերը, որոնք իրենց ազգային կարողությունները կարողանում են կիրառել առավելագույն նպատակադրվածությամբ և արդյունավետությամբ, որոնք կարողանում են իրենց շուկայական տնտեսությունը կառուցել առավել արդյունավետ ձևով, առավելագույնս օգտագործելով իրենց ազգային ներուժը, նրանք ստեղծում են հստակ կազմակերպված և արդյունավետ գործող շուկայական տնտեսություն: Ավելին, կազմակերպչական մեծ ռեսուրսներով օժտված ազգերը այդ հիմքի վրա ստեղծում են շուկայական տնտեսության սեփական-ազգային մոդելներ, որոնք արդյունավետ կարող են կիրառվել միայն սեփական հողի վրա և պայմաններում:

ՀՀ-ի և նրա նման երկրների համար այդ խնդրի լուծումը համեմատաբար դյուրին է, քանի որ.

- նախ խորհրդային շրջանի ժառանգությունը այստեղ թույլ է արտահայտվում,
- երկրորդ, հայ հասարակությունը համամատաբար հասունացած է՝ գնահատելու համար նոր համակարգը և նրա կառուցման համար իր անհրաժեշտ կարողությունները,
- երրորդ, ազգային ներուժը կոնսոլիդացված է, սակայն դեռևս քանակական առումով:

Դրա հետ մեկտեղ առկա են որոշ բացասական տարրեր, որոնք հնարավորություն չեն տալիս այդ դրական կողմերը լիարժեք դրսևորվելու: Դա առաջին հերթին նպատակի բացակայությունն է, և երկրորդ՝ ազգային կոնսոլիդացված ներուժի նպատակադրված կիրառման կարողությունը:

Այդպիսի քաղաքականություն վարելու համար երկիրը պետք է ունենա համապատասխան քաղաքական կամք, տնտեսավարման և կառավարման նպաստավոր համակարգ, որն, իր հերթին, չի կարող գոյություն ունենալ, եթե երկրում չստեղծվեն հիշյալ արժեքային համակարգերը: Բարդությունը, սակայն միայն դրանում չէ, ինչից բխում է, որ կյանքը շարունակվում է նաև չհամակարգված հարաբերությունների պայմաններում և նրա թելադրանքով: Մա իր հերթին ձևավորում է նոր բնույթի սոցիալ-քաղաքական իրողություն և սոցիալ-տնտեսական պայմաններ, որոնք իրենց հերթին ստեղծում են իրենց կանոնները և դրանով պայմանավորում են մասսաների և անհատների սոցիալական վարքագիծը: Դրա հիման վրա կառուցվում է նոր, հակասական, դեֆորմացված սոցիալ-քաղաքական և տնտեսական իրականություն, որին ի դեպ ճանաչում է նաև միջազգային հանրությունը իր շահերը միաժամանակ տեղադրելով այդ տիրույթում:

Սույն հետազոտության մեթոդաբանությունը արտացոլում է հետևյալ հիմնարար գաղափարները, որոնք և հիմք են հանդիսանում և միաժամանակ սկզբունք երկրում, մասնավորապես տարածաշրջաններում շուկայական լիարժեք տնտեսություն կառուցելու համար: Դրանք են.

- երկրի տնտեսությունը և շուկան ամբողջական են ու միասնական և շաղկապված են մեկ ընդհանուր մեխանիզմով,
- տնտեսությունը և շուկան համակարգված համակարգեր են, փոխպայմանավորում են մեկը մյուսի,
- շուկայի մեխանիզմը առաջնային է տնտեսության մեխանիզմների նկատմամբ, քանի որ բնական ծագում ունի և կառավարվում է օբյեկտիվ օրենքներով,
- երկրի, ինչպես նաև տարածաշրջանների տնտեսությունները կազմված են պետական և մասնավոր հատվածներից, որոնք մեկ ամբողջություն են կազմում, պայմանավորում են միմյանց և ենթադրում են մեկը մյուսին, կազմում են տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման հիմքը, ունեն վերարտադրության առանձնահատուկ մեխանիզմ, որը սակայն հենվում է շուկայի բնականոն մեխանիզմի վրա,
- պետական տնտեսական քաղաքականությունը կազմավորվում է նրա պետական և մասնավոր հատվածների փոխհամաձայնության հիման վրա, որը իրականացվում է հասարակական ինստիտուտների անմիջական մասնակցությամբ և միջնորդությամբ,
- երկրի տնտեսությունը բաղկացած է տարածաշրջանների տնտեսություններից, որոնք սոցիալ-տնտեսական առանձնահատուկ միավորներ են, որոնց քաղաքականությունը կազմում է երկրի ընդհանուր սոցիալ-տնտեսական քաղաքականության մասը և օրգանական բաղադրիչը,
- երկրի տարածաշրջանների սոցիալ-տնտեսական քաղաքականությունները առաջնային են երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության նկատմամբ,

- տարածաշրջանի տնտեսությունը, շուկաները և շուկայական ենթակառուցվածքները մեկ ամբողջություն են, վերարտադրվում են միևնույն մեխանիզմով, հասարակության բոլոր սուբյեկտների շահերի ներդաշնակեցման հիման վրա,
- տարածաշրջաններում պետական, համայնքային, մասնավոր ինստիտուտները առանձնահատուկ սեփականատիրական համակարգեր են, որոնք ձևավորվում են և գործում են սեփականության կոնկրետ ձևի բազայից բխող առանձնահատկությունների հիման վրա:

Տարածաշրջանների տնտեսական քաղաքականության գաղափարախոսությունը սույն հետազոտության մեջ քննարկվում է միաժամանակ, թե՛ տեսական և թե՛ գործնական մեկնաբանություններով:

Տարածաշրջանների տնտեսական քաղաքականությունը և զարգացման ծրագիրը բխում է.

- սեփականության բոլոր ձևերի հավասար պաշտպանվածության,
- ազատ մրցակցության,
- ազատ տնտեսական գործունեության վարման ՀՀ Սահմանադրական իրավունքներից:

Տնտեսական քաղաքականությունը տվյալ երկրի տնտեսական հիմնական գաղափարախոսության կենսագործման միջոց է: Տնտեսական քաղաքականությունը չի կարող ձևավորվել կամայականորեն, անձի կամ խմբի նախասիրությունների թելադրմամբ, ներսի կամ դրսի պատվերներով: Դա օբյեկտիվ իրավիճակից բխող երևույթ է, որը ձևավորվում է երկրի զարգացման կոնկրետ փուլում ստեղծված սոցիալ-տնտեսական հակասությունների հանգուցալուծման պահանջով: Մինչդեռ, Հայաստանի տնտեսական քաղաքականությունը, որպես կանոն, պատմականորեն վերջին հարյուրամյակի ընթացքում պարբերաբար ձևավորվել է ոչ իրատես գործոնների ազդեցությամբ, հիմնականում արտաքին ազդեցությունների թելադրանքով:

Հայաստանը անկախ պետություն է և պետք է ունենա հստակ ձևակերպված իրատես տնտեսական քաղաքականություն, որը պետք հենվի ազգային ռեսուրսների բազայի վրա, պետք է կառուցվի տնտեսության մեջ ձևավորված սոցիալ-տնտեսական հակասությունների հանգուցալուծման խնդիրների շրջանակներում, տարածաշրջանների համաչափ զարգացման բազայի վրա, հակառակ պարագաներում երկրի տնտեսությունը որպես տնտեսական համապարփակ սիստեմ վերարտադրվել, այսինքն գոյություն ունենալ չի կարող: Այն միաժամանակ չի կարող դառնալ նաև համաշխարհային տնտեսության լիարժեք վերարտադրող մաս:

Երկրի տնտեսական քաղաքականության մշակման հիմքը տարածաշրջանային ծրագրերն են, որոնք իրենց հերթին պետք է մշակվեն համապատասխան գաղափարախոսության հիման վրա: Մինչդեռ, ինչպես պարզվում է այդ ուղղությամբ կատարված հետազոտության արդյունքներից ՀՀ-ում տնտեսության զարգացման ծրագրերը, չունեն գաղափարախոսական հենք, որպես կանոն հիմնականում արտացոլում են, մասնակի, ընդհանուր առմամբ՝ տեխնիկա-տեխնոլոգիական լուծումներ: Կարծում ենք, հենց դա է

պատճառը, որ զարգացման ծրագրերը պարբերաբար չեն իրականացվում կամ իրականացվում են մասամբ: Գաղափարախոսական հենքի պակասը ակնհայտորեն երևում է նաև քաղաքական կուսակցությունների նախընտրական ծրագրերի վերլուծությունից:

Պարզ է և ակնհայտ, որ առանց գաղափարական հենքի երկրի մասշտաբով որևիցե լուրջ համալիր միջոցառում, առավել ևս նոր համակարգային լուծումներ իրականացնել հնարավոր չէ: Դա է ապացուցում, թե՛ միջազգային տնտեսավարման և թե՛ ՀՀ տնտեսության վերջին տասնամյակների ընթացքում ձեռք բերած փորձը:

Մեր կարծիքով, ինչպես ամբողջ երկրի, այնպես և նրա տարածաշրջանների տնտեսական քաղաքականությունը պետք է ունենա համապատասխան գաղափարախոսություն, որը պետք է ընդգրկի իր մեջ բոլոր այն կարևորագույն արժեքները, որոնք ամբողջացնում են ազգի ու հասարակության նպատակը, այն ամենը ինչը կարևոր է երկրի մասշտաբով սոցիալ-տնտեսական համատեղ գործունեություն վարելու համար:

Գաղափարախոսությունը պետք է ընդգրկի.

- պետական,
- տնտեսական,
- ազգային,
- պատմական,
- շուկայական,
- ժողովրդագրական,
- աշխատանքային,
- մշակութային,
- սոցիալական,
- կազմակերպչական,
- կրոնական,
- բարոյա-հոգեբանական պարամետրերը, որոնք մեկ ամբողջության մաս են կազմում, քանի որ ուղղված են նույն հանրությանը և միևնույն նպատակին, ունեն միևնույն ծագումնաբանությունը, բխում են միևնույն աղբյուրից և ուղղված են միևնույն սուբյեկտին:

Դրա համար հարկ է դրանք մեկնաբանել, բացահայտելու համար այն կարևորագույն արժեքները, որոնք կարևոր են հայ պետականության կայացման, հայ հանրության ձևավորման, զարգացման և կենսագործունեության ապահովման, միաժամանակ նաև տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականություն ձևավորման համար:

Սույն վերլուծության հիմքով բացահայտված պարամետրերը պետք է դառնան ՀՀ տնտեսական և տարածաշրջանային տնտեսական քաղաքականության գաղափարախոսական հիմքը, պետք է միաժամանակ վերածվեն գործուն համակարգերի ու առանձնահատուկ մեխանիզմների և միաժամանակ դառնան տնտեսության ընդհանուր վերարտադրության օրգանական մաս և բաղադրիչ:

Գաղափարախոսության պետական պարամետրը ընդգրկում է պետական ինստիտուտների կազմավորման և վերարտադրության ապահովման հարաբերությունները:

Գաղափարախոսության պետական պարամետրը ունի հետևյալ ուղղությունները, դրանք են.

- տարածաշրջաններում պետական անվտանգության շահերի արդյունավետ պահպանումը և իրականացումը,
- մարզային կառավարման և տնտեսավարման վերահսկելի կոտ համակարգի ձևավորումը և գործունեության ապահովումը,
- տարածաշրջաններում բնակչության կենսաապահովման խնդրի լուծումը,
- սոցիալական զարգացման ներդաշնակ հարաբերությունների ստեղծումը,
- պետական, համայնքային և հասարակական ու քաղաքական կառավարման մարմինների արդյունավետ համագործակցության իրականացման ապահովումը,
- տարածաշրջաններում պետական գործառնությունների արդյունավետ կիրառումը:

Այս հարաբերություններն իրականացվում են պետական համակարգի միջոցով, որը ձևավորվում է կենտրոնում և տարածաշրջաններում, համապատասխան պետական կառույցների կողմից, որոնք ունեն գործունեության վարման առանձնահատուկ մեխանիզմ, որն իրականացվում է համապատասխան օրենսդրության պահանջներով: Տարածաշրջանային տնտեսական գաղափարախոսության պետական պարամետրը պետք է դառնա տարածաշրջանային պետական համակարգի ձևավորման հիմքը, որը պետք է ունենա իր համապատասխան կառույցները, գործունեության առանձնահատուկ մեխանիզմը և օրենսդրական բազան: Հնարավոր է, որ այն միաժամանակ կրճատի կամ սահմանափակի կենտրոնացված կառավարման մարմինների իրավասությունները և լիազորությունները: Մակայն, քանի որ այն պետք է իրականացվի օբյեկտիվ հիմքերով այդ պատճառով այդպիսի վերաբաշխումը օգուտ կբերի, թե՛ կենտրոնին և թե՛ տարածաշրջաններին: Ենթադրում ենք, որ այդպիսի համակարգի ձևավորման համար հիմք պետք է ծառայի սեփականության ձևը, և նրանից բխող հարաբերությունների բնույթն ու բովանդակությունը:

Գաղափարախոսության ազգային պարամետրը ընդգրկում է այն արժեքներն ու առանձնահատկությունները, որոնք անմիջականորեն առնչվում են հայ ազգի առանձնահատկության հետ: Դա կարևոր է ազգային կենսագործունեությունն ապահովելու, այդ թվում ազգային պետություն ձևավորելու և ազգային տնտեսական-շուկայական մոդել ստեղծելու համար: Գաղափարախոսության ազգային պարամետրն ունի նաև տարածաշրջանային դրսևորումներ: Դրանք են.

- տարածաշրջաններում ազգային ներուժի և ազգային արժեքների գնահատման համակարգի ձևավորումը,

- տարածաշրջաններում ազգային ներուժի համախմբումն է ու նրա նպատակադրված կիրառումը,
- ազգային ներուժի և նրա արժեքների պահպանումը, նրա վերարտադրության ապահովումը և փոխանցումը ապագա սերունդներին,
- ազգային նպատակասլաց կենսագործունեության արմատավորումը և այդ տենդենցի զարգացումը:

Ազգային պարամետրը տարածաշրջաններում համապատասխան համակարգի ձևավորման հիմքը պետք է հանդիսանա: Այն պետք է ունենա իր նպատակը, համապատասխան կառույցները, գործունեության իրականացման համապատասխան մեխանիզմները և օրենսդրական բազան: Ազգային պարամետրն ունի պատմական, մշակութային, ժողովրդագրական, աշխատանքային, սոցիալական ու հոգևոր պարամետրեր: Սակայն դրանք գաղափարախոսության հարաբերական ինքնուրույն կողմեր են, այդ պատճառով առանձին մեկնաբանության կարիք ունեն:

Գաղափարախոսության տնտեսական պարամետրը նույնպես անչափ կարևոր է երկրում, մասնավորապես տարածաշրջաններում համակարգված և ամբողջական տնտեսական համակարգ ձևավորելու և այն վերարտադրելու համար: Նրա տարրերն են.

- տարածաշրջանների տնտեսական լիարժեք վերարտադրվող համակարգի ձևավորումն է և նրա ներդաշնակ ու հավասարակշռված վերարտադրության ապահովումը,
- տարածաշրջանների արտադրական և շուկայական կառույցների ու ենթակառուցվածքների ամբողջական ու լիարժեք համակարգի ձևավորումն է ու գործունեության ապահովումը,
- տարածաշրջաններում հայրենական արտադրողների կազմակերպչական ներուժի առավել արդյունավետ համախմբումը և նրա նպատակային օգտագործումը,
- տարածաշրջաններում պարենային և տնտեսական անվտանգության ապահովումը,
- տարածաշրջանների ներքին շուկայի պաշտպանվածության ապահովումը և նրա մակարդակի բարձրացումը,
- տարածաշրջանների բնակչության կենսապահովման պահանջմունքի մշտական անխափան ու լիարժեք բավարարումը:

Հիշյալ յուրաքանչյուր պարամետր իրենից առանձնահատուկ համակարգ է ներկայացնում, բոլորը միասին մեկ համակարգի բաղադրիչներ են հանդիսանում, դրանք շաղկապված են միմյանց և ենթադրում են մեկը մյուսին: Այդ պատճառով պետք է իրականացվեն առկա կարողությունները հստակ հաշվի առնելու ու գնահատելու և հաշվառելու բազայի հիման վրա: Այստեղ ևս պետք է ձևավորվեն համապատասխան կառույցներ և հստակ մեխանիզմներ արտացոլող օրենսդրական բազա:

Գաղափարախոսության պատմական պարամետրերն իրենց մեջ ներառում են տարածաշրջանների պատմական արժեքների պահպանման ու վերարտադրության ապահովման հիմնախնդիրները: Այն անմիջականորեն արտա-

ցովում է հայ անհատի հոգեկերտվածքի, նրա բնավորության առանձնահատուկ դրսևորումների և հասարակական վարքագծի ուղղությամբ: Այս հանգամանքը հայ մարդու համար ունի առանձնահատուկ դրսևորում և նշանակություն: Այն անմիջականորեն անդրադառնում է նրա հասարակական կյանքի կազմակերպման, նրա պահանջմունքների համակարգի ձևավորման և կենսագործունեության իրականացման վրա:

Նրա պարամետրերն են.

- տարածաշրջաններում պատմական արժեքների գնահատման համակարգի ձևավորումը, պատմական ու մշակութային արժեքների օգտագործումը տարածաշրջանային սոցիալ-տնտեսական լիարժեք համակարգ ձևավորելու նպատակով,
- պատմական արդարության մշակույթի ներդրումը հայ կյանքի իրական հարաբերություններում,
- պատմական արժեքների վերարտադրության պայմանների ստեղծումը:

Գաղափարախոսության այս պարամետրի կիրառման համար ևս պետք ձևավորվի համապատասխան պատմամշակութային համակարգ՝ իր կառույցներով և գործունեության առանձնահատկությամբ:

Գաղափարախոսության շուկայական պարամետրը անմիջականորեն առնչվում է հանրության կողմից շուկայի ընկալման հարաբերություններ հետ: Այդ առնչությամբ պատմական ցանկացած հատվածի վերլուծությունն անգամ մեզ հստակ պատկերացում է տալիս հայ անհատի և հասարակության սոցիալական խմբերի շուկայական վարքագծի պոտենցիալ կարողությունների մասին:

Այսպես, համաձայն պատմագրության հաղորդած տեղակատվության Հին Հելլադան ու Հռոմը, Ասորեստանն ու Պարթևների երկիրը հայերին գիտեին որպես հմուտ առևտրականների, որոնք բարեկամ-միջնորդներ էին նրանց և այլևայլ տերությունների միջև, և մեկից մյուսին էին հասցնում մարդու ձեռքի ու բանականության լավագույն արդյունքները (Ոսկե Շղթա, Բ. Ուլուբաբյան, էջ 256):

Հերոդոտի հիշատակմամբ 5-րդ դարում հայերը Հայաստանը կապում էին Ասորեստանին, այնուհետև հարավային երկրների հետ (Հերոդոտ, Գիրք 1 պ. 194): Մ. Խորենացին նույնպես պատմում է հայերի առանձնահատուկ առևտրի կազմակերպման ձևերի ու տեխնոլոգիաների մասին (Մ. Խորենացի, Հայոց Պատմություն): Տուրնֆորը ներկայացնում է հայերի «ժուժկալությունը, խնայասիրությունը, վարկը, մեծ ճամփորդությունների ձեռք գարկելու կատարելու եռանդը..., Հայերի քրիստոնեական հավատքը, որը դյուրացնում էր նրանց առևտուրը Եվրոպայի ժողովուրդների հետ, ըստ երևույթին ավելի էր նպաստում իր մտադրության իրականացմանը, ...» (Նյութեր հայ վաճառականության պատմության համար, էջ 23):

Ըստ Տավեռնեի «Հայերը ձեռք էին զարնում առևտրի բոլոր տեսակներին, և բոլոր այդ տեսակների մեջ համաշխարհային հռչակ էին վայելում, հայերը առևտրում շատ ավելի հարմար են, քանի որ խնայող և շատ ժուժկալ ժողովուրդ են... (Ոսկե Շղթա, էջ 260), ըստ Յահան Հարրիսի բնութագրության «Հիմա չա-

վագանց բարձր է ամբողջ հայության առևտուրը, քանի որ (18 դար) հայերը առևտրականների ազգ են կազմում և կատարում են ամենաընդարձակ առևտուրը, քան ուրիշ որևէ այլ ժողովուրդ, քանի որ բացի իրենց Նոր Զյուղային հաստատություններից և Պարսկաստանի բոլոր մեծ քաղաքներից, նրանք տարածված են հանուր Արևելքում, արտակարգորեն մեծ առևտուր են վարում Ռուսաստանում, և իրենց ազգակից ներկայացուցիչներն ունեն Եվրոպական խոշոր քաղաքներից մեծ մասի մեջ: Մի խոսքով նրանք առևտրի մեջ հրեաների չափ նշանավոր են: Սակայն նրանց համբավին անհունապես նպաստող կետը առևտրի իրենց եղանակն է և միջնորդի իրենց գործելակերպը, որը իրենց նկարագիրը նվազագույն չափով չի խաթարել և պահել է ուղղամտության ու ժուժկալության մեջ, որովհետև նրանք ժիր են, համեստ ու ինքնաբավական, գոհանում են համեստ շահով, և ծառայում հավատարմությամբ, եղբոր նման սիրում են իրար և ամեն կերպ աշխատում են օգտակար լինել այն երկրներին, որոնցում հաստատվում են կարճ կամ երկար ժամանակով»: (Հ. Քյուրտյան, ՆՎՊՀ, էջ 25-26):

12-րդ դարերում Կիևյան Ռուսիայում Կիևի հայկական գաղութը հիմնել են հայ վաճառականները (Ոսկե Շղթա, էջ 265): Միջնադարյան Ռուսիայի արևելյան մասով հարավից հյուսիս ձգվում էր առևտրային տարանցիկ մի ուղի, որը հարևան երկրների վաճառական կենտրոնները կապում էին Ռուսիայի, այնպես էլ Ռուսիայից հյուսիս ընկած պետությունների հետ: Այդ մայրուղին սկսվում էր Աստրախանից, Վոլգայով բարձրանում էր վեր, անտառապատ Կոստրոմայի գավառով հասնում էր Սպիտակ ծով և այնտեղից էլ ջրային ճանապարհներով Սկանդինավյան երկրներ ու արևմտյան ուրիշ կենտրոններ: Հին ժամանակներից այս մայրուղին կոչվում էր «Հայկական ճանապարհ» կամ հայերի առևտրային մեծ ուղի (Ա. Դ. Երցով, Պերվոնաչալնոյե զնակումստվո արմյան ս սեվերովոստոչնոյ Ռուսիի դո վոցորենիյա դոմա Ռոմանովիխ վ 1613 գոդու, Կավկասկի վեստնիկ 1901 ն-12, ստր. 54-57): Հայերը 16-17-րդ դարերում Մոսկվայում, Արխանգելսկում և այլ խոշոր քաղաքներում, հետագայում նաև Պետերբուրգում ունին իրենց առևտրային տները «Տորգովի դվոռ» ռուսական պետության հետ կնքած պայմանագրի հիման վրա (Ոսկե Շղթա, էջ 269):

18-րդ դարի առաջին կեսերին Պետրոս Մեծը հայ առևտրականների հետ կնքեց պայմանագիր, որով հայերը պարտավորվում էին թողնել Թուրքիայով, Զմյուռնիայով, Հալեպով, Միջերկրական ծովով Եվրոպա հասնող ճանապարհը և մետաքսի հումքի իրենց ամբողջ վաճառքը իրականացնել Ռուսաստանում (Աշ. Հովհաննիսյան, Դրվագներ, Բ, էջ 580), այդ նույն դարում Պետրոս Մեծը հայ վաճառականներին շնորհում է ամենայն արտոնություններ:

Հայերը շուկայական գործունեության նկատմամբ առանձնահատուկ ձիրք և հմտություններ դրսևորել են նաև խորհրդային շրջանում: Դեռևս պահպանված հետազոտական տվյալների համաձայն ՀԽՍՀ-ն Խորհրդային Միության ընտանիքում առանձնացել է իր մասնավոր բնույթ կրող կոոպերատիվ գործունեությամբ, այն ժամանակ կիրառվող ցեխային համակարգով, որտեղ արտադրված ապրանքները և մատուցած ծառայությունները գերազանցում էին խոշոր պետական ձեռնարկություններում արտադրված և մատուցած ծառայությունների որակին և քանակը բազմակի անգամներով: Իհարկե, այդ զարգացումներն

ըստ էության սկսել են դրսևորվել խորհրդային համակարգի գոյության վերջին տասնամյակի ընթացքում, հասկանալի է նաև քաղաքական վերնաշենքի քաղաքական զգույշ համաձայնության պարագաներում:

Հայերը շուկայական գործունեության նկատմամբ առանձնահատուկ ձիրք և հմտություններ դրսևորում են նաև անկախության տարիներին: Այն արտահայտվում է մասնավոր սեփականության նկատմամբ առանձնահատուկ հակվածության, մասնավոր գործունեության նկատմամբ առանձնահատուկ ձիրքի մեջ: Հիշյալ առանձնահատկությունները պետք է հաշվի առնել նաև տարածաշրջանային շուկայական համակարգեր կազմակերպելիս: Այս առումով հարկ է այդ համակարգերի ձևավորումը կազմակերպել այնպես, որ շուկայական կառուցվածքների և նրա ենթակառուցվածքների կազմակերպման գործում ապահովեն տարածաշրջանների արտադրողների և սոցիալական այլ խավերի մասնակցությունը, ավելի մեծ արդյունք ապահովելու, ավելի գործուն ու կենսունակ հարաբերություններ զարգացնելու նպատակով:

Գաղափարախոսության ժողովրդագրական պարամետրը իր մեջ ներառում է տարածաշրջանների ժողովրդագրական արժեքների պահպանման ու վերարտադրության ապահովման հարաբերությունները: Նրա տարրերն են.

- տարածաշրջաններում ժողովրդագրական արժեքների գնահատման և պահպանման համապատասխան համակարգի ստեղծումը,
- տարածաշրջաններում ժողովրդագրական արժեքների օգտագործման ազգային (տարածաշրջանային) չափանիշների ստեղծումը և դրանց կիրառումը:

Այդպիսի համակարգ ներկայումս տարածաշրջաններում նույնպես գոյություն չունի, հենց այդ պարզ պատճառով մարզերում առկա է դեմոգրաֆիկ կատաստրոֆիկ իրավիճակ, իսկ որակյալ կադրերը տարածաշրջանից միգրացվում են պարբերաբար և տարալուծվում սոցիալական այլ միջավայրերում: Ապագա ուրվագծվող համակարգը խստագույնս պետք է շաղկապվի և համապատասխանեցվի տարածաշրջանային տնտեսական քաղաքականության տնտեսական ու սոցիալական պարամետրերի հետ:

Գաղափարախոսության աշխատանքային պարամետրը ժողովրդագրական համակարգի մաս է, իր մեջ ներառում է տարածաշրջանների աշխատանքային ռեսուրսների պահպանման ու վերարտադրության ապահովման տարրերը: Դա հատկապես վերաբերվում է նրա աշխատանքային ռեսուրսների որակյալ մասին, այսինքն որակյալ աշխատուժին, որն ազգային արժեք է, ունի նաև պատմական և ազգային ակունքներ, առնչվում է նաև տնտեսական համակարգի հետ և հարկ է, որ այն ըստ արժանավույն գնահատվի, թե տնտեսության զարգացման և թե սոցիալական խնդիրների լուծման առումներով:

Նրա բաղադրատարրերն են.

- տարածաշրջաններում աշխատանքային ռեսուրսների գնահատման և պահպանման և վերարտադրության համակարգի ստեղծումը,
- տարածաշրջաններում աշխատանքային ռեսուրսների, հատկապես նրա որակյալ մասի օգտագործման տարածաշրջանային չափանիշների ստեղծումը և դրանց կիրառումը:

Հիշյալ հարաբերությունների իրականացման համար ևս կպահանջվի համապատասխան համակարգերի առկայություն, որոնք կմշակեն և կիրականացնեն տարածաշրջանային աշխատանքային ռեսուրսների վերարտադրության ապահովման քաղաքականություն: Այդպիսի քաղաքականություն տարածաշրջաններում չի իրականացվում, որը պատճառ է դառնում տեղական որակյալ աշխատանքային կադրերի փոշիացման, այդ ռեսուրսների աննպատակ և անարդյունավետ կիրառման համար:

Այս պարամետրը հանդիսանում է նաև սոցիալական բաղադրիչի մասը, ամփոփվում է աշխատանքային պայմանների տիրույթում: Այս բնագավառը առհասարակ համակարգված չէ, աշխատողը ուղղակի հայտնվել է ձեռնարկատիրոջ քմահաճույքների ազդեցության տակ: Գործուն մեխանիզմներ չունեցող տեղական արհմիությունները այդ խնդրում որևիցե օժանդակություն չեն ցուցաբերում:

Գաղափախոսության մշակութային պարամետրը իր մեջ ներառում է տարածաշրջանների մշակույթի պահպանման ու վերարտադրության ապահովման տարրերը: Նրա բաղադրատարրերն են հանդիսանում.

- տարածաշրջաններում մշակութային արժեքների գնահատման և պահպանման համակարգի ստեղծումը,
- տարածաշրջաններում մշակույթի օգտագործման ազգային չափանիշների (տարածաշրջանային) ստեղծումը և դրանց կիրառումը:

Այս ուղղությամբ ևս պետք է ստեղծվի տարածաշրջանային համապատասխան համակարգ՝ հիմք ունենալով նաև պատմական, ազգային, կրոնական ու հոգևոր պարամետրերի պահանջները:

Գաղափախոսության սոցիալական պարամետրը իր մեջ ներառում է տարածաշրջաններում սոցիալական համակարգի ձևավորման, նրա վերարտադրության ապահովման հարաբերությունները: Դրանք կարևոր են սոցիալական պետություն ստեղծելու, սոցիալական արդար հասարակություն ձևավորելու, սոցիալական ներդաշնակ միջավայր ստեղծելու համար: Նրա բաղադրատարրերն են հանդիսանում.

- տարածաշրջաններում սոցիալական արժեքների գնահատման և պահպանման համակարգի ստեղծումը,
- տարածաշրջաններում սոցիալական արդար հասարակության ձևավորումը, սոցիալական ներդաշնակ միջավայրի ստեղծումը,
- տարածաշրջաններում սոցիալական ազգային համակարգի ձևավորումը:

Գաղափարախոսական այս տարրը պետք է հենվի պատմական, ժողովրդագրական, աշխատանքային, մշակութային, կրոնական և հատկապես տնտեսական պարամետրի վրա ունենա քանակական որոշակիություն:

Գաղափախոսության կազմակերպչական պարամետրը իր մեջ ներառում է տարածաշրջանների կազմակերպչական ներուժի պահպանման ու վերարտադրության ապահովման հարաբերությունները: Դա անչափ կարևոր է կազմակերպված հասարակություն ձևավորելու, սոցիալական պետություն ստեղծելու, ժողովրդական հասարակություն կազմակերպելու համար: Այդ

պարամետրը կարևոր է նաև համակարգված համալիր բնույթի բարեփոխումներ իրականացնելու, ՀՀ տնտեսության մեջ, մասնավորապես ՀՀ տարածաշրջանների տնտեսության մեջ որակական փոփոխություններ կատարելու համար: Նրա պարամետրերն են.

- տարածաշրջաններում կազմակերպչական արժեքների գնահատման և պահպանման համակարգի ստեղծումը,
- տարածաշրջաններում կազմակերպչական մշակույթի ազգային չափանիշների ստեղծումը և դրանց կիրառումը:

Գաղափարախոսության այս տարրը պետք է հենվի պետական, ազգային, տնտեսական, սոցիալական, մշակութային, աշխատանքային պարամետրերի վրա, դառնա տարաբնույթ համակարգերը շաղկապող և վերարտադրող օղակ: Այս պարամետրի տարրերն են հանդիսանում՝ ազգային, քաղաքական, հասարակական, համայնքային, ձեռնակատիրական-կոլեկտիվ-կորպորատիվ և անհատական կազմակերպչական ներուժը, որոնք առանձնահատուկ գնահատման և իրականացման պահանջ ունեն:

Գաղափարախոսության կրոնական պարամետրը իր մեջ ներառում է տարածաշրջանների հոգևոր ներուժի պահպանման ու վերարտադրության ապահովման հարաբերությունները: Այն կարևոր է.

- սոցիալական հասարակություն ձևավորելու,
- կազմակերպված հասարակություն ստեղծելու և երկրում, մասնավորապես տարածաշրջաններում առողջ բարոյա-հոգեբանական մթնոլորտ ապահովելու համար:

Նրա տարրերն են.

- տարածաշրջաններում հոգևոր արժեքների վերարտադրության համակարգի ձևավորման օժանդակումը,
- տարածաշրջաններում հոգևոր մշակույթի ներդրումը սոցիալ-տնտեսական համակարգերի ձևավորման գործում:

Գաղափարախոսության կրոնական պարամետրը իր մեջ ներառում է տարածաշրջանների նաև բարոյա-հոգեբանական մթնոլորտը, որը դառնում է հիմք առողջ հանրային հարաբերությունների ձևավորման համար: Այս առումով հարկ է առանձնացնել հետևյալ տարրերը.

- տարածաշրջաններում բարոյա-հոգեբանական արժեքների գնահատման և պահպանման համակարգի ստեղծումը,
- տարածաշրջաններում բարոյա-հոգեբանական արժեքների մշակույթի տարածաշրջանային չափանիշների ստեղծումը և դրանց կիրառումը:

Այսպիսով, վերլուծելով ՀՀ տարածաշրջանային տնտեսական քաղաքականության գաղափարախոսության պարամետրերը, կարելի է հանգել հետևյալ եզրակացության.

- ՀՀ-ում, մասնավորապես նրա տարածաշրջաններում շուկայական լիարժեք վերարտադրվող տնտեսական համակարգ կառուցելու համար անհրաժեշտ է կիրառել սեփական փորձը և ազգային ներուժը, օգտագործելով շուկայական տնտեսության կառուցման համաշխարհային արժեքները,

- անհրաժեշտ է հետազոտել շուկան և նրա բովանդակությունը, մշակել համապատասխան մեխանիզմներ երկրի և նրա տարածաշրջանների տնտեսությունները լիարժեք վերարտադրելու համար,
 - հարկ է երկրի տնտեսությունը և շուկան դիտարկել որպես միևնույն մեխանիզմով վերատադրվող մեկ ամբողջություն,
 - տնտեսությունը և շուկան կառուցել, որպես համակարգված առանձին համակարգեր,
 - շուկայի մեխանիզմը դիտարկել որպես առաջնային տնտեսության մեխանիզմների նկատմամբ, այդ հիմքով ստեղծել իրավական համապատասխան բազա այն արտացոլելու համար,
 - տարածաշրջանների տնտեսությունները դիտարկել որպես սոցիալ-տնտեսական առանձնահատուկ միավորներ, դրանց քաղաքականությունը մշակել տնտեսության պետական և մասնավոր հատվածների փոխհամաձայնության բազա հիման վրա,
 - տարածաշրջանի տնտեսությունը, շուկաները և շուկայական ենթակառուցվածքները պետք է դիտարկել որպես մեկ ամբողջություն,
 - տարածաշրջաններում պետական, համայնքային, մասնավոր ինստիտուտները պետք է դիտարկել որպես առանձնահատուկ սեփականատիրական համակարգեր համապատասխան սոցիալական և տնտեսական բովանդակությամբ,
 - տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականություն մշակելու համար անհրաժեշտ է ձևավորել տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականության գաղափարախոսություն, որի ներդրման համար անհրաժեշտ է ստեղծել.
1. պետական,
 2. տնտեսական,
 3. ազգային,
 4. պատմական,
 5. շուկայական,
 6. ժողովրդագրական,
 7. աշխատանքային,
 8. մշակութային,
 9. սոցիալական,
 10. կազմակերպչական,
 11. կրոնական,
 12. բարոյա-հոգեբանական համապատասխան համակարգեր:

А. Г. ПЕТРОСЯН – *Идеологические основы социально-экономической политики региона.* – В статье представляются вопросы формирования социально-экономической политики государства. В частности, рассматриваются идеологические параметры этой политики. Здесь даются также основы формирования рыночного хозяйства региона, в частности представляются принципы формирования рыночного хозяйства региона.

ՄԱՐՔԵԹԻՆԳԻ ԷՎՈԼՅՈՒՑԻԱՆ

Ա. Ա. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ

Շուկայական պայմաններում Հայաստանի տնտեսության հետագա զարգացումը, նրա ինտեգրացումը միջազգային տնտեսությանը պահանջում է զարգացած երկրների շուկաների մարքեթինգի տեսական գիտելիքների և պրակտիկ փորձի կիրառում: Այդ գիտելիքները և փորձը ձեռք են բերվել երկարատև զարգացման ընթացքում ու այլ սոցիալ-տնտեսական պայմաններում, հետևաբար հարկավոր է դրանք մանրամասն ուսումնասիրել և անցկացնել մեր իրականության պրիզմայով:

Մարքեթինգի տեսության ուսումնասիրությունը տրամաբանական է սկսել նրա էվոլյուցիայից՝ երկու պարզ պատճառով.

1. հնարավորություն կտա բացահայտել մարքեթինգային կառավարման հայեցակարգի և գործիքակազմի զարգացման ընդհանուր միտումները՝ անկախ գործունեության միջավայրի ազգային առանձնահատկություններից:
2. մարքեթինգի տեսության ժամանակակից առանձնահատկությունների ուսումնասիրումը թույլ կտա գնահատել առկա տարբերությունների մասշտաբը և գտնել նրանց հաղթահարման ուղիները:

Էվոլյուցիա թարգմանաբար նշանակում է «մի վիճակից մյուսին անցնելու զարգացման պրոցես», իսկ փիլիսոփայության տեսակետից՝ «քանակական աստիճանական զարգացում»՝ որակականին անցնելու անհրաժեշտությամբ:

Եվ իրոք, համեմատելով միայն մարքեթինգի դասական և ժամանակակից սահմանումները արդեն կտեսնենք էական տարբերություններ: Դասական սահմանումը մեկնաբանում է մարքեթինգը, որպես «ապրանքները արտադրողից գնորդին կամ սպառողին հասցնելու գործընթացի կառավարմանը ուղղված գործունեություն»²³², կամ որպես «սոցիալական պրոցես, որի միջոցով կանխատեսվում, ընդլայնվում և բավարարվում է ապրանքների և ծառայությունների նկատմամբ պահանջարկը»: Ժամանակակից տեսանկյունից այս մեկնաբանումները սահմանափակ են, քանի որ հաշվի չեն առնվում գնորդ և վաճառող փոխհարաբերությունը, մարքեթինգի վրա սոցիալական ուժերի ներգործությունը և մարքեթինգի կիրառման ոլորտների ընդլայնումը: Վերջինիս համար նշենք, որ ներկայումս մարքեթինգի տարրերը կարելի է տեսնել կրթության, առողջապահության, մշակույթի, քաղաքականության և նույնիսկ կրոնի բնագավառներում:

Ժամանակակից «մարքեթինգը ապրանքների, ծառայությունների, գաղափարների, տարածքների, հանդեպ պահանջարկի կանխատեսումը, կառավարումը և բավարարումն է, փոխանակման միջոցով»²³³:

²³² **Է. Ս. Միխայլովա**, «Маркетинг», Конспект лекций, Изд. АРДИС, 2010, стр. 5.

²³³ **Է. Ս. Միխայլովա**, «Маркетинг», Конспект лекций, Изд. АРДИС, 2010, стр. 6.

Մարքեթինգը հաճախորդի խնդիրների լուծումն է ի օգուտ ֆիրմայի:

Մարքեթինգը հաճախորդների և գործընկերների ձեռքբերումն ու պահպանումն է:

Մարքեթինգը փոխհարաբերություններն ու կապերն են:

Հանրահայտ Կոկո Շանելը ասել է՝ «Եթե ցանկանում ես լինել անփոխարինելի, տարբերվիր բոլորից»²³⁴: Մարքեթինգը բոլորից տարբերվելու արվեստ է: Ցանկացած կազմակերպություն կարող է իշխել շուկայում, եթե հասկանա սպառողի կարիքները և գտնի նրանց բավարարման այնպիսի միջոցներ, որոնք կապահովեն բարձրագույն արժողություն, որակ և սպասարկում:

Մարքեթինգի պատմության շուրջ կան տարբեր տեսակետներ: Ոմանք սկսում են XX դ. սկզբից, ոմանք կեսերից, տարբեր ձևով են ներկայացվում զարգացման փուլերը: Փորձենք ընդհանրացնել դրանք:

Հայտնի տեսաբան Պիտեր Դրուքերը մարքեթինգային տարրերի սկզբնական կիրառումը կապում է Ճապոնիայի հետ: Ըստ նրա դա տեղի է ունեցել 1650 թ-ին, երբ Միցուի ընտանիքի առաջին ներկայացուցիչը, բնակվեց Տոկիոյում և հիմնադրեց խանութ, որը կարելի է համարել առաջին հանրախանութը²³⁵: Նա վարում էր ժամանակակից խոշոր ֆիրմաներին հատուկ մարքեթինգային քաղաքականություն՝

- դարձավ գնորդ իր հաճախորդների համար՝ ձեռքբերելով նրանց հետաքրքրող ապրանքներն իր խանութի համար,
- փնտրում էր այդ ապրանքների արտադրության համար անհրաժեշտ միջոցներ,
- կիրառում էր անորակ ապրանքների ետ ընդունումը,
- աշխատում էր անընդհատ ընդլայնել ապրանքների տեսականին:

Առ այսօր Ճապոնիայում Միցուկոշի հանրախանութների ցանցը խոշոր մանրածախ ցանցերից մեկն է:

18-րդ դարում Ադամ Սմիթը իր «Ազգերի հարստություն» աշխատության մեջ նշել է, որ արտադրողների մտահոգությունը սպառողների պահանջ-մունքների բավարարումն է:

Առաջինը, ով մշակեց մարքեթինգի սկզբունքները և ներկայացրեց այն՝ որպես գործարար ակտիվության կենտրոնական գործառույթ, Մայրուս Մակկորմիկն էր (1809-1884)²³⁶: Նրա շնորհիվ կիրառվեցին ժամանակակից մարքեթինգի բազային գործիքները՝ շուկայի հետազոտում և վերլուծություն, գների քաղաքականություն, հետվաճառքային սպասարկում և ապառիկ վաճառք: Այդ ամենի շնորհիվ 1850 թ-ին նրա «Ինտերնեշնել Հարվեստեր» ֆիրման բուռն ծաղկում ապրեց: Մակայն, նույնիսկ նրա հայրենիքում, այդ փորձին հետևեցին միայն տարիներ հետո:

Մինչև 20-րդ դ. սկիզբն ընկած ժամանակահատվածը մասնագետներն իրավացիորեն անվանում են նախամարքեթինգային, քանի որ ինտուիտիվ

²³⁴ **И. Манн**, Маркетинг на 100%, Манн, Иванов и Фербер, аудио книга, 2005.

²³⁵ **А. М. Годин**, Маркетинг, Учебное-методическое пособие, М., 2001, стр. 9.

²³⁶ Նույն տեղում, էջ 8:

կիրառվում էին միջոցներ, որոնք խրախուսում էին հաճախորդին գնում կատարել:

Որպես գիտության ճյուղ մարքեթինգը զարգացել է ԱՄՆ-ում: 1901 թ-ին մարքեթինգն սկսեց դասավանդվել Բլյիսոյի և Միչիգանի համալսարաններում, 1910 թ-ին Ռ. Բատլերը Վիսկոնսինի համալսարանում սկսեց վարել «Մարքեթինգի մեթոդներ» մշտական դասընթացը: 1926 թ. ԱՄՆ-ում հիմնադրվում է մարքեթինգ և գովազդ դասավանդողների Ազգային ասոցիացիան, որի հիման վրա 1973 թ. ստեղծվում է մարքեթինգի Ամերիկյան ասոցիացիան: Այն այսօր ունի շուրջ 23 հազ. անդամ²³⁷: Այս իրադարձությունները թույլ են տալիս ասել, որ նախամարքեթինգի փուլն ավարտվում է 20-րդ դ-ի սկզբին և սկսվում է մարքեթինգի կայացման շրջանը, որը ձգվում է մինչև 1950 թ.:

Մինչև 1930 թ. իշխող էր մարքեթինգի «արտադրության կատարելագործում» հայեցակարգը, երբ պահանջարկը գերազանցում էր առաջարկը, հետևաբար չկար իրացման խնդիր և մրցակցություն (վաճառողի շուկա):

Մեծ ճգնաժամին (1929-1933 թթ.) հաջորդող տնտեսական աճը բացահայտեց այդ ժամանակահատվածի մարքեթինգի մեկնաբանման սահմանափակությունը և շարժառիթ դարձավ այլ մոտեցումների զարգացման համար: Մարքեթինգի տեսությունը մտավ զարգացման որակապես նոր շրջան, ձևավորվեց մարքեթինգի նոր հայեցակազմ՝ «իրացման կատարելագործում», երբ շուկայում աճում է մրցակից ապրանքների քանակը և իշխանությունն աստիճանաբար անցնում է գնորդին: Սակայն երկրորդ համաշխարհային պատերազմը ընդհատեց կապիտալիստական տնտեսության բնականոն զարգացումը: Միայն 20-րդ դ. 50-ական թվականների առաջին կեսից սկսում է մարքեթինգի տեսության բուռն և դինամիկ զարգացումը: Մինչև 20-րդ դ. 60-70-ական թվականները համարվում է նեոդասական մարքեթինգի փուլ: Նրա սկիզբը կապվում է մարքեթինգի ամերիկյան Ասոցիացիայի նախագահ Ն. Բորդենի ելույթի հետ, երբ շրջանառության մեջ մտավ «մարքեթինգ-միքս» հասկացությունը: Հետագայում այն զարգացրեց Ջ. Մաք Քարթին և ներկայացրեց որպես հանրահայտ 4P²³⁸: Այդ ժամանակաշրջանին են պատկանում նաև Ջ. Դինի առաջարկած ապրանքի կենսաշրջանի հայեցակարգը, մարքեթինգային հետազոտություններում լայն կիրառում ունեցող շուկայի հատվածաորումը (Վ. Սմիթ) և ձևակերպվեց նոր հայեցակարգ «մարքեթինգային»: Վերջինս հեղաշրջեց կառավարման մտածելակերպը՝ «վաճառում ենք այն, ինչ արտադրում ենք»-ից դեպի «արտադրում ենք այն, ինչ վաճառվում է»:

1970 թթ-ի կեսերի միջազգային տնտեսական ճգնաժամի նոր ալիքը շարժառիթ դարձավ մարքեթինգի հետագա զարգացման համար: Մինչև 1980-1990թթ.-ը այն որակավորվեց որպես մրցակցային-ստրատեգիական մարքեթինգ, քանի որ բիզնեսի հիմնական նպատակը դառնում է «շուկայի բաժինը»: Մի ֆիրմայի շուկայի բաժինը ընդլայնվում է մյուսի հաշվին ստրատեգիական

²³⁷ <http://marketing.spb.ru/Роль маркетинга в прошлом, настоящем и будущем.>

²³⁸ **В. И. Черепков**, Развитие периодизации эволюции маркетинговой теории, Вестник Санкт-Петербургского университета, 2004, Сер. 8, Вып. 2(N16).

պլանների մշակման միջոցով: Բայց շուտով պարզվեց, որ մրցակցային առավելություններ կարող են տալ ոչ միայն ստրատեգիական որոշումները, այլ նաև կայուն փոխհարաբերությունները շուկայի բոլոր սուբյեկտների հետ: Ձևավորվում է մարքեթինգի նոր հասցակարգը, որը Ֆ. Կոտլերը և Գ. Ջալցմանը ներկայացնում են որպես «սոցիալական» մարքեթինգ:

Այսպիսով, տարանջատվում են միկրոմարքեթինգը (որպես ֆիրմայի շահերի արտահայտում) և մակրոմարքեթինգը (որպես հասարակության շահերի արտահայտում): Այժմ բիզնեսի խնդիրը ոչ միայն շահույթի ապահովումն է, այլ նաև շրջակա միջավայրի պաշտպանությունը, էկոլոգիապես մաքուր սննդամթերքի ապահովումը և ընտանիքի պլանավորումը:

Այս փուլը առանձնահատուկ է նաև նրանով, որ ձևավորվեց ծառայությունների մարքեթինգը (Լ. Շոստակ, 1977 թ.), որը կարևոր որակական փոփոխություն էր մարքեթինգի էվոլյուցիոն զարգացման ընթացքում²³⁹:

1990 թ. կեսերից մինչ այսօր համարվում է գլոբալ միասնական հաղորդակցական մարքեթինգի զարգացման փուլ: Ինչով է պայմանավորված այս փուլի առանձնահատկությունը:

Շարունակում է զարգանալ «փոխհարաբերությունների» մարքեթինգը, քանի որ այն ավելի լավ է ներկայացնում ժամանակակից մարքեթինգի էությունը, քան գործարքների մարքեթինգը: Նրա էությունը յուրաքանչյուր հաճախորդի հետ փոխհարաբերությունների վերահսկումն է, ինչը թույլ է տալիս բացահայտել նրա նախասիրությունների փոփոխումը և կիրառել խթանման անհատական մեթոդներ:

Համաշխարհային տնտեսության գլոբալացումը անդրադառնում է նաև մարքեթինգի հետագա զարգացման վրա: Այժմ այն դիտվում է որպես համաշխարհային շուկայում տեղ գրավելու պայման՝ ապրանքների և մարքեթինգային ծրագրերի ստանդարտացման միջոցով: Այս պրոցեսին զուգահեռ սկսում է զարգանալ հետաքրքրությունը դեպի լոկալ մարքեթինգը, ըստ որի հարկավոր է հաշվի առնել ազգային շուկաների առանձնահատկությունները մարքեթինգային ծրագրերի մշակման ժամանակ: Այս իրարամերժ միտումները բարդացնում են մարքեթինգի առջև դրված խնդիրները, բայց միաժամանակ խթանում նրա հետագա զարգացումը:

Գլոբալացման պայմաններում մրցակից ֆիրմաների ապրանքները, գնային քաղաքականությունը, իրացման ուղիները այնքան են նմանվում, որ հաճախորդին գրավելու միակ միջոցը դառնում է հաղորդակցման համակարգը: Կոմունիկացիան դառնում է «մարքեթինգի սիրտն ու հոգին», առավելապես նրա նոր և ամենաարդյունավետ միջոցը՝ Ինտերնետը: Վերջինս չեզոքացնում է բիզնեսի վրա ներգործող այնպիսի կարևոր գործոնները, ինչպիսիք են ժամանակը և հեռավորությունը:

Անդրադառնալով մեր իրականությանը՝ ասենք, որ մարքեթինգը Հայաստանում սկզբնական շրջանում ուներ նախամարքեթինգին բնորոշ գծեր,

²³⁹ В. И. Черенков, Развитие периодизации эволюции маркетинговой теории, Вестник Санкт-Петербургского университета, 2004, Сер. 8, Вып. 2(№16).

քանի որ հայտնվելով մրցակցային պայմաններում և բախվելով իրացման խնդրին, շուկայի սուբյեկտները ինտուիտիվ սկսեցին կիրառել մարքեթինգի գործիքները: Հիմնականում գովազդը, «ֆիրմային» անվանումը և գնային քաղաքականությունը: Շատերը, առանց տեղական շուկայի առանձնահատկությունները հաշվի առնելու և այն ուսումնասիրելու, կիրառում էին մարքեթինգի արտասահմանյան փորձը և շահույթի փոխարեն կորուստներ էին գրանցում: Այժմ իրավիճակը փոքր ինչ փոխվել է. փորձ է արվում մարքեթինգը դնել հայրենական գիտական հիմքի վրա (մամուլում և Ինտերնետում հաճախակի են հանդիպում Հայաստանում մարքեթինգի զարգացման խնդիրների և պրակտիկ կիրառման քննարկումներ, հոդվածներ), այն դասավանդվում է բուհերում՝ Հայաստանում այսօր մարքեթոլոգներ գլխավորապես պատրաստում է ՀՊՏՀ-ն: ՀՊՏՀ-ի մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետում գործում է մարքեթինգի ամբիոնը: Մարքեթինգի ամբիոնը ձևավորվել է 1975թ.-ին՝ առանձնաանյով ժողովրդական տնտեսության պլանավորման ամբիոնից: 1996 թ.-ից կոչվում է Մարքեթինգի ամբիոն²⁴⁰: Ամբիոնի կողմից դասավանդվում են «Մարքեթինգի հիմունքներ», «Մարքեթինգ», «Գովազդի կազմակերպում», «Գնորդի վարվելակերպի հետազոտում», «Բորսային առևտուր», «Բանկային մարքեթինգ», «Ծառայությունների մարքեթինգ», «Արդյունաբերական մարքեթինգ», «Մարքեթինգը նորամուծական ոլորտում» և այլ առարկաներ: Պետական բուհերից նաև ՀՊԱՀ-ում է գործում «Ագրոբիզնես և շուկայաբանություն» ամբիոնը: Ստեղծվում են խորհրդատվական և ուսուցողական ընկերություններ (**ՄԱՐԲԵԹԻՆԳԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ**՝ **հասարակական կազմակերպություն**, **ՂԻԻՄ ՔՈՍՅՈՒՆԻՔԵՑՆԱԶ**՝ **ՄԱՐԲԵԹԻՆԳԱՑԻՆ ԵՎ PR-ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**)²⁴¹: Սակայն նշված փոփոխությունները քիչ են լիարժեք արդյունքի հասնելու համար՝ առ այսօր չկա հայերեն մասնագիտական գրականություն: **«Լուսա Մարքեթինգ Էքսպերտ»** ընկերության կողմից 2009 թ. ապրիլին կազմակերպված հարցման արդյունքում մասնագետների 83%-ը համանաձայնվել են, որ իրենց գործնական գիտելիքները ստացել են բացառապես աշխատանքային պրակտիկայի ընթացքում: Ցավալի է, բայց պետք է փաստել, որ մարքեթինգին Հայաստանում չեն վերաբերվում որպես հաջողության հասնելու ռազմավարական գործիք: Մյուս կողմից էլ տնտեսության անկայուն վիճակը անբարենպաստ դաշտ է ստեղծում մարքեթինգի հետագա զարգացման համար:

Մասնագետների կողմից 2009թ. կատարված հետազոտությունները ցույց տվեցին նաև, որ ՀՀ աշխատանքային շուկայում մարքեթինգի մասնագետների պահանջը կրճատվել է 22%-ով²⁴²:

Ամփոփելով կարելի է ասել, որ մարքեթինգը Հայաստանում գտնվում է անցումային շրջանում՝ նախամարքեթինգից դեպի կայացման փուլ: Իսկ որ-

²⁴⁰ <http://hy.wikipedia.org/wiki/>

²⁴¹ <http://www.spyur.am/arm/lll2bb.htm>

²⁴² <http://hy.wikipedia.org/wiki/>

պեսզի մարքեթինգը կայանա Հայաստանում անհրաժեշտ է, որ այն ընդունվի հայ գործարարների կողմից՝ հատկապես փոքր և միջին բիզնեսի ոլորտում, որ-պես արդյունավետ գործունեության կարևոր պայման: Վերջինիս համար անհրաժեշտ է պարզ, հայկական շուկայի օրինակներով, հայերեն լեզվով դասագրքերի, ձեռնարկների հրատարակում, մատչելի խորհրդատվության և դասընթացների կազմակերպում մի կողմից և առողջ մրցակցային դաշտի ստեղծում և զարգացում մյուս կողմից:

А. А. САРИБЕКЯН.- Эволюция маркетинга. - Цель статьи обобщить имеющиеся в научной литературе представления о периодизации развития маркетинговой теории и практики. Представлены особенные черты свойственные каждому этапу, факторы определившие дальнейший путь развития маркетинговой теории и практики. Указаны выдающиеся деятели в данной области деятельности, сделавшие переворот в имеющихся представлениях о маркетинге. В конце статьи указаны особенности развития маркетинга в Армении, его возможности и сдерживающие факторы, а также необходимость признания маркетингового инструментария как важной составляющей предпринимательской активности.

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՄԱՀՄԱՆԱՄԵՐԶ ԳՈՏՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՍՏՐԵՍ- ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա. Ս. ՔԱՄԱԼՅԱՆ

XXI դարի սկզբին մարդկությունն, ընդգրկվելով գիտա-տեխնիկական առաջընթացի մեջ, գտնվում է տարբեր սոցիալ-հոգեբանական փոխհարաբերությունների մեջ և հաճախ բախվում է արտակարգ պայմանների ազդեցությանը, որի ժամանակ կտրուկ մեծանում է ինչպես հոգեբանական լարվածությունը, այնպես էլ մարդու հոգեֆիզիոլոգիական կայունության պահանջը:

Մասնագիտական գրականության մեջ մենք հանդիպում ենք «արտակարգ պայմաններ», «արտակարգ իրավիճակ», «անսովոր պայմաններ» հասկացություններին, որոնք հեղինակների կողմից բնութագրվում են որպես անհնարին, դժվարին իրավիճակներ, և դիտարկվում են տարբեր բնույթի բացասական գործոնների ազդեցության պայմաններում անձին ներկայացվող սպառնալիք, կյանքին, առողջությանն ուղղված իրական վտանգ²⁴³:

Ինչպես ցույց են տվել մեր կողմից կատարված դիտարկումներն ու հետազոտության արդյունքները, մինչ այսօր ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերը գտնվում են տևական ստրեսի պայմաններում, որը պայմանավորված է ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող մարտական գործողություններով: Այսօր կարևոր հիմնախնդիր է հանդիսանում տեղի ունեցող տեղաշարժերի ուսումնասիրումը: Մեր հետազոտություններն ուղղված են երիտասարդների ստրես-կայունության հոգեբանական առանձնահատկությունների ուսումնասիրմանը: Ստրեսների նկատմամբ անձի կայունությունը հանդիսանում է երիտասարդների առողջության, գործառության հնարավորությունների զարգացման և ամրապնդման գրավական: Երիտասարդությունն այն տարիքն է, երբ սկսվում է ինքնուրույն աշխատանքային գործունեությունը և ակտիվ սոցիալիզացիայի գործընթացը: Կարևորագույն հոգեբանական գործընթաց է ինքնագիտակցության և կայուն «ես»-ի հաստատումը: Ստրես-կայունության ձևավորումը երիտասարդության տարիքում հոգեկան առողջության և սցիալական կայունության անհրաժեշտ պայմանն է: Ներկայումս առաջնային են սահմանամերձ գոտու երիտասարդների հոգեկան առողջության պահպանման և ստրես-կայունության ձևավորման հիմնախնդիրները: Ստրես-կայունության խնդիրների առանձնահատկությունները կապված են տեղեկատվության ավելացման և գիտատեխնիկական աճի հետ, որով պայ-

²⁴³ Մ. Պ. Մկրտումյան, Արտակարգ իրավիճակների հոգեբանության կանխարգելման և վերականգնողական հիմնախնդիրները: Ուս. ձեռնարկ. - Եր., Զանգակ-97, 2008, էջ 320:

մանավորված՝ ստրես-կայունությունը հանդես է գալիս որպես անհրաժեշտ հատկություն:

Մասնագիտական գրականության մեջ գոյություն ունեն բազում մեկնաբանություններ ստրես-կայունության վերաբերյալ:

Ըստ Ս. Վ. Սուբբոտինի ստրես-կայունությունը անհատական հոգեբանական առանձնահատկություն է, որն ապահովում է անձի կենսաբանական, ֆիզիոլոգիական և հոգեբանական հոմեոստազը և միջավայրի հետ գործունեության և կենսագործունեության տարբեր պայմաններում հանգեցնում սուբյեկտի և միջավայրի միջև նորմալ փոխազդեցությանը²⁴⁴:

Յա. Ռեյկովսկին «ստրես-կայունություն» հասկացության բնորոշման մեջ ներառում է հուզական գրգռիչների նկատմամբ զգայունակության չափանիշները²⁴⁵:

Ստրես-կայունության բավականին լայն բնորոշումների կարելի է հանդիպել տիեզերական, սպորտի և ինժեներական հոգեբանության ոլորտներում: Լ. Մ. Աբովինը մարզիկների հետ կատարված հոգեբանական ուսումնասիրություններից հետո բացահայտում և ստրես-կայունությունը բնութագրում է որպես լարված և գերշարժողական իրավիճակներում հուզական ինքնակարգավորման ամբողջական գործառնական համակարգ²⁴⁶:

Հեղինակների մյուս խումբը անձի ստրես-կայունությունը դիտարկում է նյարդային համակարգի տեսանկյունից (Ե. Պ. Իլյին, Ի. Մ. Պալեյ, Ի. Պ. Բոնդարյով)²⁴⁷:

Օ. Ա. Սիբոտինի, Վ. Լ. Մարիշչուկի, Ա. Ե. Միլերյանի, Ն. Կ. Վոլկովի աշխատություններում այդ հասկացությունը դիտարկվում է որպես վտանգավոր գործունեության պայմաններում սեփական հույզերը կառավարելու և բարձր աշխատունակություն պահպանելու ընդունակություն:

Պ. Բ. Զիրբերմանը ստրես-կայունությունը բնորոշում է որպես անձի ինտեգրատիվ հատկություն, որը հուզական, կամային, ինտելեկտուալ և մոտիվացիոն բաղադրամասերի փոխազդեցություն է և ապահովում է գործունեության հաջող կատարումը դժվար հուզական վիճակներում²⁴⁸:

Ինժեներական հոգեբանության մեջ Վ. Ա. Բոդրովը ստրես-կայունությունը դիտարկում է որպես մարդ-օպերատորի գործունեության կայունություն արտակարգ, անսովոր պայմաններում, որը վերլուծվում է 3 տեսակետներով՝ առարկայական-գործնական, ֆիզիոլոգիական և հոգեբանական: Առարկայական-գործնականը արտացոլում է գործունեության ամփոփոխ չափանիշները, որոնք բնութագրում են աշխատանքի փոփոխությունները, նրա արդյու-

²⁴⁴ **А. А. Реан, А. Р. Кудашев, А. А. Баранов.** Психология адаптации личности. - СПб., Прайм-Еврознак, 2006, стр. 225.

²⁴⁵ Նույն տեղում, էջ 227:

²⁴⁶ **Л. М. Аболин.** Психологические механизмы эмоциональной устойчивости человека. Казань, Изд-во КазГУ, 1987, стр. 261.

²⁴⁷ **А. А. Реан, А. Р. Кудашев, А. А. Баранов.** Психология адаптации личности. - СПб., Прайм-Еврознак, 2006, стр. 227.

²⁴⁸ **П. Б. Зильберман.** Эмоциональная устойчивость оператора // Очерки психологии труда оператора. М., Наука, 1974, стр. 138-172.

նավետությունը և որակը: Ֆիզիոլոգիական և հոգեբանական մոտեցումները բնորոշում են կայուն գործունեության ապահովումը: Հոգեբանական իմաստով գործունեության կայունությունն արտացոլում է մասնագիտականորեն նշանակալիություն ունեցող գործընթացների գործառնական բնութագրերը, անձի որակները և հատկությունները, ինչպես նաև գործունեության համապատասխանությունը աշխատանքային կոնկրետ իրավիճակների նկատմամբ: Գործունեության կայունության ֆիզիոլոգիական բովանդակությունը կապված է անսովոր պայմաններում օրգանիզմի հարմարվողականության և հավասարակշռության կարգավորման հետ²⁴⁹:

Բ. Ա. Վյատկինի, Ա. Ա. Կորոտաևի, Ա. Վ. Խալիկի հետազոտություններում ստրես-կայունությունը դիտարկվում է որպես անձի հատկություն, որի շնորհիվ նա կարողանում է իրականացնել գործունեության արդյունավետ ընթացքը դժվար իրավիճակներում:

Ստրես-կայունությունը մեր կողմից բնութագրվում է որպես արտակարգ պայմաններում ստրես գործոնների նկատմամբ հույզերի ինքնավերահսկման այնպիսի ունակություն, որի շնորհիվ անձը կարողանում է վերահսկել արտաքին միջավայրի փոփոխվող ազդակները՝ կայուն և հաստատուն պահպանելով հոգեվիճակները, տրամադրությունը, ինքնագգացողությունը, ակտիվությունը, ինքնագնահատականը:

Արտակարգ կամ անսովոր պայմաններում անձի համար կարևորագույն հիմնախնդիր է հանդիսանում հուզական կայունություն պահպանելու ունակությունը ստրես գործոնների նկատմամբ: Ստրես-կայունության խախտման հետևանքով անձի մոտ տեղի են ունենում տեղաշարժեր, որոնք արտահայտվում են հոգեվիճակների, ինքնագնահատականի, տրամադրության, ակտիվության, ինքնագգացողության, վեգետատիվ համակարգի և այլ փոփոխություններով: Այսօր կարևորագույն հիմնահարց է հանդիսանում վերը թվարկած փոփոխությունների ուսումնասիրումը երիտասարդների մոտ:

Սահմանամերձ գոտու երիտասարդների ստրես-կայունության դրսևորումները պայմանավորված են նրանց ինքնավերահսկման ինտերնալ և էքստերնալ տիպերի հոգեբանական առանձնահատկություններով: Ըստ Ջ. Ռոթթերի՝ անձի սոցիալ-հոգեբանական դիրքորոշումների թվին է պատկանում վերահսկման տեղայնացումը կատարվող իրադարձության նկատմամբ, որը հանդես է գալիս որպես փոխազդեցությունների կարգավորող և մեկնաբանվում է որպես էքստերնալություն-ինտերնալություն: Նա ենթադրում էր, որ գոյություն ունի կոնտինուում, որի ծայրահեղ կետերն են հանդիսանում անհատներ՝ վառ արտահայտված ներքին կամ արտաքին ստրատեգիաներով: Մնացած մարդիկ միջանկյալ տեղ են գրավում այդ երկու բևեռների միջև: Այն համաձայնեցի համապատասխան, թե ինչպիսի դիրք է զբաղեցնում անհատը կոնտինուում, նրան վերագրվում է վերահսկման տեղայնացման կոնկրետ բնութագիր²⁵⁰:

²⁴⁹ **В. А. Бодров, А. А. Обознов.** Система психической регуляции стрессоустойчивости человека оператора // Психологический журнал. N 4. 2000, стр. 32-40.

²⁵⁰ **J. Rotter,** Generalized expectancies for internal versus external control of reinforcements. Psychological Monographs, 80 Whole N 609, 1999.


Առանձնացնում են վերահսկման երկու տիպ՝ ինտերնալ և էքստերնալ: Ինտերնալ տեղայնացման մասին խոսում են այն ժամանակ, երբ մարդը մեծ մասամբ իրադարձությունների պատասխանատվությունը, կյանքում ընթացող երևույթները վերցնում է իր վրա՝ բացատրելով դրանք սեփական վարքով, բնավորությամբ և ընդունակություններով: Նման տիպի մարդիկ նշանակալից իրադարձությունները մեկնաբանում են որպես սեփական ջանքերի արդյունք: Ինտերնալները ենթադրում են, որ կենսական կարևոր իրադարձությունները իրենց սեփական գործողությունների արդյունք են և պատասխանատվություն են կրում այն ամենի համար, ինչ կատարվում է իրենց կյանքում: Այդպիսի ձևով ինտերնալին հատուկ է ակտիվ կենսական դիրքորոշումը, անկախությունը և պատասխանատվությունն իր համար: Ինտերնալների ինքնագնահատականը սովորաբար բարձր է, նրանց իրական և իդեալական «ես»-ը հազեցված է: Էքստերնալ վերահսկման տեղայնացման դեպքում անձը հակված է ամեն ինչի համար պատասխանատվությունը վերագրել արտաքին գործոններին՝ այլ մարդկանց, բախտին, պատահականությանը, և շրջապատող միջավայրին: Նման մարդիկ ենթադրում են, որ իրենց հետ կատարվող իրադարձությունները արտաքին ուժերի, դեպքերի, իրավիճակների, այլ մարդկանց արդյունքն են: Նրանք պասիվ են, հոռետես, զգում են, որ իրենցից ոչինչ կախված չէ, ամեն ինչ կախված է իրավիճակից և իրենք այս կյանքում ոչ մի դեր չեն կատարում, և նույնիսկ իրենց հաջողությունները և ուրախությունը վերագրում են արտաքին իրադարձություններին, երջանիկ բախտի հաջողությանը կամ այլ մարդկանց օգնությանը: Էքստերնալները ավելի ուժեղ են հակված սոցիալական ազդեցությանը, քան ինտերնալները: Էքստերնալները տարբերվում են բարձր տագնապալիությամբ, անհանգստությամբ, անհամբերությամբ և ագրեսիվությամբ, որը պայմանավորված է նրանով, որ նրանք ամեն ինչ կապում են արտաքին իրավիճակների հետ և չեն կարողանում կառավարել իրենց գործերը:

Մեր կողմից իրականացվել են հետազոտական աշխատանքներ: Հետազոտության համակազմում ընդգրկվել են հետազոտական և ստուգիչ խմբեր: Հետազոտական խումբը կազմել են ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերի 21-30 տարեկան 100 երիտասարդներ, որոնցից 20-ը իգական սեռի ներկայացուցիչներ էին, իսկ 50-ը՝ արական: Ստուգիչ խմբում ընդգրկվել են ՀՀ Երևան քաղաքի 21-30 տարեկան 100 երիտասարդներ, որոնցից 50-ը ևս եղել են իգական սեռի ներկայացուցիչներ, իսկ 50-ը՝ արական:

Ստրես կայունության մակարդակը ուսումնասիրելու նպատակով իրականացվել է «Ստրես-կայունություն» Բոստոնյան տեսող:

Իրականացված չափման ընդհանուր արդյունքները, որոնք ստացվել են հետևյալ մեթոդիկայով, պատկերված են նկար 1-ում: Ինչպես երևում է ներկայացված տվյալներից, հիմնական խմբում ընդգրկված 50 կանանցից 0%-ի մոտ ստրես-կայունության մակարդակը շատ բարձր է, 3%-ի մոտ ստրես-կայունության մակարդակը բարձր է, 9%-ի մոտ այն գտնվում է միջին մակարդակում, 38%-ի մոտ այն ցածր մակարդակում է: Հիմնական խմբի 50 տղամարդկանցից 2%-ի մոտ ստրես-կայունության մակարդակը շատ բարձր է,

5%-ի մոտ այն գտնվում է բարձր մակարդակում, իսկ 22%-ի մոտ այն ցածր մակարդակում է: Ի տարբերություն հետազոտական խմբի՝ ստուգիչ խմբի կանանց մոտ ստրես-կայունության մակարդակը 8%-ի մոտ շատ բարձր է, 27%-ի մոտ բարձր, 9%-ի մոտ միջին, իսկ 6%-ի մոտ ցածր: Տղամարդկանց մոտ ստացված ցուցանիշները ցույց են տալիս, որ 11%-ի մոտ ստրես-կայունությունը գտնվում է շատ բարձր մակարդակում, 31%-ի մոտ այն բարձր մակարդակում է, 7%-ի մոտ այն միջին մակարդակում է, իսկ 1%-ի մոտ այն գտնվում է ցածր մակարդակում: Ինչպես երևում է նկար 1-ում պատկերված ցուցանիշներից հետազոտական խմբի կանանց մոտ ստրես-կայունության մակարդակը գտնվում է ցածր մակարդակում: Ստուգիչ խմբի ցուցանիշներից երևում է, որ ստրես-կայունությունը գտնվում է բարձր մակարդակում: Տղամարդկանց մոտ նկատելի է առավել բարձր ստրես-կայունության մակարդակ, քան կանանց մոտ: Նկար 1-ում պատկերված ցուցանիշները ցույց են տալիս, որ հիմնական խմբի մասնակիցների մոտ առկա է ստրես-կայունության ցածր մակարդակ, ինչը վկայում է այն մասին, որ սահմանամերձ գոտու երիտասարդների, հատկապես կանաց մոտ, կայունությունը ստրեսային իրավիճակների նկատմամբ ցածր է: Ստուգիչ խմբի մոտ առկա է ստրես-կայունության բարձր մակարդակ, ինչը ցույց է տալիս, որ նրանք կայունություն են ցուցաբերում ստրես գործոնների նկատմամբ: Բարձր կայունությունը ստրեսների նկատմամբ այնպիսի ունակություն է, որի շնորհիվ անձը կարողանում է անսովոր պայմաններում կայունություն ցուցաբերել ստրես գործոնների նկատմամբ:




Նկ. 1. Ստրես-կայունության մակարդակի ցուցանիշները

Մեր կողմից իրականացվել է նաև «Մուրյեկտիվ վերահսկման լոկուս» մեթոդիկան՝ ինտերնալ և էքստերնալ տիպերի հոգեբանական առանձնահատկությունները ստուգելու նպատակով: Այն ևս իրականացվել է հետազոտական երկու խմբերի հետ: Ինչպես երևում է նկար 2-ում պատկերված տվյալներից, հետազոտական խմբի 50 կանանցից 42%-ը էքստերնալ տիպի է,

իսկ 8%-ը ինտերնալ: Հետազոտական խմբի 50 տղամարդկանցից 35%-ը էքստերնալ տիպի է, իսկ 15%-ը ինտերնալ: Ստուգիչ խմբի 50 կանացից 19%-ը էքստերնալ տիպի է, իսկ 31%-ը ինտերնալ: Ստուգիչ խմբի 50 տղամարդկանցից 12%-ը էքստերնալ տիպի է, իսկ 38%-ը ինտերնալ:

Ստացված ցուցանիշները ցույց են տալիս, որ հետազոտական խմբի երիտասարդները էքստերնալ տիպի են, ինչը նշանակում է, որ իրենք իրենց վրա պատասխանատվության զգացում չեն վերցնում, անհանգիստ են, անկայուն, տարբերակվում են բարձր տագնապալիությամբ, ցածր կայունությամբ ստրես գործոնների նկատմամբ, չեն կարողանում կառավարել իրենց հետ կապված գործողությունները:



Նկ. 2. Ինտերնալ և էքստերնալ տիպերի հոգեբանական առանձնահատկությունները

Մեր կողմից իրականացվել է նաև հետազոտական խմբի կանանց և տղամարդկանց ցուցանիշների միջև կոռելյացիոն վերլուծություն: Կոռելյացիոն բոլոր գործակիցները ներկայացվել են $P \leq 0, 05$ նշանակալիության մակարդակում: Դրական կոռելյացիոն կապ հայտնաբերվեց հետազոտական խմբի կանանց ստրես-կայունության և էքստերնալ տիպի միջև ($0, 743$ $n=50$): Հակադարձ համեմատական կոռելյացիոն կապ նկատվեց կանանց ստրես-կայունության և ինտերնալ տիպի միջև ($-0, 610$ $n=50$): Նշանակալի կոռելյացիոն կապ նկատվեց իմնական խմբի տղամարդկանց ստրես-կայունության և էքստերնալ տիպի միջև ($r=0, 732$, երբ $n=50$): Հակադարձ համեմատական կապ հաստատվեց ստրես-կայունության և ինտերնալ տիպի միջև ($r=-0, 660$, երբ $n=50$):

Այսպիսով, աշխատանքի վերլուծությունից հանգում ենք հետևյալ եզրակացությունների՝

1. Մեր կողմից կատարված հետազոտություններն ու դիտարկումները ցույց տվեցին, որ մինչև այսօր ՀՀ Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերում առկա են անսովոր պայմաններ, որոնք կապված են թշնամու կողմից ժամանակ առ ժամանակ տեղի ունեցող մարտական գործողություններով:

2. Սահմանամերձ գոտու երիտասարդների համար կարևորագույն հիմնախնդիր է հանդիսանում առաջացած անսովոր պայմաններում ստրես-կայունություն պահպանելու ունակությունը:
3. Ստրես-կայունությունը մեր կողմից բնութագրվում է որպես արտակարգ պայմաններում ստրես գործոնների նկատմամբ հույզերի ինքնավերահսկման այնպիսի ունակություն, որի շնորհիվ անձը կարողանում է վերահսկել արտաքին միջավայրի փոփոխվող ազդակները՝ կայուն և հաստատուն պահպանելով հոգեվիճակները, տրամադրությունը, ինքնազգացողությունը, ակտիվությունը և ինքնագնահատականը:
4. Հաստատվել է ստրես-կայունության կապը ինքնավերահսկման ինտերնալ և էքստերնալ տիպերի հետ: Էքստերնալ տիպերը տարբերակվում են ստրեսների նկատմամբ անկայնությամբ, չեն կարողանում վերահսկել արտաքին միջավայրի անընդհատ փոփոխվող ազդակները: Ինտերնալ տիպերը ունեն ինքնավերահսկման բարձր ունակություն, որի շնորհիվ նրանք կայունություն են ցուցաբերում ստրեսների նկատմամբ և կարողանում են կառավարել իրենց հոգեվիճակները անսովոր պայմաններում:

А. С. КАМАЛЯН – Проявление психологических особенностей стрессоустойчивости молодежи пограничной зоны. - В статье изложены проявления психологических особенностей стрессоустойчивости молодежи пограничной зоны. В результате исследования и наблюдения мы пришли к следующим показаниям - до сегодняшнего дня пограничная зона находится в условиях продолжительного стресса, в следствии его нарушается стрессоустойчивость молодежи. Выше указанной постановке основной проблемой является изучение происходящих передвижений. Наши исследования направлены на проблему сохранения стрессоустойчивости, проявление которых обусловлен психологическими особенностями самоконтроля интернальным и экстернальным типом.

ОБУЧЕНИЕ ОПИСАНИЮ ВНЕШНОСТИ ЧЕЛОВЕКА

Л. М. АРУТЮНЯН

При описании внешности человека изображается его лицо, фигура, жесты, манеры, поза, одежда. Основное в этом описании – найти характерные особенности, главное во внешности конкретной личности, суметь передать их словами. Это может быть связано с особенностями глаз, манер, походки описываемого лица, с особенностями его занятий, с особенностями его характера - «со всем тем, что проявляется во внешнем облике человека». Труднее всего описать глаза, взгляд человека. Предлагаю цитаты из различных стихотворений русских поэтов, отрабатываю детали портрета.

«Мне ль позабыть огонь и живость твоих лазоревых очей...»

(Н. Языков)

«Закрылись прекрасные очи...»

(И. Клюшников)

«Светили мне твои пленительные глазки...»

(М. Лермонтов)

«Я вижу печальные очи и слышу веселую речь...»

(А. Толстой)

«Напрасно прозрачные глазки твои твердят блаженство любви...»

(А. Пальм)

«И, молчание ночи навсегда полюбя, я бессонные очи устремлю на тебя...»

(Ф. Сологуб)

«...то мягкий и ласкающий взгляд бархатных очей»

(А. Григорьев)

Отмечаем портретную лексику: лазоревые очи, прекрасные очи, пленительные глазки, печальные очи, прозрачные глазки, бессонные очи.

Глазки светят, глазки горят. Здесь глаголы употреблены в переносном значении, называют впечатление, производимое героями.

Представление о деталях портрета расширяется: в отрывках сказано о цвете глаз (лазоревые очи, прозрачные глаза).

«О чем ты льешь слезы из карих очей?»

(Дм. Ознобишин)

«Очи черные, очи страстные, очи жгучие и прекрасные»

(Евг. Гребенка)

«Глаза твои ленивые, ... и губы горделивые»

(Л. Мей)

Глаза по цвету бывают голубые, синие, стальные, серые, зеленые, карие, черные.

Кроме цвета глаз (карие очи, черные очи) в цитатах отражается состояние человека, характер (ленивые очи, страстные очи, жгучие очи). Мы видим, как многообразна портретная лексика. Авторы указывают на цвет глаз, состояние человека, не называя его, подчеркивают характер человека, обращают внимание на продолжительность взгляда.

У Лермонтова читаем: «Когда порой я на тебя смотрю, в твои глаза вникая долгим взором, таинственным я занят разговором, но не с тобой я сердцем говорю».

Подобрать антонимы к слову «долгий».

Долгий – беглый, долгий – короткий, долгий – мимолетный, долгий – мгновенный, долгий – стремительный.

Чтобы представление о деталях портрета расширялось, можно предложить подобрать антонимы к отдельным словам: глазки светят – глазки потухли; светлые глаза – темные глаза; веселые очи – грустные очи, прозрачные глаза – темные глаза.

Следующий этап – характеристика взгляда. О чем может говорить взгляд?

«Ее пугает взгляд безумный». (Дм. Ознобишин)

«Твой робкий взгляд, живые речи – все, все я, милый друг, понял». (Дм. Ознобишин)

Описать взгляд человека, у которого горе.

– Безмолвный, безжизненный, потухший, мертвый, невидящий, немой, неподвижный.

Указать антонимы к словам:

безмолвный – говорящий,

безнадежный – живой.

Выделить определения, которые дают оценки.

«И всех дарит надеждою пустой твой чудный взор, то нежный, то унылый». (А. Бестужев)

«... девы пленной манящий взор». (А. Бестужев)

«... услышал твой голос нежный и встретил милый взор». (М. Лермонтов)

«... взор спокойный, чистый твой». (М. Лермонтов)

«... встречал ли твой прелестный взор». (М. Лермонтов)

«... ее волшебный взор, и речи, и смех младенчески - живой».

«... твой смутный взор ... мне душу растерзал». (В. Красов)

В определениях: чудный, нежный, унылый, милый, чистый, прелестный, волшебный – даны оценки.

Подобрать синонимы к данным определениям:

чудный (чудесный) – прекрасный

нежный – ласковый

унылый – печальный

милый – привлекательный

чистый – ясный

прелестный – очаровательный

волшебный – пленительный

смутный – неясный, тревожный

Выделить определения, которые указывают на характер.

– Бархатный, бездонный, задорный, искрометный, лучистый, светлый, чудесный, энергичный, ясный, твердый, оживленный, понимающий.

- На характер указывают определения: задорный, энергичный, оживленный.

Во взгляде может выражаться чувство человека.

В стихотворении «Люблю тебя» (В. Т. Бенедиктов) читаем:

«...но страстный взор вдруг опустил, млея, когда твой взор суровый повстречал».

«Рано взор твой веселый потух». (В. Красов)

«Слеза дрожит в твоём ревнивом взоре». (М. Лермонтов)

«Я в одиночестве кидал свой взгляд смущенный». (М. Лермонтов)

- О каких чертах характера свидетельствует а) суровый взгляд, б) веселый взгляд.

О взгляде, глазах, можно говорить в сравнении с миром животных.

- Какие определения положительно характеризуют человека? Какие указывают на отрицательные черты?

Бараний, кошачий, собачий, змеинный, соколиный, орлиный, ястребинный (взгляд).

Положительно характеризуют человека определения: соколиный, орлиный. Остальные несут отрицательную оценку.

Взгляд может употребляться в переносном значении, характеризуя позицию человека, его мировоззрение. (Взгляд – мнение – суждение) разумный, ошибочный, отсталый, отживший, ложный, верный (взгляд).

Покажем и другие детали портрета.

– Какими могут быть волосы по цвету? Укажите форму, длину волос, причёску.

– Волосы по цвету могут быть белокурые, русые, пепельные, каштановые, черные.

Людей по цвету волос называют брюнетами, шатенами, блондинами.

По форме и длине волосы бывают волнистые, кудрявые, прямые, редкие, густые, жесткие, мягкие, длинные, короткие.

В стихотворении «Простоволосая головка» (П. Вяземский) читаем:

«Простоволосая головка, улыбчивость лазурных глаз ...»

Вл. Бенедиктов в стихотворении «Оправдание» пишет: «... касаясь душистых их кудрей лицом моим;- так! в памяти моей уже не было подруги прежних дней, и предан был я новому мечтанью».

«Мне ль позабыть огонь и живость твоих лазоревых очей, златистый шелк твоих кудрей и беззаботную игривость души лирической твоей?»

(«Элегия» Н. Языков)

Описать внешность женщины из стихотворения Языкова «Элегия» своими словами: голубоглазая женщина с золотистыми, шелковыми волосами.

Описать мальчика с карими глазами, черными волнистыми волосами, длинным овалом лица.

Кареглазый, длиннолицый мальчик с черными вьющимися волосами.

Девочку с зелеными глазами, каштановыми волосами, круглым овалом лица.

Зеленоглазая, круглолицая девочка с каштановыми волосами.

Мужчину высокого роста, худого, глаза стальные, волосы седые.
Высокий, худой мужчина, седоволосый, со стальными глазами.

ЛИТЕРАТУРА

1. Бенедиктов В. Г. «Люблю тебя»,
2. Красов В. И. «Стансы»,
3. Языков Н. М. «Элегия»,
4. Бестужев А. А. «Разлука»,
5. Озобишин Дм. П. «Зачем на краткое мгновенье»,
6. Гребенка Евг. П. «Черные очи», «Чудная бандура»,
7. Мей Л. Ал. «Зачем?»»,
8. Тютчев Ф. И. «О, как убийственно мы любим», «Я очи знал, - о, эти очи»,
9. Лермонтов М. Ю. «Любил с начала жизни я», «К Сушковой», «Первая любовь», «Из-под таинственной холодной полумаски»,
10. Ключников И. «Закрылись прекрасные очи»,
11. Толстой А. К. «Я вижу печальные очи»,
12. Пальм А. И. «Напрасно прозрачные глазки твои твердят блаженство любви».

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ – Մարդու արտաքինի նկարագրության ուսուցումը:

Մարդու արտաքինը շատ բան է ասում նրա էության մասին: Խոսում են մարդու աչքերը, հայացքը, ժպիտը, բոլոր դիմագծերը: Մարդու խառնվածքի մասին խոսում են նրա քայլվածքը, հագուստի ձևն ու գույները, սանրվածքն ու արդուզարդը:

Հոդվածում փորձ է արված բացահայտել մարդու արտաքինի մեջ նրա խառնվածքը բնութագրող, նրա ներաշխարհը բացահայտող գիծը և այն, թե ինչպե՞ս ճանաչել մարդուն ըստ այդ արտաքին հատկանիշների:

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ


ՄՏԵԿ (ՊԱՀՈՒՆԱԿ, ՀԻՇԱՏԻՐՈՒՅԹ)

Ք. Վ. ՕԹԱՐՅԱՆ

Ծրագրավորման բոլոր լեզուներում գոյություն ունի լոկալ փոփոխականներով ենթածրագրերի հասկացություն: Այդ փոփոխականները թույլատրելի են միայն ենթածրագրի կատարման ընթացքում, նրա ավարտից հետո հարց է առաջանում որտեղ պահպանել այդ փոփոխականները, որոնց հիշողությունում հնարավոր չէ հատկացնել բացարձակ հասցե: Բարդությամբ կայանում է նրանում, որ յուրաքանչյուր ենթածրագիր կարող է ինքն իրեն կանչել, իսկ եթե ենթածրագիրը կանչվում է կրկնակի, ապա նրա փոփոխականները կոնկրետ հասցեով հնարավոր չէ պահպանել, քանի որ 2-րդ կանչը խախտում է առաջին ֆունկցիայի արդյունքը: Հետևաբար կիրառվում է այլ ստրատեգիա. փոփոխականների համար ռեգերվացվում է հատուկ տիրույթ, որը կոչվում է ստեկ, որտեղ փոփոխականները բացարձակ հասցե չեն ստանում:

Ստեկը հատուկ կազմակերպումով հիշողություն է, որը ժամանակավոր պահպանում է ենթածրագրերի հաղորդած պարամետրերը և վերադարձի հասցեները, ընդհատումները:

Ստեկն աշխատում է LIFO (Last In First Out) սկզբունքով, այսինքն, ստեկում վերջին տեղաբաշխված էլեմենտը հեռացվում է առաջինը: Ստեկի ցուցիչի հասցեի համար օգտագործվում է պրոցեսորի SP ռեգիստրը, ընթացիկ ենթածրագրերի լոկալ փոփոխականների բազային հասցեի համար LV ռեգիստրը:



Նկ. 1 լոկալ փոփոխականների պահպանման ստեկ. ³⁾ *ա) ենթածրագրերի կատարման ժամանակ, բ) A(a) ենթածրագիրը կանչում է B(b) ենթածրագրին, գ) B(b) ենթածրագիրը կանչում է C(c) ենթածրագրին, դ) A() և B(b) ենթածրագրերը ավարտել են աշխատանքը, իսկ A() ենթածրագիրը կանչում է D(d) ենթածրագրին*

Նկ. 1-ում կանչվում է A ենթածրագիրը, որը ունի a1, a2, a3 լոկալ փոփոխականները, որոնց համար ռեգերվացված է հիշողություն սկսած LV-ի ցույց տված հասցեից, SP-ն ցույց է տալիս A ենթածրագրերի լոկալ փոփոխականների ավագ խոսքը փոփոխականներին անդրադառնալու համար, նրա տեղաշարժը պետք է հաշվել LV հասցեից: Պահունակն ունի հատուկ գագաթ: Գագաթի ընթացիկ շարժը արտապատկերվում է SP-ում: Գրառման ժամանակ նրա արժեքը փոքրանում է: Ենթածրագրերի կանչի ժամանակ նրա արժեքը գրանցվում է SP-ում, BP-ում գրանցվում է SP-ի ընթացիկ արժեքը: Եթե ենթածրագիրը օգտագործվում է լոկալ փոփոխականների պահպանման համար, իսկ BP-ն կարելի է օգտագործել որպեսզի արժեքը ընթերցվի պահունակից, շեղումը կլինի BP+պարամետրի համար:

```

OFFFFFCH
OFFFFF8H
OFFFFF4H
OFFFFF0H    ← BP= OFFFFF0H
OFFFFF8H
OFFFFF4H    ← SP= OFFFFF4H

```

Եթե LV ռեգիստրի արժեքը հավասար է 100, իսկ խոսքը կազմված է 4 բայթից, ապա SP-ի արժեքը կլինի 108:


LV և SP միջև տվյալի կառույցը կոչվում է **լոկալ փոփոխականների ֆրեյմ**:

Այժմ դիտարկենք ինչ է տեղի ունենում, երբ A(a) ենթածրագիրը կանչում է B(b) ենթածրագրին: Որտեղ պետք է պահպանվեն b1, b2, b3, b4 B(b) ենթածրագրերի լոկալ փոփոխականները:

Պատասխան. ինչպես ցույց է տրված նկ. 1 բ)-ում՝ ստեղծում A(a) ենթածրագրի համար նախատեսված հասցեներից վեր հասցեներում: Ենթածրագրի կանչից հետո LV-ն ցույց է տալիս B(b) ենթածրագրի լոկալ փոփոխականների հասցեն, որոնց կարելի է դիմել LV-ից սկսած տեղաշարժով: C(c)-ի կանչից հետո՝ նկ. 1 գ) LV-ն և SP-ն ցույց են տալիս C(c) ենթածրագրի փոփոխականներին: C(c) ենթածրագրի ավարտից հետո ստեղծն անցնում է նախկին վիճակին:

Ցանկացած պայմաններում LV ցույց է տալիս ստեղծային ֆրեյմի բազային հասցեն, իսկ SP-ն այդ ֆրեյմի վերջին խոսքը:

Ստեղծ օգտագործվում է ոչ միայն լոկալ փոփոխականների պահպանման համար, այլ նաև թվաբանական գործողությունների օպերանդների պահպանման համար, որը կոչվում է օպերանդների ստեկ:



Նկ. 2. ստեկի կիրառությունը թվաբանական գործողությունների օպերանդների համար

Դիցուք, B-ի կանչից առաջ A-ն պետք է կատարի $a1=a2+a3$ գործողությունը, որը կատարելու համար $a2$ պետք է տեղաբաշխել ստեկում: Այս դեպքում SP-ի պարունակությունը մեծանում է խոսքի բայթերի քանակով, որը ցույց կտա առաջին օպերանդի հասցեն: Այնուհետև ստեկում տեղաբաշխվում է $a3$ օպերանդը (նկ. 2 բ), այնուհետև կատարվում է $a2+a3$ գործողությունը և արդյունքը գրանցվում ստեկում (նկ. 2 գ): Հետո (նկ. 2 դ) ստեկի վերին խոսքն ազատվում է, որովհետև արդյունքը գրանցվում է $a1$ փոփոխականի հասցեում:

Հնարավոր է ստեկի աշխատանքի 3 ռեժիմ:

1. SP-ի մեծացում և գրանցում (push) $\rightarrow \overline{FE} = 0$
2. SP-ի փոքրացում և ընթերցում: (pop) $\rightarrow \overline{FE} = 0$ pop=0
3. Ընթերցում առանց SP-ի փոփոխության $\overline{FE} = 1$, pop = x (կամ 1)
 $\overline{FE}$ -ն ստեկի աշխատանքի թույլատրման ազդանշան է:

C++ գրադարանից ստեկի ղեկավարման ֆունկցիա

C++ գրադարանը պարունակում է ստեկի ղեկավարման ֆունկցիա: Ծրագրի թարգմանությունից հետո կոմպիլատորը անհրաժեշտության դեպքում գեներացնում է այդ ֆունկցիայի կանչը: Նա ապահովում է ստեկից հոսքի հաղորդում հիշողության ֆիզիկական հասցե:

Օրինակ, ներկայացված ֆունկցիան պահանջում է իր լոկալ փոփոխականների համար հիշողության զանգված:

```
void SomFunction()
```

```
{Int nvalues[4000];
```

```
...
```

```
nvalues[0]=0;}
```

Նրա տեղաբաշխման համար պահանջվում է 16000 բայթ ստեկային տիրույթ, քանի որ յուրաքանչյուր ամբողջ արժեք զբաղեցնում է 4 բայթ:

Ծրագրում հանդիպելով որևէ ֆունկցիայի, կոմպիլատորը որոշում է ստեկի պահանջվող ծավալ, եթե այն գերազանցում է մեկ էջի չափը, ստեկը տեղադրվում է ղեկավարող ֆունկցիայի կանչ:

Ներկայացվող կոդը ստեկը ղեկավարող ֆունկցիայի գործընթաց է:

```
#ifdef _M_ALPHA
```

```
#define PAGESIZE(8*10240) // 8 կբայթ էջ
```

```
#else
```

```
# define PAGESIZE(4*10240) // 4 կբայթ էջ
```

```
#endif
```

```
Void StackCheck(int nBytesNeededFromStack)
```

```
{
```

```
PBYTE pbStackPtr=(SP);
```

```
While (nBytesNeededFromStack >= PAGESIZE)
```

```
{
```

```

pbStackPtr- = PAGESIZE;
pbStackPtr[0]=0;
nBytesNeededFromStack - = PAGESIZE;
}
}

```

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Таненбаум Э., Многоуровневая организация ЭВМ, М., Мир, 2003.
2. Рихтер Дж., WINDOWS для профессионалов, Питер, 2004.
3. Борзенко А., IBM PC, Устройство, Модернизация, М., 2000.
4. Хамахер К., Впанешич З., Заки С., Организация ЭВМ, Питер, 2004.

К. В. ОТАРЯН – *Стек*. – В работе рассматривается понятие процедуры с локальными переменными. Эти переменные доступны во время выполнения процедуры, но перестают быть доступными после окончания процедуры. Возникает вопрос: где должны храниться такие переменные. Но предоставить каждой переменной абсолютный адрес в памяти невозможно. Для переменных резервируется особая область памяти, которая называется стеком. Как пример введено управляющая функция из библиотеки C ++.

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏԱՊՏՂԱՅԻՆ ԿԵՆՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ԿԱՆԱՉԱՊԱՏՄԱՆ ՄԵԶ

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վ. Լ. ԲԱԴՄԱԼՅԱՆ

Բնակավայրերի կանաչապատումը քաղաքաշինության կարևորագույն օղակներից մեկն է, որի շնորհիվ բնակավայրերում ստեղծվում են տարբեր տիպի ու կարգի կանաչ տնկարկներ, ինչը սանիտարահիգիենիկ նպաստավոր պայմաններ ստեղծելուց բացի, գեղագիտական բավականություն է հաղորդում մարդկանց, ինչպես նաև առանձնակի շուրջ՝ ճարտարապետական կառույցներին:

Հայաստանը գտնվելով իրարից խիստ տարբեր՝ Կովկասյան խոնավ և արմենո-անատոլիական ու իրանական ցամաքային բուսաաշխարհագրական մարզերի շփման սահմանագոտում, ձևավորել է հայկական լեռնաշխարհին բնորոշ յուրահատուկ կլիմա, որով էլ պայմանավորված է մեր երկրի դենդրոֆլորայի հարուստ կենսաբազմազանությունը՝ 54 ընտանիքի, 118 ցեղի պատկանող 323 տեսակներ²⁵¹:

Հայաստանի դենդրոֆլորայի մի շարք ծառաբույսեր՝ կազակական, սրաթեփուկ, ցածրաձ գլխիները, դաշտային, սրատերև, բարձրլեռնային թխկիները, նրբագեղ բարդին, դրախտածառը, Լիտվինովի և ելունդավոր կեչիները, նեղատերև փշատենին, սովորական հացենին, արևելյան սոսին, սովորական նոնենին, մանրատերև լորենին, կովկասյան սրնգենին, գերիմաստին, սև կտտկենին, սովորական բոնչին, հոնին, հայկական, կովկասյան սզնիները, սովորական կիպրոսը, դժնիկանման չիչխանը, հարավային ճապկին, այծի ցախակեռասը, սովորական կծոխուրը, սովորական բաղեղը և հունական շրջահյուսը՝ շնորհիվ մի շարք գեղազարդ արժանիքների, օգտագործվում են հանրապետության բնակավայրերի կանաչապատման տարբեր տիպերում ու կարգերում:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի դենդրոֆլորայում բացի վերոհիշյալ տեսակներից հանդիպում են նաև ՀՀ Կարմիր գրքում ընդգրկված բարձր գեղազարդ հատկանիշներ ունեցող մի շարք ծառաբույսեր՝ հատապտղային կենի (*Taxus baccata* L.), արջատիլենի (*Corylus columa* L.), Կովկասյան մրտավարդ (*Rhododendron caucasicum* Pall.), Հուդայածառ Գրիֆիթի (*Cercis griffithii* Boiss.), որոնք կանաչապատման մեջ ընդհանրապես չեն օգտագործվում: Վերջիններիս օգտագործումը կանաչապատման մեջ կանաչ տնկարկների գեղազարդությունը բարձրացնելուց բացի, մասնակիորեն կարող է լուծել նաև

²⁵¹ Տե՛ս Մ. Հ. Վարդանյան, Ծառագիտություն, Եր., 2005, էջ 263:

նրանց պահպանությունը և հարստացումը, որի վառ օրինակ է արևելյան սոսին (*Platanus orientalis* L.), որը յուրաքանչյուր տարի նոր տարածքներ է զբաղեցնում կանաչապատման մեջ:

Այս տեսանկյունից ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում երրորդական ժամանակաշրջանի ռելիկտ՝ հատապտղային կենին, որը աչքի է ընկնում բարձր գեղագարդությամբ և միանգամայն արժանի է բնակավայրերի կանաչապատման գործընթացների համար:



Հատապտղային կենին (*Taxus baccata* L.) կենազգիների (*Taxaceae*) ընտանիքին պատկանող 15-20 (30) մ բարձրության, մինչև 150 սմ բնի տրամագծով երկտուն, հազվադեպ միատուն ասեղնատերևավոր ծառ է²⁵²: Նշենք, որ Հայաստանի անտառներում կենին հանդիպում է Դիլիջանի, Իջևանի, Ալավերդու, Նոյեմբերյանի, Բերդի և Կապանի տարածաշրջաններում, որտեղ ծառերն ունեն 10-15 մ բարձրություն և 60 սմ բնի տրամագիծ (Բերդի տարածաշրջանում հայտնաբերվել է 120 սմ տրամագծով կոճղ):

Հատապտղային կենու սաղարթը բավականին խիտ է, ձվաձև, կեղևը հարթ է, բարակ, ունի կարմրագորշավուն գույն, մեծանալուն զուգընթաց այն ճաքճքվում և թիթեղների տեսքով անջատվում է բնից: Շնորհիվ հզոր արմատային համակարգի այս տեսակը բավականին քամադիմացկուն է: Ասեղնատերևները 2-3, 5 ս, երկարությամբ, տափակ, գծաձև, սրածայր, վերին կողմում մուգ կանաչ, իսկ ստորինում բաց կանաչավուն են, ապրում են 6-8 տարի: Արական ծաղկաբույլերը գնդաձև են, իսկ իգականները միայնակ, մանր և անշուք, դրան հակառակ պտուղները շնորհիվ վառ կարմիր գույնի գեղազարդ տեսք են հաղորդում ծառերին:

Կենին հանդիսանում է շատ երկարակյաց ծառատեսակ՝ ապրում է 1000-3000, երբեմն մինչև 4000 տարի: Աճում է շատ դանդաղ՝ մեկ վեգետացիայի ընթացքում ընդամենը՝ 3-5 սմ: Բավականին ստվերատար է, դիմանում է 25-30°C սառնամանիքներին, պահանջկոտ է հողի և օդի խոնավության նկատմամբ, փոշե-գազադիմացկուն է: Շատ լավ է տանում արհեստական խուզումը, որի արդյունքում կարելի է ստանալ կանաչ պատեր, կենդանի ցանկապատեր: Բազմանում է սերմերով, կտրոններով: Հատապտղային կենին պարունակում է տաքային թունավոր նյութ, որի համար էլ նրա բոլոր օրգանները, բացառությամբ պտղամսի, թունավոր են կենդանիների և մարդկանց համար²⁵³:

Հայաստանի հատկապես հյուսիս-արևելյան շրջանների, մասամբ Սյունիքի և Արցախի բնակավայրերում կանաչ շինարարության մեջ հատապտղային կենին և նրա պարագիտային ձևերը՝ «*Semperaurea*», «*Rependens Aurea*», «*Fastigiata*», «*Fructo-luteo*», հարստացումը, «*Hesseii*», «*Nidiformis*», «*Summergold*», «*Nana*», «*Pendula*», «*Erecta*», «*Compacta*», «*Horizontalis*» ներդնելու նպատակով մեր կողմից «Ջրվեժ» անտառպարկում, Աբովյան քաղաքում և Իջևանի դենդրոպարկում 2008 թ-ից սկսած փորձեր են կատարվել աճեցման և բազմացման ուղղությամբ: Հետազոտությունների համար կենու սերմերը և կտրոնները մթերվել են Բերդի և Դիլիջանի տարածաշրջաններից: Սերմերը ցանվել են 1 բաժին տորֆից, 1 բաժին ավազից 3 բաժին սևահողից պատրաստված հողախառնուրդներով լցված բազմաբուն արկղերում, իսկ կտրոնները «Կառնին» խթանիչով մշակելուց հետո դրվել են արմատակալման հողախառնուրդի վրա լցված 7-8 սմ հաստությամբ պեռլիտի շերտի մեջ:

²⁵² Տե՛ս Լ. Վ. Հարությունյան, Հայաստանի դենդրաֆլորան, Գիրք 1-ին, Եր., 1985, էջ 263:

²⁵³ Տե՛ս Լ. Վ. Հարությունյան, Հայաստանի դենդրաֆլորան, Գիրք 1-ին, Եր., 1985, էջ 263:

«Դիլիջան» ազգային պարկից սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, պտուղների հասունացման փուլում հավաքվել են պտուղները, ջրի մեջ մաքրվել են պտղամսից և առանձնացվել են սերմերը: Սերմերը թեթևակի չորացնելուց հետո ենթարկվել են ստրատիֆիկացիայի: Ցանքը կատարվել է երեք տարբերակով՝ առաջին տարբերակում սերմերը ցանվել են նույն տարվա աշնանը, երկրորդ տարբերակում՝ հաջորդ տարվա գարնանը և երրորդ տարբերակում՝ հաջորդ տարվա աշնանը: Հարկ է նշել, որ ցանված սերմերը բոլոր տարբերակներում էլ դեռևս չեն ծլել, այս ուղղությամբ փորձերը շարունակվում են:

Հատապտղային կենու, ինչպես նաև որոշ պարազիտային ձևերի վեգետատիվ բազմացման նպատակով սերմերի մթերմանը զուգընթաց մթերվել են 3-4 տարեկան, 15-20 սմ երկարությամբ, գագաթնային ճյուղավորվածությամբ ընձյուղներ: Կտրոնների հիմքային մասում հեռացվել են ասեղնատերևները և դրվել արմատակալման:

Հոկտեմբերի վերջին տասնօրյակում «Ջրվեժ» անտառպարկում, Աբովյան քաղաքում, Իջևանի դենդրոպարկում արմատակալման են դրվել 100 կտրոններ, «Ջրվեժ» անտառպարկում և Աբովյան քաղաքում դրված կտրոնները ձմռանը տեղափոխվել են սառը ջերմատուն: Նախնական արդյունքներից պարզվել է, որ կտրոնների կալյուսապատման և արմատակալման պրոցեսը սկսում է տեղի ունենալ 4-6 ամսից: Արմատակալման միջին ցուցանիշը նախնական տվյալներով կազմում է շուրջ 40%: Ուսումնասիրությունները և փորձերը ընդլայնվում և շարունակվում են:

Ելնելով հետազոտությունների նախնական արդյունքներից կարծում ենք հատապտղային կենին շնորհիվ իր բարձր գեղազարդության միանգամայն հեռանկարային է Հայաստանի հյուսիս-արևելյան, ինչպես նաև հարավային հովտային շրջանների բնակավայրերի կանաչապատման տարբեր տիպերի ու կարգերի, իսկ մնացած տարածաշրջանների բնակավայրերում՝ հատկապես Երևանում նաև ձմեռային այգիների և ինտերերների կանաչապատման ու ձևավորման համար: Հատապտղային կենին և նրա պարազիտային ձևերը կարելի է օգտագործել ծառուղիներում, խմբակային կոմպոզիցիաներում, քարապարտեզներում, ինչպես նաև որպես մենաձառ (սոլիտեր):

А. А. Григорян, В. Л. Бадалян – Перспективы применения тисса ягодного в озеленении. - В настоящее время больше внимание уделяется озеленению населенных пунктов, поскольку зеленые насаждения кроме улучшения санитарогигиенических условий придают эстетическое наслаждение людям. Исходя из вышесказанного авторы в разных климатических зонах республики (Ереван, Абовян, Иджеван) изучили экологобиологические особенности и способы размножения реликта третичного периода - Тисс ягодный (*Taxus baccata* L.), который отличается высокодекоративными достоинствами. Предварительные исследования показали, что Тисс ягодный перспективен для различных типов и категорий озеленений в населенных пунктах Северо-восточной Армении, а в городах полупустынных зон только лишь для зимних садов.

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ՓՈԽԱՅԻՆ ԱՆՑՄԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ
ՆՄՈՒՇԻ ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ
ԶԱՓՄԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

Ն. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

1. Ներածություն

Ավտոմատիկայի, էլեկտրոտեխնիկայի, ռադիոտեխնիկայի և համակարգչային սարքերի բուռն զարգացման արդյունքում մեծ նշանակություն են ձեռք բերում մագնիսական երևույթների և նյութերի բազմաձևավալ հետազոտությունները: Վերջին տասնամյակներում մագնիսական երևույթների ֆիզիկական և տեխնիկայի որոշ տիրույթները բուռն զարգացում կրեցին շնորհիվ հազվագյուտ հողային մետաղներում (Հ.Հ.Մ.) և նրանց բազմաքանակ միացություններում հայտնաբերված մագնիսական կարգավորվածությունների [1]: Ֆերոմագնիսականության, հակաֆերոմագնիսականության և ֆերիմագնիսականության ուսումնասիրությունները իրենցից մեծ հետաքրքրություն են ներկայացնում գիտական և կիրառական տեսանկյուններից: Երևույթների մանրակրկիտ ուսումնասիրությունները մագնիսական ձևավորման ջերմաստիճանային տիրույթում նպաստում են այն պայմանների բացահայտմանը, որոնցում առաջանում են կամ անհետանում են նյութի ֆերոմագնիսական կամ էլ հակաֆերոմագնիսական վիճակները [2]: Դա հնարավորություն է տալիս ճշգրիտ պատկերացում կազմել նյութի տվյալ մագնիսական վիճակը բնութագրող ինքնաբերական մագնիսականացման բնույթի մասին:

Երևույթների ուսումնասիրությունը մագնիսական ձևափոխումների տիրույթում նշանակություն ունի նաև ջերմոդինամիկայի տեսանկյունից, քանի որ ֆերոմագնիսական և հակաֆերոմագնիսական ձևափոխումները իրենցից երկրորդ կարգի փուլային անցման վառ օրինակ են ներկայացնում [3]: Առաջին կարգի փուլային անցումները բնութագրվում են ջերմոդինամիկական $\Phi(T, P, H)$ պոտենցիալի անընդհատ փոփոխմամբ: Սակայն նրա $\Phi'(T, P, H)$ ածանցյալը թռիչքաձև է փոփոխվում: Քանի որ $\partial \Phi / \partial T = Q$ և $\partial \Phi / \partial H = I$, ապա այստեղ թռիչքաձև են փոխվում նաև Q ջերմաքանակը և I մագնիսականացումը: Երկրորդ կարգի փուլային անցումները բնութագրվում են $\Phi(T, P, H)$ “ $\Phi'(T, P, H)$ ”-ի անընդհատ փոփոխմամբ, սակայն կրում է թռիչքաձև փոփոխություն $\Phi''(T, P, H)$ -ը: Դա նշանակում է, որ թռիչքային են փոփոխվում $\Delta Q / \Delta T = C$ ջերմունակությունը և $\Delta I / \Delta T$ մեծությունը: Դիտարկվող անցումները իրենցից ներկայացնում են կարգավորվածություն-անկարգավորվածություն մագնիսական փուլային անցումներ [4]: Այս անցումները բնութագրվում են $\eta = I_s / I_0$, այսպես կոչված, կարգավորվածության պարամետրով: Թիվ 1 նկարում ցույց է տրված առաջին (α) և երկրորդ (ρ) կարգի մագնիսական անցումներում


դիտվող ինքնաբերական մագնիսականացման սխեմատիկ փոփոխությունը T_c Կյուրիի ջերմաստիճանի տիրություն:

Մագնիսացված նմուշի բնութագրման համար հաճախակի օգտագործվում է դաշտի B մագնիսական ինդուկցիան.

$$\vec{B} = \vec{H} + \mu \vec{H} \text{ և } \vec{B} = \mu \vec{H} \tag{1.1}$$

որտեղ $\mu = 1 + 4\pi \chi$ նյութի մագնիսական թափանցելիությունն է:

$\chi = I/H$ համեմատականության գործակիցն է I – մագնիսականացման և H դաշտի լարվածության միջև, որը կոչվում է նյութի մագնիսական թափանցելիություն:



Նկ. 1

2. Սարքի նկարագրումը և ստացված արդյունքները

Մագնիսական փուլային անցումներն ուսումնասիրելու համար գոյություն ունեն մի շարք փորձարարական եղանակներ [5]: Մագնիսական ընկալունակության չափման առավել ճշգրիտ եղանակներից է հանդիսանում մակածման եղանակը: Սարքի աշխատանքի սկզբունքը (նկ. 2) կայանում է նրանում, որ մագնիսական դաշտում տեղադրված նմուշը (1) թիվ (12) սոլենոիդում մակածում է էլՇՈւ: Սոլենոիդի վրա տեղադրված է երկու միմյանց հետ հաջորդաբար միացված և հակառակ ուղղությամբ փաթաթված կոճերից բաղկացած չափող կոճը (4): Սարքի տրամաչափումը կատարվել է նախապես հայտնի ընկալունակությամբ հազվագյուտ հողային մետաղի՝ տերբիումի (Tb) օգնությամբ: Թիվ (12) սոլենոիդը սնվում է ԴՅ – 12 ձայնային գեներատորից: Մագնիսական դաշտում տերբիումի չափանմուշից չափող կոճում առաջացած ազդանշանը ուժեղացվում է և գրանցվում $B - 6 - 9$ վոլտմետրով (7): Տերբիումի մագնիսական ընկալունակության համար կարելի է գրել.

$$\chi_{Tb} = \alpha U_{Tb} / m_{Tb}, \tag{2.1}$$

որտեղ α - ն սարքի հաստատունն է, U_{Tb} - չափող կոճի վրա առաջացած լարումն է: Նմուշի մագնիսական ընկալունակության համար կարելի է գրել.

$$\chi_{inf} = \alpha U_{inf} / m_{inf}: \tag{2.2}$$

Տեղադրելով α – ի արժեքը 1.1 – ից՝ կստանանք.


$$\chi_{\text{տ}} = (\chi_{\text{Tb}} m_{\text{Tb}} / U_{\text{Tb}}) \times (U_{\text{տ}} / m_{\text{տ}}) \quad 2.3$$

Այսպիսով հայտնի α -ի դեպքում $m_{\text{տ}}$ զանգվածով նմուշի մագնիսական ընկալունակության չափման համար բավարար է չափել չափող կոճի վրա առաջացած $U_{\text{տ}}$ լարումը:


Տվյալ սարքը հնարավորություն է տալիս չափումներ անցկացնել ջերմաստիճանային լայն տիրույթում (78 Կ-ից մինչև 350 Կ): Ջերմաստիճանի չափման համար նմուշին կից տեղադրված է պղինձ-կոնստանտան ջերմազույգի տաք ծայրը (13): Ջերմաէլշուն չափվում է թիվ (8) միկրովոլտմետրով: Նմուշը տաքացնող (2) ջեռուցիչը սնվում է (9) հաստատուն հոսանքի աղբյուրից:

Նկ. 3-ում ներկայացված են հազվագյուտ հողային մետաղների պարունակվող համաձուլվածքների մագնիսական ընկալունակության չափման արդյունքները:

Ինչպես տեսնում ենք գրաֆիկներից, հստակ կերպով կարելի է որոշել տարբեր նմուշների մագնիսական փուլային անցումների (ֆերոմագնիսականություն – հակաֆերոմագնիսականություն) Կյուրիի ջերմաստիճանները (8):



Նկ. 2



Նկ. 3

Հարկ է նշել, որ աշխատանքը, բացի գիտական արժեքներից, կրում է նաև գիտամեթոդական նշանակություն, քանի որ պատրաստված սարքը հնարավորություն կտա ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնագիտական ֆակուլտետի ուսանողներին մասնակից լինել զանազան փորձարարական գիտական աշխատանքներին և կատարել ավարտական աշխատանքներ:

Աշխատանքն իրականացվել է Երևանի Պետական Համալսարանի Իջևանի մասնաճյուղի թիվ 152 ծածկագրով գիտական թեմայի ֆինանսավորման շրջանակներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. С. А. Никитин, Магнитные свойства редкоземельных металлов. Изд-во МГУ, 1982г.
2. Е. В. Кузьмин и др. Физика магнитоупорядоченных веществ. Москва, 1976г.
3. К. П. Белов, Магнитные превращения. Москва, 1959 г.
4. С. А. Никитин, Н. П. Арутюнян, ЖЭТФ. 1978, т. 75 вып. 6, стр. 2179 – 2182.
5. В. И. Чечерников, Магнитные измерения. Изд-во МГУ. 1963 г.
6. Э. В. Агабабян, Н. П. Арутюнян, Известия НАН Армении, Физика, т. 44 N 4, с. 294 – 297 (2009)

Н. П. АРУТЮНЯН – Обнаружения магнитного фазового перехода в образце измерением его магнитной восприимчивости. - Для исследования магнитных свойств магнитоупорядоченных веществ сконструирована установка для измерения магнитной восприимчивости образца в постоянном магнитном поле 3 кэрстед в температурной области от 78К до 350К индукционным методом. Принцип работы установки заключается в том, что образец, помещенный в магнитном поле, индуцирует в соленоиде ЭДС. Сигнал разбаланса измеряется измерительной катушкой, которая состоит из двух в противоположных направлениях намотанных, последовательно соединенных и скомпенсированных двух катушек. Калибровка установки осуществлялась при помощи порошкообразного тербия с известной магнитной восприимчивостью. Температура образца измерялась термопарой медь-константан.

Из температурной зависимости магнитной восприимчивости были определены температуры Кюри магнитных фазовых переходов ферромагнетизм-антиферромагнетизм магнитоупорядоченных образцов с различными стехиометрическими составами.

Следует отметить, что наряду с научной ценностью работа имеет также научно-методическое значение, поскольку сконструированная установка для измерения магнитной восприимчивости позволит студентам естественного факультета Иджеванского филиала ЕГУ принимать активное участие в физических экспериментах по магнетизму, а также выполнять дипломные работы по физике твердого тела.

ОБ ОДНОМ КЛАССЕ ПЛАНАРНЫХ ДВУДОЛЬНЫХ ГРАФОВ, НЕ ИМЕЮЩИХ ИНТЕРВАЛЬНОЙ РЕБЕРНОЙ РАСКРАСКИ

Р. Р. КАМАЛЯН

Множество вершин и множество ребер неориентированного конечного графа G без кратных ребер и петель [1] обозначаем, соответственно, через $V(G)$ и $E(G)$. Через $d_G(x)$ обозначаем степень вершины $x \in V(G)$ в графе G , а максимальную из степеней вершин графа G обозначаем через $\Delta(G)$. Функция $\varphi: E(G) \rightarrow \{1, 2, \dots, t\}$ называется правильной реберной t -раскраской графа G , если цвета любых двух смежных ребер различны и для $\forall i, 1 \leq i \leq t$, существует хотя бы одно ребро цвета i . Множество цветов, используемых при правильной реберной t -раскраске φ графа G для ребер, смежных вершине $x \in V(G)$, обозначаем через $S_G(x, \varphi)$. Множество вершин графа G , смежных вершине $x \in V(G)$, обозначим через $I_G(x)$.

Мощность произвольного конечного множества A обозначаем через $|A|$. Для произвольного непустого конечного подмножества D множества $\mathbb{N}$ через $l(D)$ и $L(D)$ обозначаем, соответственно, его наименьший и наибольший элемент. Непустое конечное подмножество D множества $\mathbb{N}$ называется интервалом, если из $l(D) \leq t \leq L(D)$, $t \in \mathbb{N}$ вытекает $t \in D$. Интервал D назовем h -интервалом, если $|D| = h$. Правильную реберную t -раскраску φ графа G назовем интервальной t -раскраской, если для $\forall x \in V(G)$ $S_G(x, \varphi)$ является $d_G(x)$ -интервалом.

Задача о существовании интервальной реберной раскраски в произвольном графе NP -полна [2, 3].

В настоящей работе приведен пример планарного двудольного графа, который не имеет интервальной реберной раскраски.

Теорема. Для $\forall n \geq 6$ существует планарный двудольный граф G с $|V(G)| = 3n + 5$, который не имеет интервальной реберной раскраски.

Доказательство. Выберем произвольное $n \geq 6$. Определим двудольный граф $G = G(X, Y, E)$ (рис.1). Положим

$$\begin{aligned} X &\equiv \{x_1, x_2, \dots, x_{3n}, \tilde{x}\}, \quad Y \equiv \{y_1, y_2, y_3, \tilde{y}\}, \\ E &\equiv \{(\tilde{y}, x_i) \mid 1 \leq i \leq 3n\} \cup \{(y_1, x_i) \mid 1 \leq i \leq n\} \cup \{(y_2, x_i) \mid n+1 \leq i \leq 2n\} \cup \\ &\cup \{(y_3, x_i) \mid 2n+1 \leq i \leq 3n\} \cup \{(\tilde{x}, y_1), (\tilde{x}, y_2), (\tilde{x}, y_3)\}. \end{aligned}$$

Ясно, что G является планарным графом, $\Delta(G) = 3n$, $|E(G)| = 6n + 3$.

Докажем, что G не имеет интервальной реберной раскраски.




Рис. 1

Допустим противное. Тогда существует t_0 , где $3n \leq t_0 \leq 6n + 3$, для которого существует интервальная t_0 – раскраска φ графа G .

Ясно, что существуют i_0 и j_0 , удовлетворяющие неравенству $1 \leq i_0 < j_0 \leq 3n$, такие, что $\left| \varphi\left(\left(\tilde{y}, x_{j_0}\right)\right) - \varphi\left(\left(\tilde{y}, x_{i_0}\right)\right) \right| = 3n - 1$. Из соображений симметрии ясно, что, не ограничивая общность рассуждения, можно считать, что $x_{i_0} \in I_G(y_1)$.

Случай 1. $x_{j_0} \in I_G(y_1)$.

Так как φ является интервальной раскраской графа G , то верны соотношения

$$\begin{aligned} \left| \varphi\left(\left(\tilde{y}, x_{i_0}\right)\right) - \varphi\left(\left(x_{i_0}, y_1\right)\right) \right| &= \left| \varphi\left(\left(\tilde{y}, x_{j_0}\right)\right) - \varphi\left(\left(x_{j_0}, y_1\right)\right) \right| = 1, \\ \left| \varphi\left(\left(x_{i_0}, y_1\right)\right) - \varphi\left(\left(x_{j_0}, y_1\right)\right) \right| &\leq n. \end{aligned}$$

Отсюда следует, что

$$\begin{aligned} 3n - 1 &= \left| \varphi\left(\left(\tilde{y}, x_{i_0}\right)\right) - \varphi\left(\left(\tilde{y}, x_{j_0}\right)\right) \right| \leq \left| \varphi\left(\left(\tilde{y}, x_{i_0}\right)\right) - \varphi\left(\left(x_{i_0}, y_1\right)\right) \right| + \\ &+ \left| \varphi\left(\left(x_{i_0}, y_1\right)\right) - \varphi\left(\left(x_{j_0}, y_1\right)\right) \right| + \left| \varphi\left(\left(x_{j_0}, y_1\right)\right) - \varphi\left(\left(\tilde{y}, x_{j_0}\right)\right) \right| \leq n + 2, \end{aligned}$$

что противоречит выбору n .

Случай 2. $x_{j_0} \notin I_G(y_1)$.

Очевидно, без ограничения общности рассуждения можно считать, что $x_{j_0} \in I_G(y_2)$.

Так как φ является интервальной раскраской графа G , то верны соотношения

$$\begin{aligned} \left| \varphi((\tilde{y}, x_{i_0})) - \varphi((x_{i_0}, y_1)) \right| &= \left| \varphi((y_2, x_{j_0})) - \varphi((\tilde{y}, x_{j_0})) \right| = 1, \\ \left| \varphi((y_1, \tilde{x})) - \varphi((\tilde{x}, y_2)) \right| &\leq 2, \\ \left| \varphi((x_{i_0}, y_1)) - \varphi((y_1, \tilde{x})) \right| &\leq n, \\ \left| \varphi((y_2, \tilde{x})) - \varphi((y_2, x_{j_0})) \right| &\leq n. \end{aligned}$$

Отсюда следует, что

$$\begin{aligned} 3n - 1 &= \left| \varphi((\tilde{y}, x_{i_0})) - \varphi((\tilde{y}, x_{j_0})) \right| \leq \left| \varphi((\tilde{y}, x_{i_0})) - \varphi((x_{i_0}, y_1)) \right| + \\ &+ \left| \varphi((x_{i_0}, y_1)) - \varphi((y_1, \tilde{x})) \right| + \left| \varphi((y_1, \tilde{x})) - \varphi((y_2, \tilde{x})) \right| + \\ &+ \left| \varphi((y_2, \tilde{x})) - \varphi((y_2, x_{j_0})) \right| + \left| \varphi((y_2, x_{j_0})) - \varphi((\tilde{y}, x_{j_0})) \right| \leq 2n + 4, \end{aligned}$$

что противоречит выбору n .

Теорема доказана.

ЛИТЕРАТУРА

1. Харари Ф., Теория графов, М.: Мир, 1973, 300 с.
2. Камалян Р. Р., Интервальные реберные раскраски графов, кан. дисс., ИМ СО АН СССР, Новосибирск, 1990, 103 с.
3. Гэри М., Джонсон Д., Вычислительные машины и труднорешаемые задачи, М.: Мир, 1982, 416 с.

Ռ. Ռ. ՔԱՄԱԼՅԱՆ – Միջակայքային կողային ներկում չունեցող հարթվող երկկողմանի գրաֆների մի դասի մասին: - Աշխատանքում նկարագրված է միջակայքային կողային ներկում չունեցող հարթվող երկկողմանի գրաֆների դաս:

ԼԱՊԼԱՍԻ ԶԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՈՐՈՇ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Գ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

1. Նախաբան

Լապլասի ձևափոխությունը ծնվում է Ֆուրիեի ձևափոխությունից [5], [6] ուստի պահպանում է նրա հատկությունները, բայց միաժամանակ Լապլասի ձևափոխությունը կիրառելի է ֆունկցիաների էապես լայն դասի համար:

Սահմանում 1: Դիցուք $F(t)$ ֆունկցիան որոշված է ամբողջ առանցքի վրա, $F(t) = 0, t < 0$ և բավարարում է հետևյալ պայմանին՝

$$\exists M > 0, \exists \alpha > 0, \forall t > 0 \quad |F(t)| \leq Me^{\alpha t} \quad (1)$$

Այս ֆունկցիայի **Լապլասի ձևափոխություն** է կոչվում՝

$$L[F(t)](s) = \int_0^{+\infty} e^{-st} F(t) dt = f(s), \quad (2)$$

որտեղ $s = x + iy$ կոմպլեքս փոփոխական է: (1)–ից հետևում է, որ (2)–ում գրված ինտեգրալը բացարձակ զուգամետ է, երբ $Res = x > \alpha$:

Այն ֆունկցիան, որի վրա ազդում է Լապլասի օպերատորը նշանակում են մեծատառով և անվանում **նախապատկեր**, իսկ ազդեցության արդյունքը՝ **պատկեր** և նշանակում են համապատասխան փոքրատառով՝ $f(s)$: Գրում են նաև՝ $F(t) \circ - \bullet f(s)$, կամ՝ $f(s) \bullet - \circ F(t)$: Լապլասի հակադարձ ձևափոխությունը որոշվում է հետևյալ կերպ՝

$$L^{-1}[f(s)](t) = F(t) = \frac{1}{2\pi i} \int_{x-i\infty}^{x+i\infty} e^{st} f(s) ds \quad (t > 0), \quad (3)$$

$$F(t) = 0 \quad (t < 0):$$

Սահմանում 2: F ֆունկցիան կոչվում է կտոր առ կտոր դիֆերենցելի $[a; b]$ միջակայքում, եթե այն կարելի է տրոհել վերջավոր թվով $[x_{k-1}; x_k]$ միջակայքերի, այնպիսին, որ յուրաքանչյուր բաց $(x_{k-1}; x_k)$ միջակայքում ֆունկցիան դիֆերենցելի է, իսկ ծայրակետերում ունի միակողմանի սահմաններ և միակողմանի ածանցյալներ [6], [7]:

Հիմնական թեորեմ: Եթե $F(t)$ ֆունկցիան որոշված է ամբողջ թվային ուղղի վրա, $F(t) = 0 (t < 0)$, $F \in C[0; +\infty)$, $F(t)$ -ն կտոր առ կտոր դիֆերենցելի է յուրաքանչյուր $[a; b]$ ($a \geq 0$) հատվածում և բավարարում է (1)

պայմանին, ապա (2), (3) բանաձևերը ստեղծում են փոխմիարժեք համապատասխանություն $F(t)$ և $f(s)$ ($Res \geq \alpha$) ֆունկցիաների միջև:

Դիտողություն 1: Նկատենք, որ եթե $F'(t)$ -ն բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին, ապա $F(t)$ -ն էլ բավարարում այդ պայմաններին (անհավասարությունը կարելի է ինտեգրել):

Դիտողություն 2: Հիմնական թեորեմի $F \in C[0; +\infty)$ պայմանը կարելի է փոխարինել ավելի «թույլ» $F \in C[a; b]$, $a \geq 0$ պայմանով: Այդ դեպքում (2), (3) բանաձևերը ստեղծում են փոխմիարժեք համապատասխանություն $F(t)$ ($t \in [a; b]$) և $f(s)$ ($Res \geq \alpha$) ֆունկցիաների միջև:

2. Լապլասի ձևափոխության հիմնական հատկությունները, օրինակներ

Այստեղ կնշենք այն հատկությունները և օրինակները, որոնք օգտակար են հետագա խղիրներում:

Հատկություն 1: Եթե $F(t)$ ֆունկցիան բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին, ապա նրա պատկերը՝ $f(s) \xrightarrow{s \rightarrow \infty} 0$:

Հատկություն 2: Եթե $F(t)$ ֆունկցիան բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին, ապա՝ $L[F(t-a)](s) = e^{-a \cdot s} f(s)$ ($a > 0, Res > \alpha$): Այսինքն՝

$$e^{-a \cdot s} f(s) \bullet - \circ F(t-a) \quad (a > 0, Res > \alpha)$$

Հատկություն 3: Եթե $F(t)$ ֆունկցիան բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին, ապա՝

$$L[F(t+a)](s) = e^{a \cdot s} f(s) - e^{a \cdot s} \int_0^a e^{-s \cdot t} F(t) dt \quad (a > 0, Res > \alpha):$$

Հատկություն 4: Եթե $F(t)$ ֆունկցիան բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին, ապա՝

$$f(s-\beta) \bullet - \circ e^{\beta \cdot t} F(t) \quad (\operatorname{Re}(s-\beta) > \alpha)$$

Այստեղ և հետագայում նախապատկերը համարվում է հավասար զրոյի, փոփոխականի բացասական արգումենտի դեպքում: Այսուհետ կնշենք նախապատկերի տեսքը միայն դրական արգումենտի դեպքում:

Հատկություն 5: Դիցուք $Y \in C^n[0; +\infty)$ և $Y^{(n)}(t)$ ֆունկցիան բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին (ուրեմն այդ պայմաններին են բավարարում նաև $Y^{(k)}(t)$ ($k = 0, 1, \dots, n-1$) ֆունկցիաները), այդ դեպքում՝

$$L\left[Y^{(n)}\right](s)=s^n y(s)-s^{n-1} Y(+0)-s^{n-2} Y'(+0)-\ldots-Y^{(n-1)}(+0):$$

Այս հատկության ապացույցը հենված է մասերով ինտեգրման բանաձևի վրա:

Հասկություն 6: (Փաթեթի Լապլասի ձևափոխությունը): Դիցուք տրված են F, G ֆունկցիաներ, բավարարող հիմնական թեորեմի պայմաններին ((1)-ում այդ ֆունկցիաների համար հաստատունները կարելի է ընտրել նույնը): Այս ֆունկցիաների **փաթեթ** է կոչվում՝

$$(F * G)(t) = \int_{-\infty}^{+\infty} F(\tau) G(t-\tau) d\tau = \int_0^t F(\tau) G(t-\tau) d\tau, \quad (4)$$

Այստեղ հաշվի առնաք, որ նախապատկերները զրո են բացասական արգումենտի դեպքում: Գնահատենք փաթեթի մոդուլը, հաշվի առնելով (1)-ը, կստանանք՝

$$\left|(F * G)(t)\right| \leq M^2 \int_0^t e^{\alpha \tau} e^{\alpha \cdot (t-\tau)} d\tau = M^2 t e^{\alpha \cdot t} \leq M_1 e^{2 \alpha \cdot t}:$$

Այսպիսով, փաթեթը նույնպես բավարարում է հիմնական թեորեմի պայմաններին: Ազդելով Լապլասի օպերատորով փաթեթի վրա, ստանում ենք՝

$$L[F * G](s) = f(s) g(s): \quad (5)$$

Քննարկենք մի քանի կարևոր օրինակներ:

Օրինակ 1: $L[c](s) = \frac{c}{s} \quad (Res > 0)$, որտեղ c -ն հաստատուն է:

Օրինակ 2: $L\left[e^{a \cdot t}\right](s) = \frac{1}{s-a} \quad (Res > Rea)$:

Օրինակ 3: $L[\sin kt](s) = \frac{1}{2i} L\left[e^{ikt} - e^{-ikt}\right](s) =$
 $= \frac{1}{2i} \left(\frac{1}{s-ik} - \frac{1}{s+ik} \right) = \frac{k}{s^2 + k^2} \quad (Res > |Imk|):$

Օրինակ 4: $L[\cos kt](s) = \frac{1}{2} L\left[e^{ikt} + e^{-ikt}\right](s) =$
 $= \frac{1}{2} \left(\frac{1}{s-ik} + \frac{1}{s+ik} \right) = \frac{s}{s^2 + k^2} \quad (Res > |Imk|):$

Օրինակ 5: $L\left[t^\alpha\right](s) = \frac{\Gamma(\alpha+1)}{s^{\alpha+1}} \quad (\alpha > -1)$: Մասնավորապես, երբ

$\alpha = n \in \mathbb{N}$, ստանում ենք՝ $L\left[t^n\right](s) = \frac{n!}{s^{\alpha+1}}:$

3. Լապլասի ձևափոխության կիրառությունները դիֆերենցիալ հավասարումներում

Բարձր կարգի գծային, հաստատուն գործակիցներով, ոչ համասեռ դիֆերենցիալ հավասարման համար Կոշիի խնդիրը լուծելու ստանդարտ մեթոդը կայանում է հետևյալում [4]՝ նախ գտնում են համասեռ հավասարման ընդհանուր լուծումը, այնուհետև հաստատունների փոփոխարկման (վարիացիայի) մեթոդով գտնում են ոչ համասեռ հավասարման ընդհանուր լուծումը, որից հետո ընտրում են հաստատունները, ելնելով խնդրի պայմաններից: Սույն խնդիրը շատ էֆեկտիվ է լուծվում Լապլասի ձևափոխության միջոցով: Լապլասի օպերատորի կիրառումը դիֆերենցիալ հավասարմանը բերում է այն պատկերի նկատմամբ հանրահաշվական հավասարման, որտեղ մասնակցում են խնդրի սկզբնական պայմանները: Պատկերը գտնելուց հետո մնում է վերադառնալ նախապատկերին: Կոնկրետ օրինակի վրա մեկնաբանենք ասվածը:

Լուծել հետևյալ Կոշիի խնդիրը՝

$$Y''' + 4Y'' + 4Y' = F(t) \quad (t > 0), F(t) = \sin t^2 \quad (6)$$

$$Y(+0) = 1, Y'(+0) = -1, Y''(+0) = 2: \quad (7)$$

Համարելով, որ Y''' -ը բավարարում է հիմնական թեորեմի բոլոր պայմաններին, ազդենք Լապլասի օպերատորով (6)-ի վրա: Հաշվի առնենք (7)-ը և հատկություն 5-ը, կստանանք՝

$$s^3 y(s) - s^2 + s - 2 + 4s^2 y(s) - 4s + 4 + 4sy(s) - 4 = f(s):$$

Որտեղից՝

$$p(s)y(s) = s^2 + 3s + 2 + f(s) \quad (p(s) = s^3 + 4s^2 + 4s), \quad (8)$$

Այստեղից՝ $q(s) = \frac{1}{p(s)} = \frac{1}{s(s+2)^2} = \frac{1}{4s} - \frac{1}{4(s+2)} - \frac{1}{2(s+2)^2}:$

Ուրեմն (տես հատկություն 4 և օրինակները)՝

$$Q(t) = \frac{1}{4} - \frac{1}{4}e^{-2t} - \frac{1}{2}te^{-2t} \Rightarrow Q(+0) = 0: \quad (9)$$

Քանի որ՝ $L[Q'](s) = sq(s) - Q(+0) = sq(s) \Rightarrow sq(s) \bullet - \circ Q'(t):$

Մյուս կողմից՝

$$Q'(t) = te^{-2t} \Rightarrow Q'(+0) = 0 \Rightarrow s^2 q(s) \bullet - \circ Q''(t) = e^{-2t} - 2te^{-2t}: \quad (10)$$

Հաշվի առնելով (8)–(10) առնչությունները և հատկություն 6-ը, վերջնականապես կստանանք՝

$$Y(t) = \frac{1}{2} - \frac{e^{-2t}}{2}(1+2t) + 3te^{-2t} + (1-2t)e^{-2t} + \\ + \frac{1}{4} \int_0^t (1 - e^{-2\tau})(1+2\tau) \sin(t-\tau)^2 d\tau:$$

Նկատենք, որ այս մեթոդը կիրառվում է նաև մասնակի ածանցյալներով հավասարումներում:

4. Անդրադարձ առնչություններ

Անդրադարձ առնչություն է կոչվում հետևյալ տեսքի հավասարումը՝

$$Y_{n+k} + a_1 Y_{n+k-1} + \dots + a_k Y_n = F_n \quad (n = 0, 1, \dots), \quad (11)$$

որտեղ a_j ($j = 1, \dots, k$) տրված գործակիցներ են (կհամարենք որ նրանք հաստատուններ են), F_n -ը տրված հաջորդականություն է Y_n -ը որոնելի հաջորդականություն է, ընդ որում տրված են նրա սկզբնական արժեքները՝ $Y_0, Y_1, \dots, Y_{k-1}$: k -ն կոչվում է (11) հավասարման կարգ: Երբ $n = 0$, ապա (11)-ից ստանում ենք Y_k -ն և այդպես շարունակ: Լուծման այս ճանապարհը բարդ է և քիչ դեպքերում կիրառելի: Այդ պատճառով (11) անդրադարձ առնչությունը համարվում է լուծված, եթե ստացվել է բանաձև, արտահայտող Y_n -ի կախվածությունը n -ից:

Պարզության համար, նախ դիտարկենք $k = 2$ դեպքը:

$$Y_{n+2} + a_1 Y_{n+1} + a_0 Y_n = F_n \quad (n = 0, 1, \dots): \quad (12)$$

Տրված են սկզբնական պայմաններ՝

$$Y_0, Y_1: \quad (13)$$

Որպեսզի կարողանանք կիրառել Լապլասի ձևափոխությունը, ներմուծենք անընդհատ արգումենտի ֆունկցիա հետևյալ կերպ՝

$$Y(t) = Y_n, \quad F(t) = F_n \quad (n \leq t < n+1): \quad (14)$$

Այս $Y(t)$ ֆունկցիայի նկատմամբ (12)-ից ստանում ենք հետևյալ տարբերություններով հավասարումը՝

$$Y(t+2) + a_1 Y(t+1) + a_0 Y(t) = F(t), \quad (15)$$

որի համար սկզբնական պայմաններն են՝

$$Y(t) = Y_0 \quad (0 \leq t < 1), \quad Y(t) = Y_1 \quad (1 \leq t < 2): \quad (16)$$

Ենթադրենք, որ $Y(t)$ և $F(t)$ ֆունկցիաները բավարարում են հիմնական թեորեմի պայմաններին (տես նաև դիտ. 2) և (15)-ի երկու կողմի վրա ազդենք Լապլասի օպերատորով, կստանանք (տես հատկություն 3)՝

$$\begin{aligned} e^{2s} y(s) - e^{2s} \int_0^2 e^{-s \cdot t} Y(t) dt + a_1 e^s y(s) - \\ - a_1 e^s \int_0^1 e^{-s \cdot t} Y(t) dt + a_0 y(s) = f(s) \end{aligned} \quad (17)$$

Հաշվի առնելով (16) սկզբնական պայմանները, ստանում ենք՝

$$e^s \int_0^l e^{-s \cdot t} Y(t) dt = Y_0 e^s \int_0^l e^{-s \cdot t} dt = Y_0 \frac{e^s - 1}{s},$$

$$e^{2s} \int_0^2 e^{-s \cdot t} Y(t) dt = Y_0 e^{2s} \int_0^1 e^{-st} dt + Y_1 e^{2s} \int_1^2 e^{-st} dt = e^s Y_0 \frac{e^s - 1}{s} + Y_1 \frac{e^s - 1}{s} \quad (18)$$

(17), (18) –ից հետևում է՝

$$p(e^s) y(s) = \frac{e^s - 1}{s} ((e^s + a_1) Y_0 + Y_1) + f(s), \quad (19)$$

որտեղ՝

$$p(z) = z^2 + a_1 z + a_0 \quad (20)$$

Նախ դիտարկենք այն դեպքը, երբ $p(z)$ –ը ունի երկու, իրարից տարբեր α, β գրոներ: Ուրեմն՝

$$p(z) = (z - \alpha)(z - \beta) \quad (\alpha + \beta = -a_1, \alpha\beta = a_0) \Rightarrow,$$

$$\Rightarrow \frac{1}{p(z)} = \frac{1}{\alpha - \beta} \left(\frac{1}{z - \alpha} - \frac{1}{z - \beta} \right) \quad (21)$$

$$\frac{z + a_1}{p(z)} = \frac{z + a_1}{(z - \alpha)(z - \beta)} = \frac{z - (\alpha + \beta)}{(z - \alpha)(z - \beta)} =$$

$$= \frac{-1}{\alpha - \beta} \left(\frac{\beta}{z - \alpha} - \frac{\alpha}{z - \beta} \right) = \frac{-\alpha\beta}{\alpha - \beta} \left(\frac{1}{\alpha(z - \alpha)} - \frac{1}{\beta(z - \beta)} \right):$$

Ստացվեց՝

$$\frac{z + a_1}{p(z)} = \frac{-a_0}{\alpha - \beta} \left(\frac{1}{\alpha(z - \alpha)} - \frac{1}{\beta(z - \beta)} \right) \quad (22)$$

Այսպիսով, խնդիրը բերվում է $\frac{e^s - 1}{s} \frac{1}{e^s - \alpha}, \frac{1}{e^s - \alpha} f(s)$ ֆունկցիաների նախապատկերները գտնելուն: Նկատենք, որ՝

$$\int_0^{+\infty} \alpha^{[t]} e^{-st} dt = \int_0^1 \alpha^{[t]} e^{-st} dt + \int_1^2 \alpha^{[t]} e^{-st} dt + \int_2^3 \alpha^{[t]} e^{-st} dt + \dots =$$

$$= \int_0^1 e^{-st} dt + \alpha \int_1^2 e^{-st} dt + \alpha^2 \int_2^3 e^{-st} dt + \dots =$$

$$= \frac{1 - e^{-s}}{s} (1 + \alpha e^{-s} + \alpha^2 e^{-2s} + \dots) = \frac{1 - e^{-s}}{s} \frac{1}{1 - \alpha e^{-s}} =$$

$$= \frac{e^s - 1}{s} \frac{1}{e^s - \alpha} \quad (|\alpha e^{-s}| = |\alpha| e^{-x} < 1 \Leftrightarrow Res > \ln|\alpha|):$$

Ուրեմն՝

$$\frac{e^s - 1}{s} \frac{1}{e^s - \alpha} \bullet - \circ \alpha^{[t]} \quad (|\alpha e^{-s}| < 1), \quad (23)$$

կամ, որ նույնն է ինչ՝

$$\boxed{\int_0^{+\infty} e^{-st} \alpha^{[t]} dt = \frac{e^s - 1}{s} \frac{1}{e^s - \alpha}} \quad (23')$$

Այժմ գտնենք $\frac{1}{e^s - \alpha} f(s)$ ֆունկցիայի նախապատկերը: Համարելով, որ $|\alpha e^{-s}| < 1 \Leftrightarrow \text{Res} > \ln|\alpha|$, ունենք՝

$$\begin{aligned} \frac{1}{e^s - \alpha} f(s) &= \frac{e^{-s} f(s)}{1 - e^{-s} \alpha} = e^{-s} f(s) \sum_{k=0}^{\infty} (\alpha e^{-s})^k = \\ &= \sum_{k=0}^{\infty} f(s) \alpha^k e^{-s(k+1)} = \sum_{k=1}^{\infty} \alpha^{k-1} f(s) e^{-ks} : \end{aligned}$$

Օգտվելով հատկություն 2-ից և $F(t) = 0 \quad (t < 0)$ պայմանից, ստանում ենք՝

$$\frac{1}{e^s - \alpha} f(s) \bullet - \circ \sum_{k=1}^{\infty} \alpha^{k-1} F(t-k) = \sum_{k=1}^{[t]} \alpha^{k-1} F(t-k):$$

Կարելի է ապացուցել, որ ստացված գումարը սկսվում է անդրադարձ առնչության կարգից՝ 2-ից, այսինքն՝

$$\frac{1}{e^s - \alpha} f(s) \bullet - \circ \sum_{k=2}^{[t]} \alpha^{k-1} F(t-k) \quad (t \geq 2) \quad (24)$$

Հաշվի առնելով (21)-(24), ստանում ենք՝

$$\begin{aligned} Y(t) &= \frac{Y_l}{\alpha - \beta} (\alpha^{[t]} - \beta^{[t]}) - \frac{a_0 Y_0}{\alpha - \beta} (\alpha^{[t]-1} - \beta^{[t]-1}) + \\ &= \frac{1}{\alpha - \beta} \sum_{k=2}^{[t]} (\alpha^{k-1} - \beta^{k-1}) F(t-k) \quad (t \geq 2): \end{aligned} \quad (25)$$

Անցնելով (25)-ում սահմանի, երբ $t \rightarrow +0$ և հաշվի առնելով (14)-ը կստանանք տվյալ անդրադարձ առնչության լուծումը՝

$$\begin{aligned} Y_n &= \frac{Y_l}{\alpha - \beta} (\alpha^n - \beta^n) - \frac{a_0 Y_0}{\alpha - \beta} (\alpha^{n-1} - \beta^{n-1}) + \\ &+ \frac{1}{\alpha - \beta} \sum_{k=2}^n (\alpha^{k-1} - \beta^{k-1}) F_{n-k} \quad (n \geq 2): \end{aligned} \quad (26)$$

Որպես ստացվածի պարզագույն, բայց կարևոր կիրառություն դիտարկենք **Ֆիբոնաչիի թվերը**, որոնք որոշվում են հետևյալ առնչությամբ՝

$$Y_{n+2} - Y_{n+1} - Y_n = 0 \quad (n = 0, 1, \dots), Y_0 = Y_1 = 1: \quad (27)$$

Տվյալ դեպքում՝ $p(z) = z^2 - z - I$, որի զրոներն են՝

$$\alpha = \frac{1+\sqrt{5}}{2}, \beta = \frac{1-\sqrt{5}}{2}:$$

Ուրեմն, ըստ (26)–ի՝

$$Y_n = \frac{I}{\sqrt{5}2^n}((I+\sqrt{5})^n - (I-\sqrt{5})^n) + \frac{I}{\sqrt{5}2^{n-l}}((I+\sqrt{5})^{n-l} - (I-\sqrt{5})^{n-l})$$

Պարզեցնելուց հետո ստանում ենք Բինեի բանաձևը [3]՝

$$Y_n = \frac{I}{\sqrt{5}2^{n+l}}((I+\sqrt{5})^{n+l} - (I-\sqrt{5})^{n+l}) \quad (n \geq 0): \quad (28)$$

Այժմ դիտարկենք այն դեպքը, երբ $p(z)$ բազմանդամի զրոները համընկնում են՝

$$p(z) = (z - \alpha)^2 \quad (\alpha = -\frac{a_l}{2}): \quad (29)$$

(19)-ից հետևում է՝

$$\begin{aligned} y(s) &= \frac{I}{(e^s - \alpha)^2} \frac{e^s - I}{s} ((e^s - 2\alpha)Y_0 + Y_l) + \frac{I}{(e^s - \alpha)^2} f(s), \text{ կամ} \\ y(s) &= \frac{I}{(e^s - \alpha)} \frac{e^s - I}{s} Y_0 + \frac{I}{(e^s - \alpha)^2} \frac{e^s - I}{s} (Y_l - \alpha Y_0) + \\ &\quad + \frac{I}{(e^s - \alpha)^2} f(s): \end{aligned} \quad (30)$$

Ածանցելով (23՝)–ը ըստ α –ի, կստանանք՝

$$\int_0^{+\infty} e^{-st} [t] \alpha^{[t]-l} dt = \frac{e^s - I}{s} \frac{I}{(e^s - \alpha)^2}, \quad (31)$$

այսինքն՝

$$\boxed{\frac{e^s - I}{s} \frac{I}{(e^s - \alpha)^2} \bullet - \circ [t] \alpha^{[t]-l}} \quad (31')$$

Այժմ ստանանք $\frac{I}{(e^s - \alpha)^2} f(s)$ ֆունկցիայի նախապատկերը՝

$$\frac{I}{(e^s - \alpha)^2} f(s) = \frac{e^{-2s} f(s)}{(1 - \alpha e^{-s})^2} = e^{-2s} \sum_{k=1}^{\infty} (k+1) \alpha^k e^{-ks} f(s),$$

որտեղից՝

$$\frac{I}{(e^s - \alpha)^2} f(s) \bullet - \circ \sum_{k=2}^{[t]} (k-1) \alpha^{k-2} F(t-k) \quad (Res > \ln|\alpha|): \quad (32)$$

Հաշվի առնելով (30)-(32)-ը և անցնելով սահմանի, երբ $t \rightarrow +0$, ստանում ենք՝

$$Y_n = Y_0 \alpha^n + (Y_1 - \alpha Y_0) n \alpha^{n-1} + \sum_{k=2}^n (k-1) \alpha^{k-2} F_{n-k} \quad (\alpha = -\frac{a_1}{2}): \quad (33)$$

Նկատենք, որ նույն կերպ լուծվում են ցանկացած, ավելի բարձր կարգի անդրադարձ առնչություններ:

Օրինակ: Լուծել հետևյալ անդրադարձ առնչությունը՝

$$Y_{n+3} - 3\alpha Y_{n+2} + 3\alpha^2 Y_{n+1} - \alpha^3 Y_n = F_n, \quad n = 0, 1, \dots \quad (34)$$

Տրված են սկզբնական պայմանները՝

$$Y_0, Y_1, Y_2: \quad (35)$$

Համապատասխան տարբերություններով հավասարումն է (տես (14))՝

$$Y(t+3) - 3\alpha Y(t+2) + 3\alpha^2 Y(t+1) - \alpha^3 Y(t) = F(t), \quad (36)$$

որի համար սկզբնական պայմաններն են՝

$$Y(t) = Y_0 \quad (0 \leq t < 1), Y(t) = Y_1 \quad (1 \leq t < 2), Y(t) = Y_2 \quad (2 \leq t < 3): \quad (37)$$

Ենթադրենք, որ $Y(t)$ և $F(t)$ ֆունկցիաները բավարարում են հիմնական թեորեմի պայմաններին (տես նաև դիտ. 2) և (37)-ի երկու կողմի վրա ազդենք Լապլասի օպերատորով, կստանանք (տես հատկություն 3)՝

$$\begin{aligned} e^{3s} y(s) - e^{3s} \int_0^3 e^{-st} Y(t) dt - 3\alpha e^{2s} y(s) + 3\alpha e^{2s} \int_0^2 e^{-st} Y(t) dt + \\ + 3\alpha^2 e^s y(s) - 3\alpha^2 e^s \int_0^1 e^{-st} Y(t) dt - \alpha^3 y(s) = f(s): \end{aligned} \quad (38)$$

Հաշվի առնելով (37) սկզբնական պայմանները, ստանում ենք՝

$$3\alpha^2 e^s \int_0^1 e^{-st} Y(t) dt = 3\alpha^2 Y_0 e^s \int_0^1 e^{-st} dt = 3\alpha^2 Y_0 \frac{e^s - 1}{s}, \quad (39)$$

$$\begin{aligned} -3\alpha e^{2s} \int_0^2 e^{-st} Y(t) dt = -3\alpha Y_0 e^{2s} \int_0^1 e^{-st} dt - 3\alpha Y_1 e^{2s} \int_1^2 e^{-st} dt \Rightarrow \\ -3\alpha e^{2s} \int_0^2 e^{-st} Y(t) dt = -3\alpha \frac{e^s - 1}{s} (e^s Y_0 + Y_1) \end{aligned} \quad (40)$$

$$e^{3s} \int_0^3 e^{-st} Y(t) dt = \frac{e^s - 1}{s} (e^{2s} Y_0 + e^s Y_1 + Y_2): \quad (41)$$

(38)-(41)-ից հետևում է

$$p(e^s)y(s) = \frac{e^s - 1}{s} [e^{2s}Y_0 + e^s(Y_1 - 3\alpha Y_0) + 3\alpha^2 Y_0 - 3\alpha Y_1 + Y_2] + f(s), \quad (42)$$

$$\text{որտեղ } p(z) = (z - \alpha)^3$$

Այսպիսով, խնդիրը բերվում է

$$\frac{e^s - 1}{s} \frac{1}{e^s - \alpha}, \frac{e^s - 1}{s} \frac{1}{(e^s - \alpha)^2}, \frac{e^s - 1}{s} \frac{1}{(e^s - \alpha)^3}, \frac{1}{(e^s - \alpha)^3} f(s) \quad (43)$$

Ֆունկցիաների նախապատկերները գտնելուն:

Ածանցելով (31)-ը ըստ α -ի, կստանանք՝

$$\boxed{\frac{e^s - 1}{s} \frac{1}{(e^s - \alpha)^3} \bullet - \circ \frac{1}{2} [t] ([t] - 1) \alpha^{[t]-2} \quad (|\alpha e^{-s}| < 1)} \quad (44)$$

Հաշվի առնելով (31՝)-ը և (44)-ը, կստանանք՝

$$\begin{aligned} \frac{e^s - 1}{s} \frac{e^{2s}}{(e^s - \alpha)^3} &= \frac{e^s - 1}{s} \frac{e^{2s} - \alpha^2 + \alpha^2}{(e^s - \alpha)^3} = \frac{e^s - 1}{s} \left(\frac{e^s - \alpha + 2\alpha}{(e^s - \alpha)^2} + \frac{\alpha^2}{(e^s - \alpha)^3} \right) \Rightarrow \\ &\Rightarrow \frac{e^s - 1}{s} \frac{e^{2s}}{(e^s - \alpha)^3} \bullet - \circ \frac{\alpha^{[t]}}{2} (2 + [t]([t] + 3)), \end{aligned} \quad (45)$$

$$\begin{aligned} \frac{e^s - 1}{s} \frac{e^s}{(e^s - \alpha)^3} &= \frac{e^s - 1}{s} \left(\frac{1}{(e^s - \alpha)^2} + \frac{\alpha}{(e^s - \alpha)^3} \right) \Rightarrow \\ &\Rightarrow \frac{e^s - 1}{s} \frac{e^s}{(e^s - \alpha)^3} \bullet - \circ \frac{\alpha^{[t]-1}}{2} [t]([t] + 1): \end{aligned} \quad (46)$$

Այժմ գտնենք $\frac{1}{(e^s - \alpha)^3} f(s)$ ֆունկցիայի նախապատկերը: Համարելով,

որ $|\alpha e^{-s}| < 1 \Leftrightarrow \text{Res} > \ln|\alpha|$, կստանանք՝

$$\begin{aligned} \frac{1}{(e^s - \alpha)^3} f(s) &= \frac{e^{-3s} f(s)}{(1 - e^{-s} \alpha)^3} = \frac{1}{2} f(s) \sum_{k=1}^{\infty} k(k+1) \alpha^{k-1} e^{-s(k+2)} = \\ &= \frac{1}{2} \sum_{k=3}^{\infty} (k-2)(k-1) \alpha^{k-3} e^{-s \cdot k} f(s) = \\ &= \sum_{k=0}^{\infty} f(s) \alpha^k e^{-s(k+1)} = \sum_{k=1}^{\infty} \alpha^{k-1} f(s) e^{-ks}: \end{aligned}$$

Ուրեմն՝

$$\frac{I}{(e^s - \alpha)^3} f(s) \bullet - \circ \frac{1}{2} \sum_{k=3}^{[t]} (k-2)(k-1) \alpha^{k-3} F(t-k): \quad (47)$$

Օգտվելով, (42), (44)-(47) բանաձևերից, ի վերջո կստանանք՝

$$\begin{aligned} Y(t) = & \frac{Y_0}{2} (2 + [t]([t] + 3)) \alpha^{[t]} + \frac{Y_l - 3\alpha Y_0}{2} [t]([t] + l) \alpha^{[t]-l} + \\ & + \frac{(3\alpha^2 Y_0 - 3\alpha Y_1 + Y_2)}{2} [t]([t] - 1) \alpha^{[t]-2} + \\ & \frac{1}{2} \sum_{k=3}^{[t]} (k-2)(k-1) \alpha^{k-3} F(t-k) \quad (t > 3) \end{aligned} \quad (48)$$

Անցնելով սահմանի, երբ $t \rightarrow n + 0$, կստանանք՝

$$\begin{aligned} Y_n = & \frac{Y_0}{2} (2 + n(n + 3)) \alpha^n + \frac{Y_l - 3\alpha Y_0}{2} n(n + l) \alpha^{n-l} + \\ & + \frac{(3\alpha^2 Y_0 - 3\alpha Y_1 + Y_2)}{2} n(n - l) \alpha^{[n]-2} + \\ & + \frac{1}{2} \sum_{k=3}^n (k-2)(k-1) \alpha^{k-3} F_{t-k} \quad (n > 3): \end{aligned} \quad (49)$$

5. Լապլասի ձևափոխության կիրառությունները փաթեթի տեսակի ինտեգրալ հավասարումներում

Ֆիզիկայում հաճախ հանդիպում են հետևյալ տեսակի ինտեգրալ հավասարումներ՝

$$\int_0^t K(t-\tau) F(\tau) d\tau = G(t), \quad (50)$$

$$F(t) = G(t) + \int_0^t K(t-\tau) F(\tau) d\tau, \quad (51)$$

որտեղ $F(t)$ -ն որոնելի ֆունկցիա է, $K(t)$ -ն և $G(t)$ -ն տրված ֆունկցիաներ են: (50) հավասարումը կոչվում է առաջին սեռի, իսկ (51)-ը՝ երկրորդ սեռի ինտեգրալ հավասարումներ:

Նախ դիտարկենք երկրորդ սեռի ինտեգրալ հավասարումը, քանի որ այն ավելի պարզ է լուծելու իմաստով:

Ենթադրենք որ՝ $F, K, G \in C[0; +\infty)$ և բավարարում են հիմնական թեորեմի բոլոր պայմաններին: Ազդենք (51)-ի վրա Լապլասի օպերատորով և հաշվի առնենք (5)-ը, կստանանք՝

$$f(s) = g(s) + k(s) f(s), \text{ որտեղից } f(s) = \frac{I}{I - k(s)} g(s):$$

Բայց $\lim_{s \rightarrow \infty} \frac{I}{I-k(s)} \neq 0$, ուրեմն $\frac{I}{I-k(s)}$ -ը չունի նախապատկեր: Ներկայացնենք $f(s)$ -ը հետևյալ տեսքով՝

$$f(s) = g(s) + q(s)g(s), \quad (52)$$

որտեղ՝ $q(s) = \frac{k(s)}{I-k(s)}$ ($q(s) \xrightarrow{s \rightarrow \infty} 0$) (կարելի է ապացուցել, որ այն ունի նախապատկեր $Q(t)$): Այսպիսով, (52)-ից ստանում ենք՝

$$F(t) = G(t) + Q(t) * G(t): \quad (53)$$

Վերլուծենք $q(s)$ -ը Թեյլորի շարքի՝

$$q(s) = \sum_{n=1}^{\infty} (k(s))^n \quad (|k(s)| < I) \quad (54)$$

(54), (55) $\Rightarrow$

$$F(t) = G(t) + \sum_{n=1}^{\infty} K^{*n}(t) * G(t), \quad (55)$$

որտեղ K^{*n} -ը դա K -ի փաթեթն է ինքն իր հետ n անգամ: Շարք (55)-ը կոչվում է **Նեյմանի շարք**:

Երբեմն հաջողվում է ուղղակիորեն գտնել $Q(t)$ նախապատկերը: Եթե, օրինակ K -ն բազմանդամ է՝ $K(t) = a_0 + a_1 t + \dots + a_p t^p$, ապա՝

$$k(s) = \frac{a_0}{s} + \frac{I!a_1}{s^2} + \dots + \frac{p!a_p}{s^{p+1}} \text{ և, ուրեմն՝}$$

$$q(s) = \frac{k(s)}{I-k(s)} = \frac{a_0 s^p + I!a_1 s^{p-1} + \dots + p!a_p}{s^{p+1} - a_0 s^p - a_1 s^{p-1} - \dots - p!a_p}: \quad (56)$$

Այսպիսով, $q(s)$ -ը կանոնավոր կոտորակ է և, ուրեմն այն կվերլուծվի պարզ կոտորակների գումարի, որից հետո նախապատկեր գտնելը հեշտ խնդիր է:

Այժմ դիտարկենք առաջին սեռի (50) ինտեգրալ հավասարումը: Նրա վրա ազդենք Լապլասի օպերատորով, կստանանք՝

$$k(s)f(s) = g(s) \Rightarrow f(s) = \frac{I}{k(s)} g(s): \quad (57)$$

Քանի որ $\frac{I}{k(s)} \xrightarrow{s \rightarrow \infty} \infty$, ուրեմն այն չունի նախապատկեր: Բայց որոշ պայ-

մանների դեպքում կարելի է առաջին սեռի ինտեգրալ հավասարումը բերել երկրորդ սեռի ինտեգրալ հավասարմանը:

Դիցուք $K \in C' [0; +\infty)$, $F \in C [0; +\infty)$ և K' -ը և F -ը բավարարում են հիմնական թեորեմի բոլոր պայմաններին: Ածանցենք (51)-ը, կստանանք՝

$$K(+0)F(t) + \int_0^t K'(t-\tau)F(\tau)d\tau :$$

Ստացվել է երկրորդ սեռի ինտեգրալ հավասարում, եթե $K(+0) \neq 0$: Հա-կառակ դեպքում, ածանցման պրոցեսը կշարունակենք այնքան անգամ (եթե, իհարկ է համապատասխան պայմանները առկա են) մինչև առաջին անգամ K -ի ածանցյալը $t=0$ կետում լինի զրոյից տարբեր: Եթե K -ն անվերջ դիֆերենցե-լի է $t=0$ կետում և այդ կետում բոլոր ածանցյալները զրո են, ապա ակնհայտ է, որ այդ դեպքում $K(t) \equiv 0$, որը հետաքրքիր դեպք չէ:

Նշված մեթոդը կիրառելի չէ, երբ $K(t)$ -ն, $t=0$ կետում չունի ածանցյալ-ներ: Օրինակ, $K(t) = t^{-\alpha}$, $0 < \alpha < 1$ չունի ինտեգրելի ածանցյալ: Նման դեպքե-րում օգտակար է հետևյալ մեթոդը: Ներմուծենք նոր որոնելի ֆունկցիա՝

$$\phi(t) = \int_0^t F(\tau)d\tau \quad (\phi'(t) = F(t)) \Rightarrow$$

$$f(s) = L[F(t)](s) = L[\phi'(t)](s) = s\phi(s) \quad (\phi(+0) = 0): \quad (58)$$

Հաշվի առնելով (57)-ը և (58)-ը, կստանանք՝

$$\varphi(s) = \frac{1}{sk(s)} g(s): \quad (59)$$

Թեպետ $\frac{1}{k(s)}$ -ը նախապատկեր չունի, $\frac{1}{sk(s)}$ -ը կարող է և ունենալ նախապատկեր, քանի որ $sk(s)$ -ը անվերջում կարող է և ձգտել անվերջի:

Որպես այդպիսի օրինակ դիտարկենք ֆիզիկայում հաճախ հանդիպող **Աբելի ինտեգրալ հավասարումը**՝

$$\int_0^t (t-\tau)^{-\alpha} F(\tau)d\tau = G(t) \quad (0 < \alpha < 1): \quad (60)$$

Նորից համարելով, որ $\phi(t) = F * I$ և հաշվի առնելով այն, որ $K(t) = t^{-\alpha}$ կորիզի պատկերն է (տես օրինակ 5) $k(s) = \frac{\Gamma(1-\alpha)}{s^{1-\alpha}}$, կստանանք՝

$$\frac{\Gamma(1-\alpha)}{s^{-\alpha}} \varphi(s) = g(s) \Rightarrow \varphi(s) = \frac{1}{\Gamma(1-\alpha)s^{\alpha}} g(s): \quad (61)$$

Քանի որ $\frac{I}{s^\alpha} \bullet - \circ \frac{t^{\alpha-1}}{\Gamma(\alpha)}$, ապա $\phi(t) = \frac{I}{\Gamma(\alpha)\Gamma(1-\alpha)} t^{\alpha-1} * G(t)$: Քանի որ, ըստ հայտնի բանաձևի՝ $\frac{I}{\Gamma(\alpha)\Gamma(1-\alpha)} = \frac{\sin\pi\alpha}{\pi}$, ապա՝

$$\phi(t) = \frac{\sin\pi\alpha}{\pi} \int_0^t \tau^{\alpha-1} G(t-\tau) d\tau :$$

Այստեղից, ենթադրելով որ $G \in C^1[0; +\infty)$, ստանում ենք (60) հավասարման լուծումը՝

$$F(t) = \phi'(t) = \frac{\sin\pi\alpha}{\pi} \left[G(0)t^{\alpha-1} + \int_0^t \tau^{\alpha-1} G'(t-\tau) d\tau \right] \quad (62)$$

Լապլասի ձևափոխությունը ունի նաև այլ բազմազան կիրառություններ, օրինակ որոշ ինտեգրալ առնչություններ ստանալիս, ֆունկցիայի ասիմտոտիկ վարկը ուսումնասիրելիս և այլ հարցերում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Деч Г., Руководство к практическому применению преобразования Лапласа, М., Наука, 1965.
2. Лаврентьев М. А., Шабат Б. В., Методы теории функций комплексного переменного, М., Наука. 1973.
3. Воробьев Н. Н., Числа Фибоначчи, М., Наука, 1969.
4. Лизоркин П. И., Курс дифференциальных и интегральных уравнений, М., Наука, 1981.
5. Հակոբյան Ս. Ս., Ֆուրիեի շարքեր և ինտեգրալներ, ԵՊՀ, 1983:
6. Фихтенгольц Г. М., Курс дифференциального и интегрального исчисления т. 2, 2003, т. 3, 2005.
7. Ղալումյան Ա. Գ., Սարգսյան Ա. Ս., Մաթ. անալիզ, երրորդ մաս, ԵՊՀ, 2009:

А. Г. ГАЛУМЯН – Преобразование Лапласа и его приложения. – Работа – научнометодическая. Она посвящена преобразованию Лапласа, которое широко используется в физике и математике. Приведены основные свойства преобразования Лапласа и примеры, важные для дальнейших приложений.

Рассмотрены приложения преобразования Лапласа в дифференциальных уравнениях, при решении рекуррентных соотношений, в интегральных уравнениях типа свертки первого и второго родов.

ԱՂԱՏԵՎ ԳԵՏԻ ԶՐԻ ԶՐԱՔԻՄԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Գ. Ս. ՄԻՄՈՆՅԱՆ, Մ. Մ. ՓԱՐՄԱԴԱՆՅԱՆ,
Լ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Հետազոտությունները ցույց են տվել, որ Աղստև գետի աղտոտման հիմնական պատճառը հանդիսանում են խոշոր բնակավայրերի՝ Դիլիջան և Իջևան քաղաքների կենցաղային աղբը, կոմունալ-կենցաղային և տնտեսական հոսքաջրերը, որոնք գետ են թափվում որոշակի նախնական մեխանիկական մաքրումից հետո կամ պարզապես առանց մաքրման, ինչպես նաև հողերի լվացման հետևանքով գոյացող մակերևութային հոսքաջրերը:

Քաղաքակրթության զարգացմանը զուգընթաց շրջակա միջավայրի, այդ թվում ջրային օբյեկտների վրա մարդկային ներգործության չափն անշեղորեն մեծանում է: Մարդու ներգործության հետևանքով առաջին հերթին անմխիթար վիճակում գտնվում են լճերի ու գետերի քաղցրահամ ջրերը, որոնք կազմում են խմելու ջրի պաշարի 0.5 %-ը:

Ինչպես հայտնի է, Աղստև գետը հանդիսանում է հարակից բնակավայրերի, մասնավորապես Դիլիջան քաղաքի խմելու ջրի աղբյուր, հետևաբար կարևորագույն խնդիր է նրա մաքրությունը և դրա պահպանությունը:

Աղստև գետի սնման մեջ գերակշռում է մակերևութային հոսքը, այսինքն հիմնականում ունի հալոցքաանձրևային սնում. Հալոցքային 41 %, անձրևային 27%, ստորերկրյա 32 %: Վերին և միջին հոսանքներում այն ամբողջովին անտառածածկ է, ուստի այստեղ սելավներ չեն առաջանում, սակայն ավազանի մի զգալի մասը, հատկապես Դիլիջան քաղաքում և նրան հարակից մասերում, գտնվում է ակտիվ սողանքների շրջանում: Գարնանային հորդացումը սկսում է ապրիլից և երկարաձգվում մինչև հուլիս [1-3] (աղ. 1):

Աղյուսակ 1.

Աղստև գետի ջրաբանական որոշ բնութագրիչներ

ԴԻՏԱԿԵՏ	ԶՐՀԱՎԱՔ ԱՎԱԶԱՆ		ՎԱՐԱՐՈՒՄՆԵՐ			միջին տարեկան ելք, մ³/վրկ
			ԺԱՄԿԵՏԸ (օր, ամիս)			
	մակերես, կմ²	միջին բարձրություն, մ	սկիզբը	վերջը	տևող., օր	
գ. Ֆիոլետովո	93, 4	2080	25.03	28.06	96	1, 36
ք. Դիլիջան	303	2000	12.03	26.06	97	3, 14
ք. Իջևան	1270	1800	21.03	27.06	99	9, 07

Ներկայացնում ենք Աղստև գետի Իջևանի դիտակետի 2004-2008 թթ. ջրա-
բանական քանակական տվյալները՝ ջրի ծախսը, հանքայնացումը (աղ. 2):

Աղյուսակ 2.

Աղստև գետի քանակական ցուցանիշները

Տարի	Հանքայնացումը, C, մգ/լ	Ջրի ծախսը, Q, մ³/վ
2004	350	10, 1
2005	344	11, 3
2006	362	8, 15
2007	375	10, 2
2008	325	12, 5
Միջին[1, 2]	290	9, 09

Արդյունքները ցույց են տվել, որ Աղստևը հիմնականում սակավաջուր է եղել 2006 թ., 2004 թ. և 2007 թ.՝ միջինից ջրառատ, իսկ 2008 թ. եղել է ջրառատ: Նկատվում է Աղստև գետի հանքայնացման մեծացում, որն ըստ էության պայմանավորված է նրա ավազանում մասսայական անտառահատումներով, որը բերում է հողի էրոզիայի և լվացման:

Քանի որ ձմռանը Աղստև գետի սնուցումը հիմնականում ստորերկրյա է, ապա հանքայնացումը լինում է ամենաշատը, իսկ ձյունային և անձրևային սնուցումը, եթե այն բավարար ինտենսիվ է մակերեսային հոսք առաջացնելու համար, բերում է գետային ջրի հանքայնացման նվազման: Այսպիսով, մակերեսային սնուցման մասնաբաժնի մեծացման դեպքում գետային ջրերի հանքայնացումը նվազում է:

Գտնվել է հակադարձ կախվածություն հանքայնացման և ջրի ծախսի միջև: Համակարգչային Origin-6 մաթեմատիկական ծրագրով հաշվարկից ստացվել է.

$$Z = 471, 5 - 11 Q, r = 0, 94$$

Սակայն Դիլիջանից Իջևան ուղղությամբ, ինչպես նաև քաղաքների վերին և ներքին հատվածների միջև ջրի ծախսի մեծացմանը զուգընթաց նկատվում է բոլոր իոնների քանակների և հետևաբար հանքայնացման մեծացում: Սա հակասում է օրինաչափությանը: Իրականում հակասություն չկա. պատճառն այն է, որ հունի ամբողջ երկայնքով գետ են թափվում իրենց քիմիական կազմով տարբեր փոքր վտակներ և տարբեր քիմիական բաղադրությամբ հողերը լվացած անձրևաջրեր:


Աղստև գետի ջրաքիմիական ուսումնասիրման համար 2007-2008 թթ. ընկած ժամանակահատվածի բոլոր չորս սեզոններին որոշվել են նրա ջրում ազոտային միացությունների (NO_3^- , NO_2^- , NH_4^+ իոններ) փոփոխությունը:

Ստացված տվյալներից հետևում է, որ NO_3^- , NO_2^- , NH_4^+ իոնների պարունակությունը փոփոխվում է տարվա ամիսներից կախված (նկ. 1-6): Դա բացատրվում է ազոտի ջրաքիմիական շրջապտույտի առանձնահատկություններով և տվյալ տարածաշրջանում արտադրական գործունեության բնույթով և բնակավայրերի քանակով: Այստեղ պետք է ուշադրություն դարձնել գործող

արդյունաբերական ձեռնարկությունների, գյուղատնտեսական օբյեկտների և կոմունալ-կենցաղային աղբյուրների թափոնաջրերով ներբերվող ազոտային միացություններին:


Ուսումնասիրելով Աղստև գետի հոսանքով՝ ակունքից մինչև գետաբերան (դիտ. 15-18), ջրի քիմիական որակը՝ պարզվել է, որ NO_3^- իոնների պարունակությունը հետազոտության ողջ ժամանակաշրջանում գտնվել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՄԹԿ) չգերազանցող տիրույթում (նկ. 1 և 2):

Գետի հոսանքով դեպի ներքև նիտրատ իոնների պարունակության փոփոխությունն աննշան է:



Նկ. 1. Աղստև գետի վերին հոսանքներում նիտրատ իոնի սեզոնային փոփոխությունը:


NO_3^- իոնների պարունակությունն ամռանը գետի ակունքում մյուս հատվածների համեմատ բարձր է (ՄԹԿ -ն չի գերազանցում), իսկ գետի միջին հոսանքներում սկսում է նվազել, գետաբերանում նորից բարձրանալով:



Նկ. 2. Աղստև գետի ստորին հոսանքներում նիտրատ իոնի սեզոնային փոփոխությունը:

Հակառակ պատկեր է դիտվում ձմռանը, երբ NO_3^- իոնների պարունակության առավելագույն արժեքները դիտվում են գետի միջին հոսանքներում, իսկ նվազագույնը՝ ակունքում և գետաբերանում (նկ. 1 և 2):

Աշնան և գարնան սեզոններին NO_3^- իոնների պարունակությունը գետի ակունքում և միջին հոսանքներում գրեթե չի փոխվում, սակայն գետաբերանում՝ աշնանը կոնցենտրացիան աճում է, իսկ գարնանը՝ նվազում (նկ. 1 և 2):




Նկ. 3. Աղստև գետի վերին հոսանքներում նիտրիտ իոնի սեզոնային փոփոխությունը:

2007 թ. ամառ – 2008 թ. գարունն ընդգրկող ընթացքում Աղստև գետի ջրի որակի ուսումնասիրման ժամանակ նկատվել է գետի հոսանքով՝ ակունքից գետաբերան, նիտրիտ իոնի պարունակության աճ՝ առավելագույն արժեքի հասնելով գետի գետաբերանի հատվածում (նկ. 3 և 4):

2007 թ. ամռան և 2008 թ. գարնան ընթացքում Աղստև գետի ջրի որակի ուսումնասիրման ժամանակ նկատվել է գետի հոսանքով դեպի ներքև նիտրիտ իոնի պարունակության աստիճանական աճ՝ առավելագույն արժեքի հասնելով գետի միջին հոսանքներում: Նիտրիտ իոնի պարունակությունը գետի ակունքից վերցված փորձանմուշներում (դիտ. 15) ՄԹԿ-ն չի գերազանցում, իսկ արդեն Դիլիջան քաղաքի կոմունալ-կենցաղային ջրերի գետ թափման հետևանքով նիտրիտ իոնի պարունակությունը կտրուկ բարձրանում է՝ 1.4-3.2 անգամ գերազանցելով ՄԹԿ-ն (նկ. 3):


Աղստև գետի Իջևան քաղաքից վերև և ներքև (դիտ. 17 և 18) ընկած հատվածներում NO_2^- իոնների թույլատրելի նորման գերազանցվել է միայն ամռան սեզոնին՝ 1.4 անգամ (նկ. 4): Նկատվել է նաև նիտրիտ իոնի պարունակության սեզոնային փոփոխություն: Նվազագույն պարունակությունները դիտվում են ձմռան սեզոնին, երբ գետի ջուրը բավականին սառն է և դանդաղ են ընթանում օրգանական նյութերի քայքայման պրոցեսները: Իսկ ձմռան ամիսներին համեմատաբար նվազում է գյուղատնտեսական հոսքաջրերի մուտքը Աղստևի գետավազան (նկ. 3 և 4):



Նկ. 4. Աղստև գետի ստորին հոսանքներում նիտրիտ իոնի սեզոնային փոփոխությունը:

Նիտրիտ իոնի պարունակության առավելագույն քանակները դիտվում են ամռան սեզոնին, երբ թույլատրելի նորմայի գերազանցումը հասնում է մինչև 2.5 ՍԹԿ (նկ. 3 և 4):


Նիտրիտ իոնով գետի առավել աղտոտված մասը Դիլիջան քաղաքից ներքև ընկած հատվածն է, որը հավանաբար քաղաքի, հանգստյան գոտիների, կոմունալ-կենցաղային, տնտեսական հոսքաջրերի, արդյունաբերական ձեռնարկությունների թափոնաջրերի, ոռոգվող հողերի լվացման հետևանքով առաջացող մակերևութային հոսքի Աղստև գետի մեջ ներհոսման հետևանք է (նկ. 3): Կարևոր պատճառ է նաև այն, որ Դիլիջան, Իջևան, Ճամբարակ քաղաքների կոմունալ-կենցաղային ջրերն առանց մաքրման կամ նախնական մասնակի մեխանիկական մաքրումից հետո թափվում են Աղստև գետը [4]:



Նկ. 5. Աղստև գետի վերին հոսանքներում ամոնիում իոնի սեզոնային փոփոխությունը:

Ամոնիում իոնների պարունակությունը անկանոն է փոխվում, առավելագույն արժեքի է հասնում հիմնականում աշնան սեզոնին՝ գերազանցելով սահմանային թույլատրելի նորման գետի միջին հոսանքներում՝ Դիլիջան քաղաքից ներքև և Իջևան քաղաքից վերև համապատասխանաբար 1.5 և 1.1 անգամ, իսկ գետաբերանում՝ 1.2 անգամ (նկ. 5 և 6):

Ամոնիում իոնների նվազագույն պարունակությունները դիտվում են ձմռան ամիսներին՝ կտրուկ նվազելով մոտ 3.4 անգամ (նկ. 5 և 6):



Նկ. 6. Աղստև գետի ստորին հոսանքներում ամոնիում իոնի սեզոնային փոփոխությունը:

Աղստև գետի հոսանքով դեպի ներքև (ակունքից գետաբերան) ամոնիում իոնի պարունակության փոփոխությունը պայմանավորվում է առավելապես խոշոր բնակավայրերի՝ Դիլիջան և Իջևան քաղաքների միջով անցնելու ընթացքում կենցաղային աղբի, կոմունալային, տնտեսական հոսքաջրերի գետի մեջ լցնելով: Այդ մասին են վկայում Դիլիջան և Իջևան քաղաքներից ներքև ընկած հատվածներում (դիլի. 16 և 18) ամոնիում իոնի պարունակության ավելի բարձր չափերը, քան այդ քաղաքներից վերև ընկած հատվածներում (դիլի. 15 և 17):

Այսպիսով, կարելի է պնդել, որ Աղստև գետի ջրում NO_3^- , NO_2^- , NH_4^+ իոնների պարունակության փոփոխությունն ունի սեզոնային բնույթ, ինչպես նաև կատարել այն հետևությունը, որ առավել աղտոտված է Աղստև գետի Դիլիջան քաղաքից ներքև ընկած հատվածը, քանի որ մաքրման կայանների անսարքության պատճառով քաղաքից գետն են թափվում կոմունալ-կենցաղային թափոնաջրերը, ինչպես նաև արդյունաբերական ձեռնարկությունների հոսքաջրերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Бабаян Г. Г., Эколого-гидрохимическая оценка современного состояния некоторых водных объектов Республики Армения, Ер., Зангак-97, 2006, 212 с.
2. Չիլինգարյան Լ. Ա., Մնացականյան Բ. Պ., Աղաբաբյան Կ. Ա., Թորմաջյան Հ. Վ., Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը, Եր., 2002, 49 էջ:
3. Սիմոնյան Ռ., Տավուշի մարզ, Եր., 2003, էջ 254:
4. Փարսադանյան Մ., «Լոռու և Տավուշի մարզերի ուսանողների ներգրավում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը», Եր., 2009, էջ 33:

Г.С. СИМОНЯН, М.М. ПАРСАДАНЯН, Л.А. МЕЛИКЯН – *Гидрохимический анализ реки Агстев.* - Исследования показали, что основной причиной загрязнения реки Агстев являются бытовые отходы, коммунальные и хозяйственные проточные воды, которые попадают в реку после определенной механической очистки или просто без очистки, в крупных населенных пунктах - города Дилиджан и Иджеван, а так же поверхностные проточные воды, которые образуются вследствие смывания земель.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ

Բարի երթ	3
----------------	---

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Պետական քաղաքական միտքը Արշակունյաց Հայաստանում 4-րդ դարի 30-70-ական թվականներին.....	5
--	---

Ա.Ա. ՆԵՐՄԻՍՅԱՆ

Կ. Պոլսի Հ.Յ. Դաշնակցության պատասխանատու մարմնի ժողովը (1909թ. ապրիլ) և նրա որոշումների գնահատականը	11
--	----

Հ. Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Ռուսաստանի Դաշնության՝ որպես նոր պետականության կայացման գործընթացը (1991-2009թթ.).....	17
---	----

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ս. Գ. ՀՄԱՅԱԿՅԱՆ, Հ. Պ. ՀԱԿՈԲՅԱՆ, Մ. Է. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Աշոցքի, Հարթաշենի և Նավուրի մենհիրները	25
--	----

Ռ. Ա. ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

Ընտանեկան իրավունքը ըստ վաղ միջնադարյան եկեղեցական կանոնական և աշխարհիկ աղբյուրների	34
--	----

Լ. Գ. ԲԵԳԻՆՅԱՆ

Կյանքի ժամանակային ընկալումը. «իր մահը» և «մահ, որ իրենը չէ»	42
--	----

ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ԱՂԱՄՅԱՆ

Դերենիկ Դեմիրճյանի գրական հայացքները Հովհաննես Թումանյանի ստեղծագործության մասին	55
---	----

Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

Միրո վայելքն ու տառապանքը հայ միջնադարյան քնարերգության մեջ	62
---	----

Մ. Լ. ՄԱՐՈՒԽՄԱՆՅԱՆ

Մեծ եղեռնի ցավի արձագանքը հայ գեղարվեստական խոսքի մեջ.....	73
--	----

Լ. Վ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ստ. Նազարյանը և գրաբարի հարցը նոր գրական լեզվի մշակման գործում	79
--	----

Մ. Հ. ԶՈՒՐՄԱԲՅԱՆ

Բնագիր և թարգմանություն. Երկու մշակույթների փոխգործակցություն	86
---	----

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Հ. Ա. ՄԱՐԶՊԱՆՅԱՆ

Հումանիստական առաջընթացը, սոցիալիզմը և շուկան.....	95
--	----

Ա. Գ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Տարածաշրջանային սոցիալ-տնտեսական քաղաքականության
գաղափարախոսության ակունքները 106

Ա. Ա. ՄԱՐԻԲԵԿՅԱՆ

Մարքեթինգի էվոյուցիան..... 120

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. ՔԱՄԱԼՅԱՆ

Մահմանամերձ գոտու երիտասարդների ստրես-կայունության
դրսևորման հոգեբանական առանձնահատկությունները 126

Լ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարդու արտաքինի նկարագրության ուսուցումը 133

ԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Ք. Վ. ՕԹԱՐՅԱՆ

Ստեկ (պահունակ, հիշատիրույթ)..... 137

ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, Վ. Լ. ԲԱՂԱԼՅԱՆ

Հատապտղային կենու օգտագործման հեռանկարները
կանաչապատման մեջ 141

Ն. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մագնիսական փուլային անցման դիտարկումները
նմուշի մագնիսական ընկալունակության չափման եղանակով 145

Ռ. Ռ. ՔԱՄԱԼՅԱՆ

Միջակայքային կողային ներկում չունեցող հարթվող երկկողմանի
գրաֆների մի դասի մասին..... 149

Ա. Գ. ՂԱԼՈՒՄՅԱՆ

Լապլասի ձևափոխությունը և նրա որոշ կիրառություններ..... 152

Գ. Ս. ՄԻՄՈՆՅԱՆ, Մ. Մ. ՓԱՐՄԱՂԱՆՅԱՆ, Լ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Ադստև գետի ջրի ջրաքիմիական վերլուծություն..... 166

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Ստորագրված է տպագրության 27.10.2010 թ.:
Չափսը՝ $70 \times 100^{1/16}$: Թուղթը՝ օֆսեթ: Հրատ. 9.5 մամուլ,
տպագր. 11.0 մամուլ= 10.2 պայմ. մամուլի:
Տպաքանակ՝ 100: Պատվեր՝ 157:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1:

Երևանի պետական համալսարանի
օպերատիվ պոլիգրաֆիայի ստորաբաժանում
Երևան, Ալ. Մանուկյան 1: